

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
7-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ԴԱՍԱԳԻՐՔ

Գրականություն: 7-րդ դասարանի դասագիրք:

Եր. 201.....էջ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ

Կենսագրությունը
Չարենցի մասին
Հայրենիքում
Տաղ անձնական
Կարս քաղաքի մասին
Ես իմ անուշ Հայաստանի արևահամ բառն եմ սիրում
«Տաղարան» շարքի և ոճավորման մասին
«Ես իմ անուշ Հայաստանի...» տաղի մասին
Էլի գարուն կգա, էլի կբացվի վարդը
Մորս համար գագեկ

ԴԵՐԵՆԻԿ ԴԵՄԻՐՈՅԱՆ

Կենսագրությունը
Ավելորդը

ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑ

Կենսագրությունը
Բակունցի մասին
Սպիտակ ձին

ՆԱԻՐԻ ՉԱՐՅԱՆ

Կենսագրությունը
Հատված «Երկրորդ կյանք» ինքնակենսագրական վիպակից
Հայրենի տուն
Հայերեն

ԳՈՒՐԳԵՆ ՄԱՀԱՐԻ

Կենսագրությունը
Ինքնակենսագրական (կրճատումներով)
Մահարու մասին
Բալլադ Չակոյի և առաջին սիրո մասին
Օրոր, օրոր

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶ

Կենսագրությունը
Շիրազի մասին
Թագադրում
Հայ ժողովրդի երգը (Վերելք)
Էքսպրոմտ
Էքսպրոմտի մասին
Կտակ
Արարատ սարի մասին
Ձյուն է իջնում, կուտակվում,

ՀԱՄՈ ՄԱՀՅԱՆ

Կենսագրությունը
Սահյանի մասին
Անունդ տալի.

Ուր որ նայում եմ
Ծովն էր, գիշերն էր, ես էի ու դու
Իմ քարափներն ու ես
Անտառում
Մասրենի

ՄԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆ

Կենսագրությունը
Քելե, լատ
Լրացուցիչ ենթերցանության համար՝
Աղոթք Արարատին
Խոռվք

ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ

Կենսագրությունը
Սևակի մասին
Վարք մեծաց
Նորօրյա աղոթք
Բանաստեղծական շարքի մասին
Լրացուցիչ ընթերցանության համար՝
Մի պահ զղջում եմ
Բարեխոս եղիր իմ և իմ միջև
Արվեստ

ՍՈՒՇԵՂ ԳԱԼՇՈՅԱՆ

Կենսագրությունը
Գալշոյանի մասին
Մամփրե արքան (կրճատումներով)

ՀՐԱՆՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Կենսագրությունը
Մաթևոսյանի մասին
Կանաչ դաշտը

ՎԻԼՅԱՄ ՍԱՐՈՅԱՆ

Կենսագրությունը
Սարոյանի մասին
Իմ սիրտը լեռներում է (կրճատումներով)

ՋԵԿ ԼՈՆԴՈՆ

Կենսագրությունը
Ոսկե կիրճը

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Պատանի՝ բարեկամ, դու հիմա սովորում ես 7-րդ դասարանում: Այս տարվանից սկսած՝ դու ուսումնասիրելու ես գրականությունը որպես առանձին առարկա: Ծանոթանալու ես ինչպես հայ, այնպես էլ համաշխարհային գրականության մնայուն արժեքներին, թափանցելու ես գեղարվեստական խոսքի աշխարհը, փորձելու ես հասկանալ բանաստեղծության, արձակի, թատերգության ստեղծման գաղտնիքները, ձեռք ես բերելու տեսական անհրաժեշտ գիտելիքներ:

Գրականությունը մարդկության ստեղծման ամենամեծ արժեքներից մեկն է: Համաշխարհային քաղաքակրթության առաջընթացը պայմանավորված է նաև գեղարվեստական գրականությամբ, որը, սկսվելով հնագույն ժամանակներից, գալիս հասնում է մինչև մեր օրերը:

Իսկ ի՞նչ է գրականությունը՝ կհարցնես դու:

Գրականությունը արվեստի տեսակ է: Արվեստներն ունեն հնագույն ծագում և ձևավորվել են մարդկային քաղաքակրթության զարգացմանը համընթաց:

Կան արվեստի տարբեր տեսակներ, որոնք ունեն այսպիսի խմբավորում՝ տարածական արվեստներ, ժամանակային արվեստներ և համադրական արվեստներ:

Տարածական են կոչվում այն արվեստները, որոնք ստեղծվում և ընկալվում են տարածության մեջ: Դրանք են նկարչությունը, ճարտարապետությունը և քանդակագործությունը:

Ժամանակային են կոչվում այն արվեստները, որոնք ստեղծվում և ընկալվում են ժամանակի ընթացքում: Դրանք են երաժշտությունը և գրականությունը:

Համադրական են կոչվում այն արվեստները, որոնց մեջ միավորվում, համադրվում են տարածական և ժամանակային արվեստների հատկանիշները: Համադրական արվեստներն են՝ թատրոնը, պարը, կրկեսը, բալետը, օպերան, կինոն:

Գրականությունը առաջնակարգ տեղ ունի արվեստների մեջ: Դրա համար այն կոչում են նաև **արվեստների մայր**: Այնքան բացառիկ է գրականության տեղն ու դերը արվեստների համակարգում, որ երբեմն առանձնացնում են այն և օգտագործում են գրականություն և արվեստ արտահայտությունը:

Գրականության հիմքը ժողովրդական բանահյուսությունն է: **Ժողովրդական բանահյուսությունը** ժողովրդի կողմից բանավոր ստեղծված գեղարվեստական արժեքներն են, այդ թվում՝ հեքիաթ, առասպել, լեգենդ, դյուցազներգություն (էպոս), առակ: Բանահյուսական գանձեր են ժողովրդական երգերը, որոնք ունեն տարբեր բովանդակություն՝ հայրենասիրական, սիրային, աշխատանքային, օրորոցային, պանդխտության և այլն:

Ժամանակի ընթացքում բանահյուսական նյութերը գրի են առնվել, հավաքվել են ու տպագրվել: Դրանք տվյալ ժողովրդի գեղարվեստական գանձարանն են:

Գեղարվեստական գրականությունը, բխելով ժողովրդական բանահյուսությունից, նաև այն մշակել է, այսինքն՝ բանահյուսական նյութերով ստեղծել նոր հեքիաթներ և այլ գործեր:

Գեղարվեստական գրականությունն ունի ճանաչողական և դաստիարակչական մեծ նշանակություն: Գրական երկերը ընթերցողի առջև բացում են տարբեր ժամանակների կյանքի ու միջավայրի պատկերները, ներկայացնում են հերոսներին ու նրանց գործունեությունը: Դրանով իսկ ճանաչելի է դառնում կյանքի և պատմության մի որոշակի ժամանակ:

Գեղարվեստական երկերն ունեն նաև դաստիարակչական նշանակություն: Դրանք ընթերցողի մեջ դաստիարակում են գեղեցիկ ու վեհ զգացումներ, ներշնչում հերոսական ու սխրալի արարքների, զարգացնում երևակայությունն ու աշխարհաճանաչողությունը: Գեղարվեստական գրականությունը նաև հղկում է մարդու լեզվամտածողությունը, հարստացնում բառապաշարը, ընդլայնում մտահորիզոնը:

Հայ գրականությունը ձևավորվել է 5-րդ դարում: Գրերի գյուտից (405) անմիջապես հետո հայ գրականությունը, որ այդ շրջանում զուգակցված էր պատմագրությանը, հասավ շատ բարձր աստիճանի և կոչվեց Ոսկեդարյան գրականություն: Նույն այդ ժամանակներից համաշխարհային գեղարվեստական զարգացումներից ետ չմնալու համար մեր նախնիներն սկսեցին թարգմանել նաև այլ ժողովուրդների՝ հիմնականում հույների, հռոմեացիների և ասորիների գրական, պատմագիտական, լեզվաբանական, փիլիսոփայական և կրոնական գրքերը: Հայերեն թարգմանվեց «Աստվածաշունչ»-ը, որը հետագայում համարվեց թարգմանությունների թագուհի:

Հինգերորդ դարում հայերեն են թարգմանվել նաև այնպիսի երկեր, որոնց բնագրերը կորել

են, և այսօր դրանք ունեն սկզբնաղբյուրի եզակի արժեք: Թարգմանիչների գործի կարևորու-
թյան գիտակցմամբ դեռևս 5-րդ դարում սահմանվեց **Թարգմանչաց տոնը**, որը ամեն տարի
հոկտեմբեր ամսին նշվում է նաև մեր ժամանակներում:

Այսպես հայ գրականությունը, 5-րդ դարից սկսած, անցել է երկար ու անընդմեջ մի ճանա-
պարհ և այսօր 1600 տարեկան է: Հայ գրականությունը աշխարհի հնագույն գրականություն-
ներից է և իր առանձին ներկայացուցիչներով ունի համաշխարհային արժեք: Այն ևս թարգ-
մանված է աշխարհի տարբեր ժողովուրդների լեզուներով և ուսումնասիրվում է նաև օտար
գրականագետների կողմից:

Հայ գրականությունը բաժանվում է զարգացման երեք մեծ շրջափուլերի:

Առաջինը հայ հին և միջնադարյան գրականությունն է, որն սկիզբ է առնում 5-րդ դարից և
հասնում մինչև 18-րդ դար: Այս շրջանի գրականության հետ մեկտեղ դու կծանոթանաս նաև
բանահյուսական գանձերին՝ առասպել, լեգենդ, ավանդություն, գրույց, դյուցազներգություն,
հեքիաթ, ժողովրդական երգ և այլն:

Երկրորդ շրջափուլը կոչվում է հայ նոր գրականություն: Այն սկիզբ է առնում 18-րդ դարից և
հասնում մինչև 1918 թվականը: 1918 թվականը խորհրդանշական սահմանաբաժան է, քանի
որ այդ տարի մայիսի 28-ին վերականգնվեց հայոց պետականությունը, և ստեղծվեց Հայաս-
տանի Հանրապետությունը: Այս շրջանի գրական երկերին ծանոթանալուց բացի դու իմացու-
թյուններ ձեռք կբերես նաև գրական մեթոդների, տեսակների, սեռերի մասին և կամրապնդես
քո գրականագիտական հմտությունները:

Երրորդ շրջափուլն սկսվում է 1918 թվականից և հասնում մինչև մեր օրերը: Այն կոչվում է
նորագույն շրջանի հայ գրականություն: Դու պետք է իմանաս, որ այս շրջանում հայ գրակա-
նություն ստեղծվեց ոչ միայն հայրենիքում, այլև հայրենիքից դուրս՝ աշխարհի տարբեր երկր-
ներում: Հայրենիքից դուրս ստեղծված գրականությունը, որն արևմտահայ գրականության
շարունակությունն է, կոչվում է **սփյուռքահայ գրականություն** և միասնական հայ գրականու-
թյան անբաժանելի մասն է:

Կան նաև հայ գրողներ, որոնք հեռացել են մայրենի լեզվից և գրում են օտար լեզուներով:
Նրանք կոչվում են **օտարագիր հայ գրողներ:** Օտարագիր հայ գրողների մեջ է համաշխարհա-
յին գրականության այնպիսի մի խոշոր ներկայացուցիչ, որպիսին Վիլյամ Սարոյանն է, որի
ստեղծագործությունն ամբողջությամբ շնչում է հայկականությամբ:

Պատանի՝ բարեկամ, դու պետք է իմանաս, որ ժամանակի ընթացքում փոխվել է նաև գրակա-
նության լեզուն: Սկզբում այն **գրաբարն էր**, որ գործուն էր հատկապես 5-12-րդ դարերում: Քանի
որ գրաբար կարդալն այսօր դժվար է, և դրանով զբաղվում են հայագետները, այդ իսկ պատճա-
ռով գրաբար գրված գրական երկերին դու կծանոթանաս աշխարհաբար փոխադրությամբ:

13-18-րդ դարերում գրականության լեզուն **միջին հայերենն էր**, որը ևս քեզ համար կարող է
դժվարություններ հարուցել, բայց ուսուցչի օգնությամբ ու բառարանների միջոցով դու կարող
ես այն հաղթահարել:

18-րդ դարում ձևավորվեց աշխարհաբարը, որը, հոկվելով ժամանակի ընթացքում: Այսօր
հասել է մեզ, մենք խոսում, կարդում և գրում ենք այդ լեզվով: Այսօր մեր գրականությունն
ստեղծվում է ինչպես գրական արևելահայերեն, այնպես և գրական արևմտահայերեն լեզուներ-
ով, որոնք միասնաբար ներկայացնում են հայոց լեզվի զարգացման ժամանակակից փուլը:

Պատանի՝ բարեկամ, քեզ պետք է ծանոթացնենք նաև այն երեք դասագրքերի կառուցված-
քին և ժամանակային հաջորդականությանը, որոնցով դու պիտի գրականությանը
ծանոթանաս 7-րդ, 8-րդ և 9-րդ դասարաններում:

Կասագրքերի մեջ քեզ են ներկայացվում գրողներն իրենց կյանքով, ստեղծագործության
ընդհանուր դիմանկարով և բնութագրական մեկ-երկու գործով: Չուզահեռաբար, ծրագրային
պահանջների շրջանակում դու կծանոթանաս նաև տեսական առանձին հարցերի: Գրական
երկերը ներկայացնելուց բացի քո գործը հեշտացնելու համար անմիջապես բնագրերից հետո
կտրվեն քեզ անհասկանալի բառերի բացատրությունները: Քեզ կներկայացվեն նաև սեղմ վեր-
լուծականներ, մեկնաբանություններ, կարծիքներ, հուշեր, որպեսզի դու կողմնորոշվես գրակա-
նության պես նուրբ ու գրականության պես բարդ աշխարհում և աստիճանաբար մշակես գե-
ղարվեստի ընկալման քո ինքնուրույն սկզբունքները: Գրականությունը մեծապես նպաստում է
ինքնուրույն մտածող ժամանակակից մարդու ձևավորմանն ու դաստիարակությանը:

Մեր նպատակն է, որ դու սիրես գրականությունը, կապվես գրքին, կարդաս քեզ համար նախատեսված հայ և համաշխարհային գրականության ընտիր էջերը: Երբեք չնոռանաս մեծ բանաստեղծ Եղիշե Չարենցի այս պատգամը՝ «Օ՛, գրքերի աշխարհը տիեզերք է անեզր...»: Վստահ եղիր, որ այդպես է, և գրքերի միջոցով քո առջև բացվելու է մի անսահման տիեզերք... Իզուր չէ նաև հայտնի իմաստախոսությունը՝ «Կարդացող մարդը երկու մարդ է»: Այդպես է, որովհետև յուրաքանչյուր գրող իր կյանքի իմաստությունն ու փորձը իր գրքերով քեզ է տալիս: Դա վիթխարի հարստություն է, որ կրթում է մարդու հոգին ու միտքը: Դասագրքի օգնությամբ փորձիր տեր դառնալ այդ հարստությանը:

ԵՂԻՉԵ ՉԱՐԵՆՑ **ՏԱՂ՝ ՉՈՆՎԱԾ ԳՐՔԵՐԻՆ** **(Կրճատումներով)**

Օ՛, գրքերի աշխարհը - տիեզերք է անեզր:-

Արևների նման բազմապիսի,
Ե՛վ աստղերի նման, և՛ շողերի -
Ես սիրում եմ գրքերը, որ աշխարհի մասին
Բարբառում են անձուկ ու մտերիմ:
... Բայց և կամքով անշեղ, ինչպես դեկավարը,
Ինչպես ա՛յրն է հասուն ձգտում սիրած գործին,-
Ես սիրում եմ գրքերի աշխարհը
Իմ խոհերի վսեմ այրուծին:-

Նրանք շա՛տ են ու բազմապիսի, տարբեր ու գունագեղ,
Ծնված զանազան դարերում ու երկրներում,
Յուրաքանչյուրը բերում է մի առանձին պարզև,
Յուրաքանչյուրն իր մեջ մի աշխարհ է կրում:-
Մեր կյանքի երկար ճանապարհին
Հանդիպում են նրանք հետզհետե,
Եվ դառնում են ընկեր ու բարեկամ
Կամ մնում են անցած տարիների ետևը:

... Օ՛, գրքերի աշխարհը - տիեզերք է անեզր:-

Նրանք շա՛տ են ու բազմապիսի,
Յուրաքանչյուրն իր մեջ մի աշխարհ է ուրույն,
Եվ պատմում են նրանք մեզ աշխարհի մասին
Խոսքերով անկրկնելի և անագորույն:-
... Անտառների նման գրքեր կան թանձր ու մութ,
Կան օվկիանի՛ նման անհուն գրքեր,
Կան զեփյուռի նման, նման քամո՛ւ.
Կան, որ զգվում են մեզ, ինչպես ձեռքեր:-
Ե՛վ սրինգի ձայնով, և՛ շեփորի
Ե՛վ որորտի ձայնով կան գրքեր
Եվ կան անձա՛յն գրքեր, որ լռին
Մրսկում են մեր սիրտը եղերական կրքեր...

Օ՛, գրքերի աշխարհը - տիեզերք է անեզր:-

Ես սիրում եմ նրանց բազմախորհուրդ
Այս ինքնությունը դաշն, անկրկնելի,

Նրանց միջև եղած տարբերությունն այս խոր,-
Եվ բոլորն են նրանք ինձ սիրելի:
... Եվ այս ամենը՝ մեծ մի դաշնություն կազմած,
Կազմած ուրույն մի կյանք, մի ինքնամփոփ աշխարհ -
Մեր տների փայտյա դարակներում բազմած՝
Ապրում են լո՛ւտ կյանքով և կենդանի են հար:
Ես սիրում եմ նրանց լաբիրինթոսն այս լուռ,
Երանգների՛, գույնի՛ շռայլությունն այս մեծ,
Ինձ սիրելի է միշտ բազմազեղումն այս խոր...

Օ՛, գրքերի աշխարհից - տիեզե՛րք է անեզր:-

ԲԱՌԱՐԱՆ

անձուկ - նեղ, նեղվածք, սերտ, սեղմ, սահմանափակ, անբավարար, սուղ

այրուձի - հեծելագոր, ձիավոր գորք

անագորույն - անգութ, դաժան

գգվել - գրկել, շոյել, փաղաքշել, փայփայել, պարուրել

եղերական - ողբերգական, եղեռնական, սգալի, ողբալի

դաշնություն - միասնություն, համերաշխություն, ներդաշնակություն

լաբիրինթոս - ստորգետնյա խճճված ռու խառնաշփոթ ճանապարհներ

բազմազեղում - հորդառատ կերպով զեղել, առատորեն բխեցնել, տարածել, շատ զեղումներ (հույզեր) արտահայտել

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ի՞նչ է գրականությունը: Արվեստների քանի՞ տեսակ կա, և գրականությունը արվեստի ո՞ր տեսակի մեջ է մտնում:
2. Ի՞նչ կապ կա գրականության և բանահյուսության միջև:
3. Ո՞րն է գրականության ճանաչողական և դաստիարակչական նշանակությունը:
4. Ե՞րբ է ձևավորվել հայ գրականությունը և զարգացման ի՞նչ փուլեր է անցնել:
5. Հայոց լեզվի ո՞ր շերտերով է ստեղծվել հայ գրականությունը:
6. Ի՞նչ է պատգամում Եղիշե Չարենցը «Տաղ՝ ձոնական գրքերին» բանաստեղծության մեջ:

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ

1897-1937

Հնարավորություն է ներկայացել ծանոթանալու 20-րդ դարի հայ գրականության հսկայի՝ Եղիշե Չարենցի մարդկային նկարագրին և ստեղծագործությանը: Կարծես ամբողջ հայ գրական միտքը Մովսես Խորենացու «Հայոց պատմություն»-ից մինչև Վահան Տերյանի «Մթնշաղի անուրջներ» ժողովածուն և «Երկիր Նաիրի» շարքը հասունացել էր, որպեսզի իր խորքերից ծնունդ տար այս մեծ հանճարին: Սա նշանակում է, որ Չարենցը՝ որպես բանաստեղծ, ծնունդ է առել հայ գրականության ընդերքից, առասպելական եղեգան փողից՝ որպես բանաստեղծության մի նոր Վահագն:

Դասագրքում ուսումնասիրության համար առանձնացված են մի քանի բանաստեղծություններ, բայց պետք է իմանալ, որ Չարենցը բազմաթիվ գրքերի հեղինակ է, որոնց մեջ գետեղված առանձին գործերի հնարավորություն կլինի ծանոթանալու արտադասարանական նյութերի ընթերցանությամբ, ինչպես նաև ավագ դպրոցում:

Այսօր էլ մարդիկ կան, ովքեր առասպելներ են պատմում Չարենցի մասին: Իր իսկ կյանքի օրոք նա վերածվեց լեգենդի: Չարենցն ի վիճակի էր ոգևորության պահերին հասնել ստեղծագործական հզոր շիկացման, նա գրում էր միանգամից, մեկ բռնկումով: Թեև դժվար կյանք էր վիճակված նրան, բայց նա իր կյանքի ճանապարհն անցավ հերոսի պես, բարձր պահեց թե՛ գրողի, թե՛ իր մարդկային արժանապատվությունը և երբեք չխոնարհվեց ժամանակի իշխանավորների առջև:

Եղիշե Չարենցը ծնվել է 1897 թվականի մարտի 13-ին Կարս քաղաքում: Ծնունդով նա Սոփոմոնյան էր: Նրա հայրը՝ Աբգար աղան, զբաղվում էր առևտրով, մայրը՝ Թեյլի Միրզայանը, տնային տնտեսուհի էր: Ծնողները Մակուից էին, այդ իսկ պատճառով բանաստեղծը իրեն նաև մակվեցի է համարել: Նա ուներ երեք քույր և երեք եղբայր: Երբ 1914 թվականին լույս տեսավ նրա բանաստեղծությունների առաջին գիրքը, նրա վրա արդեն բազմել էր Չարենց գրական ազգանունը:

Բանաստեղծի մանկության և պատանեկության տարիներն անցել են Կարսում: Հայրենի քաղաքն անջնջելի հետք է թողել նրա կյանքի և ստեղծագործության մեջ: Հայրենի քաղաքի մասին նա գրել է բազմաթիվ բանաստեղծություններ և «Երկիր Նաիրի» վեպը:

1908-1912 թվականներին Չարենցը սովորել է Կարսի հայկական դպրոցում, ապա ռուսական ռեալական ուսումնարանում: Փաստաթղթերից մեկում Չարենցը նշում է, որ ուսումնարանից հեռացվել է սովորելու վարձը՝ 80 ռուբլի, վճարել չկարողանալու պատճառով: Այս տարիներից արդեն ստեղծագործում էր, նրա առաջին բանաստեղծությունը տպագրվել 1912 -ին Թեֆլիսում լույս տեսնող «Պատանի» ամսանախի մեջ:

Չարենցը ոչ միայն բանաստեղծ էր, այլև հայրենիքի զինվոր: Նրա համար հայրենիքն անփոխարինելի և բարձրագույն սեր էր: Հայրենիքի ծանր օրերին՝ 1915-ին, նա զինվորագրվում է հայ կամավորական 6-րդ գնդին և հասնում մինչև Վան: Պատերազմի ծանր տպավորություններով նա անմիջապես գրում է «Դանթեական առասպել» պոեմը:

1916 թվականին Չարենցն ընդունվում է Մոսկվայի Շանյավսկու համալսարան, ուր սովորում է երկու տարի: Չարենցը Կարսի գյուղերից մեկում նաև զբաղվել է ուսուցչությամբ: Երևանի մանկատներում ևս շարունակել է իր ուսուցչական գործունեությունը: 1920-1921 թվականներին աշխատել է Հայաստանի արվեստի վարչությունում:

1922 -ին Չարենցը «Երկրի ժողովածու»-ի երկու հատորների մեջ ամփոփում է իր գրական աշխատանքի տասնամյա վաստակը և ամեն ինչ անում նոր արվեստը համապատասխանացնելու նոր կյանքի պահանջներին: Այդ նպատակով գրական երկու ընկերների հետ լույս է ընծայում «Երեքի» դեկլարացիան, որն իր անսովոր առաջադրություններով պայթում է գավառական Երևանում՝ ստեղծելով համակիրների և ընդդիմադիրների խմբեր: Նոր արվեստի պահանջներով նա գրում է նաև իր նոր գործերը, գրական նոր ընկերների հետ լույս ընծայում «Standard» ամսագիրը:

1924 թվականի նոյեմբեր - 1925 թվականի հուլիս ամիսներին լինում է արտասահմանում՝ Տրապիզոն, Կոստանդնուպոլիս, Աթենք, Հռոմ, Վենետիկ, Փարիզ, Բեռլին: Այցելում է թանգա-

րաններ, հանդիպում արտասահմանի հայ գրողներին և համոզվում, որ նոր արվեստ պետք է ստեղծել ոչ թե անցյալը ժխտելով, այլ անցյալի դասական բարձր ավանդույթները շարունակելով:

1925 թվականին Չարենցն ընտրվում է «Հոկտեմբեր» գրական խմբակցության նախագահ, այն վերանվանում «Նոյեմբեր» (Հայաստանի խորհրդայնացման ամիսը) և լուրջ գործունեություն ծավալում ժամանակակից մնայուն գրականություն ստեղծելու ուղղությամբ:

1928-1935թվականներին աշխատել է Հայպետհրատի գեղարվեստական գրականության բաժնում: Նա տպագրում էր ոչ միայն իր ժամանակակիցների, այլև դասականների երկերը: Հրատարակիչ Չարենցը լուրջ ներդրում ունի այդ ասպարեզում: Նա կազմել և հրատարակել է նաև բազմաթիվ դասագրքեր: Հանդես է եկել դասախոսություններով, զեկուցումներով, որոնք վերաբերվում էին ժամանակակից գրականության զարգացման հարցերին:

1930-ական թվականներին Չարենցը հաճախակի է ենթարկվում գրական հակառակորդների քննադատությանը: Աստիճանաբար այդ քննադատությունն ստանում է քաղաքական բովանդակություն: Դա ավելի է սրվում Չարենցի վերջին մատյանի՝ «Գիրք ճանապարհի»-ի հրատարակության կապակցությամբ: Գրքի տպագրությունը նախ արգելվում է: Ի վերջո մեկ տարի անց որոշ փոփոխություններով գիրքը լույս է տեսնում:

Հալածանքները շարունակվում են: Նրան հեռացնում են գրողների միության շաբթերից: Նա մեկուսացված էր ու կտրված գրական գործունե կյանքից: 1935 թվականի փետրվար-ապրիլ ամիսներին ենթարկվել է նվաստացուցիչ հարցաքննությունների:

1936 թվականի օգոստոսի 9-ին «հակապետական գործունեություն» հորինված մեղադրանքով ձերբակալվում են բազմաթիվ գրողներ: Չարենցը ենթարկվում է տնային կալանքի: Նրա առջև արդեն փակված էին հույսի բոլոր դռները: Անգամ բուժման նպատակով արգելում են նրան մեկնել արտասահման: Նրա գրքերը հանվում էին գրադարաններից ու գրախանութներից:

1937 թվականի հուլիսի 27-ին հակախորհրդային գործունեություն մեղադրանքով նա ձերբակալվում է: Մահացել է բանտում 1937 թվականի նոյեմբերի 27-ին: Բանտարկել և աքսորել են նաև Չարենցի կնոջը՝ փողոցում թողնելով նրա երկու մանկահասակ դուստրերին:

1937-1954 թվականներին Չարենցի անունը դուրս էր գրական շրջանառությունից: Նա պաշտոնապես արդարացվեց 1955-ին, բայց 1954-ից սկսած նրա գրքերը լայնորեն տարածվեցին ժողովրդի մեջ: Չարենցը վերադարձավ:

Չարենցի կյանքը լավ իմանալով միայն հնարավոր է նաև լավ հասկանալ նրա ստեղծագործությունը: Նրա հիմնական գրքերը հետևյալներն են՝ «Երեք երգ տխրադալուկ աղջկան» (1914), «Ծիածանը» (1917), «Պոեզոգուռնա» (1922), «Երկիր Նաիրի» (1926), «Էպիքական լուսաբաց» (1930), «Գիրք ճանապարհի» (1934): Իսկ 1934-ից հետո գրած և ժամանակին չտպագրված գործերն ի մի են բերվել «Անտիպ և չհավաքված երկեր» (1983) և «Նորահայտ էջեր» (1996) հատորների մեջ: Այժմ էլ կան Չարենցի անտիպ ժառանգության բազմաթիվ էջեր, որոնք սպասում են հրատարակության:

Չարենցի մասին գրվել են բազմաթիվ հուշեր: Ծանոթանանք Գուրգեն Մահարու հուշերին: Մահարին Չարենցի գրական բարեկամն էր և միշտ հավատարիմ մնաց նրան:

ԳՈՒՐԳԵՆ ՍԱՀԱՐԻ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԻ ՄԱՍԻՆ

ՉԱՐԵՆՑ-ՆԱՍԵ

* * *

Հարցրի «Չարենց»-ի մասին:

– Դեռ Կարսում՝ մի քանի բանաստեղծություն տպեցի Սողոմոնյան ազգանունով: Մի բժիշկ եկավ մեր քաղաքը, տուն վարձեց, դռան վրա կայրեց. «Բժիշկ Չարենց, ներքին հիվանդություններ»: Չարենց. խիստ հավանեցի ու վերցրի:

Արտասանեց.

Ե՛ս եմ հիմնա մի պոետ, և իմ անունը՝ Չարենց:
Պիտի վառվի դարերում, պիտի լինի բա՛րձր ու մեծ..

Ծիծաղեց բա՛րձր, մանկական հրճվանքով.
– Հե՛չ չի երևում...

«Հոկտեմբեր» - «Նոյեմբեր»

Լենինական:

Նամակ Փարիզից:

...«Գեկ» անունով ամսագիր եմ հրատարակելու այստեղ... նյութեր ուղարկիր...»: Ուղարկեցի:

Շշուկներ:-Բեռլին է անցել:

Շշուկներ:-Մոսկվա է վերադարձնել:

Հեռագիր:-«Անցնում եմ Երևան N...գնացքով: Հանդիպի՛ր»:

«Լենինականի բանվորագյուղացիական գրողների «Հոկտեմբեր» «միություն»։ Չարենցը՝ պատվավոր նախագահ:

Մ. Արմեն, Ս. Տարոնցի, Գ. Սարյան:

Կայարան:

Իջավ գնացքից առույգ ու կայտառ: Շլյապա: Կանաչավուն կոստյում:Սափրված չեր: - «Մի՞թե այս է Երկիր Նաիրին»։ Գրկախառնվեց:

Ընդունեց «ռապորտը»։ Գրկախառնվեց:

– Խիստ ուրախ եմ: Լավ եք արել, որ անջատվել եք:

– Ձեր բացակայությամբ մենք ձեզ ընտրել ենք «Հոկտեմբերի» պատվավոր նախագահ:

– Վատ չի:

– Կգրեմ, կգաս Երևան. կմտածենք հետագա անելիքների մասին...

Գնացքը շարժվեց:

Դռների մեջ կանգնած թափահարում էր շլյապան:

– Պինդ կացեք:

«Մի՞թե այս է Երկիր Նաիրին»...:

* * *

Երևան: «Կաֆե Նարիր»։ Գրում է «Նարգիլե» պապիրոսի տուփի վրա,

– «Բանվորագյուղացիական»։ Էսպիսի գրականություն չկա: Պրոլետարական - վասսլամ: Միությունը պիտի դարձնել համահայաստանյան: Պիտի վերցնել Հայաստանի խորհրդայնացման ամիսը. նոյեմբեր:

– Եվ էսպես, դուրս եկավ էսպես. Հայաստանի պրոլետարական գրողների «Նոյեմբեր» միություն: Շնորհավորում եմ:

* * *

– Արմենը Երևանում է:

– Հետո՞:

– Գորիս է գնում ուսուցչության:

– Հետո՞:

– Խոսիր Մռավյանի հետ՝ մի գործ տա Երևանում:

– Որ ի՞նչ:

– Հիանալի բանաստեղծ է:

– Ի՞նչ է գրել:

– «Շիրկանալ»:

– Էդ հե՛չ:

– «Գազալին երագ»։ Անտիպ պոետ:

– Բեր մի կարդամ: «Գազային երագ»-ը: Հը՛մ:

* * *

– Ա՛յ տղա, գիշերս կարդացի «Գազային երագ»-ը: Դրան բեր մի մոտս: Պոետ դուրս կգա:

* * *

– Ո՞ր թվին ես ծնվել [հարցնում է Սկրտիչ Արմենին]:

– 906:

– Լավ բան ես գրել, կեցց՛ս: Մնա Երևան: Գործ կճարենք:

Երեքովս գիշերը լուսացրինք Ջանգուի ափին:

– Իմ դարդն Ակսելն է: Նա էլ որ միացավ մեզ, էլ դարդ չունեմ:

* * *

Տքնում էր դեկլարացիայի վրա:

– Արեք, օգնեցեք, է: Սա խոմ բանաստեղծություն գրել չի: Ավելի լավ է մարդ տասնմեկ պոետն գրի, քան մեկ դեկլարացիա:

– Հալլա, հալլա... ո՞վ հնարեց էս դեկլարացիան:

Փակագծում պիտի ասենք, որ...

(Այդ այն ժամանակներն էին, երբ Հայաստանի պրոլետարական գրողների ասոցիացիան **արդեն վերածվել էր** գեղեցիկ գրականության առաջընթացի **արգելակի**: Ծանր ժամանակներ էին հիրավի: Ասոցիացիան չէր ճանաչում Եղիշե Չարենցին որպես պրոլետարական պոետի, իսկ Չարենցին սիրողները համարվում էին նրա էպիգոնները, այն էլ մանրբուրժուական: Ասոցիացիայի անդամները գրում էին անարյուն, անսիրտ պատմվածքներ, ստիխներ և ստեղծագործական կարողությունից զուրկ թույլ բազուկներով ուզում էին հաստատել իրենց «հեգեմոնիան»: Հեգեմոնիա ասածդ դա մի մարմին էր, որի գլուխը Վշտունին էր, աջ ձեռքը՝ Ալազանը, իսկ ձախը՝ Ն. Չարյանը, իսկ մարմնի ողնաշարը... բայց ողնաշար չունեիր այս մարմինը, դրա փոխարեն բազմոտանի էր նա, - քսանական թվականների առաջին կեսերին ասոցիացիայի անդամների թիվը, իրենց պնդումով, հասավ 140 հոգու...)

Մենք հեռու ենք այն մտքից, որ «նոյեմբերականները» գերծ են եղել սխալներից և խարխափումներից թե՛ տեսական և թե՛ ստեղծագործական տեսակետից, «Նոյեմբերը» առանց վերապահության ընդունեց, որ հեգեմոնիան պետք է նվաճել ոչ թե վարչական ձևով, այլ ստեղծագործական ազատ մրցմամբ, գրական լիարժեք գործերով:

Ասոցիացիային հակադրվող մի նոր միություն ստեղծելու պահանջը ակնհայտ դարձավ, և դրա համար հիմնական կորիզ ծառայեց Լենինականի բանվորագյուղացիական գրողների «Հոկտեմբեր» միությունը, որի շուրջը հավաքվեցին ասոցիացիայից անջատված Մ. Արմենը, Ս. Տարոնցին, այն ժամանակ դեռ անհայտ Գ. Սարյանը և տողերիս գրողը, որը վտարված էր ասոցիացիայից: Շեշտը դնելով ստեղծագործական աշխատանքի վրա՝ «Նոյեմբեր»-ը չկարողացավ և չէր կարող խուսափել ասոցիացիայի կազմակերպական մեթոդների ընդօրինակումից, և մենք այդ ամենը հիշելիս չկարողացանք խուսափել ծաղրագրության ժանրից՝ ելնելով ձևի և բովանդակության, տվյալ դեպքում բովանդակության և ձևի ներդաշնակության անխոցելի սկզբունքից:

Փակենք փակագիծը...

– **Մողուս, մողուս** պիտի գտնել տարբերությունը ո՞րն է մեր ու նրանց...

– Դեկլարացիաները գրականություն չեն: Ամեն ինչ կվճռի կոնկրետ ստեղծագործությունը: Ակսելի մի պատմվածքը հազար դեկլարացիայի հետ չեմ փոխի:

– **Մողուս, մողուս...**

* * *

Ասոցիացիայի ներկայացուցիչները նստեցին Երևանի կոմիտեի կառքը, Էջմիածին հասան և հաստատեցին իրենց հեգեմոնիան:

Հուզվեց, ալեկոծվեց, Կենտկոմ գնաց: Կառք վերցրեց:

Գեայի Էջմիածին:

Նույն դահլիճում ժողով հրավիրեցինք:

Եկան նույն մարդիկ, մեծ մասամբ երիտասարդություն:

Մեծ էր նրա անվան հմայքը:

Չեկուցեց.

– Ովքե՞ր են ուզում մտնել «Նոյեմբեր» միության մեջ:

Բոլորը:

Ասոցիացիայի հեգեմոնիան տապալված էր, «Նոյեմբեր»-յան դրոշակը ծածանվում էր էջմիածնի վրա:

Հաղթական կեցվածքով Երևան մտանք:

– Գատարկ բաներ են: Լավ գրքեր են հարկավոր:

* * *

Գուրս եկավ վանդակից թևաթափ արծվի նման:

Ուղղեց իր թռիչքը դեպի Մայկոպ:

Մայկոպ: «Հիշողություններ Երևանի ուղղիչ տնից»:

Վերադարձավ ապաքինված:

Կարդաց լույս տեսած գրքերը: Գժգոհեց:

– Մի՞թե էս մարդիկ չեն հուզվում, չեն տխրում, չեն կարոտում: Սա ի՞նչ թմբուկային, անհոգի պոեզիա է:

– Կատեղծենք մեր լիրիկան, ճիշտ չէ՞, կատեղծենք մեր էպիկան:

– Կգա ժամանակ՝ կիրատարակենք Դուրյանին, Մեծարենցին, Թեքեյանին, Վարուժանին, Սիամանթոյին...

Եվ կարծես թե հակաճառող կար, գայրանում էր.

– Ինչո՞ւ չպիտի հրատարակենք որ...

Աղետն անցավ: Գտավ ինքն իրեն:

* * *

Կորած ծխամորճի ծխում՝ նստած գրում է:

Գժվար չէ նկատել, որ նամակ չի գրում, ոչ էլ հողված: Հայացքը շեշտակի է, շարժումները՝ հատու, անհանգիստ:– Մաքրագրում է.

Լեֆյան թմբուկը թողած մի կողմ,

Հատվող տողերը նետելով դեմ...

– Ուրեմն հրաժե՞շտ Մայակովսկուն:

Նայեց: Եռանդով թարմացրեց ծխամորճը:

– Մայակովսկի, հը՛մ, Մայակովսկի... Մայակովսկին ինձ համար այն է ինչ Պուշկինը, Բլոկը, Բրյուսովը, մեր Մայաթն ու Թումանյանը, Տերյանը: Մայակովսկին ինձ շատ բան տվեց...

Մի ուրիշ անգամ.

– Մայակովսկու դպրոցին են պատկանում Կիրսանովն ու Ասենը: Բայց կարելի՞ է ասել, որ նրանք մի բան ավելացրել են Մայակովսկու վրա: Իհարկե, ոչ: Քայլում են կողքից և ուրիշ ոչինչ:

* * *

Ինքն իր մասին կարող էր գրել «անհուն», «վեհ», «մեծ», «հսկա», «վառ», «պայծառ»...

Բայց ահա էս նրա մասին գրեցի.

«Մեծ պոետի խիղճը երգող»:

– Անհարմար է, ի՞նչ մեծ, ի՞նչ բան, մեծը Թումանյանն է, Տերյանը:

Եվ փոխեց՝ «մեր պոետի...»:

– Լավ սարքեցի, չէ՞...

Համագումարի օրերին

Մոսկվա:

«Նովի վոստոկ» հյուրանոցի վեստիբյուլը մտավ հանդերձ ընտանյոք և մի հսկայական ձմերուկով:

Միշտ տխուր աչքերով Իգարելյան երեք տարեկան Արփիկի հետ նստեցին չեմոդանների վրա, իսկ նա գնաց առանձին համար վերցնելու:

– Ի՞նչ եք գաղթականների պես նստել չեմոդանների վրա,- ծիծաղեց նա մոտենալով,-տա-տը-տասանհինգ րոպե պիտի սպասենք:

Նստեցրեց Իգարելյանին մի բազկաթռռի, Արփիկին՝ մի ուրիշ բազկաթռռի, քաշեց չեմոդանները նրանց մոտ, իսկ ինքը հարմար կերպով տեղավորվեց... ձմերուկի վրա:

Իգարելյան բողոքեց,- անհարմար է, մարդիկ ի՞նչ կասեն:

– Կարծում են, թե կարտոնից սարքած-ներկած ձմերուկ է, թող իմանան, որ իսկական է:

Ծիծաղեց մանկական հրճվանքով.- հազար մանեթով չեմ տա:

* * *

...Լազարյան ճեմարանի բակում տխրեց.

– Տերյանը սովորել է այստեղ, այս դռնով հազար անգամ ներս ու դուրս է արել...

– Մենք ի՞նչ ենք որ նրա հետ համեմատած, խուժաններ...

Տերյանը շատ մեծ է.- սկսեց գրեթե երգել քթի տակ.

*Ոսկեհանդերձ եկար և միգասքող,
Կապուտաշյա աշուն, սիրած աշուն,
Տերևներիդ դանդաղ թափվող ոսկով,
Շղարշներով քնքշաշրշյուն...*

* * *

Աբելյան,- Շնորհիվ իմ խաղի դրամատուրգ հռչակվեց Շիրվանգադեն:

Ու չէին խոսում:

Միքում էր երկուսին էլ:

– Հարկավոր է հաշտեցնել, անհարմար է...

Հրավիրեց «Ինտուրիստ», ընթրիքի:

Եկան մեկը մյուսից անտեղյակ: Այնտեղ էինք Ակսելի հետ, գործին տեղյակ:

Նստեցին: Փքվեցին: Չեն խոսում:

Արտասանեց մի փայլուն ճառ: Գնահատեց, դրվատեց առանձին-առանձին և միասին, նկարագրեց, թե ինչ վիթխարի տպավորություն կթողնի, եթե նրանք միասին երևան Աբովյանի վրա, և ինչ չնչին, խեղճ քստմնելի երևույթ է, երբ նրանցից մեկը իջնում է Աբովյանի մի մայթով, մյուսն իջնում է մյուս մայթով, և նրանցից մեկը նայում է հարավ, իսկ մյուսը՝ հյուսիս: Ճառը մեծ տպավորություն թողեց: Երկու պատկառելի արվեստագետները ողջագուրվեցին: Հաշտությունը կայացավ:

Մեղանն առաջ էր գնում: Շիրվանգադեն լցրեց Աբելյանի բաժակը, Աբելյանը խորովածի մի փափուկ կտոր դրեց Շիրվանգադեի ափսեմ, աչքերը վառվեցին չար կրակով:

– Ո՞նց ես կռվացնեմ նորից,- շշուջաց:

Ակսելի աչքերը փայլեցին մանկական չարաճճիությամբ: Ժպտաց:

– Պետք չի:

Իսկ իմ սարսափը գուր չէր:

Արմունկը հենեց սեղանին, ճակատը շփեց.

– Իսկապես ասած, Շիրվան, Օհանները որ չլինեն, քո պիեսները ո՞վ պիտի խաղար...

ՉԱՐԵՆՑՅԱՆ ՔԱՆԴԱԿԱՆԵՐ

Չարմանալի տաղանդներ

Նրա վրա ցնցող տպավորություն էր թողնում լավ գիրքը, լավ բանաստեղծությունը, բանաստեղծական լավ տողը: Երբ հանդիպում էր մի լավ պատկերի, աչքերը փայլում էին և զարմանում էր. «Ա՛յ տղա, էս ո՞նց է սարքել»: Ռոմանոս Մելիքյանին, Մարտիրոս Սարյանին, Հակոբ Կոջոյանին և նրանց, որոնց գնահատում էր, անվանում էր «զարմանալի տաղանդ»: Չէր սիրում խաղալ «հանճար» ածականի հետ, ինչպես խաղում էին նրա ժամանակակիցներից շատ-շատերը: «Չարմանալի տաղանդից» բարձր «**ուղիվիտելնի** քանքարն» էր: Մեծ հիացմունքով էր խոսում Մարտիրոս Սարյանի մասին. Մարտիրոս Սարյանը և՛ «զարմանալի տաղանդ» էր, և՛ «**ուղիվիտելնի** քանքար»: Խոսում էր նրա արվեստի մասին մեծ խանդավառությամբ, անվանում էր վարպետ, իսկ երբ հանդիպում էր նրան, անվանում էր Մարտիրոս:

– Մարտիրոս՛ս, բերել եմ էս սկյութացուն, որ նկարը քաշես: Գրքի ձևավորումն էլ դու արա:

Սիրում և հասկանում էր նկարչությունն ավելի, քան բազում նկարիչներ:

– Հիանալի ինտելիգենցիա ունենք, մի տես: Շիրվան, Ավետիք, Մարտիրոս, Ռոմանոս... զարմանալի տաղանդներ:

Կոմիտաս և ջուր

Սիրում էր երաժշտությունը, բայց ավելի բարձր էր գնահատում արևելյան երաժշտությունը: Սիրում էր Կոմիտասին, Սպենդիարյանին, Ռոմանոս Մելիքյանին: Ակսելը ճեմարանից հիշում էր Կոմիտասի երգերը, երբեմն նեղ շրջանակում Կոմիտաս էր երգում չափ տալով, չնայած որ միակ երգողն ինքն էր: Չարենցը շատ էր սիրում այդ երգերը. «Մի Կոմիտաս երգիր, Ակսել»:

Երբեմն էլ, երբ նեղսրտում էր ու ձանձրանում, գլխարկը քաշում էր աչքերի վրա և երեխայի պես խնդրում.

– Գնանք Ակսելի մոտ, Կոմիտաս լսենք:

Ինչպես ամեն մի իսկական բանաստեղծ, սիրում էր բնությունը, բայց ամենից ավելի, երևի, ջրի խշշոցը: Ամենից շատ սիրում էր Չանգվի ձորը: Իր սերը և Չանգվի ձորն իջնելու ցանկությունը ձևակերպում էր այսպես.

– Գնանք ջուր լսենք;

Կպառկեր գետափին, գլխարկը կղներ դեմքին և... «ջուր կլսեր»:

Հոետորը

Նա հոետոր էր և փայլուն հոետոր: Ոչինչ չունեի նա բեմական՝ ո՛չ ձայն, ո՛չ բոյ-բուսաթ, ո՛չ էլ հարուստ միմիկա:

Բայց նա հոետոր էր:

Գիտելիքների մեծ պաշար և հումոր, ահա նրա հոետորական զենքերը:

Այդ զենքերին նա տիրապետում էր փայլուն կերպով:

Կանգնել ամբիոնի մոտ և ամբիոն ծեծել չէր սիրում նա: Բեմի վրա պահում էր իրեն ինչպես իր սենյակում: Գնում գալիս էր ու խոսում, երբեմն կանգնում էր մի կարևոր ֆրագ ընդգծելու համար. մի ծխախոտ էր վառում և շարունակում էր խոսել, ապացուցել, համոզել, ձեռք առնել, ժխտել, հաստատել, եզրափակել: Ամբիոնին նա մոտենում էր միայն այն դեպքում, երբ կարիք էր զգում ջուր խմելու: Ինչպես կյանքում, այնպես էլ բեմի վրա սիրում էր գործածել ռուսերեն բառեր, ասույթներ: Գիտեր օգտվել առիթից՝ «ոչնչացնելու համար» հակառակորդին: Այսպես՝ նրա մի ելույթի ժամանակ հակառակորդներից մեկը տեղի-անտեղի ռեպլիկներով շարունակ խանգարում էր նրան: Երևանի քաղաքային կոմիտեի ներկայացուցիչը նկատողություն արեց խանգարողին.

– Վերջ տվեք խուլիզանությանը...

Նա ընդհատեց իր ճառը և հարցրեց.

– Է՛ս էլ Յեկայի կարծիքը քո մասին:

Դահլիճում՝ հոմերական ծիծաղ և ծափահարություններ:
Մի ծխախոտ վառեց:

Պատգամ

– Ես հերքեցի Տերյանին և ստեղծեցի իմ գրականությունը, բա ինչո՞ւ դուք ինձ չեք հերքում, եթե ուզում եք ձեր գրականությունը ստեղծել...

Հարցն ուղղված էր մի երիտասարդ գրողի և ինձ:

Չեռների մեջ խշրտացրեց թագրեհը և մի ումպ թեյ խմեց.

– Ասենք, ես ի՞նչ խեղ տեսա հերքելով, որ դուք ինչ խեղ տեսնեք: Ի՞նչ հերքել, Տերյանը մի ամբողջ կուլտուրա է: Կուլտուրան հերքել կլինի՞: Մի բան պիտի հասկանալ. չլինեք Հովհաննես Հովհաննիսյանը, Թումանյանը Թումանյան չէր լինի, ոչ էլ Իսահակյանը՝ Իսահակյան: Իսկ եթե չլինեին Հովհաննիսյանը, Թումանյանը, Իսահակյանը, Տերյանը Տերյան չէր լինի: Չլինեք Տերյանը, ես ես չէի լինի, էս բանը լավ հասկացեք: Հիմա անցնենք ձեզ. դուք պիտի շարունակեք այնտեղից, որտեղ ես վերջացնում եմ: Կրկնելով իմ նախորդներին կամ ինձ՝ ոչ մի արդյունքի չեք հասնի: Պետք է առաջ անցնել, յուրացնել և առաջ անցնել: Նախամարդիկ իրենց ուսերին կրում էին իրենց բեռը, հետո մարդը հնարեց ձեռնասայլը, հետո՝ եզասայլը, ապա՝ կառքը, ձիաքարշը, գնացքը, ավտոն, **սերոպլանը**: Վայ նրան, ով ռևոլյուցիայի, էլեկտրականության, մոտորների մեր դարում կնստի եզասայլ: Տեղ չի հասնի նա, չի դիմանա ժամանակի քննությանը:

Թագրեհը նետեց գասեղանին, նայեց մեզ իր արտահայտիչ աչքերով և խորամանկ ժպտաց.

– Մեռա ձեզ խելք սովորեցնելով:

«Տերյանի հետ նկարվեցինք»

Չեմ հիշում՝ ինչ գործով գրական թանգարան մտանք: Մեզ միացավ Մարտիրոս Սարյանը: Որտեղից որտեղ հայտնվեց մի լուսանկարիչ: Ուրախացավ:

– Արի՛, արի՛ մի պատկերներս քաշի՛: Լուսանկարվեցինք: Սարյանը հրաժեշտ տվեց:

– Ա՛յ տղա, արի Տերյանի հետ նկարվենք:

Ես տարակուսանքով նայեցի նրան:

– Արի: Լսիր, բան ջան,- կանչեց հեռացող լուսանկարչի ետևից, որի անունը չգիտեր,- արի մի անգամ էլ քաշի:

Երկրոդ սենյակում դրված էր Տերյանի կիսանդրին, կանգնեցինք աջ ու ձախ:

Տրամադրությունը բարձրացավ. մանկական հրճվանքով բացականչեց.

– Տերյանի հետ նկարվեցինք, բաս...

ԲԱՌԱՐԱՆ

Չլյապա - լայնեզր բարձր գլխարկ

ռապորտ - զեկույց

պապիրոս - ծխախոտ

վասասլամ - բացականչություն է

էպիզոն - գրական հետևորդ, որը ինքնուրույնություն չունի

ստիխ - բանաստեղծություն

հեզեմոնիա - գերիշխանություն

ասոցիացիա - ընկերակցություն, այստեղ խոսքը Հայաստանի պրոլետարական գրողների ասոցիացիայի մասին է, որը գրականության մեջ վարում էր սխալ գործունեություն և որի դեմ հանդես էր գալիս Չարենցի ղեկավարած «Նոյեմբեր» խմբակցությունը՝ Մահարու, Արմենի, ավելի ուշ նաև Բակունցի եռանդուն աջակցությամբ:

պարտիա - կուսակցություն

պլատֆորմ - ծրագիր

մողրու - ձև

վեստիբրյուլ - նախասրահ, մուտքի սրահ

չեմոդան - ճամպրուկ

կարտոն - ստվարաթուղթ

ուղիվիտելնի - բացառիկ, զարմանալի

ինտելիգենցիա - մտավորականություն

միմիկա - դիմախաղ

ֆրազ - արտահայտություն

ռեպլիկ - խոսողին արձագանքող նկատողություն կամ անհամաձայնության բացականչություն, վերաբերմունք

ցեկա - կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտե

դիսկուսիա - վեճ, դիսկուսիոն՝ վիճահարույց

սերոպլան - ինքնաթիռ, սավառնակ, օդանավ

ռևոլյուցիա - հեղափոխություն

մոտոր - շարժիչ

բաս - հաստատում արտահայտող բացականչության՝ հապա, իհարկե, ուրեմն

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ե՞րբ և որտե՞ղ է ծնվել Ե. Չարենցը: Ո՞րն է նրա ծննդյան ազգանունը:
2. Որտեղացի՞ էին Չարենցի ծնողները և հիմա որտե՞ղ էին բնակություն հաստատել:
3. Ի՞նչ կրթություն է ստացել Չարենցը:
4. Չարենցը հայրենիքի զինվոր. ի՞նչ զիտես այդ մասին:
5. Ե՞րբ է Չարենցը մեկնել արտասահմանյան շրջագայություն, ո՞ր քաղաքներում է եղել:
6. Ինչպե՞ս են ընթանում Չարենցի կյանքի վերջին տարիները:
7. Եր՞բ և ի՞նչ պայմաններում է մահացել Ե. Չարենցը:
8. Թվարկե՞ք Չարենցի հիմնական գրքերը:
9. Հուշերի մեջ ինչպե՞ս է Չարենցին ներկայացնում Գուրգեն Մահարին: Վերարտադրե՞ք առանձին դրվագներ:
10. Չարենցի կյանքը խորությամբ ուսումնասիրելու համար կազմե՞ք նրա կյանքի ու ստեղծագործության սեղմ մատենագիտությունը, այսինքն՝ առանձնացրու հիմնական տարեթվերը և դրանց դիմաց գրե՞ք փաստերը:

(ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ)

Չյունապատ լեռներ ու կապույտ լճեր:

Երկինքներ, որպես երազներ հոգու:

Երկինքներ, որպես մանկական աչեր:

Մենակ էի ես: Ինձ հետ էիր դու:

Երբ լսում էի մրմունջը լճի

Ու նայում էի թափանցիկ հեռուն -

Չարթնում էր ւմ մեջ քո սուրբ անուրջի

Կարոտը այն հին, աստղայի՛ն, ահնո՛ւն:

Կանչում էր, կանչում ձյունոտ լեռներում

Մեկը կարոտի իրիկնամուտին:

Իսկ գիշերն իջնում, ծածկում էր հեռուն,

Խառնելով հոգիս աստղային մութին...

Այս բանաստեղծությունը գետեղված է Չարենցի «Տեսլիստամեր» (1915) շարքում: «Տեսլիստամեր»՝ այսինքն տեսիլքի ժամեր, տեսիլքներ տեսնելու ժամեր: Ահա երևակայության մեջ նա պատկերացնում է հայրենի երկիրը՝ ձյունապատ լեռներ, կապույտ լճեր, երկինքներ՝ նման մանկական անմեղ աչքերի, լճի մրմունջներ: Բանաստեղծը մենակ է հայրենի բնաշխարհում, բայց նրա հետ է սիրած աղջկա տեսիլքը:

Տեսիլքն այստեղ սիրած աղջկան է վերաբերում, որն էլ նրա մեջ արթնացնում է սուրբ անուջի հին, աստղային ու անհուն կարոտը: Ահա նա էլ ձյունոտ լեռներում կանչում է սիրած աղջկան: Բանաստեղծն այստեղ օգտագործում է «կարոտի իրիկնամուտ» հրաշալի փոխաբերությունը՝ շեշտելով, որ իջնում է գիշերը՝ խառնելով հոգին աստղային մութի հետ:

Սա շատ նուրբ բանաստեղծություն է՝ լեցուն խորհրդապաշտական ակնարկներով:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Չարենցի բանաստեղծական ո՞ր շարքի մեջ է գետեղված «Հայրենքիում» բանաստեղծությունը:

2. Ի՞նչ պատկերներով է Չարենցը պատկերում հայրենի երկիրը:

3. Հայրենի բնաշխարհի մեջ միայնակ ո՞վ կար նա տեսիլքի մեջ:

4. Ինչպիսի՞ նուրբ ակնարկներով է հիշվում սիրած աղջկա գոյությունը:

5. Ինչպե՞ս է ավարտվում բանաստեղծությունը:

ՏԱՂ ԱՆՁՆԱԿԱՆ

Թողած Կարսում, գետի ափին, տունս՝ շինված անտաշ քարով,
Կարսը թողած, Կարսի այգին ու հայրենի երկինքը մով
Եվ Կարինե Քոթանճյանին անգամ չասած մնաս բարով -
Ա՛նց եմ կենում հիմա օտար քաղաքների ճանապարհով:

Անց եմ կենում. շուրջս - մարդիկ, շուրջս դեմքեր հազա՛ր-հազա՛ր.
Շուրջս աշխարհն է աղմկում, մարդկային կյանքն անհավասար.
Եվ ո՞վ կասի՝ ինչո՞ւ ես դու, և ո՞վ կասի, թե ո՞ր հասար, -
Դեմքերը, ախ, բութ են այնպես՝ կարծես շինված են տապարով:

Գորշ, տաղտկալի ու խելագար երգ է կարծես այս կյանքը մի.
Ինչ-որ մեկի սրտում բացված - վերք է կարծես այս կյանքը մի.
Եվ ո՞ւմ համար - էլ ո՞ւմ համար կարոտակեզ երգե հիմի
Սիրտս՝ լցված տարիների սեղմ արճիճով ու կապարով:

Բայց շուրջս թող որքան կուզե աշխարհը այս խնդա, ցնդի -
Ես - հաշմանդամ ու խելագար ու հավիտյա՛ն վտարանդի՝
Դեպի երկի՛նք պիտի գնամ, դեպի եղերքը Ամենտի -
Իմ բա՛րձր, հին ու աստղային երազների ճանապարհով...

Ու էլ ամե՛ն մեղքի համար սիրտս հիմա ունի ներում.
Պիտի անդարձ ես հեռանամ, պիտի գնամ՝ ա՛չքս է հեռուն.
Թե Կարինե Քոթանճյանին տեսնեք Կարսի փողոցներում -
Ասե՛ք նրան՝ Չարենցն ասավ - մնաս բարո՛վ, մնաս բարո՛վ...

ԲԱՌԱՐԱՆ

մով - մավի, կապույտ

կապար - կացին, կացնի ձև ունեցող սառը գների տեսակ

տարոտակեզ - կարոտից կիզվող՝ տոչորվող, կարոտավառ

Վտարանդի - տարագիր, պանդուխտ, հայրենիքից հեռացած և օտարության մեջ ապրող մարդ
Ամենտի եզերք - այլաշխարհային եզերք, իրականությունից դուրս այդպիսի երևակայական այլ աշխարհներ սիրում էին ստեղծել խորհրդապաշտ գրողները

Չարենցն այս բանաստեղծությունը վերնագրել է «Տաղ», որովհետև գրված է տաղի ձևով: Այս ձևը մեկ տարի անց նա պիտի կիրառեր «Տաղարան» շարքում:

Տաղի մեջ յուրահատուկ է տների հանգավորումը. առաջին տունը՝ *ասասա*, հաջորդ տները՝ *բբբբա, գգգա, դդդա*:

Տաղը նաև բնորոշել է «անձնական», որովհետև իր մասին է: Կարսը իր հայրենի քաղաքն էր, Կարինն Քոթանճյանը իր սիրած աղջիկն էր, որին ձոնել է «Ծիածանը» (1917) ժողովածուն: Կարինն Քոթանճյանը հետագայում հետաքրքրական հուշեր է գրել Չարենցի մասին, որոնք դուք հաճույքով կկարդաք:

Եվ հիմա Չարենցը ներկայացնում է բանաստեղծի իր կերպարը ժամանակի մեջ:

ԻՄԱՑԻՐ

ԿԱՐՍ ՔԱՂԱՔԻ ՄԱՍԻՆ

Կարս քաղաքը Ե. Չարենցի ծննդավայրն էր: Կարսը հայոց հնագույն բնակավայրերից է: 10-րդ դարում, Բագրատունիների օրոք, մինչև Անին մայրաքաղաք հռչակելը, եղել է նաև թագավորանիստ քաղաք: Քաղաքում վեր է խոյանում Առաքելոց եկեղեցին, որը կառուցել է Աբաս Ա Բագրատունին 930-940 ական թվականներին: 963-ին, երբ Հայոց սպարապետ Մուշեղը իրեն հռչակեց Վանանդի թագավոր՝ Կարսը մինչև 1065 թվականը դարձավ թագավորության կենտրոն: 11-րդ դարից քաղաքն անցնում է բյուզանդացիների, սելջուկների, թաթար-մոնղոլների պարսիկների, թուրքերի գերիշխանության ներքո:

1877 թվականին նոյեմբերի 6-ին ռուսները թուրքերից գրավում են քաղաքը և Կովկասի փոխարքայության կազմում դարձնում մարզային կենտրոն: 1899-ի հուլիսին գործարկվել է երկաթգիծը: Լույս է տեսել «Կարս» շաբաթաթերթը: 1918-ի ապրիլի 25-ին թուրքերը գրավում են քաղաքը: 1919-ի ապրիլի 12-ին Հայաստանի Հանրապետության բանակը ազատագրում է Կարսը: 1920 թվականի հոկտեմբերի 31-ին թուրքերը վերստին գրավում են Կարսը: 1921 թվականի Կարսի պայմանագրով քաղաքը մնում է Թուրքիայի կազմում:

Ծննդավայրը Կարսը Չարենցը հաճախակի է հիշել իր բանաստեղծությունների մեջ: Իսկ նրա «Երկիր Նաիրի» վեպը նվիրված է Կարսին և հատկապես քաղաքի պատմության 1914-1920 թվականի իրադարձություններին:

1886 թվականին Չարենցի ծնողները Մակուկից տեղափոխվում և բնակություն են հաստատում Կարսում, որտեղ էլ հետագայում ծնվել է նա: Այստեղ էլ հանդիպել է Կարինն Քոթանճյանին:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչու՞ է այս բանաստեղծությունը վերնագրված «Տաղ» և ինչու՞ «անձնական»:
2. Չարենցի կյանքում ի՞նչ տեղ ունեւր Կարս քաղաքը, ո՞ր գետն էր հոսում քաղաքի միջով:
3. Ո՞վ էր Կարինն Քոթանճյանը Չարենցի կյանքում:
4. Ինչպե՞ս է Չարենցը ներկայացնում կյանքի հորձանքը, որի մեջ ընկած էր նա: Ինչպիսի՞ն էր կյանքը, ինչպիսի՞ մարդիկ էին նրան շրջապատել:
5. Կյանքի այդ հորձանքի մեջ ինչպե՞ս է իրեն ներկայացնում Չարենցը: Ի՞նչ է Ամենտի եզերքը:
6. Ինչպե՞ս է ավարտվում բանաստեղծությունը: Ո՞ր է շտապում Չարենցը, որ անգամ չի հասցնում սիրած աղջկան ասել մնաս բարով:

Ես իմ անուշ Հայաստանի արևահամ բառն եմ սիրում,
Մեր հին սագի ողբանվագ, լացակումաց լարն եմ սիրում,
Արնանման ծաղիկների ու վարդերի բոլոր վառման,
Ու նահրյան աղջիկների հեզաճկուն պարն եմ սիրում:

Սիրում եմ մեր երկինքը մուգ, ջրերը ջինջ, լիճը լուսե,
Արևն ամռան ու ձմռվա վիշապաճայն բուքը վսեմ,
Մթում կորած խրճիթների անհյուրընկալ պատերը սև
Ու հնամյա քաղաքների հազարամյա քարն եմ սիրում:

Ուր էլ լինեմ, չեմ մոռանա ես ողբաճայն երգերը մեր,
Չեմ մոռանա աղոթք դարձած երկաթագիր գրքերը մեր,
Ինչքան էլ սուր սիրտս խոցեն արյունաքամ վերքերը մեր-
Էլի՛ ես որք ու արնավառ իմ Հայաստան-յարն եմ սիրում:

Իմ կարոտած սրտի համար ո՛չ մի ուրիշ հեքիաթ չկա.
Նարեկացու, Քուչակի պես լուսապսակ ճակատ չկա.
Աշխարհի անցիր, Արարատի նման ճերմակ գագաթ չկա,
Ինչպես անհաս փառքի ճամփա՝ ես իմ Մասիս սարն եմ սիրում:

ԲԱՌԱՐԱՆ

սագ - երաժշտական լարային գործիք

երկաթագիր գրքեր - երկաթագիրը հայերեն գրերի հին ձևն է, որով գրվում էին միջնադարյան մատյանները:

Չարենցի այս տաղի հետ ծանոթանալուց հետո անհրաժեշտ է ընդհանուր պատկերացում ունենալ բանաստեղծական այն շարքի մասին, որի մեջ զետեղված է այն: Շարքը կոչվում է **«Տաղարան»**: Գրել է 1920-1921 թվականներին: Այս շարքի մեջ Չարենցը ստեղծագործաբար օգտագործել է միջնադարի վերջին մեծ բանաստեղծ Մայաթ-Նովայի ոճը:

Գեղարվեստական գրականության մեջ երբ մի գրող ստեղծագործաբար յուրացնում ու կիրառում է մեկի այլ գրողի ստեղծագործության ձևի, տաղաչափության, բառապաշարի բնորոշ կողմերը, կոչվում է **ոճավորում**:

Չարենցի շարքը բաղկացած է 20 տաղից: Տաղը միջնադարյան բանաստեղծության տեսակ է: Շարքի 1-18-րդ տաղերն ունեն սիրային բովանդակություն: Չարենցը երգում է զոզալի կերպարանքով հարություն առած իր բարձր սերը, որն այդպես էլ մնում է անհասանելի: Վերջին երկու տաղերն ունեն հայրենասիրական բովանդակություն: Կնոջ անմատչելի սիրուց նա հասնում է հայրենիքի անփոխարինելի ու բացառիկ սիրուն:

«ԵՍ ԻՄ ԱՆՈՒՇ...»-ի մասին

Բայց, ահա՛, չեմ հիշում, թե ե՞րբ եմ առաջին անգամ լսել կամ կարդացել «Ես իմ անուշ Հայաստանին»: Երբեք բերանացի չեմ սովորել, պարզապես գիտցել եմ: Ինձ թվում է, թե Սահակի ու Մեսրոպի աղոթքների հետ էլ բերել եմ:

Դա մեր այսօրվա աղոթքն է: Աղոթք, որը կարելի է թե՛ մտքում հյուսել, թե՛ մրմնջալ շշուկով, թե՛ արտասանել բարձրաճայն:

Իսկ ինչի՞ հետ համեմատես «Ես իմ անուշը»: Քիչ կլինի ասել, թե բանաստեղծություն է: Պոեմ էլ չէ, վեպ՝ նույնպես:

«Ես իմ անուշ Հայաստանին», ավելի շատ, բոլոր մասշտաբներից դուրս պաննո է: Պաննո՛ հասցված ժողովրդական էպոսի աստիճանին: Դա անհիշելի ժամանակներից եկող Հայաստան-Ուրարտու-Արմենիա երկրի համապարփակ պաննո - դիմանկարն է: Դա մեր ազգի կենսագրության ու վարքի կենդանի արտացոլքն է, մեր կրած տառապանքների ու փայփայած

իդեալների, մեր անկանումների ու վերելքների, արհավիրքների ենթակա մեր ճակատագրի ու անմեռ մնալու մեր ձգտման գեղարվեստական համադրությունն ու բյուրեղացումն է:

Այդպիսի մի երկ աշխարհ բերելու համար պետք էր ամենաքիչը կիսատված լինել:

Մարտիրոս Սարյան

Չգացի, որ Չարենց եղբայրս էր: Այդպես կը զգամ նաև մինչև այսօր: Շատ գրողներու եմ հանդիպած բազմաթիվ երկրներու մեջ, սակայն չեմ հանդիպած և ոչ մեկին, որ իմ վրա ավելի խոր տպավորություն ձգած ըլլա, քան Չարենցը:

Ես սիրեցի զայն: Հիացում ունեցա անոր հանդեպ: Հպարտ էի, որ հայրենակից եմ իրեն և իր նման գրի մարդ եմ նաև ես: Չարենցի հիշատակին հավատարիմ պիտի մնամ առհավետ:

Չարենցը, Չարենցը... «Ես իմ անուշ Հայաստանի արևահամ բառն եմ սիրում...» Անոր չհանդիսիսած գիտեի արդեն իր այս քերթվածը: Սկսած էի արտասանել Ամերիկայի մեջ: Ամեն մեկ բառը բացատրել տված էի ու գրեթե զոց տվորած: Չայն մինչև այսօր կը նկատեմ մեր երկնքին, մեր հողին, մեր պատմության նվիրված ամեն գեղեցիկ երգը, գովաբանական աղոթքը: «Հայ մեր»-ին նմանվող աղոթի մը:

Վիլյամ Սարյան

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ե՞րբ է Չարենցը գրել «Տաղարան» շարքը:

2. Միջնադարի ո՞ր բանաստեղծի պոեզիայի ոճավորումով է այն գրված:

3. Քանի՞ տաղ է գետեղված «Տաղարան»-ում, և ինչի՞ մասին է այդ շարքը:

4. Ինչի՞ մասին է Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի...» ոգեշունչ տաղը:

5. Ի՞նչ կապ ես տեսնում «արևահամ բառն եմ սիրում» կիսատողի և « ողբաձայն երգեր», «երկաթագիր գրքեր», «Նարեկացու, Քուչակի պես լուսապսակ ճակատ չկա» արտահայտությունների միջև:

6. Նորից բարձրաձայն կարդացե՛ք բանաստեղծությունը և փորձե՛ք տող առ տող վերլուծել պատկերները: Ինչո՞ւ է Չարենցը մեր սազի երգը համարել ողբանվագ, լացակումած, մեր երգերը՝ ողբաձայն: Ինչո՞ւ է նախրյան աղջիկների պարը համարում հեզաճկուն: Ինչպե՞ս է ներկայացնում մեր երկիրը:

7. Շարունակե՛ք և բացատրե՛ք հաջորդող տողերի իմաստը: Ինչպե՞ս կվերլուծեք այս տաղի երրորդ տունը:

8. Ինչպե՞ս եք հասկանում «աղոթք դարձած երկաթագիր գրքերը մեր» պատկերի իմաստը:

9. Ինչո՞ւ է Չարենցն այդ աստիճանի նվիրումով գրում. « Ինչքան էլ տ՛ր սիրտս խոցեն արյունաքամ վերքերը մեր, // Էլի՛ ես որբ ու արնավառ իմ Հայաստան-յա՛րն եմ սիրում»:

10. Չարենցի այս տաղն արտակարգ հարուստ է պատկերավորման միջոցներով, հատկապես մակդիրներով և համեմատություններով: Մակդիր է «Արևահամ բառ»-ը: Մեկ այլ բանաստեղծության մեջ օգտագործել է նաև «արևահամ կին» մակդիրը: Գտե՛ք և դուրս գրե՛ք այլ մակդիրներ: Վերջին տան մեջ կան նաև համեմատություններ. գտե՛ք և դուրս գրե՛ք նաև դրանք:

11. Չարենցի համար ո՞րն է «անհաս փառքի» ճանապարհի խորհրդանշանը:

12. Ովքե՞ր և ի՞նչ արտահայտություններով են գնահատել այս տաղը:

13. Վահան Թեքեյանն ունի «Տաղ հայերեն լեզուին» վերնագրով մի քերթված, որը ևս նվիրված է հայոց լեզվին: Թեքեյանի և Չարենցի տաղերի միջև կա բառապատկերային ընդհանրություն: Կարդացե՛ք Թեքեյանի բանաստեղծությունը և տող առ տող, պատկեր առ պատկեր համեմատե՛ք Չարենցի տաղի հետ:

Էլի գարուն կգա, կբացվի վարդը,
Միրեկանը էլի յարին կմնա:
Կփոխվին տարիքը, կփոխվի մարդը,
Բլբուլի երգն էլի՝ սարին կմնա:

Ուրիշ բլբուլ կգա կմտնի բաղը,
Ուրիշ աշուղ կասե աշխարհի խաղը,
Ինչ որ ե՛ս չեմ ասե - նա կասե վաղը,
Օրերը ծուխ կըլին, տարին կմնա:

Հազար վարդ կբացվի աշխարհի մեջը,
Հազար աչք կթացվի աշխարհի մեջը,
Հազար սիրտ կխոցվի աշխարհի մեջը-
Էշխը կրակ կըլի՝ արին կմնա:

Ուրիշ սրտի համար կհավվի խունկը,
Կբացվի շուշանը, վարդերի տունկը,
Գոգալը լաց կըլի, կընկնի արցունքը-
Գերեզմանիս մարմար քարին կմնա:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱԴԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Կյանքի անցողիկության գաղափարը ինչպե՞ս և ի՞նչ պատկերներով է ներկայացված «Էլի գարուն կգա...» տաղում:
2. Ինչպե՞ս կմեկնաբանես «Էլի գարուն կգա, կբացվի վարդը» տողը:
3. Ինչպե՞ս ես հասկանում «Օրերը ծուխ կըլին, տարին կմնա» արտահայտությունը:
4. Ո՞րն է այս բանաստեղծության գրության շարժառիթը և բուն ասելիքը:

ՄՈՐՍ ՀԱՍԱՐ ԳԱԶԵԼ

Հիշում եմ դեմքը քո ծեր, մայր իմ անուշ ու անգին,
Լույս խորշումներ ու գծեր, մայր իմ անուշ ու անգին:

Ահա նստած ես տան դեմ ու կանաչած թթենին
Դեմքիդ ստվեր է գցել, մայր իմ անուշ ու անգին:

Նստել ես լուռ ու տխուր, հին օրերն ես հիշում այն,
Որ եկել են ու անցել, մայր իմ անուշ ու անգին:

Եվ հիշում ես քո որդուն, որ հեռացել է վաղուց,-
Ո՞ւր է արդյոք հեռացել, մայր իմ անուշ ու անգին:

Ո՞ւր է արդյոք հիմա նա, ո՞ղջ է արդյոք, թե մեռած,
Եվ ի՞նչ դռներ է ծեծել, մայր իմ անուշ ու անգին:

Եվ երբ հոգնած է եղել, և երբ խաբվել է սիրուց -
Ո՞ւմ գրկում է հեծեծել, մայր իմ անուշ ու անգին:

Մտորում ես դու տխուր, և օրում է թթենին
Տխրությունը քո անձիք, մայր իմ անուշ ու անգին:

Եվ արցունքներ դառնաղի ահա ընկնում են մեկ-մեկ
Քո ձեռքերի վրա ծեր, մայր իմ անուշ ու անգին ...

1920 Թվականին Չարենցը մտադիր էր գրել գազելների գիրք, բայց գրածները ոչնչացնում է՝ պատճառաբանելով, թե գազելի ժամանակ չէ և թողնում է այս մեկը:

Գազելը բանաստեղծության կայուն ձև է, կազմված է երկտողանի տներից և կրկնվող կիսատողներից, որոնք իրար են հաջորդում 1-ին և 2-րդ տողերում, հետո հանդիպում են մնացած բոլոր տների զույգ տողերում: Այստեղ կրկնվում է «մայր իմ անուշ ու անգին» կիսատողը և մի յուրահատուկ իմաստ ու տրամադրություն հաղորդում ամբողջ բանաստեղծությանը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչպե՞ս է Չարենցը հիշում իր մորը՝ ինչպիսի՞ն էր նրա տեսքը, որտե՞ղ էր նա նստած:
2. Ո՞ւմ է հիշում մայրը, ո՞ւր էր նրա որդին:
3. Որդու մասին մտորելով՝ մայրը ի՞նչ զգացումներ է անում, նրա տխրությունն ինչի՞ է վերածվում:

ԳԵՐԵՆԻԿ ԴԵՄԻՐՃՅԱՆ

1877-1956

Գերենիկ Դեմիրճյանը մեծ վաստակի տեր գրող է, իր ստեղծագործական երկարատև կյանքի ընթացքում նա գրել է բանաստեղծություններ, պատմվածքներ, վեպեր, վիպակներ, քատերգություններ, ակնարկներ և այլն: Մեծ Հետաքրքրություն են ներկայացնում նրա «Քաջ Նազար» կատակերգությունը, «Վարդանանք» պատմավեպը և մի քանի պատմվածքներ:

Գերենիկ Դեմիրճյանը (ծննդյան ազգանունով՝ Դեմիրճօղյան) ծնվել է 1877 թվականի փետրվարի 17-ին Ախալքալաքում: Նրա հայրը՝ Կարապետ աղան, եղել է սնանկացած վաճառական: Հաճախել է ծննդավայրի մեկդասյա դպրոցը:

Արվեստի հանդեպ նրա սերը բորբոքվել է քահանա հորեղբոր տանը, ուր հաճախակի կազմակերպվում էին գրական-երաժշտական-թատերական հանդեսներ:

Այնուհետև նրանց ընտանիքը տեղափոխվել է Արդահան, ուր և ապագա գրողը շարունակել է ուսումը: Արդահանի դպրոցի հոգաբարձուների միջնորդությամբ 1892-ին Դեմիրճյանը ընդունվում է Էջմիածնի Գևորգյան ճեմարան: 1894-ին կրթությունը շարունակում է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում: Նրա գրական փորձերն առաջինը նկատում և խրախուսում է վիպասան Պերճ Պռոշյանը: Ներսիսյան դպրոցը ավարտելուց հետո՝ 1897-ին Արդահանում աշխատել է որպես օդերևութաբանական կայանի դիտորդ, փոստակայանի վերակացու:

Նա գրական կապեր է հաստատում Հովհաննես Թումանյանի և Ավետիք Իսահակյանի հետ: 1899-ին դառնում է «Վերնատուն» գրական խմբակցության հիմնադիր անդամներից մեկը: Դեմիրճյանը բնակություն է հաստատում Թիֆլիսում, որն այդ ժամանակ հայ գրական կյանքի կենտրոններից մեկն էր: Աշխատում է Հայոց բարեգործական ընկերությունում, այնուհետև Բաքվում հայ մեծահարուստ Մանթաշյանի նավթահանքերում՝ որպես բանվորական ճաշարանի վարիչ:

1905-1908 թվականներին ուսանում է Ժնևի համալսարանում. նախ՝ ուսումնասիրում է բնագիտություն, այնուհետև՝ մանկավարժություն և գրականություն: Իսկ երաժշտանոցում ջութակի դասեր է առնում:

1910-ին Թիֆլիսի Գայանյան (Հովնանյան) օրիորդաց դպրոցում դասավանդում է հայոց լեզու: 1918-ին աշխատել է Հայաստանի Հանրապետության արվեստի վարչությունում: 1925-ից վերջնական բնակություն է հաստատում Երևանում: 1925-1928 թվականներին Հայ մշակույթի ինստիտուտի գեղարվեստական բաժնի գիտական քարտուղար էր: 1927-1931 թվականներին Հայ աշխատավորական գրողների (այսպես կոչված ուղեկիցների) միության նախագահն էր: Դրանից հետո նա հիմնականում զբաղվել է ստեղծագործական աշխատանքով: 1953-ին ընտրվել է Հայաստանի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս:

Մահացել է 1956 թվականի դեկտեմբերի 6-ին Երևանում:

Առաջին բանաստեղծությունը՝ «Ապագա» վերնագրով, տպագրվել է 1893-ին՝ «Տարագ» հանդեսում: 1899, 1913 թվականներին լույս են տեսել բանաստեղծությունների ժողովածուները: Գրել է նաև պոեմներ: Իսկ 1920-ին տպագրեց քառյակների մի ժողովածու՝ «Գարուն» վերնագրով: Սակայն պոեզիան Դեմիրճյանի ասպարեզը չէր:

1900-1910-ական թվականներին նա գրական ընդունակությունները փորձում է արձակի և թատերգության ասպարեզում: 1917-ին գրում է իր նշանավոր «Ավելորդը» պատմվածքը: Մյուս հայտնի պատմվածքներից են «Տերտերը», «Ստամոքսը»: Գրում է նաև «Վասակ», «Դատաստան», «Հովնան Մեծատուն» դրամաները:

1920-ականների սկզբից Դեմիրճյանի ստեղծագործության մեջ կատարվում են գաղափարական նոր տեղաշարժեր՝ կապված ասպարեզ մտած մարդկային նոր կերպարները պատկերելու անհրաժեշտության հետ: Սակայն այս տարիների նրա ստեղծագործության հիշարժան փաստը «Քաջ Նազար» (1923) կատակերգությունն է:

Հետագա տարիների լավագույն երկերը «Գիրք ծաղկաց» պատմվածքն է և «Երկիր հայրենի» դրաման:

1943-1946 թվականներին նա գրեց իր կյանքի գլխավոր գիրքը՝ «Վարդանանք» պատմավեպը: Վարդան գորավարը Ավարայրի դաշտ մտավ, երբ 66 տարեկան էր, Դեմիրճյանը Ավա-

րայրը ոգեկոչեց, այսինքն՝ Վարդանի ու Ավարայրի մասին սկսեց գրել, երբ ինքն էր արդեն 66 տարեկան:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ե՞րբ և որտե՞ղ է ծնվել Դերենիկ Դեմիրճյանը:
2. Որտե՞ղ և ինչ կրթություն է ստացել նա:
3. Գրական ի՞նչ տեսակներով է Դեմիրճյանը ստեղծագործել:
4. Բնութագրե՞ք Դեմիրճյանին որպես գրող: ԹՎարկե՞ք նրա հիմնական գեղարվեստական երկերը:
5. Գրական տարբեր աղբյուրներից գտե՞ք և առանձնացրե՞ք ասույթներ Դ. Դեմիրճյանի մասին:

ԱՎԵԼՈՐԴԸ

Երբեք Հաճի աղան այդպես անխնամ չէր փոխել քայլերը իրենց տնից խանութ գնալիս: Այն Հաճի աղան, որի փողոցով անցնելն իսկ մի հանդես էր. աղայակա՛ն: Միշտ հաստ շալը վաթսուն-յոթանասուն տարեկան կուզի վրայով վզին փաթաթած, երկար իրանը բերընքսիվար ընկնելու պես՝ առաջ թեքած, ուղտի վիզը առջև երկարած, սև ակնոցների արանքից սապատավոր քիթը օդի մեջ խրած, հայացքը դեպի հեռուն, մի կետի՝ ընթանում էր նա: Եվ այդ ֆեսավոր Հաճին ծիսակատարությունների նման անխուսափելի գործելակերպեր ուներ փողոցով անցնելիս. գիտեր ամեն դար ու փոսի, քար ու ոտնատեղի սովորական պատռվածքը, և եթե սայլի, ոտքի կամ բնության հետևանքով քարերն ու ոտնատեղերը նոր կարգով դասավորվեին, Հաճի աղան կանգ կառներ, լրջորեն կկշռեր նոր ոտնատեղի վտանգի չափը, իր դեղնած գավազանի ծայրով բախելով՝ կստուգեր ոտքը դնելիք քարի հավատարմությունը և, գավազանը ցեխի կամ ջրի մեջ դիմհար տալով, զգույշ արլորի պես ոտքերը գետնից պոկելով ու վար դնելով, գերագույն խնամքով կանցներ վտանգավոր տեղը:

Տասը տարի առաջ միայն՝ իր անդրանիկ որդուն թաղելիս, Հաճի աղան թույլ տվեց, որ իր կապույտ մահուդ շավարի տոտերը ցեխտավեն, և մեկ էլ այսօր, երբ իմացավ, որ թուրք գորքը, ռուսներին նեղելով, հաղթական մոտենում է իրենց փոքրիկ սահմանամերձ քաղաքին:

Ասեմք, այսպես դելտեմբերի ցրտին Հաճի աղան դուրս եկողը չէր, այն էլ այս ցեխին, որ գոյացել էր սայլերի ու գորքի տակ կոխկրտած ձյունից՝ հակառակ, որ միշտ այս ամսին գետինը սառած էր լինում:

Անհանգիստ էր վերին աստիճանի: Արդեն մի շաբաթ է՝ ականջին դիպել էր, որ թուրքը գալիս է:

Փորձված, կյանքի չար ու բարուն տեղյակ Հաճի աղան, որ տեսել էր 1877 թվի ռուս-տաճկական պատերազմը, երբ թուրքը կարծես բնականորեն հաղթվում էր, այն Հաճի աղան, որ «քրդանոցներում ու թուրքանոցներում զելվել, առևտուր էր արել և շատ անգամ էր ավազակների ձեռքից աղվեսի պես պոչը պրծացրել, նա լավ գիտեր, որ երբեք չեն սպասի՝ վտանգը գա ու փեշիցդ բռնի.- պետք է ժամանակին որսալ խուսափելու անկրկնելի վայրկյանը:

Բայց այս անգամ վրիպեց... Եվ չարաչար:

Երբ մտավ շուկա, փորձված աչքերով չափեց հրապարակը և զինվորների ու խանութպանների եռուզեռում մի անկարգություն նկատեց, որ նրան դուր չեկավ: Մոտեցավ իր խանութին. խանութը կիսափակ էր: Ներս մտավ թուրք կուլ տալով: Իր քառասնամյա որդին շտապով ապրանքը դարակներից թափում էր մի տուպրակի վրա: Գեր ու կլոր տղամարդ էր նա և հևում էր փուքսի պես. քրտնքի կաթիլները շարվել էին չեչոտ, կարմիր երեսին:

Հաճու աչքերը մթնեցին: Ածիլած կիզակը հաստ բեղերի տակ դողաց, և նա բառերը լիռտելով՝ մռնչած.

– Ծմավոեն... ի՞նչ կենիս...

Ծմավոնը, հորը տեսնելով, ավելի մռայլվեց և մեղավորի պես, կարծես ինքը լիներ աղետի պատճառը, չպատասխանեց և աչքերը գետնին գցեց: Իբրև թե՝ «հա՛, իմացի՛ր, մեռել է»:

Եվ, իսկապես, կարծես մարդ էր մեռել. կաղ գործակատարը տաբուրետ քաշեց Հաճի աղայի առջև և ասաց.

– Բան չկա, Հաճի՛ աղա, նստե՛:

– Ձանրմ, ի՞նչ «բան չկա». ֆուրդո՛ւն բռնեցեք...

– Միսաքը գնաց խանը՝ բռնելու,- պատասխանեց Շմավոնը:

Հաճի աղան չնստեց, ծուղակն ընկած մկան պես կարծես ելք որոնելով՝ նայեց չորս կողմը և դուրս եկավ, որ դուրսն էլ նայի: Բայց հարևան խանութներում առուտուրը եռում էր. խանութպանները հանգիստ էին երևում: Իրենց հարևանը՝ Կորկոտենց Եղիշը, լուրջ և անխռով, ինչպես ամեն օր, ահա բան է կշռում կազակների համար: Հանգիստ է նա իր բահի մորուքով և ընկույզի խոշոր աչքերով: Ութ երեխայի տեր է. եթե «նահանջ» լիներ, նա ավելի շուտ պիտի անհանգստանար: Եվ Հաճի աղան մոտենալով նրա խանութին, հարցրեց նրան.

– Եղի՛շ, աս ի՞նչ կըսեն, թուրքը գռռի՞ր է:

– Այդպես բան կա՞, չիտե՛մ... մեր բակի ֆետպեպիլը ըսավ՝ ահ չկա,- պատասխանեց Եղիշը և շարունակեց իր առուտուրը եպիսկոպոսական արժանապատվությամբ: Հաճի աղան կանգնեց նրա խանութի առջև՝ չիմանալով ի՞նչ անի: Նրա մոտից անցնում էր դյուրզար Պողոսը, որ իրեն ձեռ առնող զվարճախոսներից մեկին պատասխանում էր.

– Ա՛տամ, ինչ որ ուրիշներու գրլի, ան աթող մեզի ըլի. աշխրբովի չէ՞:

– Ինձի աշե, - ձայն տվեց հեռու խանութից ձեռ առնողը,- հագրվե՛, կամենդանթը քեզ համար կառեթ պիտի դրկե, որ փախչիս:

– Կառեթը զանգիններուն համար է, սաղ ըլին ոտքերս,- հանգիստ պատասխանեց առողջ արհեստավորը և շուռ տվեց ուրիշ փողոց:

Հաճի աղային զայրացրեց այս չարագուշակ զվարճախոսությունը և այն է՝ հեռանում էր Եղիշի խանութից, որ ներս մտավ նրա ժրագլուխ աշկերտը և իբրև անմիտ քայլի վրա ծիծաղելով՝ զեկուցեց.

– Խանը ինչ ֆուրդուն օր կա, հատը հարուր, հարուր իցցուն մանեթով բռներ են:

Հաճին զգաց, որ բերնի թուրքը ցամաքում է:

– Ի՞նչ...բռներ են... մեր Միսաքը հո՞ն է, - հարցրեց շնչասպառ:

– Հոն էր, հըմը չկրցավ բռնե,- պատասխանեց թարմ ու անհոգ ձայնով աշկերտը և ավելը վերցնելով՝ սկսեց ուրախ-ուրախ ավելել խանութի սանդուղքը:

Հաճի աղան շտապեց իր խանութը և դողդողալով վրա պրծավ իր որդուն:

– Ի՞նչ էս էրիր... ֆուրդոնները ձեռից բա՛ց ես թողիր... գերդաստա՛նս մնաց...

Շմավոնի կարճ ու գնդիկ մարմինը շտկվեց: Նա իր քրտնած, չեչոտ դեմքը բարձրացրեց և ապրանքը գոգնոցի մեջ՝ նայեց հորը: Հայացքներն իրար հանդիպեցին, և նրանք իրար հասկացան: Հաճի աղան չարագուշակ ժպիտով գլուխը հանդիմանորեն շարժեց.

– Ֆուրդո՛ւն գտի... տղա՛քս ձեռքե կերթան... տո՛ւնս... Շմավոնը դեմքը կնճռոտեց.

– Ձանրմ, ֆուրդուն ինչո՞ւ պիտի չըլի,- բարկացավ նա և ապրանքը թափելով՝ յուղոտ գոգնոցով քրտինքը սրբեց ու, գլորվող տակառի պես կողքեկողք ընկնելով, դուրս գնաց:

Հաճի աղան երկար նայում էր իր որդու թաղիքե վալիկներին, նրա տափակ փափախին և կարմիր շարֆին. մերթ երևում, մերթ կորչում էր զինվորների բազմության մեջ, մինչև որ անհետացավ:

Հաճի աղան դուրս եկավ խանութից և բռնեց տան ճամփան:

Հասնելով տուն՝ դռան մոտ ոտները չքսեց երկաթին, ինչպես անխախտելի պարտականությունն էր Հաճիենց տանեցիների, և ներս մտավ: Իր մեծ հարսը, որ տան միջանցքում բուրդ էր ձողկում, Հաճուն տեսնելով՝ տիրացուի վարժությամբ, իբրև ծիսակատարության որոշ տեղը, ձայն տվեց.

– Շողո՛, Հաճի աղաս էկավ, դայֆան բեր:

Բայց երբ Հաճի աղան մրթմրթաց՝ «հարա՛ն ըլի դայֆան», հարսին այնպես թվաց, թե երագումն է, կամ մի անասելի դժբախտություն եկավ իրենց տան գլխին: Վրա ընկավ Հաճու ոտքերին, հանեց նրա կաշվե կալոշները և, տեսնելով Հաճու շավարի ցեխոտված տոտերը, վախեցավ զնաց խոհանոց՝ տանեցոց իմաց տալու:

Հաճի աղան մտավ «մեծ օդան» և կանգնեց մեջտեղը տխուր՝ արձանի պես:

Ներս մտավ Հաճի աղայի կինը՝ Հաճի մարը, մի ժիր ու նիհար կին:

- Ի՞նչ է Հաճի աղա,- հարցրեց:
- Ի՞նչ պիտի ըլի. թուրքը գուքա, հազրվեցեք:
- Օ՛Ֆ, ամա՛ն, Հաճի աղա, «թուրք, թուրք» առել անցել ես, քաղաքը լիքը սալդաթ է:
- Գլխեդ շատ մի՛ դուս տա, հազրվե՛, - հրահանգեց Հաճի աղան:
- Թուրք չկա, չկա. դայֆադ խմե՛, - արագախոսեց ժիր կինը և դուրս գնաց:

Այդ միջոցին Հաճի աղայի թուր՝ Շողոմ, մի կարմրաթուշ աղջիկ, տռուզ ձեռքերով ներս բերեց կաթով սուրճը:

Հաճի աղայի մեծ հարսը բերեց կապույտ փռոցը, փռեց մինդարի առջև՝ կապերտի վրա, առավ աղջկա ձեռքից սուրճը, որ դնի փռոցի վրա: Բայց Հաճի աղան մոռոթը կախ, հուզված և դժկամ՝ ձեռքով արավ, որ սուրճը տանեն դուրս: Այս արդեն այնպես ազդեց հարսին ու աղջկան, որ նրանք խորտակված իրար նայեցին, կարծես երկրի հաստատությունը խախտվեց: Հաճի աղան սուրճը չխմի՛...

Մեծ հարսը ձեռքով արավ Շողոմին, որ դուրս գա, ինքն էլ դուրս ելավ, ինչպես հիվանդի սենյակից, որ չանհանգստացնեն նրան:

Հաճի աղան գնաց, ծալապատիկ նստեց մինդարին և թթվեց: Մտքերով շփոթված հայացքը զգեց իր տան սարք ու կարգին, կարծես օտարական լիներ: Սենյակը խաղաղ էր: Մինդարները, մութաքաները, խալիները իրենց տեղից այնպես հարազատ և դաշն խաղաղությամբ նայում էին Հաճի աղային, և այնպիսի մի հաստատություն կար այդ առարկաների մեջ, որ կարծես ոչ մի գորություն խախտել չէր կարող: Տարօրինակ թվաց մի վայրկյան այն խռովությունը, որ ընկել էր իր սիրտը, և պատուհաններում հանգիստ դրած այն ծաղկի փայտե թաղարները, որ հաճախ լվանալուց ճերմակել, փայլում էին, կամ սենյակում երեք պատերի տակով փռված մինդարներն ու պատերին կայցրած երկար բարձերը անվրդով պատմում էին խաղաղ հրավերքների, ուրախ հարսանիքների, անխռով օրերի մասին:

Եվ այդ բոլորը ահա այսօր անհաստատ բաներ էին: Այսօր իսկ կարող էին այդ ամենը լքվել... Դեռ տասը տարեկան հասակից իր հոր հետ ճամփորդելով «քրդերն ու թուրքերը», նրանց հետ առևտուր անելով՝ ահա վաթսուն տարի է՝ տուն է շինում Հաճի աղան: Եվ հիսուն տարի կանոնավոր ժամացույցի պես խաղաղ չքչացել է նրա երջանիկ տունը և ահա այսօր պետք է քանդվեր: Եվ ինչպես ջրում խեղդվողը հանկարծակի արագությամբ հիշում է իր անցած կյանքի մանրամասները, այնպես Հաճի աղան հիշեց իր անցյալը՝ ինչպես հանգիստ քուն դրեց ու թաղեց հանգուցյալ հոր կողքին իր մորը, հիշեց 1877-ի պատերազմը, որ նրա համար անցավ իբրև իրեն չվերաբերող մի փոթորիկ... միտքը բերեց՝ ինչպես երեսուն տարեկան երիտասարդ՝ իր կնոջը տարավ Երուսաղեմ... ինչպես այնուհետև ձմեռ, գարուն նրա տանը տոն էր ու հարսանիք, նրա կյանքը առևտուր էր, ապրանք ու հարստություն: Հետո որդիները եկան հասան, ամուսնացան, բեղմնավորվեցին: Ամեն, ամեն ինչ եկավ իր կարգով, ու եղավ, կարծես այդպես էլ պարտավոր էր լինելու, Հաճի աղան վանքի պես տան տեր դառավ, և այդ տունը այսօր քանդվում էր:

Ի՛ր տունը, հի՛ն տունը: Արյունը գլուխը խփեց: Ինչպե՞ս, իր ընտանիքը, հարստությունը, այդ նույնքան հիմնավոր բանը, որքան ինքը՝ աշխարհքի հաստատությունը...

Եվ Հաճի աղան՝ իբրև փորձված մարդ, իսկույն հարմարվեց կենսական իմաստությանը. ըրոշեց խիստ ու հրամայական մի կարգ՝ ազատել ամենակարևորը, իսկ եթե այդ չեղավ՝ կարևորագույնը: Վճռեց ու դաժանացավ. ամեն ինչ անել, ամեն խստություն գործ դնել, անգթանալ, թեկուզ և ստորանալ, բայց փրկել այդ կարևորագույնը՝ իր տունը, իսկ եթե այդ չեղավ, իր անձը:

Կողքի «պզտի օդայում»՝ թիթեղե փեչի վրա, հեռավոր գուռնայի պես ծվծվում էր և դժժում էր գյուգյունը և սենյակի տաք ու չոր օդը բարեխառնում ախորժեղի խոնավով:

Հենց այդ փոքրիկ սենյակում՝ անկողինների ծալքի տակ, նստած էր մի տարեց կին: Դա Հաճի աղայի անդամալույծ քույրն էր՝ Մրբունը, որն ամուսնու մահից հետո լվացք անելիս մի անգամ սաստիկ մրսեց, տիֆով հիվանդացավ և անդամալույծ եղավ. էլ չիմացվեց՝ տիֆի՞ց էր, թե՞ արդեն տրամադիր էր: Ականջներն էլ ծանր էին: Հաճի աղան իր անվան չուտեցրեց, որ իր հիվանդ քրոջը ուրիշները պահեն և իր վրա խոսեն. հիվանդին բերեց իր տուն և անկյուն տվեց: Խեղճ կինը՝ ի բնե աշխատասեր և ինքնասեր, ուզելով մի բանով եղբորը վարձահատույց լինել, ընտանիքի կարն ու կարկատը, ինչպես և գուլպան իր վրա առավ, ու թեև նրա համար սաս-

տիկ դժվար էր այդ աշխատանքն էլ, բայց նա անմոռունք ու կամովին անում էր: Գեր էր, ծանր և սաստիկ նեղությամբ նստած տեղից շարժվում էր և գետնաքարշ մի կերպ դուրս գնում:

Հաճու նստած տեղից երևում էին նրա ուռած մատները, որով նա ծնկան վրա փռած մի կտոր հարդարում, շուռումուռ էր տալիս, նորից հարդարում, չափում ինչ-որ մի կարկաստանի համար:

Այդ մատներն սպիտակ էին, կարծես ջրով լիքը: Եվ այնքան խաղաղ, առօրյա էր այդ մատների աշխատանքը, որ բոլորովին չէր բռնում օրվա խռովիչ դեպքերին:

Հաճին նայեց անդամալույծին, բայց չտեսավ նրան: Նա սենյակի իրերն էր մտովի տեղավորում ֆուրգոնի մեջ և որոնում էր ամենապետքական իրերը:

Հետո մի տասը-քսան անգամ վեր կացավ, պատուհանից դուրս նայեց՝ փողոցի շարժումներից մի բան գուշակելու համար: Փողոցում շարժում չկար, կարծես ամեն ինչ խաղաղ ժամանակինը լիներ:

Բայց ահա մթնելու վրա էր, որ խառը ձայներ լսվեցին: Հաճին վեր թռավ և շտապեց դեպի պատուհանը: Մի քանի մարդիկ անցան պատուհանի տակով՝ խանութի ապրանք շալակած, որ տուն էին կրում: Դրանց հետևից մի սահնակ՝ անտանելի ծանր բեռով, բոլորը կին ու երեխա, հետևից տղամարդիկ՝ ոտքով: Հարևանենք էին: Այդ առաջի սահնակը այնպես ազդեց Հաճուն, ինչպես մի հիվանդի մահը, որ թեև առաջուց սպասելի էր, բայց դեռ այնպես չէր ազդում: Բայց երբ վերջապես սպասելին փաստ է դառնում, մի դաժան ու սառը բան է զգացվում, որ առաջ չէր կարելի երևակայել: Ու մինչ Հաճի աղան դուրս կգար գնացողներին բան հարցնելու, հանկարծ իրենց տան դուռը գոռաց: Ներս ընկավ Հաճի աղայի կրտսեր որդին՝ Հակոբը, և նախասենյակից հուզված ու կտրուկ ձայնով կանչեց.

– Ապլա՛...

Հաճի աղան վազեց դեպի նախասենյակի դուռը:

– Հակոբ՞ը... - հարցրեց շնչասպառ:

Հակոբը, ցեխոտ ոտքերը հազիվ սրբաց, «թուրքերը եկան, փախչինք պիտի» ասելով՝ շնչասպառ ներս մտավ և հարձակվելով անկյունները դրած սնդուկների վրա՝ սաստիկ ուժով առաջ քաշեց:

Հաճին մոտեցավ որդուն:

– Ֆուրդուն բռնեցի՞ք...

– Ֆուրդուն չկա, խզակ բռնեցինք:

Հաճի աղան ընդունեց այդ առաջին մեծ հարվածը, բայց կյանքի բովում գեղված մարդը իսկույն անդրադարձավ, որ խորհրդածության ժամանակ չէր. պետք էր ո՛չ միայն հաշտվել այդ աղետի հետ, այլ եղածն ազատել: Եվ ի՞նչ պիտի տեղավորվեր մի սահնակի վրա... Հաճի աղան ավելի խստացավ:

– Տե՛, ազատելուն ազատեցեք... ամենեն պետքականը...

Հակոբը քանդեց իր կավազույն բաշլըղը, հանեց դեղնած հաստ վերարկուն և հարձակվելով սնդուկների վրա, այնպես ուժով առաջ քաշեց, որ գոռից դեմքի ու վզի երակները ուռան:

Իրար հետևից ներս լցվեցին և դռների մոտ արձանացան Շողոն, Շմավոնի կինը, փոքր հարսը և մի հարևանի կնիկ:

Հաճին մոտեցավ Հակոբին և թևը բռնելով՝

– Խելքդ մի կորցնե,- հրահանգեց,- ինչ որ պետքական է, ա՛ն ժողվե:

Հետո տնեցոց հրահանգեց.

– Ամենեն պետքական բաները ժողվեցեք, տեսե՛ք՝ ճամփեն կմնաք:

- Հարևանի կնիկը, որ լուռ սկանջ էր դնում սրանց, տեսնելով, որ տան բոլոր անդամները գործի անցան, դիմեց Հաճի աղային:

– Հաճ աղա, օտա՛ցդ մեռնիմ, դուք կերթաք, մենք ի՞նչ պիտի էմենք:

– Եսի՞մ, - կտրեց Հաճի աղան.- իմ ձեռքը ի՞նչ կա:

Հարևանի կնիկը, որն դառն աղքատի վիճակին էր և համարյա Հաճի աղայի տան գործն անելով՝ մի կտոր, մի փշրանք ստանալու հուսովն էր, սարսափեց: Նա կարծում էր, թե աշխարհն այնպես էր շինված, որ չի քանդվիլ երբեք, իսկ եթե քանդվի էլ, Հաճի աղան երևի բան կգիտենա դրա դեմ անելու: Չանի էլ ու գնա՝ մի բան կանի իր մման անճարներին:

Բայց Հաճի աղայի չոր ու դաժան պատասխանը սթափեցրեց խեղճ կնկան: Եվ տեսնելով,

որ իրեն նայող չկար՝ հառաչեց ու դուրս գնաց:

Ու մինչ տնեցիք հավաքում էին իրերը, Հաճի աղան սկսեց անցուդարձ անել սենյակում՝ իբրև տխուր ուղտի կերպարանք: Նայում էր անկարգացած սենյակին, ուր իրար վրա թափված էին «անպետք» ու «ավելորդ» իրերը, տեսնում էր իր տան քանդվելը, բայց հուսահատությունից չէր զգում ցավը: Ավելի մեծ գույումը աչքին բան չէր թողնում երևալու: Նա դեղնել, մագաղաթ էր դառել: Տնեցիք շորերը կապում, նորից քանդում և կրկին ընտրում էին, և շարունակ լսվում էր «Հաճ աղայիս գուլպաները», «Հաճ աղայիս դոշակը», «Հաճ աղայիս բուրբը չթողնեք»: Շմավոնի կինը, կողքից նայելով Հաճի աղային և տեսնելով նրա մեռելադեմ երեսը, դիմեց նրան.

– Հաճ աղա, Կոնյաք ըմ խմե՞ս:

Հաճի աղան լուռ էր, տխրատեսիլ արձանի պես: Նրա բերանը հուզմունքից դառնացել էր, և նա թուրք կուլ տալիս դեմքը ծռմռում էր:

Բայց ներքուստ շտապում էր և դիտում էր տնեցոց աշխատանքը: Եվ մռայլ, խստացած բերդապահի պես քանի գնում, իր բերդի զանազան իրերի արժեքը վերագնահատելով՝ մերթ կարգադրում էր. «Պետքականները, պետքականները», մերթ սարկազմով աղաչում էր. «Աստո՞՛ւ սիրուն, հասկացե՞ք, սա պետք չէ, ա՛ն», իսկ վերջը՝ կռիվը ոգևորողի պես սկսեց քաջալերել. «Տե՛, տե՛, տե՛, հա՛ պապամ հա՛... պետքականները, պետքականները»: Ու այսպես «պետքականները» կրկնում էր ծիսակատարության ձայնով և զգում էր, որ մեծ գործ է կատարում, տուն է ազատում:

Իսկ այդ միջոցին մյուս փոքր «օղայում» նստած էր անդամալույծը և հանդարտ, աչքի տակով նայում էր իր եղբորը: Վերին աստիճանի խաղաղ էին նրա խոշոր ու մարած աչքերը, որոնց տակերը կապտած՝ պարկեր էին գոյացել: Նրա դեմքը ուռած, հիվանդագին ճերմակ էր:

Բայց նրան ոչ ոք չէր նկատում:

Տնեցիք արդեն պատրաստ էին, երբ դռան մոտ խզզալով ու դռնփելով կանգնեց մի ծանր, մեծ սահնակ: Շմավոնը կարմրած, այլայլված, նստել սալարանքներով լի տոպրակների վրա՝ սահնակը բերում էր տանեցոց տանելու: Նրա գնդիկ մարմինը վար սողաց տոպրակների վրայից, և նա, ներս ընկնելով, շնչասպառ գուժեց.

– Չուլումը տեսա՞ք... խանութին սալարանքը մնաց... ֆուրգուն չկա...

– Վո՛ւտ՛ւշ...- ծնկերը ծեծեցին հարսները և նայեցին Հաճի աղային:

Հաճի աղան ուղտի տխրությանը նայեց Շմավոնին ու լռեց:

– Տե՛, Հաճի՛ աղա, հագի՛ր էրթանք, - ասաց Շմավոնը և դուրս գնաց:

Շմավոնի կինը աթոռ բերեց, որ Հաճի աղան նստի. հետո փոքր հարսի օգնությամբ Հաճի աղայի ոտքերը հագցրին մի երկրորդ շալվար ևս:

Այդ ժամանակ «պզտի օղայից» խուլ հեծկլտոցներ լսվեցին:

Ատ վո՞վ է, - հարցրեց Հաճի մարը և ներս գնաց:

Հարսները հետևեցին նրան: Ինչ-որ բան խոսեցին անդամալույծի հետ, որից միայն լսվեց Հաճի մոր ձայնը.

– Հաճի աղան չի սառի ճամփան, մի՛ վախճա:

Եվ նորից սկսեցին խոսել:

Հաճի աղան բութ հանգստությամբ իր մեջ նկատեց, որ նա ամբողջ օրը չէր մտածել անդամալույծի մասին. և հիմա մտածելով՝ անախորժություն զգաց: Եվ ոտքը կոխելով շալվարի մեջ՝ խոսեց.

– Ի՞նչ է, ի՞նչ է եղեր:

– Հե՛չ,- պատասխանեց փոքր հարսը,- Սրբունը գուլա:

– Ան ինչի՞ է ձեռք ու ոտք էղեր. ու՞ր պիտի գա,- խոսեց Հաճի աղան բարկությամբ և մտքում գայրացավ, որ անդամալույծը ինքը իր բերնով չի հայտնում, թե համաձայն է մնալու և ուրիշներին է թողնում այդ բանը հայտնելու անախորժությունը:

Փոքր հարսը զարմանքով լի աչքերը հառեց Հաճի աղային.

– Սրբունին պիտի թողե՞նք...

Հաճի աղան ծաղրեց.

– Է՛, խանումս, տեսնինք ես ու դու պիտի երթա՛նք...

Հաճի մարը, որ դուրս էր գալիս անդամալույծի սենյակից և լսեց այս վերջին խոսքերը, սար-

սափեց.

– Քա՛, ձունը գլուխս, Սրբունին պիտի թողնե՞նք...

– Ե՞ս եմ թողնողը,- հարեց Հաճի աղան,- տեսնինք խզակին վրա տեղ կա՞:

– «Տեղ կա՞»-ն ինչ խոսք է, Հաճի աղա, ասքան մարդս օր կերթանք...

Եվ Հաճի մարը, անընդունելի համարելով ամեն պատճառաբանություն, փոքր հարսին ձայն տվեց՝ ինքն էլ գնալով փոքր սենյակը.

– Եսթե՛ր, օղույ, Սրբունին հագցո՛ւ:

Անկյունում՝ մինդարի վրա, ծալապատիկ նստել էր անդամալույծը և գլուխը ծնկան վրա կախած՝ աչքերն էր սրբում:

Հաճի մարը ծռվեց նրա գլխին.

– Սրբո՞ւն, քուրս, ինչի՞ գուլաս:

Անդամալույծը չպատասխանեց:

Շմավոնի տղան՝ ութ տարեկան Կարոն, որ ներս էր եկել և հետևում էր սրանց խոսակցու-թյան, բացատրեց.

– Թուրքերեն կվախենա:

Տիրեց լռություն:

– Ի՞նչ էնիմ,- լացակումեց անդամալույծը,- Հաճ աղաս շատ է վախեցե, վախենամ թե ճամ-փան ցավի գա:

– Ատոր համա՞ր գուլաս,- զարմացավ Հաճի մարը,- ջանըմ, մեր դարդը մի՛ քաշե, հագրվե՛...

– Ե՞ս, տխրաժպիտ նայելով Հաճի մորն ու փոքր հարսին՝ ասաց անդամալույծը,- ես չեմ գա:

– Ինչի՞,- հետաքրքրվեց Հաճի մարը:

– Դուք ձեզ հոգեստանն ազատեցեք. ես անդամալույծ եմ, այսօր կամ, էգվան չկամ,- պա-տասխանեց անդամալույծը տխուր համակերպությամբ:

– Անդամալո՞ւյծն ինչ խոսք է, ջանըմ,- հանդիմանեց Հաճի մարը,- հոգին հոգի է, հագրվե՛:

Հաճին մեծ սենյակում անցուդարձ էր անում և լսում այս խոսակցությունը: Հաճի մոր պն-դումները նրան զայրացրին, և նա իր կնոջը ձայն տվեց.

– Թեզ էրա՛, ատոր վախտը չէ՛:

Հաճի մարը դուրս եկավ անդամալույծի սենյակից և աչքերը հառեց Հաճի աղային:

– Տեղ չկա՛... կիմանա՞ս,- գոռաց՝ խեղդելով իր ձայնը Հաճի աղան և շեշտեց «կիմանա՞ս» բառը:

– Է՛,- հակաճառեց Հաճի մարը,- բեռդ պակսեցու, տեղ գլի:

– Է՛,- տնտղեց Հաճի աղան,- բեռդ որ պակսեցնես՝ տղաքդ ինչո՞վ պիտի պահես. աշխարհք խո չվերջացա՞վ:

Եվ Հաճի աղան բշլըղը փաթաթեց:

– Ջանըմ, գնացե՛ք, իմ պատճառովս միք ուշանա, Հաճ աղաս մեղք է,- տրտնջաց անդամա-լույծը ներսից:

– Այդպես բան չկա, մենք կերթանք, դու ա պիտի գաս,- հրահանգեց Հաճի մարը և դուրս գնաց՝ կառապանին տեսնելու:

Հարսները ներս եկան, և մինչև անգամ երեխաները բոլորեցին անդամալույծի առաջ:

Բայց նա, տեսնելով, որ ամենքը իրեն են նայում և սպասում, վեր նայեց խաղաղ ու բարի աչքերով և ասաց.

– Դուք գնացեք, ինձի մի՛ք աշե, ես կմնամ, իմ ջանս ազիզ չէ:

Այդ ժամանակ ներս մտան Հակոբն ու Շմավոնը և սկսեցին չորս կողմ նայել, թե ինչ կա էլի վերցնելու:

Հարսները սկսեցին սրանց աղաչել, որ անդամալույծին համոզեն իրենց հետ գալու և տեղ գտնեն սահնակի վրա:

Երկու եղբայր իրար նայեցին լուռ ու դժվարացած, հետո՝ դեպի Հաճի աղան, որ լսեց հարս-ների աղաչանքը:

Հակոբը կեղծավորություն արավ.

– Հը՞, Շմավո՞ն, ի՞նչ կըսես, ապրանքը թեթևցնե՞նք...

Շմավոնը դեմքը կնճռեց ժլատի պես, որից փող են խնդրում:

– Չգիտեմ, ի՞նչ ըսեմ...

Ու դուրս գնաց:

Երեխաները սկսեցին լաց լինել:

– Սրբուն մամին թուրքերը պիտի մորթե՛ն...

Եվ ընկնելով անդամալույծի վրա՝ փաթաթվեցին նրան և սկսեցին համբուրել:

Սա գրկեց նրանց և փղծկաց.

– Աստված հետներդ, գառներս, գնացեք, ինձի մի՛ք աշե:

Հարսները լցվեցին և երեխաներին քաշեցին մի կողմ:

Հաճին մի երկու անգամ գնաց-եկավ մեծ սենյակում, հետո մուշտակը հագած եկավ փոքր սենյակը և մոտեցավ քրոջը:

– Է՛, Սրբո՛ւն,- ասաց նա դժվարությամբ ու տհաճությամբ,- մնա՛ս բարով:

Եվ ձեռքը դրեց նրա ձեռքի վրա:

– Մի՛ վախենա, թուրքերը քեզի ձեռք չեն տա. երբ օր ներս մտնին, ըսե՛ «տունը ձեզի», ինձի ձեռք մի՛ք տա:

Շմավոնը, որ ներս էր մտել, հարեց.

– Ըսե՛ «սիզուն օճախա դյուշմիշըմ», ձեր օճախն եմ ընկե:

Անդամալույծը դողդոջյուն ձեռքերով բռնեց Հաճի աղայի ձեռքը, տարավ շրթունքներին և համբուրեց: Մի արցունքի կաթիլ նրա աչքերից գլորվեց, ընկար Հաճի աղայի ձեռքին: Անդամալույծը ծոցից թաշկինակը հանեց և սրբեց եղբոր ձեռքը և ապա՝ մի գույգ «դֆտիկ» ձեռնքց հանելով մինդարի տակից՝ տվեց Հաճի աղային.

– Ձեռքերդ անցու՛ ճամփան չմսիս:

Հետո փղծկալով՝ վրա բերեց.

– Քոռանա՛ լուսա... տղոցը համար չկրցա գործե:

– Բան չկա, բան չկա,- սառը հանգստացրեց Հաճի աղան:

Հետո դարձավ տնեցոց.

– Դե՛:

Ու ինքը դուրս գնաց: Հաճի մարը այնտեղ չէր: Ըստ երևույթին գնացել էր հարևանների մոտ՝ անդամալույծի համար տեղ գտնելու:

Հաճի աղան, ընտրելով սահնակի ամենահարմար տեղը, նստեց, փաթաթվեց վերմակի մեջ ու մնաց:

Եվ որովհետև տնեցիք ուշանում էին, անշուշտ անդամալույծին համոզելու, որ գա,- Հաճի աղան բարկացավ և գլուխը վերմակի տակից հանելով՝ ձայն տվեց.

– Թե՛գ էրեք, ատոր վախտը չէ՛... «էկա՛ն»...

Ու շտապով դեմքը ծածկեց վերմակի մեջ, որ չմրսի:

Բայց ներսը ուշանում էին: Շմավոնն ու Հակոբը հասկանում էին Հաճի աղայի հաշիվներն ու խստությունը: Գիտեին նրանք, որ կյանքի իմաստությունը հենց այդ էլ պահանջում է: Եվ տեսան էլ, որ հոր վճռական քայլերի շնորհիվ բավական ապրանք են ազատում և իրենք էլ փրկվում են: Նրանք հասկանում էին, որ հայրն իրավացի է՝ գնահատելով ժամանակը. պետք էր հասկանալ նաև նրա իմաստությունը. այն, որ իրենց հարստությունն էլ իրենցը չէր, այլ մի-այն իրենց փախցրածն էր իրենցը: Եվ ահա հաշտվեցին, որ իրենց հայրը խելոք է մտածում՝ անդամալույծին թողնելով և ապրանքը տանելով: Ո՞վ գիտե, օտարություն է, պետք է ապրել, նոր տուն շինել, աշխարհք հո չվերջացա՞վ...

Եվ այսպիսի դեպքերի հասկանալի արագությամբ հաշտվեցին, որ անդամալույծը ավելորդ էր իրենց մեջ:

Եվ որովհետև ուրիշների հետ համեմատած՝ իրենց «հաջող» փախուստը, մահից փրկվելը, վտանգից դուրս գալը մի փոքր բարձրացրել էր նաև նրանց տրամադրությունը, նրանք մինչև անգամ սկսեցին կատակել.

– Մենք կերթանք հարսնիք, հորքուրս կմնա տունը պահելու:

– Երկու օր չի քաշե՛ մենք ետ կդառնանք:

– Թուրքերը խանում-խաթունի պես կաշեն հորքուրին:

– Ջանըմ, անդամալույծին վո՞վ կդիպչի:

– Հե՛չ, հըլպը՛տ որ:

– Քեֆը հորքուրինս է:

Իսկ հարսները, որ լավ գիտեին Հաճի աղայի անկոտրում բնավորությունը, տեսնելով՝ իրենց ամուսիններն էլ անհոգ են, հավերի պես համակերպվեցին ու լռեցին:

Եվ լաց լինելով՝ հագցրին երեխաներին: Հետո մոտեցան անդամալույծին, համբուրվեցին նրա հետ: Հետո բերին մի քանի կարտոֆիլի մոմ, հացի մի մեծ կապոց, ջուր, լուցկի, դրին անդամալույծի մոտ և «օ՛ֆ, օ՛ֆ» անելով՝ դուրս եկան:

Դուրսը թաղի մեջ մեծ տազնապ էր: Լուսամուտներից ու բաց դռներից դուրս ընկած լույսերի շերտերում բացվում ու խփվում էր բազմությունը:

Գլուխները հաստ շալերով փաթաթած ապլաներ, բաշլոներով տղամարդիկ, շարֆերով տղաներ ու աղջիկներ՝ իրար անցած, խռնված էին դռների առջև, սահնակների ու ֆուրգոնների չորս կողմը: Աղմուկ, վայնասուն... Ահա ծերուկ ժամկոչը, որի չոր, ածիլած կզակը դողում է, ընտանիքով մնացել է առանց սահնակի. ոտքով պիտի գնան: Ծերուկը գլուխը կորցրել, երեխա է դառել: Կինը դայակի պես հետևից քշում է այս ու այն կողմ: Ահա ճամփա ընկան առանց բեռի ու հագուստի: Ահա մի հասակավոր մարդ կռվում է իր հարևանի հետ, որը նրա կառապանին ուղում է մի բան ավել տալ և սահնակը խլել: Երկուսն էլ ձիու սանձերը դետուղեն են քաշքշում:

– Աստված սիրողը իմտա՛տ հասնի...մնացի՛նք...- գոռում է մի կին անպատասխան ժխտրի դեմ:

Մի ֆուրգո, իրերով ու մարդով սարսափելի բեռնած, եկավ դեմ առավ Հաճիենց սահնակին:

– Խաբարդա՛, - գոռաց կառապանը իր մուշտակի միջից:

Մի դեմք՝ շեկ ու կոշտ բեղերով ու մորուքով, դուրս նայեց ֆուրգոնի առաստաղի տակից:

Գատարանի գրագիրն էր:

– Ինչ՞ եք կայնե,- գոռաց:

Ուրիշ երկու ֆուրգոն էլ եկան դեմ առան: Սկսեցին շտապեցնել: Գրագիրը գոռգոռաց:

Նրան բացատրեցին, որ անդամալույծի պատճառով են Հաճիենք կանգ առել:

– Ի՞նչ եք կայնե, գնացեք,- ձայն տվեց գրագիրը,- անդամալույծ տանելու վա՞խտ եք գտե, вросьте ее к черту!

– Կնկան թողնեն, երթա՞ն, ի՞նչ կըսես,- առարկեցին ֆուրգոնի միջից:

А что ж: Պռավիլա՞ է, ի՞նչ է: Եփ օր Էվակուացիա է, անդամալույծները ավելորդ են:

– Տե՛, թե՛գ էրեք, ուշացանք,- կատաղեց Հաճի աղան և ուզեցավ տեղից վեր կենալ, որ գնա տեսնի թե ինչ են անում ներսը:

Այդ ժամանակ Շմավոնն ու հայ կառապանը, Հաճի մոր թևերից բռնած՝ բռնի դուրս էին բերում: Հաճի մարը զայրացկոտ շարժումներով աշխատում էր թևերն ազատել և ներս գնալ նորից անդամալույծին բերելու:

– Թողե՛ք, ես անոր պիտի տանիմ,- ծվում էր նա:

– Տեղ չկա, մա՛րս, տեղ չկա,- համոզում էր կառապանը:

Բայց կինը կատաղի դիմադրում էր:

Հարսերն ու երեխաները լաց էին լինում: Իսկ ֆուրգոններից բողոքում և շտապեցնում էին:

Շտապով հարսերին ու երեխաներին տեղավորեցին սահնակի վրա: Հաճի մորն էլ բռնի բերին, գցեցին սահնակի վրա:

Հենց որ նա ընկավ հարսների և երեխաների մեջ, կառապանը մտրակը կատաղի զարկեց ձիերին: Սահնակը թռավ, և կառապանը ձիերի կողքից վազեց:

Շմավոնն ու Հակոբը մնացին դռանը: Մեկնելուց առաջ մի պահ սպասեցին և նայեցին իրար: Պետք էր ներս գնալ և վերջին անգամ տեսնել անդամալույծին: Պատուհանից երևում էր սենյակի լույսը: Երկու եղբայր ներս մտան, մոտեցան անդամալույծին: Սա հանգիստ նստած էր, և այդ խաղաղությունը բոլորովին չէր բռնում այն ընդհանուր շփոթի ու երկյուղի հետ, որ պաշարել էր ողջ քաղաքը:

Հակոբը մոտեցավ նրան.

– Հորքուր ջան... ավել-պակաս հալալ...- և փղձկալով բռնեց համբուրեց անդամալույծի ձեռքը:

– Աստված հետներդ, գառնե՛րս, գնացեք... Հաճ աղայիս, տղոցը լավ աշեցեք, չմսին...- խոսեց անդամալույծը հոգածու ձայնով:

Շմավոնը կեղծ ու շիտակ զգացվեց, բերանը ծոմռեց, նա ևս մոտեցավ, համբուրեց անդա-

մալույծի ձեռքը և անարցունք աչքերը սրբելով՝ դուրս եկավ: Նրան հետևեց Հակոբը, որ դուրս գալիս շտապեց և դիպավ Շմավոնին:

Եվ երկու եղբայր ֆուրգոնների կողքից վազեցին, որ հասնեն իրենց սահնակին:

Քաղաքը տեղից վեր կացել, գնում էր: Ֆուրգոններ, սահնակներ ու նրանց կողքից հետևակ մեծ ու փոքր շարաններ շփոթված, աղմկելով գնում էին: Երբ Շմավոնն ու Հակոբը հասան իրենց սահնակին, հետևից քաղաքը լուսավորվեց շուկայի հրդեհով, իսկ ֆուրգոնների կտավե ծածկոցները սկսեցին փոփռալ թեթև քամուց:

– Հո՛ւ՛ո՛ւ՛փ,- ձգեց իրենց առջևից գնացող ֆուրգոնի կառապանը և կանգնեցրեց ֆուրգոնը: Նրան Հետևեցին մյուսները, և բոլորը կանգնեցին:

– Ինչի՞ կայնեցինք,- դժգոհեցին և վախեցան զանազան կողմներից: Բայց ոչ ոք չէր իմանում՝ ինչո՞ւ: Միայն երեխաների ճիչն ու կանանց լացը ավելի պարզ լավեց աղմուկի միջից: Քաղաքի կողմը՝ դեպի արևմուտք, որ թաղված էր մթան մեջ, լավում էին թնդանոթի խուլ դողոյուններ: Տազնապը սաստկացավ քարավանի մեջ: Հաճու թռռները սկսեցին հեծկլտալ:

– Սրբուն մամին մորթե՛ն պիտի...

Հաճի մարը, որ մինչև այդ խստահայաց ու անհաշտ նայում էր չորս կողմը, լսելով երեխաների լացը, հանկարծ լցվեց և հեծկլտաց:

– Չեն մորթե, մի՛ք լա, - ու սկսեց աչքերը սրբել:

Երեխաները, տեսնելով նրա լացը, ձայները բարձրացրին:

Թնդանոթի ձայներից Հաճի աղայի երևակայությունը վառվեց: Նա ավելի պարզ սկսեց շոշափել մահը:

Եվ հրդեհի մեջ պաշարվածի պես նա զգաց, որ տարերային մի ուժ նրան մի բան է թելադրում. փախչել, շուտով դուրս գալ մահի ճիրաններից: Մնացածը՝ կին, երեխա, ընկեր, բարեկամ, նսեմացավ նրա աչքում: Եվ ակամա՝ Եվ նա զգում էր, թե որքան դառն է այդ «ակաման», բայց և զգում էր, որ այդ այդպես է:

Նա կարծես ցնորքի մեջ լինեք. նայում էր չորս կողմ և ամեն առարկա մի վայրկյան տեսնելով՝ մյուս վայրկյանին մոռանում էր: Կարծես երագում՝ նրա մոտով՝ ճամփի եզրով, իրենց հարևան կոշկակար Պողոսը՝ ուժեղ երիտասարդ, յափնջու վրա երկու երեխա նստեցրել, քարշ էր տալիս ձյան վրայով: Նրա հետևից հևալով և լնզլնգալով գնում էր նրա ծերուկ հայրը: Ահա հոգնեց նա, եկավ կանգնեց և ճամփից դուրս գալով՝ գնաց խրվեց ձյան մեջ ու մնաց:

– Ալ չեն կրնա... գնացեք...

Նայում է նրան Հաճի աղան և իսկույն մոռանում է:

Ահա քարվանը նորից շարժվում է: Լեռնային սառնամանիքը իր սառցե մատներով բռնում է Հաճու մորուքը, և նա դեմքը ծածկում է վերմակի տակ:

Փչում է լեռնային քամին և ձյան փոշին, առաջ օձերի պես սողալով և ապա բարձրանալով իբրև վիշապներ, թռչում են օդի մեջ, նվում, վայում...

- Աստվա՛ծ, դուն հասնես,- մրմնջում է Հաճի աղայի փոքր հարսը:

Մեծ հարսը երեսը խաչակնքում է և սկսում «Հավատով խոստովանիմը» բարձր և զգացված:

Իսկ իր շալի մեջ Հաճի մարը կծկված՝ մտածում է անդամալույծի վրա և ծանր հառաչում:

Սուր վտանգն ու աղմկալից սարսափն անցել էին՝ տեղի տալով մի խաղաղ թշվառության, որ ընդունեց փախստականներին հետևյալ գավառական քաղաքում: Հանկարծակի աղքատներ, մի ժամում անտունացած մեծատուններ, ի ծնե չքավորներին խառնված, եկան ապաստանելու՝ ամեն կարոտություն չկռահող, ամեն ինքնասիրություն չհաշվող բարեգործության և նրա միշտ ուշացող օգնության: Բարեգործականի դպրոցի և մասնավոր անբնակ տների մեջ խցկեցին սրանց. բերին հաց, շոր, դրամ, նաև մխիթարական խոսքեր, և նման դեպքերի գթառատության ալիքը ինչ վարարությամբ որ հորդեց, նույն արագությամբ էլ ճապաղեց, և թշվառությունը հիմա այլևս անարգել ու հաստատ անցավ իր գործին:

Հաճիենց քաղաքը շուտով ետ առնվեց: Տղամարդիկ, որոնց մեջ և Հակոբն ու Շմավոնը, վերադարձան տեր լինելու իրենց այրված ու կողոպտված գույքերին: Լուրեր եկան, որ գնացողները քիչ-քիչ հաջողում են կորածը գտնել: Փախստականների երեսը խտակվեց: Հաճի մարը իր հարսների հետ դուրս էր գալիս, այցելում մյուս փախստական ընտանիքներին, հյուրեր էին գալիս իրենց տունը, և հին մեծատան հյուրասիրությունը փորձեր էր անում հին ընթացքով

քայլերու: Ծիծաղն սկսեց երբեմն իր ձայնը լսեցնել նրանց տանը: Մի անգամ էլ եկավ իրենց քաղաքի գվարճաբան Գարանը և պատմեց ծիծաղելի դեպքեր թե՛ փախից և թե՛ թուրքերի քաղաք մտնելուց, որ վերադարձողները լսել էին և եկել, տարածել: Ներկայացրեց մի վաճառականի, թե ինչպես էր շփոթվելուց մութաբան գրկել, մինչ երեխան կողքին ընկած լալիս էր: Լսում էին, ծիծաղում: Հետո խոսք եղավ անդամալույծի վրա, որի մասին եկողները միաբերան ասել էին, որ անհայտ կորած է, և որի մասին տնեցիք աշխատում էին կամ չխոսել, կամ մխիթարվել՝ ասելով, որ եթե գար, միևնույն է ճամփին կմեռներ: Հաճին ավելի մտալվեց: Այդ տեսնելով՝ Գարանը համարձակ և ուրախ հանդիմանեց.

- Ջանըմ, Հաճի՛ աղա, բան չունի՞ս, չարդ տարավ, սաղ ըլին հարսներդ, տղաքդ, թոռներդ: Սակայն Հաճի աղան խորտակված էր:

Այնուհետև ժամերով մի բառ չէր լսվի նրա բերանից: Նստում էր մի անկյուն, ծխում, համրիչը գցում և երբեմն միայն գլուխն օրորելով՝ մռմռում.

- է՛, ե՛թ, թո՛...

Եկած օրից ոչ մի անգամ փողոց դուրս չեկավ:

Քաղաքում ծանոթ-բարեկամներ եկան, իրենց տուն հրավիրեցին, կտրուկ մերժեց:

Տնեցիք սկսեցին անհանգստանալ: Հաճու այս արտակարգ խռովությունը նրանք իսկապես կորցրած հարստությանը վերագրեցին և կարծեցին, որ կարող է ծերուկը խելքը կորցնել. ուստի և լուր ուղարկեցին Շմավոնին, որ ինքը կամ Հակոբը գան: Պատասխան չեկավ:

Հունվարի սառն ու պարզկա առավոտը նոր էր բացվում, որ Հաճի աղան անկողնում նստեց: Հաճի մարն ու հարսները, երեխաները ծոցներն առած, քնած էին փոքր ու նեղվածք սենյակում, որ Հաճին դիտմամբ վարձել էր՝ մերժելով ձրի սենյակը:

- Հաճի աղա՞, ինչի՞ էլար ասպես թեզ,- անհանգստացավ Հաճի մարը և նույնպես նստեց իր անկողնում:

Ուշացեր եմ,- մռմռաց Հաճի աղան և սկսեց հագնվել:

Հաճի մարը աչքի տակով ուշադիր նայեց Հաճու դեմքին և նկատեց նրա աչքերում մի տխուր համակերպություն: Վեր կացավ, օգնեց, որ հագնվի, ջուր բերեց, լվացվեցրեց: Հաճին վեր կացավ և գավազանը առավ:

- Ու՞ր,- հարցրեց Հաճի մարը մի փոքր վախեցած:

- Ժամ պիտի երթամ:

Հաճի մարը զարմացավ, բայց շրթունքը կծեց: Գրդեց հարսներին, որ վեր կենան, և ասաց, որ իրենք ժամ են գնում. հարսները զարմացած նայեցին Հաճուն, բայց Հաճի մարը գողունի մատները դրեց շրթունքին, որ չխոսեն:

Դուրս եկան փողոց և ձների ու սառույցների վրայով անխոս գնացին եկեղեցի: Երբ մտան եկեղեցու բակը, Հաճու հանգիստ դեմքի մկանները ցնցվեցին: Նա դողդոջուն շրթունքները հպեց եկեղեցու քարե դռան, համբուրեց, երեսը խաչակնքեց և կզակը դողացնելով՝ ներս մտավ եկեղեցի:

Առավոտյան ժամ էր, և եկեղեցին՝ թափուր: Երբ «ժամն» ավարտվեց, Հաճի մարը առաջարկեց, որ գնան տուն, բայց Հաճին մերժեց և մնաց իր տեղում չոքած: Սպասեցին պատարագին: Շուտով եկավ մեծ հարսը: Եվ հարս ու կեսուր, քաշված մի անկյուն, սկսեցին փսփսալ. Հաճի մոր համար պարզ էր, որ Հաճի աղան հոգեկան հիվանդ է դառել: Եվ սկսեց աղոթել, տրորվել:

Չոքել էր Հաճին և ավելի մտածում էր, քան աղոթում: Հաճի մարը նայեց նրա սմբած երևույթին, կորացած մեջքին, դեղնած մազադաթե դեմքին, ծխից կարմրած բեղերին և ճերմակ, ցախ-ցախ մորուքին, որոնց վրա փախից հետո ածելի չբանեց, նայեց հաճի մարը և զգաց, որ ծերուկի վիշտը շատ խորրն է:

Մի մինդար քաշեց ծերուկի տակը, բայց սա մերժեց: Եկեղեցին լուռ էր, ցուրտ: Խնկի դուրեկան հոտը՝ դեռ օդի մեջ: Ահա արևի ծիրանի սյուները պատուհաններից կախվեցին ներս: Եկավ ժամկոչը, հետո՝ քահանան, կամաց-կամաց աղոթավորը շատացավ, սկսվեց պատարագը: Հաճին անշարժ ու հանգիստ նայում էր իր առաջ՝ պաղ քարերին: միայն երբեմն, երբ արծաթագլուխ տերտերը շուռ էր գալիս դեպի բազմությունը և հորից լսվող ձայնով ասում էր՝ «Խաղաղություն՝ ւն ամենեցուն», Հաճին գլուխը կախ էր գցում և երեսը վախեցած խաչակնքում:

Երբ գնացին տուն, և ամենքը շարվեցին «ղաստախունի» շուրջը և սկսեցին թեյ խմել,մեծ

հարսը բերանը մոտեցրեց Հաճի մոր ականջին.

– Գիտե՞ս, Հաճի աղաս տերտերին, տիրացուին բռերը մեկ-մեկ օսկի դրեց:

Հաճի մարը սառած նայեց հարսի երեսը, հետո վեր թռավ և գնաց դուրս և այնտեղից նշանացի կանչեց հարսին իր մոտ:

– Ե՞րբ, աղջի...

– Դու մ սեղանին էիր մոտեցե, աղոթք կենեիր,- պատասխանեց հարսը,- աղքըտներուն աս մեկ-մեկ օսկի տվեց...

– Չէ, ջանըմ...-հևաց Հաճի մարը հուզմունքից:

– Աչքովս տեսա:

– Հը՞...- խռովեց Հաճի մարը,- ձեզի բան կսեմ՝ չեք իմանա: Աման, աստծու խաթեր, Հաճիս ձեռքե գնաց, տնե՛ օճըղե հեռու...

Եվ սկսեց ծնկներին տալ ու տրորվել: Հարսը պատմեց տեղով, որ իր աչքով տեսել է: Հաճի մարը նորից ներս մտավ, իրեն զսպեց և հարսներին աչքով արավ, որ ուշ չդարձնեն Հաճու վրա: Ու սկսեց հսկել նրան:

Երեխաները դուրս գնացին ձյան վրա խաղալու: Հարսները սփռոցը վեր քաշեցին, նորից մի թեթև ավելեցին սենյակը, որ առավոտյան խնամքով ավել էին, փայտ ավելացրին թիթեղի վառարանին և գնացին «աշխատան», խահանոց՝ կերակուր եփելու: Հաճի մարը նստեց Հաճի աղայի դիմաց և դիտելով նրա ամեն մի շարժումը՝ սպասեց, որ նա մի բան ասի:

Բայց ոչ մի նշան, թե ուզում է խոսել: Նրա լռությունը ցույց էր տալիս, որ խորին ու մշտական խռովքը և ներքին տաժանելի մի աշխատանք դուր էր գալիս նրան:

Մի պատկեր կար, որ երևակայության մեջ ամբողջացնում էր նա: Դա նրա կիրքն էր, որ նրան և՛ սարսափեցնում էր, և՛ ուրախացնում: Նա տեսնում էր անդամալույծի դիակը և աշխատում էր նայել նրա սառած, բաց աչքերին: Ծգնավորի մոլուցքի մեջ ընկած հավատացյալի կրքով նա հետևում էր այդ պատկերին և աշխատում էր երբեք, ոչ մի վայրկյան աչքից բաց չթողնել. ինքը, միայն ինքը եղավ այդ սարսափելի պատկերի ստեղծողը: Դա իր մեղքն էր, ցածությունը, իր անգթությունը: Եվ ինչքան երկար նայում էր այդ դիակին, այնքան կակծում էր իր սիրտը, և այնքան էլ հաճույք, հանգիստ էր զգում: Անդամալույծը դառավ մի սուրբ, մի պաշտելի սուրբ նրա համար: Նրա դիակը սրբագործում էր ծերուկի մեղսալից սիրտը: Ահա ինչու նա կառչել էր նրան:

Բայց այս ապաշխարողի թեթևացումը երբեմն էր միայն: Լինում էին բուպեներ, որ նա զգում էր, թե խելագարվում է: Այդ պատահում էր, երբ նա պայծառ գույներով պատկերացնում էր իր իսկ մահվան օրը կամ երբ հիշում էր իր սարսափները փախի գիշերը: Հիմա էր հաշիվ տալիս իրեն և զգաստորեն հաշիվ տալիս, որ հենց այդ սարսափներն է կրել իր քույրը, այն արհամարհված էակը, որի մեռնելը ինքը ցածոգի կերպով այնքա՛ն հեշտ և հասկանալի համարեց փախի օրը: Եվ ինչպե՞ս կարելի էր թողնել նրան մահվան առջև, և կա՞րողյոք մի արարած, որ չտանջվի մարմնական ցավից, չվախենա մահից և իրավունք չունենա ասրելու: Եվ ի՞նչ համակերպությամբ ընդունեց անդամալույծը իր համար որոշած վիճակը, և ի՞նչ անձնվեր հոգատարությամբ նա մտածում էր փախչողների ապահովության մասին: Սա արդեն խոցում էր Հաճու սիրտը: Եվ երբ Հաճին հիշում էր, թե ինչպես ինքը անկարող եղավ կյանքի սերը մեռցնել իր մեջ և դիմանալ մահվան մերձեցման, մինչդեռ այն հասարակ, չնկատված էակը այնպես արիաբար վճարեց իր տուրքը, Հաճին խայթված վեր էր բարձրացնում իր խոնարհած գլուխը և խելագարի պես նայում Հաճի մորը:

– Հաճի աղա՞,- արթնացրեց նրան իր կինը:

Հաճի աղան նայեց նրան խորասուզված հայացքով և լռեց:

– Ախր մեմ ըսե տեսնենք՝ ի՞նչ կմտածես,- հանդիմանեց Հաճի մարը:

– Հաճին լուռ էր:

– Թե՞ կորուցածդ է միտքդ ընկե. տողաքդ սաղ ըլին. ինչի՞ կմտածես, թե՞ Սրբունին վրա է միտքդ. բան չունի՞ս, անքանները մեռան, ավելի ազիզները...լավ կըսեիր, թե «ան ավելորդ է»:

Հաճին մռայլ նայեց իր կնոջը և գլուխը օրորեց:

Եվ նա սաստեց՝ խստահայաց նայելով Հաճի մորը.

– Սո՛ւ... ավելորդ մարդ չկա. աստծու առջև հոգին հոգի է:

Հաճի մարը զսպվեց:

– Օ՛ֆ,- հառաչեց Հաճի աղան,- գնա, սաստկող շանը հարցրու, թե սաստկելը դուա՞յ (հեշտ) բան է:

Նրա դեմքը տխուր էր, աչքերը խորն ընկած, իսկ անածիլած կզակի ու այտերի ճերմակ մո-
րուքի ցախերը նրա դեմքին տալիս էին խստակյաց ճգնավորի երևույթ:

Մի շաբաթ անց Հաճի աղան պատկեց անկողնում: Երևի ժամում մրսել էր: Քրտնեցրին, ֆել-
դշեր բերել տվին: Ոչինչ օգուտ չեղավ: Եվ մի երեկո ճրագ վառելու ժամանակ Հաճին տերտեր
ուզեց: Հաճի մարը ծնկներն էր ծեծում և գողունի նայում Հաճի աղային, որ տեսնի՝ վտանգն
անցնում է, թե ոչ:

Եվ մինչդեռ տնեցիք , թաքցնելով իրենց հուզմունքը, սպասեցին մի պահ ևս, որ գուցե թե Հա-
ճին ինքը մոռանա և էլ չպահանջե տերտերի գալը, հաճին հանգիստ և պարզ կրկնեց, որ տեր-
տերի պետք ունի: Կանչեցին: Եկավ արծաթագարդ տերտերը, որ բնագրով իմանալով թե հի-
վանդը մահամերձ է, հետը բերել էր հաղորդությունը:

Տնեցիք բոլորվեցին հիվանդի շուրջը: Տերտերը ձեռքով արավ, որ հեռանան՝ հասկացնելով,
որ հիվանդին պիտի խոստովանեցնե: Բայց Հաճի աղան խնդրեց որ մնան: Եվ բարձր ձայնով,
մոլեռանդ հույզով խոստովանեց: Պատմեց, թե ինչպես ինքը թողեց անդամալույծին:

- Մեղա քեզի՛, մեղա,- լացեց և համբուրեց ավետարանը:

Տերտերը մխիթարեց և հաղորթություն տվեց:

Եվ երբ հիվանդը հաղորդություն առավ, դողդոջուն ձեռքը տարավ բարձի տակը և, հանելով
թղթի մեջ փաթաթած մի քանի ոսկեդրամ, տվեց տերտերին:

- Աս քեզի,-շշնջաց նա և, հանելով մի ուրիշ քսակ, դողդոջուն ձեռքով մեկնեց տերտերին ու
աչքերի երեխայական արտահայտությամբ նայեց նրան և ուզում էր մի բան ասել, բայց մնաց.
շունչը կտրվում էր, սաստիկ հուզված էր:

- Աս ո՞ւմ,- հարցրեց տերտերը՝ կռանալով նրա վրա:

- Ո՞ւմ տաս,- մրմնջաց հիվանդը և լռեց:

Արտասուքը խեղդեց նրան: Շունչ առավ և հառաչեց.

- Ադ ալ տուր աղքատներուն...

Եվ խլելով տերտերի փեշը՝ համբուրեց և մղկտաց.

- Ավելորդին հոգուն համար...

ԲԱՌԱՐԱՆ

բերընքսիվայր - բերանքսիվայր, քիթ բերանի վրա ընկնել

սապատավոր քիթ - ուռուցիկություն ունեցող

ֆես - կոնաձև կտրած գլխարկ

գավազան - այստեղ՝ ձեռնափայտ

շալվարի տոտերը - անդրավարտիքի ներքևի եզրերը

զելվալ - ընտելանալ, հարմարվել մի բանի. զելված՝ եփված, բովված

քարվանսարա - իջևանատուն

բառերը լփռել - ծամծմել

տաբուրետ - ցածր քառակուսի աթոռ

ֆուրդուն (ֆուրզուն) - ձիասայլ, ձիակառք

կազակ - ռուսական ծայրամասային շրջանների բնակիչ և զինվոր

ֆետպեյիլ (ֆելդֆերել) - ենթասպա

դյուրգար (դուրգար) - հյուսն, փայտե իրեր պատրաստող

ատամ (ադամ) - մարդ

աշել - նայել

հագրվել - պատրաստվել

կամենդանթ - պարետ

կառեթ - կառք

դրկել - ուղարկել

զանգիններ - հարուստներ

խան - այստեղ՝ իջևանատուն
թաղիքե վալիկներ – թաղիքե ձմեռային կոշիկներ
բուրդ ձաղկել - ճիպոտով բուրդը գգել
դայֆա - սուրճ
կալոշ - կրկնակոշիկ
խարդաթ - ռուս զինվոր
մինդար - բարձ, որին թիկնում են կամ որի վրա նստում
մութաքա - երկար կլոր բարձ
կապերտ (կարպետ) - բրդյա հաստ գործվածք, գորգի տեսակ
թաղար - ծաղկաման
փեչ - վառարան
գյուգյում - պղնձե ջրաման
սալլա - հայր
խզակ - սահնակ
բաշլուղ - գլխաշոր
գուլա - լալիս է
օղուլ - տղա, երեխա, զավակ
էզվան - էգուց
գուլում - աղետ
սարկազմ - ծաղր
օղա - սենյակ
թեզ էրա - արագացրու
դֆտիկ - ընտիր բուրդ
ատոր վախտը չէ - դրա ժամանակը չէ
հըլպըտ որ - իրոք որ
իմտատ - օգնություն
խաբարդա - ճանապարհով անցնելիս զգուշացնող բացականչություն
бросьте ее к черту - սատանայի բաժին թող լինի
а что ж - իսկ ինչո՞ւ ոչ, ի՞նչ կա որ
պռավիլա - օրենք
էվակուացիա - տեղահանություն
յափնջի - այծենակաճ, վերնազգեստ
լնզլնզալ - կաղալ
սմքած - ցամաքած, նիհարած
դաստախուն - սփռոց, որի մեջ լավաշ հաց են պահում
մեկ ըսե - մեկ ասա
օճրդե հեռու - օջախից՝ տնից-տեղից հեռու
ֆեղշեր - բուժակ

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչպե՞ս է սկսվում պատմվածքը: Գրողը ինչպե՞ս է նկարագրում իր գլխավոր հերոսին՝ Հաճի աղային:
2. Ի՞նչ էր անում Հաճի աղայի քառասնամյա որդին՝ Շմավոնը խանութում, երբ Հաճի աղան հանդիպեց նրան: Ի՞նչ հոգեվիճակում էր Հաճի աղան շուկայում:
3. «Ավելորդը» Դ. Գեմիրճյանի հոգեբանական պատմվածքներից է: Ինչո՞վ է արտահայտված այդ հոգեբանական կողմը:
4. Ի՞նչ իրադարձությունների մեջ ենք տեսնում հերոսներին, ինչպե՞ս է գրողը կերպավորում նրանց: Թվարկե՛ք հերոսների անունները և բնութագրե՛ք նրանց:
5. Առանձնացրե՛ք գլխավոր և երկրորդական հերոսներին:
6. Ինչպիսի՞ պատմական ժամանակաշրջան է ներկայացնում գրողը: Ի՞նչ է նշանակում «...թուրքը գալիս է» արտահայտությունը:

7. Պատմվածքից առանձնացրե՞ք այն հատվածները, որոնք ներկայացնում-բնութագրում են Հաճի աղային: Ո՞վ էր Հաճի աղան, կյանքի ինչպիսի՞ ճանապարհ էր անցել: Նրա գերդաստանը: Նրա նկարագիրը: Ճակատագրական իրադարձության մեջ ինչպե՞ս է նա կողմնորոշվում:

8. Սրբունը ե՞րբ էր անդամալույծ դարձել և ինչո՞ւ էր ապրում եղբոր տանը: Տան հոգսը թեթևացնելու համար ինչո՞վ էր զբաղվում:

9.Ճանապարհի պատրաստության ժամանակ ինչո՞ւ էր լալիս Սրբունը:

10. Երբ Հաճի աղան որոշում է Սրբունին թողնել, տնեցիներն ի՞նչ վերաբերմունք են դրսևորում նրա վճռի կապակցությամբ:

11. Ինչպե՞ս է Հաճի աղան հչաժեշտ տալիս քրոջը: Քույրը ի՞նչ է նվիրում նրան:

12. Ի՞նչ զգացողություն է ունենում Հաճի աղան, երբ լուր է գալիս, որ իրենց քաղաքն ազատագրվել է թուրքերից: Ի՞նչ էր կատարվել Սրբունի հետ: Ի՞նչու է Հաճի աղան գնում եկեղեցի: Նրա պես խնայող մարդը ինչո՞ւ է ոսկի տալիս հոգևորականներին ու աղքատներին:

13. Պատմվածքի վերջում ինչպե՞ս է Հաճի աղան բացատրում «ան ավելորդ է» արտահայտությունը: Մահից առաջ խոստովանահորը «մեղա քեզի՛, մեղա...» ձայնարկելով՝ ի՞նչ էր ուզում ասել:

Մահից առաջ քսակով փողը տերտերին է տալիս և ասում. « Աղ ա տուր աղքատներուն... Ավելորդի հոգուն համար»: Ի՞նչ են ասում այս խոսքերը:

14 . Խոստովանությունն ու առատաձեռնությունը բավարա՞ր էին, որպեսզի Հաճի աղան հանգիստ ավանդեր հոգին:

15. Ո՞վ էր ավելորդը և ինչո՞ւ էր ավելորդ:

16. Պատմվածքի հերոսները խոսում են Դ. Դեմիրճիանի հարազատ խոսվածքով: Ո՞ր բարբառի խոսվածքն է: Չմոռանաք, որ Դեմիրճյանի նախնիները Ախալքալաքում վերաբնակվելու էին եկել Կարինից (Էրզրում):

ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑ

(1899-1937)

Ակսել Բակունցը բանաստեղծական նուրբ ներշնչանքով օժտված արձակագիր է: Նրա գեղարվեստական խոսքը միանգամայն նոր որակ է հայ գրականության մեջ: Այնքան նրբագեղ ու ցայտուն են նրա պատկերները, որ ասես իրար են միահյուսվել արվեստի մի քանի ձևեր՝ խոսքի արվեստը, հնչյունների արվեստը և գույնի ու գծի արվեստը, այսինքն՝ գրականությունը, երաժշտությունը և նկարչությունը: Երբ ասում ենք Ակսել Բակունց, պատկերացնում ենք ամենալուսավոր, ամենապայծառ, «արցունքի պես ջինջ» գրողին, արձակի նուրբ քնարերգուին:

Ակսել Բակունցը... Հայ գյուղերի վիշտն ու թախիծը, հայ մարդու խոնարհ ու տխուր կյանքի գեղագիրն ու օրհներգուն, մեծ կարոտների ու անդառնալի կորուստների լռակյաց խնկարկուն...

1899 թվականի հունիսի 13-ին Գորիսում ծնվում է Ալեքսանդր Թևոսյանը, նա, ով պետք է դառնար Ակսել Բակունց: Բակունցն իրենց տոհմական ազգանունն էր, իսկ Ակսելը եղել է նորվեզացի թատերագիր Բյոռնստեռնե Բյոռնսոնի «Նորապասակներ» դրամայի հերոսը, որի դերը 1916 թվականի ամռանը ապագա գրողը կատարել է Գորիսում: Գրանից հետո Ակսել անունն այնքան է հարազատանում նրան, որ նա դառնում է Ակսել Բակունց:

Ծնողները պարզ աշխատավոր մարդիկ էին: Նրանց ընտանիքում մեծանում էին չորս տղա և յոթ աղջիկ: Եղբայրներից ավագը Ակսելն էր:

1905-1910 թվականներին ապագա գրողն ուսանել է Գորիսի ծխական հնգամյա դպրոցում: Ցուցաբերել է գերազանց առաջադիմություն, որի համար գորիսցիների միջնորդությամբ ընդունվել է Էջմիածնի Գևորգյան ճեմարան, որի սանն է եղել 1910-1917 թվականներին:

1913 թվականին, երբ 16 տարեկան էր, «Աղբյուր» մանկական ամսագրում տպագրվում է նրա առաջին գրական երկը՝ «Հիմար մարդը», որը համանուն ժողովրդական հեքիաթի մշակումն էր:

1915-ին դիմում է Հայկական կենտրոնական կոմիտե՝ հայրենիքին ծառայելու պատրաստակամությամբ: Չորակոչման տարիքի հասած չլինելու պատճառով մերժում են:

1915-1916 թվականներին, երբ եղեռնից փախած և Էջմիածնում ապաստանած գաղթականության պատճառով ճեմարանը փակ էր, Բակունցն ուսուցչություն է արել Սիսիանի Լոր գյուղում: Այդ օրերի հիշողությամբ հետագայում գրել է «Ֆոնարի աղջիկը» չքնաղ պատմվածքը:

1917-ին իրականացնում է հայրենիքին ծառայելու իր նվիրական ցանկությունը և կամավոր մեկնում է ռազմաճակատ: Կռվում է Կարինում (Էրզրում), Արդահանում և, ի վերջո, Սարդարապատում: Բանակից զորացրվելուց հետո գրում է պատմվածքներ և աշխատում որպես լրագրող:

1919-1920 թվականներին ուսանել է Թիֆլիսի պոլիտեխնիկական ինստիտուտի գյուղատնտեսական բաժանմունքում, իսկ 1920-1923-ին ուսումը շարունակել է Խարկովի գյուղատնտեսական ինստիտուտում:

1923-1926 թվականներին որպես գյուղատնտես աշխատել է Գորիսում և Երևանում:

1926-ի մարտից մշտական բնակություն է հաստատում Երևանում և զբաղվում գրական աշխատանքով: Մտերմանում է Եղիշե Չարենցի, Գուրգեն Մահարու և Սկրտիչ Արմենի հետ, որոնք, «Նոյեմբեր» խմբակցության մեջ համախմբված, գրական լուրջ քաղաքականություն էին վարում:

1927-ին լույս է տեսնում պատմվածքների առաջին գիրքը՝ «Մթնաձոր» վերնագրով: Բակունցը միանգամից ընդունվում և գնահատվում է որպես պատմվածքի վարպետ:

Չարենցը Բակունցի երկու պատմվածք գետեղում է իր կազմած 6-րդ դասարանի գրականության դասագրքի մեջ: Ընդհանրապես Չարենցը շատ բարձր է գնահատել Բակունցին: Նրան է նվիրել «Ակսելին՝ «Մթնաձորը» կարդալուց հետո», «Թուրք Ակսել Բակունցին, գրված Լենինգրադից», «Ա.Բ.-ին» բանաստեղծությունները: Իսկ իր «Էպիքական լուսաբաց» ժողովածուն նրան է ձոնել այսպիսի թանկ ընծայագրով. «Միբելի Ակսելին, միակ բարեկամիս»: Չարենցը Բակունցի մեջ որոնում էր գրական և անձնական անխախտ սեր ու բարեկամություն: Նրան է ձոնել նաև իր «Դեպի լյառը Մասիս» պոեմը՝ «Ակսել Բակունցին, պայծառ բա-

րեկամիս» ընծայագրով:

1928 թվականին Բակունցն արժանացել է «Տիգրան Կամսարական» գրական մրցանակին, որը շնորհվում էր Փարիզում: Ընդհանրապես սիյուռքում Բակունցն սկզբից ևեթ բարձր գնահատականի է արժանացել:

1930-ական թվականներին պատմվածքների հետ մեկտեղ Բակունցը գրում է նաև վեպեր ու վիպակներ՝ «Կարմրաքար», «Խաչատուր Աբովյան», «Որդի որոտման», «Կյորես» և այլն: Բակունցը գրել է նաև կինոբեմագրեր: Նա գրել է հայտնի «Ջանգեգուր» շարժանկարի բեմագիրը, որը նրա ողբերգական մահից հետո ներկյացվեց այլոց անուններով:

1933 թվականից Բակունցի դեմ ուժեղանում են քաղաքական հալածանքները, որոնք էլ ավելի են սրվում 1936-ին: Ժողովրդին այնքան նվիրված գրողին համարում են ժողովրդի թշնամի և ձեռքակալում 1936 թվականի օգոստոսի 9-ին: Բանտում Բակունցը ենթարկվել է ծանրագույն մարմնական և հոգեբանական հալածանքների: Այդ մասին են վկայում և՛ հուշագիրները, և՛ բանտից նրա գրած դիմումները, և՛ հարցաքննությունների արձանագրությունները: Ահա եղբոր հուշերից մի հատված: Բակունցն ասել է. «Ինձ անընդհատ հարցնում են այնպիսի բաների մասին, որ քիչ է մնում խելագարվեմ: Ես ստիպված եմ մի շարք գրվածքների մասին բացատրություններ տալ, ապացուցել, որ ես ժողովրդի դեմ ոչ մի հանցանք չունեմ»:

Պաշտոնական մարմինները Բակունցին մեղադրում են որպես հակահեղափոխական, ազգայնամոլ ու ահաբեկիչ և գնդակահարում 1937 թվականի հուլիսի 8-ին, երբ նա ընդամենը 38 տարեկան էր և լի էր ստեղծագործական ծրագրերով: Բակունցի գերեզմանը, ինչպես Չարենցիցիը և շատ շատերինը, հիմա անհայտության մեջ է: Բակունցն արդարացվեց 1955-ին, որից հետո մեկը մյուսի ետևից սկսեցին լույս տեսնել նրա գրքերը:

Ա. Բակունցի մեծ ու անմեռ կյանքը նրա ստեղծագործության մեջ է:

Բակունցի պատմվածքները ի մի են բերվել «Մթնածոր» (1927), «Սև ցելերի սերմնացանը» (1933), «Անձրև» (1935) ժողովածուների մեջ:

«Սպիտակ ձի» պատմվածքը գետեղված է «Սև ցելերի սերմնացանը» գրքում: «Սպիտակ ձի» պատմվածքի հետ նույն գրքում տպագրվել են Բակունցի տաղանդի այնպիսի բարձր արտահայտություններ, ինչպիսիք են «Ծիրանի փողը», «Սև ցելերի սերմնացանը», «Նամակ ռուսաց թագավորին», «Պրովինցիայի մայրամուտը» և այլ գործեր: Ավելացնենք նաև, որ «Սպիտակ ձի» վերնագիրը նրան այնքան շատ է դուր եկել, որ 1929 թվականին Մոսկվայում լույս է ընծայել նույն խորագրով պատմվածքների հավաքածու:

Բակունցի արվեստն անկրկնելի է ու բացառիկ: Նրա խոսքի վարպետությունը բարձր են գնահատել շատերը, բայց առանձնահատուկ է Չարենցի «Ա.Բ.-ին» բանաստեղծությունը, քանի որ գրված է երկու գրողի համար էլ ճակատագրական մի ժամանակաշրջանում:

Բակունցը բանտում էր: Նրա դեմ տպագրվում էին ջարդարարական հողվածներ: Ահա այս պահին են երևում բարեկամն ու թշնամին: Բակունցի մասին լուրերը հասնում էին նաև տնային կալանքի մեջ գտնվող Չարենցիին:

1936 թվականի հոկտեմբերի 14-ի գիշերը Չարենցը գրում է «Ա. Բ.-ին» հանճարեղ բանաստեղծությունը: Ամբողջ գիշեր տառապագին հարցումով նա ցանկանում էր ճանաչել Բակունցի իսկական էությունը: Բանաստեղծության առաջին և երկրորդ տարբերակներում՝ գրված նույն գիշերը, Բակունցի կերպարը երևում է հեռացող ուրվագծերով, ճակատագրական պահը կարծես դեռևս չէր բյուրեղացել Չարենցի մտապատրանքի մեջ: Սակայն ներքին հզոր մի շարժումով նա շատ արագ վերագտել է իրեն, հարազատի հավատով ու վստահությամբ նայել իր գրական բարեկամի տանջահար դեմքին, և ինքն իրեն ոգել աղոթքի մաքրություն և գրական եղբայրության հավատացյալի նվիրվածություն ունեցող այս տողերը.

...Ե՛վ բառերի համար քո մարմարյա,
Հնամենի, բույրյան, որպես մեր հին
Քարաքանդակ անդուռ մատուռների
Անջնջելի գրերը հնադարյան,-
Ե՛վ մյուռոնի նման սրբազնագույն
Քո երգերի մաքուր սկիհներում պահված՝
Խորհուրդների համար մշտահրմա,

Որպես խորհուրդը մեր նաիրական ոգու,-
 Քո «Միրհավի» համար - և լուսեղեն՝
 Արփենիկի հուշով սրբագորված հավետ,
 «Ալպիական ծաղկի» այն բուրավետ,
 Որ բորելու է հա՛ր աննյութեղեն,-
 Եվ վերջապես քո վեհ, հերոսական
 «Մերմնացանի» համար, որ ձեռքերով վսեմ
 Սև ցելերի վրա մեր գոյության այս սև
 Շաղում է շողք ու սերմ անաճնական,-
 Այս ամենի համար, և «**Ծիրանի**»
 Հազարամյա փողի՛ համար քո այն,
 Որ դարերո՛վ տենչած խաղաղության
 Երգն է հնչում, և մեր ժողովուրդը քանի
 Ունի գեթ ափ մի հող արեգակի ներքո,
 Հնչելու է երգեր եղբայրական,-
 Այս ամենի համար, օ՛, խեղճ իմ բարեկամ,
 Ես քեզ օրհնում եմ արդ իմ անաղարտ երգով...
 Այս ամենի համար, և քո եղերական
 Տառապանքի համար, որ այդ կրկին
 Վեհություն է խառնում քո անաղարտ երգին.
 Ես քեզ պարզում եմ ձեռք եղբայրական...
 Եվ ներբողում եմ քեզ ահա կրկին անեղծ
 Իմ շուրթերով, ինչպես օրեր առաջ,
 Երբ դեռ դու այր էիր մի անարատ,
 Եվ ես ընկերն էի քո բանաստեղծ...

ԲԱՌԱՐԱՆ

բուրյան - բուրավետ, անուշաբույր

մատուռ - փոքրիկ աղոթատեղի, սրբավայր

մյուռոն (մեռոն) - անուշահոտ յուշերով հագեցված ձիթապտուղի յուղ, որ գործածվում է եկեղեցիներում մկրտությունների և օծումների ժամանակ

սկիհ - արծաթյա անոթ, որի մեջ եկեղեցում լցնում են նվիրագործելու գինին

մշտահմա - միշտ հմայող, հմայիչ

անանձնական - ոչ անձնական, աննյութական

եղերական - սգալի, ողբալի, ողբերգական, եղեռնական

Ակսել Բակունցի մասին գրվել են բազմաթիվ հուշեր, որոնցից լավագույնը Գուրգեն Մահարու «**Ակսելյան քանդակներ**» մանրապատումների շարքն է:

**ԳՈՒՐԳԵՆ ՄԱՀԱՐԻ
ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑԻ ՄԱՍԻՆ**

ԱԿՍԵԼՅԱՆ ՔԱՆԴԱԿՆԵՐ

...Հետո իմ աչքի առաջ հառնում է մի հաղթանդամ սերմնացան, որ մեր սև ցեղերի վրա ցանում է ոսկեհատ սերմեր:

Ա. Բակունց, «Մև ցեղերի սերմնացանը»

... Պատի վրա խաղում է ինչ-որ ստվեր, կարծես թարթում է մի վիթխարի աչք, որի բիբն է լուսամուտը, հազիվ նշմարվող լույով...
Ուրեմն մայր է մտել արևը... Արևը մայր է մտել, ինչպես մեռնում է դյուցազնը:

Ա. Բակունց, «Լիբեր Արմենիեր»

1

«Նորհրդային Հայաստան» թերթի խմբագիր Եղիա Չուբարի տրամադրությունը բարձր է: Ժպտում խորհրդավոր և վառում «Նարգիլե» ծխախոտը:

- Ի՞նչ կա:
- Ողջություն:
- Ոչինչ չե՞ս լսել:
- Ի՞նչ կա,- այս անգամ ես եմ հրցնում:

Նա վեր է կենում, դուրս է գալիս իր առանձնասենյակից: Ես հետևում եմ նրան: Գուրս է գալիս Աբովյան փողոցի վրա նայող պատշգամբ:

Պատշգամբում վաղուց է, որ տեղ է գրավում խմբագրության լքված գրասեղաններից մեկը: Գրասեղանի վրա, ամբողջ հասակով, սեպտեմբերյան արևի տակ պառկել է մի երիտասարդ: Ննջում է: Գորշավուն կոստյում, խաքի վերնաշապիկ: Գորշավուն փողկապ, կոշիկներ... երկրորդ, երրորդ կարգի գործածության մոտեցող:

Այս ամենը ես նկատեցի, երբ ի պատասխան իմ հարցական հայացքի Չուբարը պատասխանեց.

- Ակսել Բանկունց:

Չարթնեց, ժպտաց իր մուգ-կապույտ աչքերով, ժպտաց, այո՛, մանկական ժպտով, թեթև իջավ գրասեղանից:

- Չուբարը ներկայացրեց ինձ:

- Չահլես տարել է, ահա քեզ քո Ակսելը: Մնացածը... դուք գիտեք:

- Ներս մտավ՝ իր պարտականությունը կատարած մարդու գոհունակությամբ:

Նա չափեց ինձ ոտից մինչև գլուխ և, ինչպես ինձ թվաց, թախիծով նայեց իմ աչքերից ներս: Չէր կարող նա իմ աչքում չնկատել հիացմունք և ուրախություն: Ես կարողացել էի նրա նախամթնածորյան ակնարկները և զգացել մեծ գրողի ներկայությունը, ես վաղուց փնտրում էի նրան, ուզում էի ծանոթանալ նրա հետ, սեղմել նրա այն ձեռքը, որով նա բռնում էր իր գրիչը:

Եվ ահա...

- Վարը փողոցն էր, աղմկոտ Աբովյանը:

- Լավ փողոց է Աբովյանը,- ասաց նա և ավելացրեց, ասես ինքն իրեն,- միա՛կ փողոցը:

- Մի ծխախոտ վառեց, խոր շնչեց, լուցկին կոտրեց ու կրկնեց:

- Այո՛, միակ փողոցը:

- Անհանգստացավ, նայեց գրպանի ժամացույցը:

- Գնայինք մի տեղ նստեինք:

- Գնանք,- ասացի ես նրան պատրաստակամ,- գնանք «Նագասակի»:

- «Նագասակի՞»,- ժպտաց,- այդ ի՞նչ «Նագասակի» է: Քաղաքային բուլվարի դիմաց,

Նեայան անկյուններից մեկն էր «Նագասակին», մասնավոր գարեջրատուն: Գարեջուր և պիստակ,- ուրիշ ոչինչ:

Պարզվեց, որ երկրորդ օրն է, ինչ հասել է Երևան:

– Ես գյուղատնտես եմ, ագրոնոմ, գրականությամբ զբաղվում եմ ի միջի այլոց:

– Կարծում եմ՝ ընդհակառակը:

– Կյանքը ցույց կտա:

Ժպտաց: Տխրեց:

– Ովքե՞ր կան նորերից:

Ես տվի մի քանի անուն:

– Չարենցից բացի ոչ ոքի չգիտեմ: Դեմիրճյա՞ն, Չորյա՞ն:

– Նրանք «պապուտչկներ» են:

Չարմացա՞վ, թե զարմացած ձևացավ:

– Ի՞նչ բան է «պապուտչիկը»:

– «Ուղեկից», - բացատրում եմ ես:

Սրտանց ծիծաղեց:

– Չի ունե՞ս, - հանկարծ հարցրեց, - կամ ունեցե՞լ ես:

– Հետաքրքի՜ր է...

– Չի՞, - հանկարծակի եկա ես, - ո՛չ, չունեմ: Իսկ ինչո՞ւ ես հարցնում:

– Իսկ ես ունեմ: Գյուղումն է: Ահա նստել, քեզ հետ զարեջուր եմ խմում և շարունակ մտածում եմ նրա մասին, զարեջուր եմ խմում, իսկ նրան գարի տվե՞լ եմ, ջրե՞լ եմ...

Ես նրան ասացի, որ ըստ երևույթին նա գյուղատնտեսությամբ և արձակագրությամբ զբաղվում է ի միջի այլոց, և որ նա հիմնականում... բանաստեղծ է:

– Ինչո՞ւ, - հարցրեց ծիծաղելով:

– Այդպես կարող են տխրել միայն բանաստեղծները, - պատասխանեցի ես:

– Դեպի ձին տաժած մարդկային սերը իսկապես որ բանաստեղծական զգացմունք է, - հաստատեց նա՝ ամենայն լրջությամբ:

Մեր զրույցը լայնացավ, մեծացավ այդ փոքրիկ զարեջրատանը, ջերմացավ... սառը զարեջրով: Ինձ թվում էր, որ մենք տարիների ծանոթներ ենք: Խորունկ էր նա ու հմայիչ, հանդարտ ու հստակ:

Ուշ երեկոյան մենք կարողացանք բաժանվել:

Թվում էր թե, կյանքը չէր կարող ունենալ ուրիշ ընթացք և այդպես էլ պիտի շարունակվեր... Ամենայն օր, դուրս գալով Նալբանդյան նրբանցքից, ես պիտի անցնեի նրա տան մոտով, դուրս պիտի գար նա՝ մի ծխախոտ վառելով, պիտի գնայինք Չարենցի մոտ, Չարենցը պիտի հարցներ, - ի՞նչ կա-չկա, տղեր ջան, - հետո պիտի գար Արմենն իր ամեհի բասով և սկսվեր 4-ի զրույցը... Ինչի՞ մասին էինք խոսում մենք, Բենվիլնիտո Չելինու և ողբերգական Կոմիտասի՞ մասին, ժամանակակից գրական անառողջ երևույթների, «գրական փոշտացիների՞», թե՞ Աբովյանի, Սիամանթոյի ու Մայաթ-Նովայի մասին, Երևանի ապագայի կամ գուցե Եսենինի ու Չվարթնոցի՞ մասին... խոսակցության տոն տվողը Չարենցն էր, որը սակայն իր ոչ մի դրույթը վերջնական և վավերական չէր համարում, մինչև չստանար Բակունցի հավանությունը: Բակունցը երկար խոսել չէր սիրում, վիճում էր սակավադեպ, բայց երբ վիճում էր, վիճում էր անզիջում, շիտակ ու աննահանջ:

Լիրիկ էր ոչ միայն իր գրքում, այլև կյանքում: Մոլորություններ չունեի, եթե չհաշվենք ծխախոտը: Խմում էր առիթից առիթ և շատ հեռու էր առիթներ որոնելուց: Երբ բարձրանում էր տրամադրությունը, «չարություններ» չէր անում... Ամենամեծ «անկարգությունը», որ նա կարող էր թույլ տալ, այն էր, որ փողոցում կկռանար, կվերցներ մի հողակոշտ և ազահաբար կհամբուրեր:

– Ոչ մի հող այսպես չի բուրում, չէ՛...

Երբ Չարենցն անցնում էր ճակատային հարձակման՝ ապացուցելու համար իր գերազանցությունը, Արմենի հետ մենք լսում էինք համաձայնողական լռությամբ, բայց ահա նա անց-

նում էր Ակսելին՝ նրա հաշիվը նույնպես մաքրելու համար... Քաշում էր կեպին աչքերի վրա, ծիծաղից խեղդվում էր և բավականանում ասելով.

– Դե լավ, Եղիշ, ձեռք քաշի:

– Չէ, դու ինձ ասա, համաձա՞յն ես, թե չէ:

– Համաձայն եմ: Համաձայն:

– Ախր աչքերիցդ տեսնում եմ, որ համաձայն չես,- չէր հանգստանում Չարենցը:

...Բարձր տրամադրության մի ուրիշ չափանիշ էլ ուներ Բակունցը. ինքն իրեն չափ էր տալիս և երգում էր Կոմիտասի երգերից: Հիշում եմ մի անգամ Չանգվի ձորից լուսաբացին եկանք Չարենցի համարը, հոգնած երեխայի նման Չարենցն անկողին նետվեց և քնեց, ես տեղավորվեցի բազմոցի վրա, իսկ Ակսելը բաց պատուհանի դեմ կանգնած սկսեց չափ տալ և Կոմիտաս երգել: Երբ ես զարթնեցի, արևը բարձրացել էր Երևանի վրա, քնից կշտացած զարթնեց Չարենցը, իսկ նա բաց պատուհանի դեմ կանգնած ոչ մի կերպ չէր կարող սպառել իր միակ՝ կոմիտասյան երգացանկը:

Գրում էր աշակերտական տետրերի և զանազան չափսի տպարանական թղթերի վրա: Չեռագիրը մաքուր էր, մարգարտաշար: Գրում էր արագ, առանց տանջանքի: Գրելուց հետո մաքրագրում էր և ոչնչացնում սևագրությունը: Մի անգամ հարցրի,- ինչո՞ւ ես ոչնչացնում: - Ինչո՞ւ պահեմ,- հարցիս հարցով պատասխանեց նա, ու ես պատասխան չգտա:

Մեծ հարգանք չունեի դեպի պոեզիան: Ամեն անգամ, երբ հանդիպում էր պարբերական մանուկում իմ բանաստեղծություններին, ներողամիտ ժպտում էր և ասում.

– Լրջացիր, շարունակիր արձակդ:

Չեմ մոռանում նրա «էքսպրոմոտոն»:-

– Դու կարծում ես ես չե՞մ կարող բանաստեղծություն հորինել:- Խնդրեմ.-

*Ես սիրում եմ լուսաբացը,
Լուսաբացը, նրա թացը,
Առունների ինչ-որ լացը
Ու...*

Նա լարեց միտքը և վերջացրեց՝

Ու... մատնաքաշ հացը:

«Մատնաքաշ հացը» պատահական հանգ չէր: Դժվար տարի էր:

Ծիծաղեց.- Ինչո՞վ է վատ:

– ...Ուզում եմ մի մեծ պատմվածք գրել,- ասաց նա մի անգամ,- բերել, հասցնել մի հետաքրքիր հանգույցի և այդտեղ էլ վերջացնել, ավելացնելով՝ «բավական է, չեմ ուզում շարունակել...»:

Այդպես էլ եղավ. քանքարավոր, մեծ գրողի կյանքը կտրվեց իր փայլուն ստեղծագործական մեծ հանգույցի վրա: Նա ստեղծեց իր աշխարհը, սակայն շատ հրաշալիքներ մնացին այդ աշխարհում թերի ու անավարտ:

4

Ինչ-որ էլեգիական երանգ կար նրա թե՛ քայլվածքի, թե՛ շարժումների, թե՛ խոսակցության տոների և թե՛, նամանավանդ, նրա լուրջան մեջ: Մինչև անգամ, երբ մանկական պարծենկոտությամբ խոսում էր իր պապերի երկարակեցության և նրանց բացառիկ ամրակազմության մասին և եզրակացնում, որ ինքը երկար պիտի ապրի, չէիր հավատում նրան և զգում էիր, որ ինքն էլ չի հավատում իր ասածներին: Չէր սիրում երևալ հասարակական վայրերում ու երբ հանդիպում էր փողոցում, խնդրում, առաջարկում էր միշտ միևնույնը.- Բարձրանանք Նորք, մստենք, գրից անենք:- Երբ արդյունքի չէր հասնում, հրաժեշտ էր տալիս ու գնում էր տուն:

Ժամանակակից ռուս գրողներից մեծ սիրով սիրում էր Պրիշվինին: Մոսկվայում օրերով լինում էր նրա մոտ ու մեծ ոգևորությամբ պատմում նրա մասին: Չարենցը գիտեր, որ Պրիշվինը

նրա թուլությունն էր: Գրողների առաջին համագումարի օրերին, երբ Ակսելը կորչում էր, Չարենցը խանդում էր: Երբ երևում էր Ակսելը, անխուսափելի էր հետևյալ երկխոսությունը.

- Ո՞ւր էիր կորել:
- Պրիշվինի մոտ էի:
- Դու էլ մարդ ես գտել:
- Ռուս մեծագույններից է, մարդ - անտառային հեքիաթ, Եղի՛շ:
- Թող, է՛, - բարկանում էր Չարենցը: Իսկ երբ Ակսելը մի անգամ նորից «կորել էր», Չարենցն անկեղծացավ:
- Պրիշվինը մեծ, հետաքրքիր գրող է, հետաքրքրական ֆիգուրա, և իզուր չէ, որ Ակսելը սիրում է նրան: Ընդհանուր շատ բան կա նրանց միջև:

5

Ես հաճախ ուշ գիշերին անցնում եմ այն տան մոտով, ուր ապրում և ստեղծագործում էր մեծ, անկրկնելի, եղերական Ակսել Բակունցը: Նա հիմա լեզենդ է, երգ ու էլեգիա ու փողոցից այլևս չես տեսնի նրան իր համեստ, փոքրիկ սենյակում, նստած իր գրասեղանի մոտ, գրելիս կամ կարդալիս: Ես ուզում եմ նրան պատկերացնել վաթսուն տարեկան հասակում, և դա ինձ ոչ մի կերպ չի հաջողվում: Ես վերջին անգամ նրան տեսա, երբ նա երեսունյոթ տարեկան էր և այդպես էլ մնաց իմ հուշերում...

6

... Հյուրանոցում: Չարենցի համարում, դաշնամուրի մոտ նստած էր Ռոմանոս Մելիքյանը և Չարենցի խղրանքով նվագում էր Կոմիտասի երգերից և մեջընդմեջ երգում: Ըստ իր սովորության, հատակին, գորգի վրա նստել էրս Ակսելը, մոխրամանը կողքին, ծխում և լսում էր Ռոմանոսին՝ ամբողջովին լսողություն դարձած: Հանկարծ նա վերկացավ տեղից և պատշգամբ դուրս եկավ: Քիչ հետո դուրս եկա և ես: Պատշգամբն այն ժամանակ նայում էր պարսկական մզկիթի և գետնափոր արևելյան բաղնիքների վրա: Աշնանային լուսնկա երեկո: Ես չհավատացի իմ աչքերին: Նա լալիս էր իսկական արցունքներով:

- Ու քեզ դեռ արձակագիր ես համարում,- ասացի ես մի բան ասած լինելու համար, ինքս էլ արտասովելու պատրաստ,- դու... ավելի վատ ես, քան ամենասենտիմենտալ բանաստեղծը...
- Ներս գնա,- ասաց նա երեխայի պես քիթը վեր քաշելով,- կանցնի...

*Միրոս նման է էն փլած տներ,
Կտորեր գերաններ, խախտեր էն սներ,
Բուն պիտի դնեն մեջ վայրի հավքեր...
Տո, լա՛ճ տնավեր:*

Երբ վերջացավ երգն ու նվագը, նա ներս մտավ պատշգամբից, դաշնամուրի վրայից վերցրեց գլխարկը և անշուկ, առանց ցտեսություն ասելու դուրս եկավ:

Տո, լա՛ճ տնավեր...

... Ու հիմա, երբ տարիների մեզ-մառախտողից հիշում եմ նրան, պատկերանում է նա ինձ իր իմաստուն, խորաթափանց հայացքով և մանկական իր հստակ ժպիտով: Նա էր լուսավոր հանճարը զանգեգուրյան մութ ձորերի, որոնք լուսավորված են նոր լույսերով նրա 60-ամյակի այս օրերին, երբ նա մեզ հետ է հավերժ ապրող իր թողած գրական շողշողուն ժառանգության հավերժական հարստությամբ: Մեզ հետ է նա՛, հայկական լեռնաշխարհի հզորաթև արծիվը, սև ցեղերի վաստակավոր սերմնացանը, մեզ հետ է նա, ինչպես ինքն էր կոչում իրեն՝ Ալեքսանդր Բակունց, որդի Ստեփանի, ի գեղջեն Գորիս:

ԲԱՌԱՐԱՆ

«Լիբեր Արմենիեր» - Խաչատուր Աբովյանին նվիրված Բակունցի վեպի վերնագիրն է: Նշանակում է սիրելի հայ:

պապուտչիկ (պոպուտչիկ) - ուղեկից, պրոլատարական գրողներն այդպես էին համարում հեղափոխությունից առաջ իրենց գործունեությունն սկսած գրողներին՝ Դեմիճյանին, Չորյանին և ուրիշներին:

Բենվինուտո Չելլինի - 16-րդ իտալացի քանդակագործ, ոսկերիչ և գրող

Ֆիգուրա - այստեղ՝ գրական դեմք, գրական անհատականություն

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ե՞րբ և որտե՞ղ է ծնվել Ակսել Բակունցը:
2. Ինչպե՞ս է ստեղծվել նրա Ակսել Բակունց գրական անունը:
3. Ի՞նչ կրթություն է ստացել Բակունցը:
4. ԹՎարկե՞ք նրա պատմվածքների ժողովածուների և վեպերի ու վիպակների վերնագրերը:
5. Ինչպե՞ս ավարտվեց Ակսել Բակունցի կյանքի ուղին:
6. Ո՞վ էր Բակունցի մտերմագույն ընկերը և ի՞նչ բանաստեղծություն է նվիրել նրան:
7. Պատմե՛ք Մահարու հուշերը Բակունցի մասին: Այդ հուշերով ինչպե՞ս ճանաչեցիք մեծ գրողին:

ՍՊԻՏԱԿ ՁԻՆ

1

Շարմաղ բիբին երեկոյան, երբ ժամհարը քաշում էր եկեղեցու զանգերը, խրճիթի ծանր դուռը տնքալով բաց էր անում: Երկար ու կերկեր, իբրև արևելյան թախծոտ երգ, ճոնչում էր հին դուռը, երբ պառավի դողացող ձեռքերը ձգվում էին դեպի դռան մաշված ունկը: Խավար խրճիթում դռան երգին արձագանքում էր պղինձների զնգոցը և Շարմաղ բիբու ջինջ ձայնը.

– Քո փառքը շա՛տ, էսօր էլ զանգերը զարկին, - մրմնջում էր այդ լուսերես կինը, որին իրկնապահի զանգերն ավետում էին անանձնական անդորր:

Նա կանգնում էր դռան շեմքին՝ աչքը դեպի ներքևի բլուրները, որոնք անսահման հեռվում ձուլվում էին մայրամուտի մուգ կապույտ երկնքի հետ և կազմում եզրը մի անգո աշխարհի, որին յոթանասուն տարի անդավաճան հավատում էր այդ միամիտ կինը:

Կանգնում էր դռան շեմքին և կարծես թե տեսնում էր պղնձյա զանգերի տխուր դողանջները, ինչպես մթնող երկնքի տակ նագով ճախրող աղավնիները: Նա հավատում էր, որ երեկոյան զանգերի հետ երկնային մի օրհնություն թրթռալով ներս է մտնում և քսվում հին տան սևացած քարերին, նրա այրվող օջախին, ինչպես ներս կմտներ գետնի երեսով սողացող մշուշը:

Եվ այդ հին հավատով էլ վերջանում էին Շարմաղ բիբու կրոնական զգացումները: Եկեղեցի չէր գնում. ոչ աղոթք գիտեր, ոչ ծանոթ էր եկեղեցական ծեսերի: Բայց և այնպես մի խորհրդավոր ակնածանք էր ապրում, երբ երեկոյան երգում էին զանգերը, երգում էր և հին դուռը, բլուրների և աշխարհի վրա իջնում էր մի խաղաղ երեկո, ճախրում էին ոսկեթել աղավնիները. և այդ ամենը ռամիկ հավատով նա ընդունում էր որպես անքննելի խորհուրդ, որ մնացել էր գյուղական աղջկա անուրախ մանկությունից:

Այդ երեկո, երբ Շարմաղ բիբին դուռը հետ քաշեց և ոտքը շեմքին դրեց, հանկարծ հետ քաշվեց մի ահարկու ձայնից, որ անակնկալ որոտաց հենց նրանց կտուրի վրա և խռպոտ աղմուկով խլացրեց զանգերի ծանոթ դողանջը:

Տանեցիկները, որոնք սփռոցի չորս բլրոք նստած լուռ ընթրում էին, արձանացան և զարմացած իրար նայեցին: Ահ կար նրանց աչքերում: Նույնիսկ փոքրիկ Երեմը բնագողով զգաց, որ խռպոտ ձայնը բոթ է գուժում:

– Է-հե՛-հե՛յ,-ալիք-ալիք դիզվեց ձայնը.-ժողովո՛ւրդ... Թագավորի հրամանով առավոտ կանուխ ձիատերը ձիով քաղա՛ւա՛ք, հե՛յ-հե՛յ... Ով չտանի, թագավորի հրամանով տունը, տե-

ղը, է-հե՛-հե՛յ...

Եվ ձայնը հեռանալով նվազեց, որովհետև գգիրը ուրիշ կտուր բարձրացավ և երեսն ուրիշ թաղի կողմը դարձրեց:

Շարմաղ բիբին չլսեց, թե զանգերն ինչպես լռեցին, և ուր կորան նրանց վերջին թավ երևեց-ները: Գուռը դժգոհ վրա դրեց, և դուռը չերգեց երկար ու կերկեր, այլ դժգոհ վնգստաց պառավ շան նման:

– Չո՛ն, բայրո՛ւշ, հենց էս սհաթին էր...

Երբ Շարմաղ բիբին եկավ, տեղը նստեց, և երեխաները տատի ներկայությունից սիրտ առան, Միմոնը խոր հառաչով, կարծես ինքն իրեն, ասաց.

– Էսօր Մինասի տղան էր պատմում... Ասում էի՝ սուտ կլինի, ա՛ն քեզ...

– Ապի՛, յանի թագավորն էդքան ձի ինչի՞ ա հավաքում,-հորը դարձավ անդրանիկ աղջիկը՝ ութ տարեկան Շողերը:

– Եսի՞մ, - ուտերը վեր քաշեց հայրը,-կռիվ ա, բալա ջան... Մարդ են ջարդում, ձիեր են կոտրում: Ժողովուրդ տուր... Թագավորի հրամանն ա:

– Փո՛ւ, փո՛ւ...

Անհայտ էր, թե Երեմը այդ բացականչությամբ իր զարմա՞նքն էր արտահայտում, թե՞ պահեցնում էր տաք ապուրը: Մայրը սկսեց նրան կերակրել և ահր սրտում՝ ամուսնուն հարցրեց.

– Մեր Յուլակը չափումը կգա՞:

Բայց Միմոնը, որ անակնկալ մտքերի հետ էր, չլսեց նրա հարցը:

Յուլակը նրանց ձին էր, կապտավուն մորթով, որի վրա, ինչպես աստղերը, ցրված էին սպիտակ նշաններ: Երկար, ալիքաձև պոչ ուներ Յուլակը: Եվ ասում էին, թե մի հին ու ազնիվ ցեղի շառավիղն էր այդ ձին, որ Միմոնը գնել էր երկու տարի առաջ՝ փոխարենը տալով իրենց էշը, մի անմայր հորթ, մի կարպետ և երկու բեռ ցորեն:

– Տուն եմ, երեխաների տեր եմ, առանց ձիու հնար չկա,-ասել էր նա և ուրախության ժպիտով առաջին անգամ ձին քաշել աղբյուրը: Հենց այդ օրն էլ նրան անվանել էին Յուլակ, այն ձիու անունով, որ եղել էր նրանց տանը Միմոնի մանկության տարիներին:

– Հակառակի պես հայվանն էլ ջանով ա, - ասաց Միմոնը և սթափվելով խոր մտքերից՝ դանդաղությամբ հացի փշուրները փեշից սփռոցի վրա թափելով,- տարվա էս ժամանակ ձին էլ էդքան ջանո՞վ լինի: Հալբաթ էսպես պիտի լիներ...

Ասաց ու վեր կացավ՝ փափախի մորթու միջից ծղոտները մեկ-մեկ դեն գցելով, դուրս եկավ գյուղամեջ՝ դրացի հարևաններից իմանալու ավելի ստույգ տեղեկություն:

Դարպասի մոտ Միմոնը մի պահ կանգնեց, նայեց ձիուն, որ արոտից վերադարձել և ախորժակով խժռում էր սարի թարմ խոտի խուրճը, երբեմն մոռթով քրքրում խուրճը և փնտրում սուսամբարի տերև: Միմոնը տխուր նայեց. Յուլակի ողորկ մարմինը և մորթու սպիտակ բծերը աստղալույսին մեղմ շողշողում էին:

Նա մի անգամ էլ տեսավ, որ ձին նիհար չի և չար վրդովանքով կանչեց.

– Սատկա՛ծ, քիչ կեր, է՛լի, տրաքվելու չե՞ս հո...

Կանչեց ու խուրճը դրեց գոմի կտրան: Չին մեղմ վրնջաց և վիզը մեկնեց դեպի խուրճը:

– Հը՞, բոյը կարճ չի՞, նանի՛... Չափումը թե չգա, - դարձավ նա մորը, որ հավաքնի մուտքը կալել ու կանգնել էր նրա կողքին:

– Եսի՞մ, ա՛յ որդի...

- Ռուսի դագախը սրա վրա կարո՞ղ է նստի... Չէ՛, չեն տանի, - հուսադրեց իրեն Միմոնը և քայլեց փողոցով:

Շարմաղ բիբին նայեց որդու օտորվող մարմնին, մինչև նա հավելեց մթնում և կենդանական խանդաղատանքով ինչ-որ բան մրմնջաց, որ չգիտես՝ աղո՞թք էր, օրհնությո՞ւն, թե՞ աղոտ հույսի ակնկալություն:

Մութն էր, երբ Միմոնը տուն եկավ: Գոմում կապած ձին լսեց տիրոջ ոտնաձայնը, նորից վրնջաց: Միմոնը խղճահարվեց. նա ճրագը վառեց, խոտի խուրճը գրկեց և ներս մտավ գոմը: Յուլակն ուրախությունից վրնջաց, մի քանի քայլ արեց, փորձեց կապը կտրել, բայց չկարողա-

ցավ: Միմոնը խուրճը մտուրը դրեց և, երբ ձին մոռութը կոխեց մեջը, ձեռքով շոյեց Յուլակի փափուկ մեջքը:

Ընդարձակ գոմի անկյունում նստել էր պառավ կովը: Երկու այծերը, որոնք բարձրացել էին մտուրի վրա, Միմոնին տեսնելով, ցած թռան և միբուքներն օրորելով մոտ վազեցին: Սակայն Միմոնը չմոտեցավ ոչ կովին և ոչ էլ այծերին: Նա մի պահ կանգնեց, ապա ձիու ոտքերի տակ քափված խոտը ժողովեց և դուռը դրեց:

Երեխաները քնել էին: Շարմաղ բիբին, աչքերը կկոցելով, դժվարությամբ թելում էր հաստ ասեղը, որպեսզի կարկատի որդու գուլպաները: Նրանց տան վաղուցված կարգն էր այդ: Երբ Միմոնը քաղաք գնար, մայրն էր հոգում նրա ճանապարհի պատրաստությունը:

– Հաստա՞տ ա...

– Բա հո տո՞ւտ չի...

– Ի՞նչ են ասում:

– Ասում են՝ բոյը հաշիվ չի, եթե ձին առողջ է, կտանեն... - և դարձավ մորը. - նանի՛, Յուլակի էն մեծ տոպրակն ո՞ւր ա, հետս դարման են տանելու:

Շարմաղ բիբին վեր կացավ մեծ տոպրակի միջի բուրդը թափելու:

Զննելուց առաջ Միմոնը մի անգամ էլ գնաց գոմը: Պատավ կովը, այդ անսովոր այցից զարմացած, մինչև վեր կենար ու որոճալով մոտենար գոմի դռան, Միմոնը ձիու համետն ու չվանները սարքեց, դրեց ախոռի մոտ ու դուրս եկավ:

Դուրսը աստղալույս գիշեր էր:

Գյուղում մեկ-մեկ հանգչում էին կրակները, և կրակների հետ լռում էին ձայները: Ներքևը՝ գետափի մարգերում, կանչում էր գիշերահավը: Արտերից, դաշտերից և հեռվի անտառից հո՛վը բերում էր զով սառնություն և հազարավոր խոտերի բույր, որի մեջ ավելի սուր զգացվում էր սուսամբարի և արդեն չորացող դաղձի կծու հոտը:

Միմոնը նստել էր դարպասի քարին, և քարի նման հոգը ծանրացել էր նրա սրտին: Հազիվ էր ծայրը ծայրին հասցնում, երբ հավասար աշխատում էին ինքն ու Յուլակը: Իսկ ա՞յժմ... Եվ Միմոնին թվաց, թե իրենց տնից տանում են ոչ թե մի ձի, այլ իր եղբորը, իր որդուն, այնպես, ինչպես անցյալ ամառ շատ տներից տարան նրանց որդիներին ու եղբայրներին:

Սակայն հոգնությունը հաղթեց ու ներս մտավ:

– Հակառակի պես անիրավի մեջքը կասես հինայած լինի, - նորից հիշեց Միմոնը:

3

Լույսը դեռ չէր բացվել, որբ Միմոնը ճրագը ձեռքին մտավ գոմը Յուլակին համետեց ու դուրս քաշեց: Հարևան բակում ճրագներ էին շարժվում, ճռնչում էին դռները, ինչ-որ ձայներ էին գալիս:

Միմոնը լսեց իր հարևանի՝ Սաքու տղայի ձայնը: Նա բարկացած կանչում էր հարսի վրա, թե ինչու ձիու չվանը լույսով չի գտել:

Դռանը կանգնել էին Շարմաղ բիբին, կինը և նրա փեշից բռնած քնաթաթախ Շողերը, որ չէր լսել մոր խոսքին և լացով հագել շորերը, որպեսզի տեսնի, թե ինչպես են ճանապարհ գցում Յուլակին:

Տխուր ժամ էր, երբ Միմոնը դռնից հանեց ձին: Կարծես ներսը նա զարդարել էր մի դագաղ, իսկ դուրսը սպասում էին այդ ծանր վայրկյանին, որ աղի արտասվեն:

Յուլակը գոմից երբ դուրս եկավ, վրնջաց և ականջները խլշեց: Շարմաղ բիբին ձեռքը կրծքին խփեց և աղիորոտորմ ասաց.

– Ջա՛ն, - սրբեց արցունքը:

Շողերը մոտ վազեց, երեկվա խոտի փշրանքից մի բուռ մոտեցրեց ձիուն: Յուլակի տաք ռունգերից մի ջերմ շունչ շոյեց աղջկա սառած ձեռքերը:

Միմոնն ամբասցնում էր ճանապարհի պաշարը, կապում հարդով լի պարկը և միաժամանակ տնեցիներին պատվիրում, որ ցերեկն այծերը հեռու քշեն, և եթե ջրի հերթն իրենց տան, լոբու մարգերն անպատճառ ջրեն: Հենց այդ խոսքին Սաքու տղան կանչեց.

– Միմո՞ն, բա չպրծա՞ր...

– Եկա՛, եկա՛:

Եվ Յուլիայի սանձը քաշեց: Տանեցիները դանդաղաքայլ հետևեցին մինչև հարևանի դուռը, սեսես հուղարկավոր էին մի քանկազին դագաղի, որին ուղի էին գցում մահվան անվերադարձ ճանապարհով:

Շարմաղ բիբին անընդհատ լալիս էր. լաց էր լինում և Շողերը, լալիս էր նրա մայրը: Փողոցին չհասած՝ մայրը լսեց Երեմի ձայնը.

– Այի՛, ապի՛...

Դռան շենքին կանգնել էր մերկ երեխասն ու բարձր հեկեկում էր և կանչում հորը: Բայց ուշ էր: Միմոնը Սաքու տղայի հետ արդեն իջնում էր ձորակը, որպեսզի միանա ուրիշ ձիավորների:

Մայրը վերադարձավ, գրկեց տղային ու տուն մտավ:

Շարմաղ բիբին ու Շողերը կանգնեցին այնքան, մինչև ձիավորները դարիվերը բարձրացան և պահվեցին բլուրի ետևը:

Արևը նոր-նոր շողերով ոսկի էր քափում բարձր սարի կատարին, երբ վերջին ձիվորը երևաց դարիվերի գլխին և անհետացավ, ինչպես սև ուրու:

4

Ձիավորները սկզբում լուռ էին, ոմանք առավուտի զովից ընդարմացել ու կարկամել էին: Սակայն բուրբն էլ իրենց դժվար մտքերի հետ էին, ձիերն էին համեմատում իրար, ուշիուշով դիտում, որպեսզի որոշեն, թե որը նորից կվերադառնա այս ճանապարհով, և որի սանձն ու սարքը տերը շալակած կբերի որպես մեռած մարդու գգեստներ, որոնց վրա այնպես դառնաղի ողբ են երգում կանայք:

Գնում էին մեկ-մեկ, խումբ-խումբ: Մեկը գրպանից հաց էր հանել, մյուսն ազահուքյամբ ծծում էր չիբուխը, երրորդը կախ էր արել ոտքերը՝ աչքը ձիու ականջներին, և լուսաբացի նինջով օրորվում էր ձիու հետ:

Բայց երբ սարի հետևից արևը բարձրացավ, կարծես ջերմացավ տխուր ու լուռ ձիավորների սիրտը: Ամենից առաջ խոսեց դարբին Ավագի տղան՝ շիլ Իվանը, որ սարը բարձրանալիս սահել և հասել էր մինչև ձիու գավակը:

Նա ընդհատեց իր տխուր երգը և միամիտ պարզությամբ ասաց.

– Ես աստծու քոռ հավատն անիծեմ... Իմ աչքս էսպես արեց: Իմ ձին որ քոռ լիներ, ես էս սարի գլխին ի՞նչ ունեի:

Մի քանիսը ծիծաղեցին: Սաքու տղան մտքում բարկացավ նրա վրա.

– Անդա՛րդ հեյվան...

– Հրեն Հիբանի ձիուն տեսեք, - շարունակեց Իվանը, ուրախ, որ ընդհատեց ծանր լուրջությունը, - կասես դազախի ձի լինի: Հիբան, արիստավը քեզ էդ ձիով տեսնի, քեզ էլ հետը կտանի...

– Ի՞նչ պակաս կավալեր ա, - ձայն տվավ մեկը: - Էն օրը Քարուտի առվով էնպես թռավ, որ մնացինք արմացած:

– Մի տեսեք, է՛... Տերտերն իրա ձին ժամհարին ա տվել: Ա՛յ, ինչ են ասել հալալ ախալերության, - խոսքը փոխեց դարբնի տղան:

– Ա՛, քիչ յավա-յավա խոսիր, է՛յ ... - կանչեց Շուղունց Աքելը, որ գյուղում ավել անունով հայտնի էր որպես «աղվես խեղդող»՝ երիտասարդ ժամանակ ձեռքով աղվեսը խեղդելու համար, - տերտերը հիվանդ տեղով կարող ա՞ ձի նստի:

– Դե սաի՛ մնացել ա, որ մեզ համար աղոթք անի, էլի՛, - կծու հեզնեց մի ուրիշը:

Ընդհանուր խոսակցությունից բացի ծայր առան և մասնակի գրույցներ: Ոմանք ճանապարհն աննկատ անցնելու համար մի պատմություն սկսեցին, ոմանք էլ խոսում էին պատերազմի և նրա արհավիրքների մասին:

– Մեր Անդրին անցկացած շաբաթը մի նամակ էր ուղարկել Վարշավու կողմերից... Լավ չի գրում. ասում է՝ էս մի ամիս է՝ ծմակի մեջ, գիշեր-ցերեկ թոփերը տրաքում են: Մինչև անգամ չոլ դուրս գալն էլ ա երկյուղալի...

– Իմ հորեղբոր Միմոնն էլ ա գրել: Լազարեթից ա գրում, համա տեղը հայտնի չէ: Մի տեսակ անուն են ասում... Էն օրը տերտերը ինչքան ման եկավ գրքերում, չգտավ: Ասում ա՛ էդպես քաղաք Ռուսեթու հողումը չկա:

– Նրա ի՞նչ ա որ...

- Ոտիցն ա կպել: Գրում ա, որ ծանր չի, մի ամսից պիտի դուրս գա:
- Աքել ամի, դու երկիր տեսած մարդ ես, էս կռիվն ինչո՞վ կվերջանա, - դարձավ նրան դարբնի տղան: Շատերը ծիծաղեցին, որովհետև Շուդունց Աքելը իր ողջ կյանքում իրենց գյուղից և գավառակային ավանից այն կողմը չէր եղել:
- Ինքը՝ Աքելը, դժգոհ սաստեց.
- Անհամ անհամի տղա...
- Քիչ հետո խոսք ընկավ ձիերի պետական գնի մասին:
- Թեկուզ անունը փող, ի՞նչ կառնվի դրանով...
- Երկու բեռ գարի...
- Էդ էլ չես առնի:
- Դե գոնե գինը տային:
- Տային էլ, որտեղի՞ց ես ձի առնում: Մեր գյուղից որ էսքան ձի են պահանջել, դու տես՝ ամբողջ գավառից քանիսն են բերելու...
- Ա՛յ տղա, էս հո կարգին զորք ենք, - և դարբնի տղան բարձր կանչեց.
- Մլուշա՛յ... Ափիցեր Աքել Շողունցով...
- Ա՛, հերիք տնագ տաս Աքել ամուն:
- Աքել ամիս նեղանալ չի... Դե, շարքով գնացեք. տեսնեմ՝ ով ա ետ ընկել, - ասաց Իվանը և ձին ճանապարհից հանեց:
- Թամամ հաշիվ... Աբրահամի ձին չկա՝ էն ա բազարում, Իսախանենց ձին՝ ոտը գելը ցրիվ ա տվել, մեկ էլ Կոստանդ աղայի սպիտակ ձին...
- Կոստանդը հիմա քնած՝ ձին էլ՝ ոսկի գարին առաջը... Վեր կկենա, յուղ ու մեղր կուտի, ձին կթամքի և Կաթնաղբյուր մեզ կհասնի: Նա հո քո հավասարը չի՞ - ասաց Գիլանց Մուքին:
- Մի հաշիվ չի՞ ... Էս գլխից հենց նրա ձին են տանելու, - ասաց Միմոնը և տխուր նայեց Յուլակին, որ ականջները խաղացնելով՝ գնում էր մյուս ձիերի կողքով:
- Ո՞նց չէ, - առարկեց Իվանը, - քո Յուլակը առաջի նոմերը կհանի, նրանը չէ... Թող Շարմաղ հոքիրն ինչքան ասես լաց լինի, - ձայնը տխուր մեղմացրեց Իվանը:
- Միմոնը վրդովվեց:
- Ուրեմն Կոստանդի սպիտակ ձին ու Յուլակը մի հավասարի են... Նա սպիտակ ձիու արժեքը մի բեռ ոսկի է տվել: Ես ի՞նչ եմ տվել...
- Էս է, սև ու սպիտակ էնտեղ կջոկվի, - ասաց դարբնի տղան և խոսակցությանը վերջ տալու համար սկսեց պատմել, թե իբրև գերմանացիք պայթեցրել են մի ահռելի պարիսպ և ծովը կապել ռուսների հազար-հազար զորքի վրա...

5

Արևը բավական բարձրացել էր, երբ ձիավորները հասան Կաթնաղբյուր և Գիլանց Մուքու առաջարկով իջան հանգստանալու: Նրանք ձիերն արձակեցին աղբյուրից ներքև ընկած արտոներում, իսկ իրենք տեղավորվեցին աղբյուրի մոտ և բաց արին ճանապարհի պաշարը:

Այդ աղբյուրը, ուտելու պահանջը, գուցե և այն, որ ճանապարհին հոգնելու չափ խոսել էին պատերազմից, ձիերի հավաքից և օրվա չարիքներից, այդ ամենը աղբյուրի մոտ նրանց գրույցը փոխեց խաղաղ և սովորական առօրյայի հունով:

Կարծես հունձի ժամանակն էր, և, ինչպես միշտ, ծփում էին լեռան լանջերի բարձր խոտերը: Եվ ինչպես ամեն տարի, ահա նրանք ձիերով եկել են սարը: Հիմա կգրնգան գերանդիները, լորը կթռչի խոտերի միջից, և լեռնային կաքավը կկարդա կանաչ սաղմոսը:

Դարբնի տղան հանկարծ նկատեց, որ Շուդունց Աքելը շտապելուց մթնում տրեխները թարս էր հագել: Եվ այդ բուռն զվարճություն պատճառեց մյուսներին:

Նրանց զվարթ ծիծաղը լռեց, երբ Գիլանց Մուքին, որ արդեն ալեհեր խերունի էր, բարձրացրեց օդու առաջին թասը:

- Բարի լույս բացվի մեզ վրա և մեզ մման չարքաշ մշակների վրա... Բարով տեսնենք մեր գավակների ազատությունը սրի բերանից: Ողջություն լինի և արդար լիություն: Դու մեր սրտովն անես, - և ալեհեր գլուխը դարձրեց դեպի ջինջ երկինքը, կարծես նրա անհուն խորքից մի աչք քաղցր նայում էր այդ խեղճ մարդկանց:

Միմոնը լուռ էր: Նա թիկնել էր քարին, թրջում էր հացը պաղ ջրի մեջ և դանդաղ կրծում: Երբեմն նայում էր արածող ձիերին, որոնք գլուխները չէին բարձրացնում ցողապատ խոտից: Գյուղի ձիերի հետ արածում էր և Յուլակը:

Միմոնը մերթ աչքի տակով համենատում էր ձիու բարձրությունը մյուս ձիերի հետ և տեսնում, որ Յուլակը նույնիսկ Գիլանց Մուբու ձիուց էլ կարճ է, մերթ հայացքը գցում էր սարալանջի կողմը: Եվ դժվարին մտքերը խոնկում էին ուղեղում, և ելքը չէր տեսնում: Ահա նորից դռանը կչոքի դառն աղքատությունը, վիզ կծոխ ուրիշին, որ իր խուրձերը տուն բերեն, որ խոտը սարից բերեն: Յուլակին կտանեն, և հնձած արտում խուրձերը անձրևից կսևանան...

– Թե Գիլանց Մուբու ձին հավասարվի Յուլակի հետ... Թե չէ՝ նրանից կարճը չկա...

– Միմոն, հրե՛ն, - հանկարծ կանչեց դարբնի տղան, և Միմոնը ցնցվեց:

Նա գլուխը հետ դարձրեց:

Հեռվից խաղալով և խայտալով վագում էր սպիտակ ձին, քամին փռփռացնում էր բաշը, և ձին լայն կրծքով ճեղքում էր լեռնային օդի սառն ալիքները: Փռչի չէր բարձրանում գետնից, և թվում էր, թե ձիու արագավազ ոտները չեն դիպչում գետնին, և պայտերը զրնգում են օդի մեջ:

Արևը դեմից էր, և արևը ոսկևորել էր ձիու մարմար ճակատը, արծաթաձույլ ասպանդակները և պողպատյա սանձը: Չիավորը ձիու հետ միաձույլ էր, և թվում էր, թե արևնուտքի գորշ ամպերի պատվանդանից պոկվել էր մարմարիոնե մի հեծյալ և արշավում էր որպես չքնաղ տեսիլք:

Գյուղացիների գրույցը դադարեց: Բոլորը նայում էին նրա կողմը: Նույնիսկ ձիերից մի քանիսը բարձրացրին գլուխները և հափշտակված, անասնական ահով նայեցին սպիտակ ձիուն: Շուրուց Աքելի բերանում հացի պատառը սառել, մնացել էր:

– Ա՛յ ձի... Հազար մանեթ գին ունի:

– Տերն էլ պակաս փող չունի:

– Էդ ձին ինձ տան, կռիվ չգնացողը մարդու տղա չէ, - ասաց դարբնի տղան:

– Նրա վրա ամենաբաշը գեներալ կնստի...

– Վրան նստողն էլ գեներալ է:

Երբ ձիավորներին հասավ, Կոստանդ աղան սանձը ձգեց և հազիվ կարողացավ պահել ձիու գլուխը: Կապույտ քրտինքի փրփուրը նստել էր ձիու սպիտակ մորթի վրա: Չին կարմիր ռունգերը փնչացնում էր, կանգնած տեղը ոտքերն անհանգիստ դռփում:

– Դուրս գալդ մի սհաթ կա՞, Կոստանդ աղա, - շողոքորթ կեղծությամբ հարցրեց Շուրուց Աքելը, որին շշմեցրել էր այդ տեսարանը:

– Սհաթին չեմ նայել... Մինչև դուք ձիերը նստեք, ես բազար կհասնեմ: Չեմ կարողանում գլուխը պահեմ, ձեռքերս կոտորեց...

Դարբնի տղան կամաց վրա բերեց.

– Տո՛ւր ինձ, ես կպահեմ:

Կոստանդն ուզեց ինչ-որ բան ասի, սանձը մի քիչ թուլացրեց. սպիտակ ձին նույն վայրկյանին զգաց այդ, և տիրոջ խոսքը մնաց կիսատ:

Գյուղացիները տեսան սպիտակ ձիու ամեհի ոստյունը: Մի ակնթարթից ձին պահվեց սարի հետևը:

– Հրեղեն ձի սրան կասե՛ն...

Քիչ հետո գյուղացիները քաշեցին իրենց ձիերն ու ճանապարհ ընկան:

Երկու լեռնաշղթայի արանքում՝ նեղ հովտի վրա, որի մեջտեղով գլորվում էր լեռնային կապույտ գետը, ընկած է այն փոքրիկ քաղաքը, դեպի ուր այդ օրերը լեռնային կաճաններով և դժվար արահետներով գնում էին մարդկանց և ձիերի անընդմեջ շարքերը:

Նրանք իջնում էին բարձր լեռներից, որոնց գոգերում, ինչպես լեռնային արծվի բները, ծվարել են քարակոփ գյուղերը: Նրանք ելնում էին մթին ձորերից, ուր խավար խեղճություն կար: Նրանք գալիս էին բարձրավանդակի տափարակից, որի մեջտեղը ադամանդի նման ջինջ լիճն էր՝ եղեգների երիզով, քարոտ ափին՝ հին գյուղը, որի կիսավեր վանքը քարափից ցուլ էր գցում ջրերի վրա, և թվում էր, թե ջրերի տակ սուզվել է մի մեռած վանք, ու պիտակ բաղերը գիշերում

են նրա մռայլ խորաններում:

Եվ ով հայրենի ճանապարհով հասնում էր այն ծանոթ կետին, որտեղից հանկարծ բացվում էր գետահովիտը, շողշողում էին քաղաքի տների ապակեպատ պատշգամբները, թիթեղյա կտորները, ով հասնում էր այդ կետին, ահով էր նայում ներքև, ինչպես արջառը, որին քշում են սպանդանոց, և ահա թաց ռունգերով շնչում է թարմ արյան հոտը:

Վրնջում էին ձիերը՝ մետաղաձայն և երկարածոր, ինչպես տխուր երգը, կարծես վերջին հրաժեշտն էին ուղարկում լեռնային կապույտ լճերին, որոնց ջրից խմել էին, տափաստաններին, որտեղ անցել էր նրանց մանկությունը, և ամայի գոմերին: Մեկը թավ էր վրնջում, մյուսը՝ արծաթահնչյուն, և բարձրանում էր հետևի ոտքերի վրա, ինչպես գազազած ցուլ, ձգում էր սանձը և չէր ուզում իջնել այդ անվերադարձ ուղիով:

Երբ ձիավորները քաղաք հասան, հրապարակում ասեղ զցելու տեղ չկար: Փողոցները, արտերի միջնակները, նույնիսկ տների բակերը սևացել էին ձիերի հազարավոր խմբերից:

Կային հազար գույնի ձիեր՝, որձ, էգ, ծանրած և ծեռ, քուռակներով և դեռ անծին, թամբած ու մերկ: Նրանց կապուտել էին՝ որին քարից, որին ծառից կամ գետնին խրած սեպից: Կային և իրար կապած ձիերի խմբեր: Մեկի առաջ խոտ էր, մյուսինը՝ հարդ, երրորդը նեղվում էր քաղցից, շոգից և անսովոր միջավայրից: Քաղցած ձիերը պոկոտում էին փողոցի չոր և հազար սմբակի տրորած խոտը:

Ձիերն իրար հետ կռվում էին. ամեն անկյունից վրնջոցի ձայն էր լսվում: Մի տեղ՝ ձիերի բազմության մեջ, քուռակը իր մորն էր կորցրել և բարակ վրնջոցով կանչում էր, վազվզում, մռութը մոտեցնում ուրիշ մայրերի: Շոգից կատաղած որձաձիերը կտրատում էին կապերը և ամենի կրծքով հալածում էզերին, իրար կրծոտում և արնոտում բաշ ու ազդրեր:

Այդ ժխտրին խառնվում էին տերերի կանչն ու աղմուկը, հարայիրոցն ու բղավոցը: Հայ, թուրք իրար էին խառնվել: Պետական հրամանը բոլոր գյուղերում կրկնվել էր պաշտոնական կարգադրության գորշ նմանությամբ և մարդկանց ու ձիերի այդ ահագին բազմությունը քշել քաղաք:

Հրապարակի մի անկյունում՝ տախտակներից շինած փոքրիկ բարձրության վրա, դազաղի նման նեղ սեղանի շուրջը նստել էին իշխանավորները: Նրանցից հեռու՝ ոտքի վրա էր ստորադաս պաշտոնյաների՝ ուրյադնիկների, տանուտերերի և գյուղական գրագիրների խումբը՝ իրենց պաշտոնական տարագով, շքանշաններով և պղնձյա ծանր մեդալներով: Ավելի հեռու հպատակների բազմությունն էր, որ ծովի նման ծփում էր: Եվ բոլորի աչքերն ուղղված էին սեղանի շուրջ նստած չինովնիկների կողմը, որովհետև նրանք էին որոշում ձիու և ձիատիրոջ բախտը:

Գյուղի տանուտերը կարդում էր ձիատիրոջ ազգանունը, բազմության միջից մեկը, ձիու սանձը բռնած, առաջ էր գալիս, ինչպես կրկեսում՝ ըմբիշը: Ապա նրա ձիուն մոտենում էին մի քանի հոգի, տնտղում, ատամները նայում, թղթի վրա ինչ-որ նշումներ անում: Մի վայրկյան խորհրդակցելուց հետո սեղանի մոտ նստած պրիստավը ձեռքով նշան էր անում:

Ահա այդ նշանն էր, որ հայտնի էր դարձնում ամեն ինչ:

Եթե նշանը բազմության կողմն էր, ուրեմն ձիու անպետք էր: Ձիու տերը ակզբում երկյուղով, ապա ուրախությունից դողացող ոտքերով քաշում էր ձիին և արագ հեռանում: Իսկ եթե նշանը տախտակների մոտ կանգնած ռուս զինվորներին էր ուղղված, ապա նրանք իսկույն մոտենում էին, նոր սանձ հագցնում ձիու գլուխը, հինը շարտում տիրոջ կողմը, ձիին հեռացնում էին, հանձնում ուրիշ զինվորների, որոնք բազմության և տիրոջ աչքի առաջ միահավասար կտրում էին ձիու պոչը, բաշը խուզում և բաշի մագերից կախում տախտակի մի փոքրիկ կտոր:

Ձիատերը փորձում էր գնալ իր ձիու հետևից, սակայն բղավում էին նրա վրա, և, ինչպես պարտված ընմբիշ, նա մնում էր գլուխը կախ: Բազմությունը լուռ դիտում էր այդ տեսարանը: Ապա տանուտերը կանչում էր նրան, և շշմած մարդը սթափվում էր, հավաքում այն, ինչ հանձնում էին՝ ձիու սանձը, չվաները, համետը, և այդ իրերը շալակած անցնում էր հրապարակով դեպի բազմությունը՝ ձեռքում բռնած թղթի կտորը, որի վրա նշանակված էր ձիու գինը և նրա նախկին տիրոջ ազգանունը:

Գյուղացիները երբ քաղաք իջան, ձիերը կապեցին հրապարակից հեռու: Գիլանց Մուքին և Աքելը առաջ ընկան՝ ամբոխի մեջ գտնելու հարևան գյուղերի մարդկանց:

Առաջին հանդիպած ծանոթին, որ նրանցից կանուխ էր եկել, իսկույն հարցրին.

– Հը, շա՞տ են տանում...

– Էլ մի՛ ասեք, գուլում ա...

Միմունը տեսավ իր վաղուցվա ճանաչ թուրքին և նրան մի կողմ քաշելով՝ առանձին հարցրեց, թե ինչպիսի ձիերն են ազատվում, արդյոք կարճահասակ ձին է՞լ են տանում:

– Չիտդ ոտքը պիտի կոտրած լինի կամ խոր վերք ունենա, որ ազատվի... Թե չէ՛ բոյը հաշիվ չի...

Միմունի ոտները թուլացան:

Մինչև այդ խոսակցությունը նա դեռ մի աղոտ հույս ուներ, որ այնուամենայնիվ հույս էր: Այժմ այդ էլ ցնդեց: Նա հուսահատ մոտեցավ ձիուն:

– Յուլա՛կ, - ձին վրնջաց այդ ծանոթ կանչից:

Կարծեց՝ հիմա խոտ պիտի գցեին նրա առաջը: Միմունը հարդով լի պարկը կոխեց նրա գլուխը:

– Յուլակ... Գնում ես, էի...

Քիչ հետո Գիլանց Մուքին հոգնած վերադարձավ: Նրա ավեհեր դեմքի վրա դառն անհուսություն կար: Եվ հուզված շնչով ասաց գյուղացիներին.

– Հիմա Քարազուլին են կանչում, հետո զիլիբիրեցիք են գնալու, նրանցից հետո՝ մենք...

Միմունը մի վայրկյան մտածեց, տուպրակը ձիու գլխից հանեց ու ձին քշեց:

– Էդ ո՞ր , Միմո՛ն, - ձայն տվավ Մաքու տղան:

– Տանեմ գետը... Կաթնաղբյուրից ջուր չիմեց:

Այդպես փախչում են սարսափից: Այդպես փախչում է հոտը, երբ կայծակն ահռելի որոտով խփում է մոտակա ժայռին: Այդպես դողահար վազում է գազանը, երբ հրդեհվում է անտառը:

Մարսափահար փախչում էր Միմունը՝ մոլորվելով քաղաքի փողոցներում, անվերջ մտրակելով ձիուն: Կարծես նրա հետևից էին ընկել հրապարակի բոլոր զինվորները, և նրանք, որոնք նստել էին դագաղի նման նեղ սեղանի շուրջը:

Ահա հասավ գետափի խուլ փողոցը: Այնտեղ էլ ձիեր կային. նրա նման գյուղի մարդիկ՝ յուրաքանչյուրն իր ձիու սանձից բռնած և ստրուկի հեզությամբ իր հերթին սպասող: Նրանք տեսան փախչող ձիավորին, և ոմանք կարծեցին, թե ահից սարսափած ձիավորը փախչում է դեպի հեռվի լեռները, ինչպես կփախչի պարտվածը դեպի փրկության բերդը:

Հոգնած ձին մտրակի հարվածից մի քիչ արագացնում էր քայլերը, ասպա նորից գնում բեռան տակ մեծացած գյուղական ձիու ծանր քայլերով:

Ահա հետ մնաց վերջին տունը, և բացվեց կարտոֆիլի դաշտերը: Միմունը դանդաղեցրեց ձիու ընթացքը և շունչ քաշեց: Նրան քաղաքի սահմանից դուրս ավելի հեշտ թվաց: Այն հեռվի լեռներից, որոնց լանջին իրենց գյուղն էր, մի անապական գով զարկեց նրա քրտնած դեմքին:

Միմունը ծովեց դեպի աջ՝ գետը տանող նեղ ճանապարհով: Չին զգաց գետի սառնությունը և առանց մտրակի արագացրեց քայլերը:

Գետակի հունն իջնելուց առաջ Միմունը երկյուղով շուրջը նայեց և տեսավ, որ ամայություն է: Միայն ներքևը՝ ուռենիների ստվերում, ննջում էին կովերը: Ու երբ ծարավ ձին գլուխը կռացրեց ջրի վրա, Միմունը ցած թռավ, սանձն ամուր կապեց առաջին ոտքից և սկսեց հետևի ոտքերը կապոտել:

Յուլակը կուշտ խմելուց հետո փորձեց գլուխը վեր հանել, բայց չկարողացավ: Եվ մոռթը հնազանդ ու մունջ նորից կախեց գետի կապույտ ջրերի վրա:

Միմունն անսովոր արագությամբ ձիու համենառը հանեց: Արևի տակ փայլվեց ձիու ողորկ և գեր մեջքը: Ապա նույն արագությամբ կռացավ և գետնից վերցրեց մի չեչաքար: Երբ առաջին անգամ նա չեչաքարը Յուլակի մեջքին քսեց, ձին հովություն զգաց, խաղացին նյարդերը, և հաճելի գրգռից մեջքի մաշկը դողդողաց:

Ապա հանկարծ ձին մեջքին զգաց ծակծկոց: Չին փորձեց հեռանալ, բայց չկարողացավ, որովհետև ոտքերն իրար պինդ կապված էին: Նորից փորձեց գլուխը վեր հանել, դարձյալ չկարողացավ: Իսկ ցավը հետզհետե սաստկանում էր, որովհետև Միմունը հուսահատ կատաղությամբ չեչաքարը քսում էր նրա մեջքին: Մի քանի րոպեից մաշկը պլոկվեց և արնոտեց քարը:

Յուլակը տնքում էր, պոչն ուժգին խփում այս ու այն կողմ, գավակն աջ ու ձախ դարձնում, բայց ոչինչ չէր օգնում: Միմունն ամբողջ ծանրությամբ ընկել էր ձիու մեջքի վրա և քարը հա

քսում էր: Արդեն նոր բացված վերքից արյան կաթիլները դուրս էին ցայտում և գլորվում հևացող կողերի վրայով: Իսկ Միմոնն ավելի արագ էր քերում, կարծես չեչաքարն ուզում էր քաղել Յուլակի այնքան գեր ու ողորկ մեջքի մեջ:

Ձին այլևս չդիմացավ, շրջվեց կողքի վրա և մեջքը կիսով չափ թաղեց գետի մեջ: Յավից և անսովոր վիճակից Յուլակը ցնցում էր ոտքերը, փռնչում ռունգերով, վիզն ու գլուխը քսում գետափին և փորձում ոտքի կանգնել:

Միմոնն արնոտ չեչաքարը մի կողմ գցեց, ինչպես մարդասպանը՝ դաշյունը, և սարսափով նկատեց, որ գետի ջուրն անվերջ կարմրում է, երբ ալիքը զարկում է ձիու մեջքին:

– Չլինի՞ տամար տրաքեց...

Յուլակի աչքերի առաջ մթնել էր: Գլխիվայր դառնում էին քարերը, գետափը, և թվում էր, թե գետափի փափուկ մամուռը կախվել է երկնքից: Հաճելի էր ջրի մեջ, և բնագոյաբար կենդանին ավելի խորն էր թաղվում լարծուն տիղմի և ջրային խոտերի մահիճում: Իսկ վիզն ու գլուխը չէր բարձրացնում կապույտ քարերի բարձից:

Միմոնն արագ արձակեց կապերը, սանձը, ինքը կիսով չափ մտավ ջուրը և գոռալով, աղերսելով, հրելով ու քաշելով՝ մի կերպ բարձրացրեց ձիուն:

Յուլակը դողում էր:

Նրա մեջքի աջ կողմը ափսեի չափ վերք էր բացվել, և երևում էր կարմիր, տեղ-տեղ փոս ընկած, ճաքճաք միսը: Արյունը շարունակում էր կաթկթել, բայց մի քանի տեղ արդեն լերդանում էր:

Միմոնը հանցագործի հապճեպությամբ արյան հետքերը լվաց ձիու կողերից, իր ձեռքերից, տիղմի բարակ շերտով ծածկեց վերքը, ջրախոտերով ծածկեց, ապա շտապ համետեց ձին ու դուրս եկավ ճանապարհը:

Ձին հագիվ էր քայլերը փոխում: Միմոնն ինչքան էլ կանչում էր, ոտքով խփում, փաղաքշական խոսքեր ասում, ձին չէր արագացնում քայլերը:

Եվ Միմոնն ու Յուլակը նույն փողոցներով գնացին դեպի հրապարակը: Երկուսն էլ գլխիկոր էին: Մարդն իր դաժան խոհի հետ էր՝ կտանե՞ն այժմ, թե՞ ոչ, ձին հագիվ տնքում էր՝ պղտոր աչքերի առաջ գլխիվայր կախված մի չնաշխարհիկ արոտ...

7

Իսկ հրապարակն այդ ժամանակ ծփում էր մի արտասովոր դեպքից: Փողոցներում խռնված բազմությունից ոմանք բարձրացել էին պատերի և պատուհանների վրա, որ ավելի լավ տեսնեին, թե ինչ է կատարվում մեջտեղը: Ոմանք բարձրացել էին ձիերի վրա: Ոտքի էին և կենտրոնում՝ սեղանի շուրջը բոլորած մարդիկ:

Մի կապտավուն ձի՝ երկար, ծավլեծալ բաշով, բոլորովին մերկ, կատաղած վազվզմում էր հրապարակով: Նա երամակի ձի էր, սնվել էր լեռներում, երբեք հեծվոր չէր նստել մեջքին, սանձը չէր դիպչել մոտքին, սմբակները պայտ չէին տեսել: Այդ ձին էին ուզում բռնել զինվորները, որոնք, երկար պարանները թևերին փաթաթած, շարտում էին գերության օղակը, հենց որ ձին մոտենում էր նրանց: Բայց ձին ամենի ուստյուն էր անում, թռչում օձի նման գալարվող օղակի վրայով և փախուստի ելք փնտրում: Ձինվորների մյուս խմբերը զազանային ոռնոցով կտրում էին նրա ճանապարհը և հետ փախցնում դեպի նրանք, որոնք ոլորում էին նոր օղակ:

Գյուղացիները շունչ պահած, անսահման հետաքրքրությամբ դիտում էին կապտավուն նժույգի զազազած վազքը: Նրանք չէին թաքցնում իրենց հրճվանքը, երբ ձին թռչում էր օղակի վրայով: Նրանց բոլորի թաքուն ցանկությունն էր, որ ձին ճեղքեր զինվորների շոթան և հրեղեն հրաշքի պես աներևութանար, թռչեր դեպի հայրենի լեռները և այնտեղից պղնձաձայն վրնջար հատուցման և անսահման ազատության երգը:

Մարդիկ մի պահ մոռացել էին իրենց ձիերը, որոնց զինվորները կապել էին փշալարի ցանկապատի ետևը, մոռացել էին, որ ձիերի սանձերն ու չվանները շալակած, ոտքով պիտի բարձրանային դեպի լուռ գյուղերը, որոնց դաշտերում այլևս չէին վրնջալու փշալարով անջատված ձիերը:

Հանկարծ բազմությունը հառաչեց. լավեց խուլ գվվոց, ինչպես հողմի շառաչն անտառում: Ձինվորները վազեցին փշալարի կողմը: Մի վայրկյան ճեղքվեց բազմությունը, ինչպես ծովի սև ալիքները, երբ երևում է մութ անդունդը, ապա նորից կլանեց ամեն ինչ:

Կապտավուն նծույզը վերջին հուսահատ ուսույուն էր արել, փորձել էր թռչել փշալարի վրայով և ընկել էր լարի երկաթյա սուր փշերի վրա... Ճեղքվել էր կուրծքը, փորը, և վշում էր արյունը լարերի վրա, մահվան հրապարակի վրա, և մեռնող նծույզի ջինջ աչքերում ընդմիշտ սառչում էր հեռվի կապույտ լեռնաշխարհը...

Չինվորները ձիու սառած մարմինն իջեցրին փշալարից: Բժիշկն արձանագրություն կազմեց և վերադարձավ սեղանի շուրջը, որպեսզի նույն գորշ տաղտկությամբ շարունակեն գործը:

Միմոնը յուրայիններին նույն տեղը չգտավ: Նրան ասացին, որ արդեն իրենց գյուղացիներին կանչում են: Եվ բազմությունը հրելով, ձին հետևից՝ հասավ հրապարակը, որի մի կողմը կանգնել էին դարբնի տղան, Գիլանց Մուքին, Աքելը և մյուսները: Գրագիրը կարդում էր անունները:

– Այ մարդ, ո՞ր կորար, քիչ մնաց քեզ շտրաֆ անեն: Ասացինք՝ հրես կգա:

Ամենից առաջ Շուղունց Աքելին կանչեցին: Գողողալով նա առաջ անցավ, մի անգամ էլ հետ նայեց համագյուղացիներին, կարծես նրանց ներկայությունը հուսադրում էր նրան:

Մոտեցան և զննեցին նրա ձիուն: Ու մեկ էլ զինվորները վրա տվին, ձիու համետն արձակեցին և շարտեցին Աքելի կողմը: Չեռքը վերևից հայտնեց վճիռը: Չինվորները քաշեցին ձին: Աքելը հրապարակում մնաց մի րոպե, նայեց ձիու հետևից և անխոս վերադարձավ, մեջքին՝ ձիու համետը:

Գարբնի տղան սրախոսեց.

– Ափիցեր Աքել Շուղունցով:

Բայց ոչ ոք չծիծաղեց: Գարբնի տղայի ժպիտն այլանդակ կծկվեց և դեմքի վրա սառեց՝ որպես դառնության կնիք:

Հետո Ռուստամենց ճակատը նշան ձին տարան: Գնաց և տերտերի ձին: Ժամհարը գլուխը կախ եկավ:

– Հիմա ես տերիորն ի՞նչ պատասխան եմ տալու...

Չորրորդ հերթը Կոստանդինն էր: Գյուղացիները զարմացան, երբ լսեցին նրա ազգանունը, որովհետև Կոստանդը նրանց մեջ չկար: Գարբնի տղան նկատեց, որ սեղանի շուրջը նստողների մեջ ինչ-որ փսփսոց ընկավ:

Հրապարակի մյուս կողմից երևաց Կոստանդը՝ լղար, մեջքը փոս ընկած, մոխրագույն մի ձի հետևից: Թվաց, թե նույնիսկ չնայեցին նրա կողմը, և ձեռքը վերևից նշան տվեց, որ Կոստանդն ու ձին հեռանան հրապարակից:

Այդ այնքան արագ կատարվեց, որ գյուղացիներից շատերը չհավատացին իրենց աչքերին, թե այդ «խեղճ» գյուղացին Կոստանդ աղան է: Նրանք մնացել էին ապշած: Իսկ Կոստանդը կեղծ ուրախությամբ հետ տարավ ձին և անհայտացավ:

Գարբնի տղան Միմոնի ականջին շնչաց.

– Տեսա՞ր, որ ասում էի...

Բայց Միմոնը չլսեց: Նրա ականջին հասավ իր ազգանունը և Յուլակի սանձից բռնած՝ մտավ հրապարակը:

Երբ մոտեցավ, վերցնել տվին ձիու համետը, և մի ակնոցավոր ռուս, որ անասնաբույժն էր, քիթը վեր քաշելով կռացավ վերքի վրա:

«Չտարան», - անցավ Միմոնի մտքով: Բայց մարդը բարկացավ և մատը թափ տվեց Միմոնի վրա: Նա հայիտյում էր:

Միմոնը վախից դողաց, գունատվեց և նստեց համետի վրա:

Չինվորները Յուլակին տարան: Միմոնը տեսավ, թե ինչպես իր ձիու երկար պոչը սուր մկրատով կտրեցին: Եվ իսկույն աչքին այնպես երևաց, ասես Յուլակը մեծացավ և դարձավ դազախի ձի:

Գյուղական գրագիրը բղավեց նրա վրա: Նա սթափվեց և բեռը շալակին՝ վերադարձավ յուրայինների մոտ:

ու՞թ ձի, որոնց վրա բարձել էին մնացած ձիերի համետները: Գյուղացիներից ոմանք իրենք էին շալակել ձիերի սանձերն ու չվանները:

Ազատված ձիերը, որոնցից երեքը ծուռոտ էին, մեկի մեջքն էր փոս ընկած, երկուսը քոս էին, իսկ Հաբեդանց ձիու երկու կողոսկրը չկար, հազիվ էին քայլում ծանր բեռան տակ:

Միմոնը գլուխը կախ գնում էր մյուսների հետ: Դարբնի տղան էլ լուռ էր, որովհետև ոչ ոք սիրտ չուներ նրան լսելու:

Նրանք անընդհատ բարձրանում էին լեռը, կարծես պիտի գնային մինչև մութ երկինքը: Մայրամուտի արևը աջ կողմից նրանց ոսկևորել էր: Նեղ արահետով գնում էին նրանք իրար հետևից, ինչպես կռունկի երամ, և թվում էր, թե բեռների տակ կքած սև ստվերները հավիտյան պիտի բարձրանային մութ լեռը, մինչև մի խավար անդունդ հանկարծ կլաներ նրանց:

Միմոնը ձիու չվաններից և սանձից զգում էր Յուլակի ողորկ մարմնի ծանոթ հոտը: Եվ մի միտք ծանր բեռից ավելի դժվար ծանրությամբ նստել էր նրա գլխում, և նա խոնարհել էր գլուխը: Բայց փակ աչքերով էլ տեսնում էր արնոտ չեչաքարը:

– Հենց իմ փիսոթյունը մնաց, Յուլակ... Հիմա հազար ձիու մեջ անտեր խրխնջում ես... Յարաբ տեսնես արյունը ցամաքե՞ց:

Եվ նա բուռը լայն բաց արեց, այն բուռը, որով բռնել էր քարը...

Բռի մեջ ստացականի կտորն էր, վրան՝ Յուլակի գինը և իր ազգանունը:

Արևի մայր մտնող շողերը հրդեհել էին ամպերը, ներկել արնոտ գույնով: Լեռների սև ստվերները ավելի վառ էին ցուլացնում ամպերի կարմիրը: Կաթնաղբյուրի արոտներում և սարալանջում էլ ոչ մի կաքավ չէր կարողում և ոչ լոր էր ճկում: Զնել էին քարերը, խոտերը, անբան հավքերը, և լեռների վրա իջել էր իմաստուն մի երեկո:

Կաթնաղբյուրից նրանք ջուր խմեցին և հացի փշրանքները թափեցին սառը ջրում: Մութն ընկնում էր, և ճանապարհ դեռ շատ կար:

Միմոնը նայեց ներքև... Ա՛յ, այստեղ արածում էր Յուլակը, նրա ատամների արանքում երևի դեռ մնում է այս դաշտերի խոտը: Իսկ ինքը պառկել էր այս քարի տակ, և մի լույս ճառագայթ խոստանում էր զվարթ վերադարձ:

Ու հետ նայեց Միմոնը: Այնտեղ՝ ներքև, խավար էր, խավարի մեջ՝ քաղաքը, և քաղաքի փշալարյա վանդակում աղիողորմ վրնջում էր իր հույսը, իր Յուլակը:

Հանկարծ Կաթնաղբյուրից ներքև՝ քարերի վրա, զրնգացին ծանր պայտերը: Գյուղացիները ճանապարհից դուրս եկան և մի կողմ քաշեցին բեռնած ձիերը:

Հեծվորը Կոստանդ աղան էր՝ սպիտակ ձիու վրա...

Միայն Շուդունց Աքելը կիսաբերան ընդունեց նրա ողջույնը: Մյուսները քարի նման լուռ էին: Դարբնի տղան ատամները սեղմելով գայրացավ:

– Տեսա՞ր, Միմոն, սևն ու սպիտակը...

Սպիտակ ձին մի վայրկյան ցուլաց մթնող արևի շողերում և չքացավ դեպի նարնջագույն ամպերը: Կարծես մարմարիոնե մի արձան արշավում էր դեպի պատվանդանը, որ իր անհաս բարձունքից ահ ու սարսափ մաղի ռամիկ գյուղացիների վրա:

9

Կես գիշեր էր, երբ տուն հասան:

Դռան մոտ կանգնել էր Շարմաղ բիբին՝ ճրագը ձեռքին:

Միմոնը ներս մտավ, տոպրակն ու սանձը զցեց մի անկյուն: Անկողնից վեր թռավ Շողերը:

– Ապի՛, բա Յուլակը:

Աղջկա միամիտ հարցին, որպես պատասխան, դուրսը՝ լեռնային գյուղի սառը խավարում, վրնջաց անմայր մի բուռակ: Կարծես բազմաթիվ մանր զանգակներ երգեցին անեզրական տխրություն:

Շարմաղ բիբին սարսուռով վրա դրեց դուռը, և հին դուռը մի անգամ էլ երգեց երկար ու կերկեր արևելյան թախծոտ մի երգ:

Պառավը լալիս էր...

Հետո քանի երեկո իջավ, և զանգեր զարկեցին, բայց մինչև մահ իրիկնապահին նա ոչ դուռը բացեց և ոչ էլ զանգերի դողանջը որպես անանձնական օրհնություն ներս մտավ նրանց սև խրճիթը...

ԲԱՌԱՐԱՆ

բիբի - հորաքույր, տարեց կնոջը դիմելու բարբառային ձև
ռամիկ հավատ - այստեղ՝ ժողովրդական հավատ, պարզ հավատ
համետ - փախան, գրաստի մեջքին դնելու հարմարանք՝ բեռ բարձելու, ինչպես նաև նստելու համար
չվան - պարան
յավա-յավա խոսել - ավելորդ, անմիտ, հիմար, անկիրթ խոսք, ավել-ցփեղ խոսել (ափից դուրս եկած և ցփնված խոսք), օդի մեջ կրակել (խոսել)
լազարեթ - հիվանդանոց
Ռուսեթ - Ռուսաստան
սհաթ (ասհաթ) - ժամանակ
բազար - շուկա
երամակ - ձիերի խումբ
յարաբ - արդյոք
ամենաքաշը - ամենից ցածր, ամենաքիչը

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Պատմվածքը կարդալուց հետո կարող է անմիջական հարց առաջանալ. ինչո՞ւ է այն վերնագրված «Սպիտակ ձին» և ոչ թե «Յուլակը»: Չէ՞ որ խոսքը հիմնականում Յուլակի և նրա տիրոջ մասին է: Փորձե՛ք պատասխանել. պատմվածքը վերնագրված է «Սպիտակ ձին», որովհետև սպիտակ ձին բոլորից շքե՞ղն ու գեղեցի՞կն էր և իրենով խորհրդանշում է ձիերի հանդեպ գրողի ունեցած ջերմ վերաբերմո՞ւնքը: Սպիտակ ձին տիրոջ խորամանկության շնորհիվ մնաց այդ սարերում, իսկ մյուսներին, նաև Յուլակին քշեցին ռազմաճակատ: Փորձե՛ք տալ բացատրություն: Վերնագրի հարցը քննարկե՛ք դասարանում:

2. Ինչի՞ մասին է պատմվածքը: Փորձե՛ք սեղմ, մի քանի նախադասությամբ ներկայացնել պատմվածքի բովանդակությունը: Ձեզ կարող են օգնել հետևյալ ենթահարցերը՝ իրենց ակնկալվող պատասխաններով:

- Թվարկե՛ք պատմվածքի հերոսներին:
- Ովքե՞ր են պատմվածքի գլխավոր հերոսները:
- Ինչո՞ւ Սիմոնը և մյուս գյուղացիները իրենց ձիերը տարան հանձնելու ռուսական բանակի ներկայացուցիչներին:
- Ինչպե՞ս է ավարտվում պատմվածքը:

3. Եթե կարդացել եք Հ. Թումանյանի «Գիքոր»-ը, ապա ի՞նչ նմանություն եք տեսնում Գիքորի շորերը տանող Համբոյի և ձիերի սանձերն ու համետները շալակած գյուղ վերադարձող մարդկանց կերպարների միջև:

4. Պատմվածքում պատկերված-կերպավորված են երեք ձի՝ Յուլակը, սպիտակ ձին և կապույտ ձին: Գրողը ինչպե՞ս է նկարագրում նրանց: Առանձնացրե՛ք այդ հատվածները, որոնք գտնվում են պատմվածքի նշված մասերում և սկսվում են հետևյալ պարբերություններով.

- «Յուլակը նրանց ձին էր, կապտավուն մորթով...» (1-ին մաս),
- «Հեռվից խաղալով ու խայտալով վազում էր սպիտակ ձին...» (5-րդ մաս),
- «Մի կապտավուն ձի՝ երկար, ծալվեծալ բաշով, բոլորովին մերկ, կատաղած վազում էր հրապարակով» (7-րդ մաս):

5. «Եվ Սիմոնին թվաց, թե իրենց տնից տանում են ոչ թե մի ձի, այլ իր եղբորը, իր որդուն...»: Ինչո՞ւ է Սիմոնն այդպես մտածում իր ձիու մասին:

- 6. Ինչո՞ւ է Սիմոնը չեչաքարով վերք առաջացնում Յուլակի մեջքին, ո՞րն էր նրա նպատակը:
- 7. Ի՞նչ է ձին գյուղացու համար: Այս հարցի պատասխանը գտե՛ք «Ահա նորից դռանը կչո-

քի դառն աղքատությունը, վիզը կծռի ուրիշին, որ իր խորձերը տուն բերեն, որ խտրը սարից բերեն» սողերի մեջ:

8. Աստղալույս գիշերով հովը բերում էր գով սառնություն և սուսամբարի ու չորացող դաղձի սուր հոտ: Պատմվածքի մեջ գտե՛ք այդ հատվածը և փորձե՛ք ստեղծագործաբար շարունակել:

9. Հունձի ժամանակն էր... Տարվա ո՞ր ամիսն է ակնարկում գրողը:

10. Գիլանց Մուքին ծեր մարդ էր և ավագության կարգով ճանապարհին հացի դադահին կե-
նաց է ասում. «Բարի՛ լույս բացվի մեզ վրա և մեզ մնան չարքաշ մշակների վրա...»: Գտե՛ք այդ հատվածը և շարունակե՛ք կարդալ: Այդ խոսքերով ի՞նչ է ուզում ասել Գիլանց Մուքին:

11. Պատկերավորման միջոցներից Բակունցն այստեղ կիրառել է համեմատություններ և մակդիրներ: Ահա դրանցից մի քանիսը: Փորձե՛ք բացատրել և պատմվածքից գտնել ու դուրս գրել համանման օրինակներ:

Համեմատություններ՝

– Երկար ու կերկեր, իբրև արևելյան թախծոտ երգ, ճռնչում էր հին դուռը...

– ...կարծես թե տեսնում էր զանգերի տխուր դողանջները, ինչպես մթնող երկնքի տակ նա-
գով ճախրող աղավնիները:

– Միմոնը նստել էր դարպասի քարին, և քարի նման հոգսը ծանրացել էր նրա սրտին:

– Հրապարակի մի անկյունում՝ տախտակներից շինած փոքրիկ բարձրության վրա՝ դագա-
ղի նման նեղ սեղանի շուրջը, նստել էին իշխանավորները:

– Միմոնն արնոտ չեչաքարը մի կողմ գցեց, մարդասպանը դաշյունը, և սարսափով նկա-
տեց, որ գետի ջուրն անվերջ կարմրում է, երբ ալիքը զարկում է ձիու մեջքին:

– Դարբնի տղայի ժպիտն այլանդակ կծկվեց և դեմքի վրա սառեց որպես դառնության կնիք:
Մակդիրներ՝

Ոսկեթև աղավնիներ, ռամիկ հավատ, անուրախ մանկություն, ալիք-ալիք դիզվեց ձայնը,
աստղալույս գիշեր:

Գտե՛ք մակդիրները բերված նախադասությունների մեջ. «Լեռնային կաքավը կկարդա կա-
նաչ սաղմոսը», «...զլորվում էր լեռնային կապույտ գետը», «Վրնջում էին ձիերը՝ մետաղաձայն
և երկարածոր, ինչպես տխուր երգ...»:

12. Կարո՞ղ եք կռահել, թե Հայաստանի որ տարածաշրջանում են կատարվում պատմված-
քի գործողությունները: Այդ կապակցությամբ հիշեք, թե որտե՞ղ է ծնվել պատմվածքի
հեղինակը:

13. Ցույց տվեք գրական լեզվի և հերոսների խոսվածքի տարբերությունը: Կարո՞ղ եք ասել,
ինչո՞ւ է այդպես: Կարո՞ղ էին Բակունցի այս հերոսները խոսել գրական լեզվով:

ՆԱԻՐԻ ՉԱՐՅԱՆ (1900-1969)

Նաիրի Չարյանը բանաստեղծ էր, արձակագիր, թատերագիր և հրապարակագիր: Նրա ստեղծագործական կյանքը զուգադիպեց այն ժամանակին, որն ընդգրկում է հայ ժողովրդի պատմության խորհրդային շրջանը: Ն. Չարյանը դարձավ այդ ժամանակաշրջանի գաղափարախոսության կրողն ու արտահայտիչը՝ շատ դեպքերում գեղարվեստը զոհելով մերկապարանոց ճաշին և դառնալով կուսակցական միակողմանի և պատմականորեն դատապարտված գաղափարների քարոզիչը:

Նաիրի Չարյանը ծնվել է 1900 թվականի դեկտեմբերի 31-ին Վանի Խառակոնիս գյուղում: Այդ գյուղը հայտնի է որպես Նահապետ Քուչակի ծննդավայր: Նաիրի Չարյանը մանկության տպավորությունների մեջ մտաբերում է, որ Քուչակի գերեզմանը ժողովուրդը դարձրել էր ուխտատեղի:

Վրա է հասնում 1915 թվականը, որին շատերի հետ մեկտեղ զոհ է գնում նաև Ն. Չարյանի ընտանիքը: Փրկվելով եղեռնից՝ նա ապաստան է գտնում Երևանի և Դիլիջանի որբանոցներում: Որբանոցներում նա մնում է մինչև 1921 թվականը և այնտեղ էլ ստանում միջնակարգ կրթություն: 1921-ին ավարտվելով Երևանի թեմական դպրոցը՝ կրթությունը շարունակում է Երևանի պետական համալսարանի պատմալեզվագրական բաժնում և այն ավարտում 1927-ին: Նա սովորել է նաև Լենինգրադի արվեստագիտության պետական ակադեմիայի գրական բաժնի ասպիրանտուրայում և այն ավարտել 1933-ին:

1920-1930-ական թվականներին Նաիրի Չարյանը եղել է մի շարք պարբերականների պատասխանատու քարտուղար և խմբագիր: Դրանցից կարելի է հիշատակել «Գրական դիրքերում», «Գրական սերունդ» ամսագրերը:

1934 թվականի օգոստոսին Մոսկվայում Չարյանը ելույթ է ունեցել խորհրդային գրողների առաջին համամիութենական համագումարում: 1935-ի հունվարին «Ստալին» բանաստեղծության համար արժանացել է այն ժամանակների պետական բարձրագույն պարգևի՝ Լենինի շքանշանի: 1944-1946 թվականներին Չարյանը եղել է Հայաստանի գրողների միության վարչության նախագահը: Հետագայում ընտրվել է Հայաստանի Գերագույն խորհուրդի անդամ, վարել հանրային եռանդուն գործունեություն:

Գրական առաջին քայլերն արել է որբանոցում, 1918-ին տպագրվել է առաջին բանաստեղծությունը, իսկ 1969-ին՝ վերջին գիրքը: Կես դար նա եղել է գրական դիրքերում: Նրա կյանքում հիշարժան էր հանդիպումը Ե. Չարենցի հետ, որն էլ նրա ծննդյան Հայաստան Եղիազարյան անունը փոխեց զրնգուն ու հնչեղ Նաիրի Չարյանի: Սակայն Չարյանը հետագայում չպահպանեց իր գրական հավատարմությունը Չարենցի և նրա համախոհների հանդեպ: Դեռ ավելին, կոպիտ քաղաքական մեղադրանքներով հանդես եկավ թե՛ Չարենցի և թե՛ Մահարու, Բակունցի ու Մկրտիչ Արմենի դեմ: Դա ծանր հետևանքներ ունեցավ նրա գրական վարքի ու հեղինակության վրա:

1920-ական թվականների սկզբից Երևանում բուռն թափ էր առել գրական-մշակութային կյանքը: Նաիրի Չարյանն այդ բուռն շարժման մեջ էր: Նրա առաջին բանաստեղծությունները, որոնք կրում էին տերյանական ազդեցության հետքերը և գրված էին սիրո ու կարոտի ապրումներով, հիմա ընդունել էին ուրիշ ձև ու բովանդակություն և կոչված էին գովերգելու նոր կյանքն ու նոր ժամանակները:

Նաիրի Չարյանը դարձավ նոր ժամանակների երգիչ, սկզբից ևեթ հարեց գրականության մեջ պրոլետարական ուղղությանը՝ դառնալով նրա առաջատար, հարվածային դեմքերից մեկը: Գրականության մեջ նա իրականացնում էր իշխող կուսակցության գաղափարախոսությունը: Դրա արտահայտությունն է 1920-1930-ական թվականների նրա ամբողջ ստեղծագործական վաստակը: Նա ծաղրելով էր հիշում իր անցյալն ու հայրենի գյուղը, փորձում էր կերպավորել նոր մարդկանց ու նոր կյանքի երոսներին, փառաբանում էր հողի կոլեկտիվացումը, արդյունաբերական ու շինարարական աշխատանքները, կերտում էր երկրի ղեկավարների կերպարները, բայց այդ ամենը ոչ մի կերպ չդարձան գեղարվեստական արժեք: Դա է պատճառը, որ Չարյանի այս երկու տասնամյակների ստեղծագործությունները հիմնական

նում ունեն գրապատմական նշանակություն: Դրանք են «Հրանուշ» (1925), «Չին ազգիկ» (1926), «Նոյեմբերյան օրերին» (1926), «Ռուշանի քարափը» (1930), «Սաքո Միկինյան» (1935) պոեմները, «Ջրանցքի կապույտ երկրում» (1926) ժողովածուն, «Հացավան» (1937, վերամշակված՝ 1949) վեպը: Գրական առումով ձախողված էին նաև նրա հաջորդ բանաստեղծական ժողովածուները՝ «Հարվածներ» (1933), «Ամբոց» (1935), ինչպես նաև բռնապետ ու դահիճ Ստալինի փառաբանությանը նվիրված «Ստալին» բանաստեղծությունը և «Դյուցազնագիրք: Ցարիցինյան դրվագներ» (1939) պոեմը:

Նաիրի Չարյանի գրիչը զենքի վերածվեց Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին, երբ գերմանական ֆաշիզմի դեմ մարտնչում էին նաև հայ ժողովրդի զավակները: Իր պոեմներն ու բանաստեղծությունները պայթուցիկ զենք դարձրած՝ նա նետում էր թշնամու վրա: Այս տարիներին գրողը լույս ընծայեց «Մարտակոչ» (1941), «Վրեժ» (1942), «Շիկացած հոգով» (1943), «Լսե՛ք, դարեր» (1943) բանաստեղծությունների և պոեմների ժողովածուները:

Նաիրի Չարյանը որպես գրող ավելի հասունացավ 1940-ական թվականներին՝ գրելով «Արշակ և Շապուհ» (1941) հայրենասիրական պոեմը, «Հայրենի տուն» (1940), «Հայերեն» (1941) քնարարական բանաստեղծությունները, «Չայն հայրենական» (1943) պոեմը և «Արա Գեղեցիկ» (1944-1946) դիցապատմական ողբերգությունը: Այս գործերը Նաիրի Չարյանի գրական վերելքի արտահայտություններն են: «Արա Գեղեցիկ»-ի մեջ, օգտվելով Մովսես Խորենացու «Հայոց պատմություն»-ից, որի մեջ հայոց մեծերի շարքում ներկայացված է նաև Արա Գեղեցիկը, թատերգական տեսք տալով նրա կյանքի պատմությանը, որի մի կողմում Ասորեստանի թագուհի Շամիրամն էր, իսկ մյուս կողմում իր կինը՝ Նուարդը, գրողը կերտել է հայրենասեր և առաքինի հերոսի կերպար:

1950-ականներին Նաիրի Չարյանը հանդես եկավ կատակերգություններով, որոնցից կարելի է հիշատակել երկուսը՝ «Աղբյուրի մոտ» (1950), «Փորձադաշտ» (1952):

Հետագա տարիներին Նաիրի Չարյանը գրեց ինքնակենսագրական բնույթի երկեր՝ «Պարոն Պետրոսն ու իր նախարարները» (1958) վեպը և «Երկրորդ կյանք» (1982, լույս է տեսել ետմահու) վիպակը:

Կյանքի վերջին տարիներին արձակ շարադրանքով ներկայացրեց «Մասնա ծների» վիպապը՝ ստեղծելով «Մասնա Դավիթ» (1966) մշակումը: Մահից մեկ տարի առաջ լույս ընծայեց «Սպասում եմ քեզ» (1968) բանաստեղծությունների և ասքերի ժողովածուն, որի մեջ քննական հայացք է ուղղում իր անցյալին և զղջումով փորձում մաքրագործել 1920-1930-ական թվականների իր գրական, քաղաքացիական և մարդկային արատավոր անցյալը:

Նաիրի Չարյանը մահացել է Երևանում 1969 թվականի հուլիսի 11-ին:

ԵՐԿՐՈՐԴ ԿՅԱՆՔ
ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ՕՐԵՐ
(Կրճատումներով)

Ա. Խառակոնիս

Ես ծնվել եմ Խառակոնիս գյուղում:

Մեր գյուղը գտնվում էր Վանի վիլայեթի Արճակ գավառակի մեջ, Արճակից երեք-չորս կիլոմետր հեռավորության վրա, Արճակ լճի ափին:

Արճակն ու Խառակոնիսը միշտ միասին էին հիշատակվում և միասին ծաղրվում:

Վանեցիք ծաղրական մի երկտող էին հանգավորել մեր երկու գյուղերի մասին. «Մեջ Արճակ, մեջ Խառակոնիս - // Գաթան թխեցին առանց խորիզ»:

Ճիշտ է, որ մենք Խառակոնիսում գաթայի մեջ խորիս (բոված ալյուր, որ շաղախում էին յուղով) չէինք դնում: Բայց ինչո՞ւ է դա ծիծաղելի, ես մինչև այսօր էլ չեմ հասկանում:

Խառակոնիսը, ըստ երևույթին, հին ուրարտական անուն է:

Խառակոնիսի հին ուրարտական ծագումը թերևս նրանով է հաստատվում, որ մեր գյուղի ժամտան բեմի ամբողջ երկարությամբ դրված քարը ծածկված էր ուրարտական սեպագիր արձանագրությամբ: Հետագայում իմացա, որ դա ուրարտական հզոր թագավոր Արգիշտի Երկրորդի (թե՞ Առաջինի) արձանագրությունն է:

Փոքր հասակում ես լսելեմ այդ անձանագրության մասին մի պատմություն: Ինչ-որ

Եվրոպական մի երկրից մեր գյուղն են գալիս մի խումբ գիտնականներ և, տեսնելով Արգիշտիի արձանագրության քարը, շատ ուրախանում են, ցանկանում են տանել իրենց հետ՝ փոխարենը մեծ գումար առաջարկելով գյուղին: Խառակոնիսի չգիտեին, թե դա ինչ քար է, բայց քանի որ դրանով եզերված էր սուրբ Թևադորոսի եկեղեցու բեմը, ապա սրբություն էին համարում, գայրույթով ետ են մղում օտարերկրացիների առաջարկած գումարը և, մահակներով զինված, կանգնում են եկեղեցու դռանը, որպեսզի այնտեղից ոչ ոք չհամարձակվի դուրս բերել սրբազան քարը:

Խառակոնիսիներն իրենց հին սրբությունն այսպես են պաշտպանել: Իսկ հռչակավոր Լինչը Թուրքահայաստանի գյուղերին նվիրած իր աշխատության մեջ ասում է, թե Խառակոնիսում կանայք անվեհեր էին, տղամարդիկ՝ վախկոտ: Ես, ճիշտն ասած, վիրավորվեցի Լինչի այդ բնութագիրը կարողալով: Քանի որ ե՞րբ է եղել Խառակոնիսում, որ իմանա, թե այնտեղ ով է քաջ և ով է վախկատ: Ես Լինչից ավելի շատ եմ ապրել Խառակոնիսում և, ազնիվ խոսք, մեր տղամարդկանց վախկոտությունը չեմ նկատել:

Իսկ Արճակցիք մեր գյուղացիների մասին ասում էին, որ դրանք սնապարծ են, լուպազ: Իբր թե խառակոնիսցիք մի տեղ հյուր գնալիս իրենց աղքատությունը քողարկելու համար հարևանի «բալաք շավարն» էին հագնում: Բալաք շավար, այսինքն՝ թանկագին բրդից գործված գույնզգույն շերտավոր շավար, հագնելու հնարավորություն ունեին միայն ունևոր գյուղացիները: Արճակցիք մեր գյուղացիների մասին սիրում էին ասել. «Եթե Խառակոնիսի հանդերով անց կենաս և տեսնես «հորովելում» դրած բալաք շավար, իմացիր, որ հարևանից է փոխ առնված»: (Հորովել էր կոչվում հերկվող արտի ծայրը, որտեղից գութանը կամ չուքը պտույտ էր գործում և ընկնում հաջորդ ակոսի վրա: Հորովել էր կոչվում նաև գութանի երզը):

Ճիշտ է, որ Խառակոնիսցիք չէին սիրում իրենց աղքատությունը ցույց տալ: Բայց այդ պակասատությունն ինչո՞ւ է ծիծաղելի, ես մինչև այսօր էլ չեմ հասկանում:

Իմ միտն է մնացել մեր գյուղացիների մի հատկությունը, որ չգիտեմ ծիծաղելի է, թե ցավալի: Նրանք անտարբեր չէին կարող անցնել ուրիշի սիրուն կանանց մոտով և միաժամանակ սարսափելի խանդոտ էին: Այդ հողի վրա ամեն տարի մարդասպանություն էր կատարվում:

Խառակոնիսցիք շատ գործուն մասնակցություն էին բերում հայ ժողովրդի ազատագրության գործին: Դրա համար էլ բաժանված էին կուսակցությունների՝ դաշնակցականներ, արմենականներ և հնչակյաններ: Երեք անունն էլ ինձ անչափ դուր էին գալիս, և ես ուզում էի, որ իմ հայրը երեքի մեջ էլ լիներ: Բայց իմ հայրը, կարծեմ, հնչակյան էր, որովհետև հնչակյանները նրան համոզել էին, որ աղքատ մարդը պետք է անպայման հնչակյան լինի: Կուսակցական պայքարը նույնպես երբեմն վերջանում էր մարդասպանությամբ:

Ես մորացա ասել, որ Խառակոնիսում է գտնվում նաև հայ հանճարեղ բանաստեղծ Քուչակ Նահապետի գերեզմանը: Եթե Լինչը և արճակցիք իմանային, որ մեր գյուղում են գտնվում Արգիշտիի սեպագիր արձանագրությունը և Նահապետ Քուչակի գերեզմանը, ավելի հարգանքով կարտահայտվեին խառակոնիսցիների մասին:

Ասացի, որ Խառակոնիսը գտնվում էր Արճակ լճի ափին: Դա Վանա ծովից մոտ հիսուն կիլոմետր դեպի արևելք է: Փոքրիկ աղի լիճ: Իմ մանկության օրերին այնքան հեռու էր գյուղը, որ ես լիճը տեսնելու համար գերեզմանոցի բլուրն էի բարձրանում և այնտեղից հագիվ երևում էր բարակ երկնագույն ժապավենի նման: Հետզհետե առաջացավ, մոտեցավ գյուղին, տների մի մասն առավ իր մեջ, ծածկեց մեր գյուղի ամենաքաղցրահամ և ամենաառատաբուխ աղբյուրը, և գաղթից առաջ մեր գյուղացիներն արդեն մշակում էին Խառակոնիսի տեղը փոխելու ծրագիր:

Եթե լիճը այդքան անգութ կերպով չառաջանար, մեր գյուղը շատ գեղեցիկ դիրք ուներ: Մանյակաձև տարածված էր բլուրի շուրջը, իսկ բլուրի վրա գերեզմանոցն էր, Թևադորոս եկեղեցին և Մանասարյան տարրական դպրոցը:

Հանդից կամ հարևան գյուղերից վերադառնալիս հեռվից առաջինը երևում էր ժամի սպիտակ գմբեթը, և դա իմ մանկության անմոռաց հուշերից մեկն է:

Բ. SUSU

Երբ ես գրել-կարդալ սովորեցի տեսա մեր տան սյունին դանակի ծայրով փորագրած հետևյալ արձանագրությունը.

«Մանչ Հայաստան, ծնյալ ի 1900 թվականի դեկտեմբերի 31-ի գիշեր կամուրն աստուծո: Ամեն»:

Մայրս ասաց, որ դա իմ քեռին է փորագրել: Նա մեռել էր իմ ծննդից մի քանի ամիս հետո:

Իմ մանկական առաջին հիշողությունն այն է, որ ես մտնում էի մառան ծիրանի չիր գողանալու և աչքերս փակում էի, որ տատիկս ինձ չտեսներ:

Տատիկս մի անգամ ինձ, այնուամենայնիվ, տեսավ, ես փախա մառանից և ընկա թոնիր: Իմ լավ բախտից այդ օրը թոնիրում կրակ չկար, այլապես կայրվեի: Ոտքերիցս բռնած ինձ դուրս քաշեցին թոնրից: Միայն աչքերս մոխիր էր լցվել և գլխիս վրա առաջացել էր մի մեծ ընկույզ: Ինձ պատժելու փոխարեն տատիկս սկսեց իր ծնկներից խփել ու լաց լինել: Հանաք բան չէր, ես ծնողներիս առաջնեկն էի և միակ տղան: Ինձանից հետո ծնվել էին երկու աղջիկ:

Մայրս իմ աչքերը մոխիրներից մաքրեց ու լվաց, գլխիս ուռուցքի վրա խմոր կապեցին, որից հետո տատս ինձ ծնկների մեջ սեղմեց ու լաց լինելով ասաց.

– Չիրը քեզ համար եմ պահել, արևուդ մեռնեն: Չիրը քոնն է, մի գողանա: Ես ինքս քեզ կտամ:

Ես երեք տարեկան էի և արդեն հասկանում էի, որ մենք աղքատ ենք: Դրա համար էլ տանը պատահած ամենահամեղ բաներն ինձ էին տալիս: Միայն ինձ: Բայց ես էլի շարունակում էի գողանալ այն, ինչ որ պահված էր միայն ինձ համար: Բկլիկ էի և անհամբեր, ինչպես լինում են երես առած երեխաները:

Տատիկս, մայրիկս և հորաքույր Ալմաստը համոզված էին, որ ես արտակարգ երեխա եմ և ինձանով պարծենում էին հարևանուհիների առաջ: Նրանք իմ վզից կախել էին մի մեծ կապույտ ուլունք, որ հարևաններն ինձ աչքով չտան: Ես ատում էի այդ ուլունքը, մանավանդ որ աղջիկների վզից էլ ուլունքներ էին կախված լինում: Բայց հանել ու դեն գցել չէի համարձակվում, որովհետև ես էլ էի հավատում, որ հարևաններն ինձ աչքով կտան: Չնայած որ տարիներ հետո միայն իմացա, թե ինչ է նշանակում աչքով տալ:

Տատս, մայրս ու հորաքույր Ալմաստը իրար հետ մրցում էին ինձ գուրգուրելու և երես տալու մեջ: Ես հերթով քնում էի նրանց անկողիններում: Սակայն տատիկս հաղթում էր բոլորին և ինձ բոլորից ավելի հաճախ էր տանում իր անկողինը:

Տատիկս... Փոքրացուցիչ մեկ «իկ»-ը նրա համար քիչ էր, որովհետև այնքան կարճիկ էր ու վտիտ, որ երբ կանգնած էր լինում իմ հսկա հոր կողքին, թվում էր նրա ոչ թե մայրը, այլ փոքրիկ երեխան:

Տատիկս, ինչպես ասացի, գյուղական հեքիմ էր, այսինքն՝ ինքնուս բժիշկ: Նա բուժում էր ամեն տեսակի ներքին հիվանդություններ, ամեն տեսակի վերքեր և կուտրվածքներ: Չրի: Մարդկանց բուժելու համար փող վերցնելը տատիկս մեղք էր համարում: Միայն երբ հարկավոր էր մարմնի որևէ մասին յուղ քսել, տատիկս խնդրում էր, որ հիվանդն իր հետ մի գդալի ծայրով յուղ բերի, որովհետև մեր տանը յուղ հաճախ չէր լինում, եթե մանավանդ մեր միակ ծուռ կովը մնացած էր լինում ստերջ: Իսկ դա մեր կովի հետ հաճախ էր պատահում: Տատիս հաճախորդները հասկանում էին մեր վիճակը և յուղը բերում էին ոչ թե «մի գդալի ծեր», այլ բավական շատ, և դա էր լինում իմ տատի վաստակը:

Մեր գյուղում պատահել էր մի դեպք, որ իմ տատիկին բերել էր լոխման հեքիմի հոչակ: Մեր գյուղի տերտերը ձին հեծած գնում է հանդ, որ ստուգի, թե ցորենը հասե՞լ է արդյոք հնձելու համար: Ցորենը այնքան բարձր է լինում, որ ինչպես ասում էին, «ձիավորը մեջը չէր երևա»: Տերտերը ձին կապում է արտի եզրին, ինքը ոտով մտնում է արտ՝ փառավոր մորուքը հաճույքից փայփայելով (այդպես էին պատմում): Դու մի ասի, արջը արտի մեջ քնած է լինում, և տերտերն ուղղակի ընկնում է արջի վրա: Արջն արթնանում է, տերտերին գրկում, տակն է դնում և սկսում է ջարդել ու գզել: Թաթով խփում է գլխի կափարիչը պոկում և, երևի համոզված լինելով, որ տերտերն արդեն մեռած է, թողնում ու դուրս է գալիս արտից: Չին, արջին տեսնելով կապը կտրում է և փախչում գյուղ: Տնեցիք լավ գիտեին, որ տերտերը ձիով գնացել էր արտը նայելու:

Տերտերի եղբայրներն ու բարեկամները գնում են, մտնում են ցորենի արտը և տեսնում են

տերտերին արյունլվա, կիսամեռ վիճակում: Վերադառնում են գյուղ, տատիկիս իր ինքնուս դեղորայքի հետ միասին դնում սայլն ու տանում են արտում կիսամեռ ընկած տերտերի մոտ: Տատիկս տեղնուտեղը տերտերի գլխի կափարիչը վրա է դնում, կապում է բոլոր վերքերը և տերտերին բերում են գյուղ:

Մի քանի ամիս իմ տատի ձեռքին բուժվելուց հետո տերտերը լրիվ առողջանում է, ապրում է բավականին երկար, ինձ կնքում է և մի տարի հետո նոր հոգին տալիս ասածուն:

Տատիկս նաև թիզ չափող էր, այսինքն մարդկանց ապագան գուշակող: Դա անում էր շատ ինքնատիպ ձևով: Չախ ձեռքի փոքրիկ ավր բաց էր անում, աջ ձեռքով թիզ էր չափում մինչև արմունկ, ապա ետ էր չափում, եթե թիզը չէր հասնում ձախ ձեռքի մատերի ծայրերին՝ վատ նշան էր, իսկ եթե հասնում էր և մանավանդ ավելանում՝ լավ նշան էր: Ես լավ գիտեի, որ տատիկս չի կեղծում: Նրա թիզն իրոք մեկ պակասում էր, մեկ ավելանում:

Խառակոնիսցիք հավատում էին տատիկիս բժշկությանը և թիզ չափելուն: Հաճախ էին դիմում նրան.

– Խարապտի խարս, Եղիազարիդ արևը՝ մի թիզ չափիր: Մարդս քաղաքից երեկ պիտի գար, չի եկել:

«Խարապտի խարս» նշանակում էր Հայրապետի հարս: Հայրապետ իմ պապի հոր անունն է եղել: Նա հարևան գյուղից եկել և բնակություն է հաստատել Խառակոնիսում: Դրա համար գյուղում հողակտոր չի ունեցել և աղքատ է եղել: Պապս՝ Կարապետը եղել է նրա միակ որդին. գյուղում նրան աղջիկ չեն տվել, և նա գնացել է Վան, այնտեղ իր նման աղքատ մի աղջիկ է ճարել և իրեն կին է բերել Խառակոնիս:

Տատիս անունը եղել է ոչ ավել, ոչ պակաս...Աֆրոդիտե: Խառակոնիսցիք մեծ մասամբ տատիկիս հարգանքով կոչում էին Խարապտի հարս կամ հեքիմ-մարե:

Իմ պապը ջահել հասակում կատարում է ծիծաղելի մի հիմարություն, որով նա մնացել էր Խառակոնիսցիների հիշողության մեջ: Տավարած է վարձվում ունեվոր մի գյուղացու տանը: Գութանավորներին փլավ են բերում, նրանք տավարած Կարապետին հրավիրում են փլավ ուտելու, նա ամաչում է հասակավորների հետ միասին սեղան նստելուց և ասում է.

– Ես փլավ չեմ ուտում:

Ուզում է ասել՝ չեմ սիրում: Գութանավորները նրան ձեռ են առնում՝ բացականչելով.

– Յա՛... Կարապետը փլավ չի ուտում:

Պապս մեռնում է իմ հոր ծննդից մի տարի հետո՝ որդուն իբրև ժառանգություն թողնելով իր հողագրկությունը և այդ գավեշտական խոսքը՝ «Կարապետը փլավ չի ուտում»:

Պապիս մահից տասնյակ տարիներ հետո, երբ իմ հասակակից երեխաները ուզում էին ինձ վիրավորել, ծաղրական եղանակով ասում էին.

– Կարապետը փկավ չի ուտում:

Իմ տատի հեքիմական հեղինակությունը չէր փրկում մեզ ոչ աղքատությունից, ոչ էլ ծաղր ու ծանակից: Խառակոնիսցիք սարսափելի սիրում էին իրար ծաղրել: Գյուղում ոչ մի նշանավոր կամ աննշան ընտանիք չկար, որ չունենար իր ծաղրական մականունը: Հետագայում ես իմացա, որ մարդկանց մականունն դնելը ընդհանուր սովորություն էր բոլոր հայկական գյուղերում:

Գ. ՄԱՅՐՍ

Մայրս:

Ես նրա դիմագծերը չեմ հիշում:

Իմ բոլոր հարազատների, մինչև իսկ մորիցս ավելի վաղ մեռած հարազատների դիմագծերը հիշում են այնքան պարզ, որ ինձ համար հեշտ կլինեք նրանցից յուրաքանչյուրի դիմանկարը վերականգնել, եթե նկարել իմանայի, բայց մորս դիմագծերը չեմ հիշում:

Ինչ ասեմ: Չեմ կարողանում գտնել այն խոսքերը, որոնք պիտի կենդանացնեին իմ զգացմունքը մորս հանդեպ: Քիչ կլինի, եթե ասեմ, որ մայրս ինձ համար ամենասիրելի և ամենանվիրական էակն էր: Այդպիսին են բոլոր մայրերը:

Եթե ասեմ, որ իմ մայրը բացառիկ էր, դարձյալ քիչ կլինի: Ո՛ւմ մայրը բացառիկ չէ:

Այնուամենայնիվ, ինձ այնպես է թվում, որ Ադամ-Եվայից մինչև մեր օրերը աշխարհում ոչ ոք չի ունեցել այդպիսի մայր: Չկան այնպիսի խոսքեր, որոնցով ես այդ հաստատեմ: Ուրեմն,

ավելի լավ է պարզապես պատմեն մայրիկիս մասին, իբրև թե նա եղել է սովորական գեղջկուհի մայր:

Մորս անունը Հուրիկ էր: բայց նրան Հուրիկ էր անվանում միայն նրա քեռին՝ տեր Սահակը: Ամբողջ գյուղը կոչում էր Խուռիկ: Դա մեր բարբառի հնչյունափոխությունն էր, որ Հուրիկը դարձնում էր Խուռիկ, հացը՝ խաց և այլն:

Իսկ հայրս ասում էր Կարոյի աղջիկ: Դա մեր գյուղերի պարկեշտության ոճն էր:

Տատս և հորքուր Ալմոն երբ հաշտ էին լինում, ասում էին Խուռիկ, երբ կռված՝ ասում էին Կարոյի աղջիկ:

Կարոն իմ պապն էր մորս կողմից: Նրա անունն էլ եղել էր Կարապետ: Ուրեմն, հորս կողմի պապս Կարապետ էր, մորս կողմի պապը՝ Կարապետ: Ես՝ երկու Կարապետի թոռ:

Մորս կողմի պապիս նույնպես չեմ տեսել: Նա մեռած է եղել մորս ամուսնանալուց առաջ:

Նրա մահից հետո մայրիկիս հերանք աղքատացել են: Այլապես խառակոնիսցիք իմ հողագուրկ հորը աղջիկ չէին տա:

Մայրս իր հետ իբրև օժիտ բերում է գյուղից բավականին հեռու ընկած անջրղի մի հողակտոր: Հենց այդ հողի վրա էլ հայրս դառնում է իսկական խառակոնիսցի:

Մայրս մանկությունն անց էր կացրել ունևոր ընտանիքում և շատ էր սիրում պատմել այդ մասին: Իմ երևակայության մեջ քանդակված է մնացել մեծ պապիս՝ Մուշոյի Վարդանի կերպարը այնպես, ինչպես մայրս է նկարագրել՝ հաղթանդամ, սպիտակ փառահեղ միրուքով, խոշոր, հստակ աչքերով մի ծերունի: Փառավոր է եղել նրա մահը, որ մայրս ինձ պատմել է հազար անգամ:

– Պապս, Հայաստանիս ասեն, հարյուր քսան տարեկան էր, բայց գործ էր անում: մի անգամ կալի ժամանակ եղանով հաշանը վրա էր տալիս ու ինքն իր հետ խոսում: Իր հոգու հետ էր խոսում, իր հոգին ուզող հրեշտակի հետ:

– Մա՛, - ընդհատում էի ես նրան,- հրեշտակը հայերե՞ն է խոսում, թե թուրքերեն:

– Հայերեն է խոսում, արևիդ մեռնեն, - պատասխանում էր մայրս: - Թուրքերեն սատանան է խոսում:

– Աստվածն էլ հայերեն է խոսում:

– Աստվածն էլ, - հաստատում էր մայրս:

– Հետո պապիկդ ի՞նչ եղավ:

– Պապիկս հաշան վրա տալով հոգնեց ու ինձ ասած. «Խուռիկ ջան, եղանը վերցրու, հաշանը վրա տուր, ես նստեմ դեզի տակ, հանգստանամ»: Ես եղանը վերցրի, պապիկս նստեց դեզի շվաքում, ջուր ուզեց: Ես նրան փարչով ջուր տվի: Կլկլացնելով խմեց ու քնեց: Երկար էր քնել, ջոջ քույրս՝ Մարիամը, ուզում էր ձեն տալ: Մարիամ, ասի, ձեն մի՛ տա. պապիկը թող հանգստանա: Մարիամը ձեն տվեց, պապիկը չարթնացավ: Դու մի ասի, քնի մեջ հոգին տվել էր աստծուն: Հանգստացել էր հուր հավիտյան:

– Մա՛,- հարցնում էի ես,- բա աստված ինչո՞ւ է միայն հոգին տանում: Մարմինն էլ թող տանի:

– Հոգին աստծունն է, մարմինը՝ հողինը:

– Յա՞:

– Բա, արևուղ մեռնեն, - տխուր երանությամբ եզրափակում էր մայրս: - Արդար մարդ էր իմ պապիկը: Աշխատեց, հաց վաստակեց մինչև խորին ծերություն: Աշխատանքի տեղումն էլ մեռավ: Հարյուր քսան տարեկան էր: Լույս դառնա իր հոգին:

Մայրիկս, տատիկս և հորքուր Ալմոն շարունակում էին հարևանուհիների առաջ ինձանով պարծենալ:

– Մեր Հայերը հազար խելքի տեր է:

Հայերը Հայաստանի կրճատված մտերմիկ ձևն էր:

Ճիշտ ասած՝ ես էլ էի համոզված, որ հազար խելքի տեր եմ:

ԲԱՌԱՐԱՆ

Վիլյայեթ - նահանգ

Հենրի Լինչ (1862-1913) - իռլանդացի հայագետ, Անգլիայի խորհրդարանի անդամ: Երկու անգամ ճանապարհորդել է Հայաստանում (1893-1894, 1898): Ուղևորությունների արդյունքը ամփոփել է «Հայաստան» աշխատության մեջ (Լոնդոն, 1901), հայերեն համառոտ հրատարակությունը լույս է տեսել 1913-1914-ին: 19-րդ դարի հայ կյանքի ու կենցաղի կարևոր աղբյուր է:

մանյակ - վզնոց, վզին զցելու շղթայաձև կամ օղակաձև զարդ

ստերջ - ամուլ, ծնունդ չտվող, անպտուղ

հեքիմ - ժողովրդական ինքնուս բժիշկ

լոխման - բժիշկ

հաշան (աշան) - կալի մեջ փռած կալսելու հացահատիկ

եղան - գյուղատնտեսական գործիք, երկար փայտե կոթին ամրացրած երկաթե մատներ, որով խոտ կամ դարման են տեղափոխում, եղան լինում է նաև բնական մատներ ունեցող երկարակոթ փայտը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ե՞րբ և որտե՞ղ է ծնվել Նաիրի Չարյանը: Ինչո՞վ է հայտնի նրա ծննդավայրը:
2. Ո՞րն է նրա ծննդյան անուն ազգանունը: Ո՞վ է նրան մկրտել գրական անունով:
3. Ի՞նչ կյանք վիճակվեց Նաիրի Չարյանին 1915-1921 թվականներին:
4. Բանաստեղծական ի՞նչ կողմնորոշում որդեգրեց Նաիրի Չարյանը 1920-1930-ական թվականներին: Ինչի՞ մասին էր գրում և ի՞նչ գրքեր հրատարակեց:
5. Ներկայացրե՛ք Նաիրի Չարյանի կյանքն ու գործունեությունը Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին:
6. Ինչպե՞ս ընթացավ Նաիրի Չարյանի կյանքի և ստեղծագործության հետագա ուղին:
7. Ինչպե՞ս կներկայացնեք Նաիրի Չարյանի քաղաքացիական կերպարը: Մարդը և իր ժամանակը: Ստեղծագործող անհատը պատմության դատաստանի առջև:
8. Որո՞նք են Նաիրի Չարյանի ինքնակենսագրական երկերը: Արտադասարանական ընթերցանության ժամանակ կարդացե՛ք դրանք և լրացրե՛ք ձեր իմացածը բանաստեղծի կյանքի և ստեղծագործական ուղու վերաբերյալ:
9. «Երկրորդ կյանք» վիպակի բերված հատվածում ի՞նչ է մտաբերում և պատմում գրողը իր գյուղի, իր տատի ու իր մոր մասին:

ՀԱՅՐԵՆԻ ՏՈՒՆ

Այս գիշեր տեսա մի անուշ երազ.
Ես հայրենի տունն էի նորոգում,
Մանկության երկինքն էր բացվել վրաս
Եվ արշալույսներ կային իմ հոգում:

Այնտեղ էր մայրըս, հայացքը պայծառ,
Մայրենի լեզվով խոսում էր առուն,
Խշշում էր բակում հիմնավորց մի ծառ...
Այնպես ծանոթ էր և այնպես գարո՛ւն...

Երթիկից կաթած շողն արեգական
Թըվում էր հոգուս ոսկյա բանալի:
Արևն էր նայում աչքով մայրական,
Եվ քաղցր էր աշխարհն ու հասկանալի...

ԲԱՌԱՐԱՆ

երթիկ (երդիկ) - տան կտուրի մեջ թողած լուսամուտ, բացվածք, օդանցք, որտեղից լույս է քնկնում և որտեղից դուրս է գալիս թռչող ծուխը: Այստեղից էլ երդիկի փոխաբերական կիրառությունը՝ որիսես ծուխ, տնտեսություն, տուն:

արեգակյան - արեգակին հատուկ, արեգակի նման

«Հայրենի տուն»-ը Նաիրի Չարյանը գրել է 1940 թվականին, Սևանում: Սա նրա լավագույն քնարական բանաստեղծություններից է՝ շաղախված մանկության տարիների լուսավոր հիշողություններով:

ՀԱՐՅԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Այս բանաստեղծությունը կարդալիս ի՞նչ զգացողություն եք ունենում: Ձեր հայրենի տունը այսպես գեղեցիկ է երևո՞ւմ ձեր աչքին:

2. Փորձե՛ք վերարտադրել ձեր հայրենի տան պատկերը: Ինչպիսի՞ն է այն, որտե՞ղ է գտնվում, ովքե՞ր են ապրում այնտեղ:

3. Հնարավոր է, որ դուք ապրում եք քաղաքային որևէ բնակարանում: Փորձե՛ք հիշել ձեր ծնողների կամ պապերի տունը: Ի՞նչ հուշեր, ի՞նչ ապրումներ են ձեզ կապում այդ տան հետ:

4. Ինչպիսի՞ պատկերներ է օգտագործել բանաստեղծը իր ապրումները ներկայացնելու համար: Ինչո՞ւ է նա երազը բնորոշում «անուշ» մակդիրով և աշխարհը համարում «քաղցր ու հասկանալի»:

5. Հայ գրողներից գտե՛ք բանաստեղծություններ՝ նվիրված հայրենի տանը, ծնողներին, հատկապես մորը և համեմատե՛ք Նաիրի Չարյանի այդ բանաստեղծության հետ: Այդպիսի բանաստեղծություններ գրել են Ավետիք Իսահակյանը, Վահան Տերյանը, Եղիշե Չարենցը, Հովհաննես Ծիրազը և ուրիշներ:

ՀԱՅԵՐԵՆ (Մի հայուհու)

Ինչո՞ւ չես խոսում հայերեն...
Ես երգ եմ հյուսում քեզ համար,
Հոնքերդ հպարտ ու կամար
Իջնում ես հայոց լեռներեն,-
Ինչո՞ւ չես խոսում հայերեն:

Ես երգ եմ հյուսում քեզ համար,
Դու չես հասկանում իմ լեզուն:
Ես խորթ եմ, օտար քո հոգուն,
Բայց քո տեսիլով խանդավառ-
Ես երգ եմ հյուսում քեզ համար:

Հոնքերդ հպարտ ու կամար
Հանց վեհ տաճարները հայոց,
Հայացքդ մաղում է ամառ:
Հայկից են աչքերը քո բոց,
Հոնքերդ հպարտ ու կամար:

Իջնում ես հայոց լեռներեն
Ինչպես թեթևոտ մեր պախրան,
Նազանքըդ այնպե՛ս նաիրյան,
Հըմայքըդ այնպե՛ս հայերեն՝
Իջնում ես հայոց լեռներեն:

Ինչո՞ւ չես խոսում հայերեն:
Նորքից ես թըռել դու, իմ լո՛ր,
Չանգուն է երգել քեզ օրոր,
Մասիսն է հսկել վեհորեն,
Ինչո՞ւ չես խոսում հայերեն:

ՔԱՌԱՐԱՆ

տեսիլ - պատկեր, երևույթ, տեսք, կերպարանք, երազ

խանդավառ - ոգևորությամբ վառված, ոգևորությամբ լցված, ներշնչված

թեթևոտ (թեթևոտն) - թեթև, արագաշարժ

պախարա - եղնիկ, եղջերու, որի գեղեցկության հետ բանաստեղծները հաճախ համեմատում են կանանց:

Նորք (Հին Նորք) - թաղամաս Երևանի հյուսիս-արևելքում

Չանգուն (Հրազդադան, Իլդարունի) - գետ, որը սկիզբ է առնում Սևանա լճից և, հատելով Սևանա բարձրավանդակը, Երևանի միջով, Արարատյան դաշտի միջով հոսում լցվում է Արաքս գետի մեջ:

«Հայերեն» բանաստեղծությունը Ն. Չարյանը գրել է 1941-ին Մոսկվայում և ենթավերնագրել «Մի հայուհու»: Այն իր բովանդակությամբ բնութագրական է մեր ժողովրդին: Արտագաղթելով հայրենիքից՝ շատերը փոխում են իրենց մայրենի լեզուն և հեռանում են ազգային արժեքներից: Դա ծանր հարված է մեր ազգային ինքնությունը, որի դեմ էլ Չարյանը գրել է այս բանաստեղծությունը:

Այստեղ հենց առաջին տողում կա **հռետորական հարց**՝ «Ինչո՞ւ չես խոսում հայերեն»:

Հռետորական հարցը այն է, երբ բանաստեղծը (ընդհանրապես խոսողը) հարց է տալիս առանց պատասխանի ակնկալություն, որովհետև պատասխանը ինքնին պարզ է:

Թե ինչո՞ւ հայուհին հայերեն չի՞ խոսում, պարզ է այնքանով, որքանով նա հեռացել է մայրենի լեզվից: Մոսկվայում գրված լինելու հանգամանքը հուշում է, որ բանաստեղծը հանդիպել է տեսքով թեև շատ հայեցի, բայց լեզվին չտիրապետող մի հայուհու, ինչն էլ խոր վիշտ է պատճառել նրան՝ մղելով գրելու այս բանաստեղծությունը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ե՞րբ և որտե՞ղ է Նաիրի Չարյանը գրել «Հայերեն» բանաստեղծությունը և ո՞ւմ է այն ուղղված:

2. Ի՞նչն է պատճառը, որ հայ աղջիկը հայերեն չի խոսում:

3. Ինչպե՞ս է բանաստեղծը ներկայացնում հայուհու գեղեցկությունը: Ինչի՞ հետ է համեմատում նրան:

4. Ինչո՞ւ է բանաստեղծը հատկապես շեշտում նրա գեղեցկության հայկականությունը, ինչի՞ հետ է հակադրված նրա արտաքին հայկականությունը:

5. Ինչո՞ւ է բանաստեղծն ասում. «Դու չես հասկանում իմ լեզուն: // Ես խորթ եմ, օտար քո հոգուն»:

6. Քանի՞ տնից է բաղկացած բանաստեղծությունը, ի՞նչ կառուցվածք ունի յուրաքանչյուր տունը և ի՞նչ դասավորություն ունեն հանգերը: Առանձնացրե՛ք հնչեղ հանգազույգերը:

7. Յուրաքանչյուր տան մեջ ո՞ր տողերով են ստեղծվում պատկերային և իմաստային օղակներ: Այսինքն՝ ո՞ր տողերն են կրկնվում նույն տան մեջ:

8. Ի՞նչ է հռետորական հարցը և ինչպե՞ս է այն արտահայտվել այս բանաստեղծության մեջ:

9. Ըստ ձեզ, ո՞րն է բանաստեղծի հնչեցրած հռետորական հարցի ակնկալվող պատասխանը: Պատասխանը փորձե՛ք գտնել ամբողջ դասարանով: Դրա համար անհրաժեշտ է բանաստեղծությունը վերստին ամբողջությամբ կարդալ և միասին քննարկել:

10. Գուցե նաև ձեր միջավայրում կան հայոց լեզվից հեռացած հայեր: Խորացե՛ք, պարզե՛ք, ինչո՞ւ նրանք հայերեն չեն խոսում, գուցե ապրել ու կրթվել են Հայաստանից դուրս: Օգնե՛ք

այդպիսիներին և նպաստե՞ք, որպեսզի նրանք տիրապետեն մայրենի լեզվին, վերադառնան ազգային արժեքներին: Այս բանաստեղծությունը ևս կօգնի, որպեսզի դուք համոզեք նրանց:

ԳՈՒՐԳԵՆ ՄԱՀԱՐԻ (1903-1966)

Գուրգեն Մահարին հայ գրականության ինքնատիպ դեմքերից մեկն է: Նա ստեղծեց իր գեղարվեստական աշխարհը, որն առանձնանում է նյութով, լեզվով, ոճով, քնարականությամբ, անգամ ամենաձանր հոգեբանական վիճակները թեթևացնող երգիծանքով: Դա պարզ, անմիջական ու անկեղծ խոսք է, որ առկա է Մահարու թե՛ արձակի, թե՛ բանաստեղծության և թե՛ հուշագրության մեջ:

Մահարին գրել է «Ինքնակենսագրություն» և իր կյանքը պատմել վիպակների մեջ: Այնպես որ Մահարու կյանքը կարելի է ուսումնասիրել նաև նրա գեղարվեստական գործերով, որոնցից հատկապես կարևոր է ինքնակենսագրական հնգապատումը՝ «Մանկություն», «Պատանեկություն», «Երիտասարդության սեմին», «Երիտասարդություն» և «Ծաղկած փշալարեր»:

Գուրգեն Մահարին ծնվել էր որպես Գուրգեն Աճեմյան:Գրական մուտքի տարիներին Աճեմյանը նա դարձրեց Մահարի:

Ծնվել է 1903 թվականի օգոստոսի 1-ին Վան քաղաքում: Հայրը՝ Գրիգորը, և հորեղբայրը ուսուցիչներ էին: Հայրը նաև գրական փորձեր էր անում: Այն ժամանակ ևս կար կուսակցական պայքար, ինչին և զոհ է գնում Մահարու արմենական հայրը: Իսկ հորը սպանողը դաշնակցական քեռին էր:

Մահարին մեծացել է տատի խնամքի ներքո: Վանում ուսանել է Նորաշեն և Երամյան վարժարաններում:

Վրա է հասնում 1915 թվականի եղեռնը: Մահարին ևս իր հայրենակիցների հետ մեկտեղ մասնակցում է Վանի ինքնապաշտպանական կռիվներին: Բայց նահանջն անխուսափելի էր: Ճանապարհին մահանում են տատը և քույրը:

Ինքը և մյուս երկու եղբայրները հայտնվում են տարբեր որբանոցներում: Նա լինում է Էջմիածնում, Դիլիջանում, Երևանում: Որբանոցային տխուր ու անապահով կյանք:

Ավարտում է Երևանի թեմական դպրոցը: Այս տարիներից էլ սկսում է գրական փորձերը և մամուլի էջերում լույս ընծայում առաջին բանաստեղծությունները:

Որբանոցներից դուրս գալուց հետո Մահարին բնակություն է հաստատում Գյումրիում: 1923-ին տեղափոխվում է Երևան և կրթությունը շարունակում պետական համալսարանի պատմալեզվագրական բաժանմունքում:

Այս տարիներն արգասավորվում են նաև նրա գրական բուռն գործունեությամբ: Ծանոթանում է Եղիշե Չարենցի հետ, ստեղծում գրական խմբակցություն, որը Չարենցը վերանվանում է «Նոյեմբեր» և ղեկավարում այն: «Նոյեմբեր»-ը լուրջ ու մնայուն գրական գործունեություն է ծավալում. տպագրվում են գրքեր, կազմակերպվում ասուլիսներ: 1934-1936 թվականներին Մահարին աշխատում է «Խորհրդային Հայաստան» օրաթերթում՝ որպես արվեստի բաժնի վարիչ:

Քաղաքական հալածանքները հասնում են նաև Մահարուն: Անհիմն մեղադրանքով նա ձերբակալվում է 1936 թվականի օգոստոսի 9-ին և դատապարտվում 10 տարվա աքսորի:

Ավարտվում է Մահարու կյանքի առաջին շրջանը: Այս տարիներին նա գրել է բազմաթիվ բանաստեղծություններ, պոեմներ, պատմվածքներ ու վիպակներ: Դրանք լույս են տեսել նրա «Տիտանիկ» (1924), «Բարդիներ» (1928), «Միրո, խանդի և Նիցցայի պարտիզայանների մասին» (1929), «Մանկություն և պատանեկություն» (1930), «Մարգահաս» (1933) գրքերում: Այս տարիներին իսկ Մահարին արդեն իր դեմքն ու դիմագիծն ունեցող գրող էր:

Մահարին աքսորից վերադարձավ 1947-ի օգոստոսին: Մեկ տարի անց նա վերստին ձերբակալվում է և նույնքան անհիմն մեղադրանքներով 1949-ի մարտին նորից աքսորվում Սիբիր: Ծանր ու մահացու տարիներ: Մահարին հայրենիք վերադարձավ 1954 թվականի հուլիսի 21-ին և արդարացվեց: Երկու աքսորները նրանից խլեցին շուրջ 18 տարվա բուռն ու եռուն ստեղծագործական կյանք: Դրա փոխարեն նա ստիպված էր հորթ ու խոզ պահել, բրուտություն անել և հիսուն աստիճանի սառնամանիքի մեջ սիբիրյան անտառներում ծառ կտրել: Ամեն վայրկյան կարող էր կտրվել նաև նրա կյանքի թելը: Բայց Մահարին ապրեց:

Աքսորից վերադառնալուց հետո նա լծվեց բուռն գրական գործունեության, վերատպեց հին գործերը, գրեց ու լույս ընծայեց նոր գրքեր՝ «Հնձաններ» (1959), «Լռության ձայնը» (1962),

«Սև մարդը» (1964), «Այրվող այգեստաններ» (1966), «Ծաղկած փշալարեր» (ետմահու՝ 1970-1971 թվականներին լույս տեսավ նախ Բեյրութի «Նաիրի» շաբաթաթերթում, ապա՝ 1988-ին Երևանում):

Մահարին մահացել է 1969 թվականի հուլիսի 16-ին Լիտվայի Պալանկա քաղաքում թաղվել է Երևանում:

Գուրգեն Մահարին և Եղիշե Չարենցը գրական համախոհներ էին, շատ բարձր էին գնահատում իրար: Նրանք նաև գրական պայքարի գաղափարակիցներ էին: Չարենցը խմբագրել է Մահարու «Մրգահաս» ժողովածուն, նրան նվիրել է բանաստեղծություններ:

Գուրգեն Մահարին իր հերթին Չարենցի մասին գրել է շատ հետաքրքրական հուշեր և նրան ձոներ բանաստեղծություններ:

Չարենցի, Մահարու մտերմագույն ընկերներն էին Ակսել Բակունցը և Սկրտիչ Արմենը:

Այս բանաստեղծությունը Չարենցը գրել է 1933 թվականի մարտին, երբ խմբագրում էր Մահատուր բանաստեղծությունների «Մրգահաս» ժողովածուն:

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ ԳՈՒՐԳԵՆ ՄԱՀԱՐԻՆ

Երգերդ աղբյուր են գուլալ՝
Մեր երկրի արևից բխած:
Դու, մեր երկրի՝ պես շռայլ,
Մեր երկրի՝ պես հորդառատ ու բաց:

Կարդալով քո գիրքը անհուն՝
Հավատում եմ գալիքին մեր վեհ:
Օ, ինչքա՛ն է սիրտը վեհանում,
Որ նման երգեր է տվել...

Պայծա՛ռ է մեր երկրի գալիքը,
Օ՛, բերրի հերկերի գուսա՛ն,
Թող հավետ ապրի այս ծաղիկը՝
Մեր դաշտերում բուսած...

ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ (Կրճատումներով)

Փոքր էի, երբ կորցրի հորս, մի քիչ ավելի մեծ, երբ կորցրի ծննդավայրս: Ծննդավայրիս հետ կորցրի առմիշտ տատիս և մորս ժամանակավորապես: Չքացավ քարտեզի վրայից այն, ինչ կոչվում էր Արևմտյան Հայաստան, և մեկուկես միլիոն հայերի արյունից մի անգամ էլ ծաղիկները կարմրեցին և վերջալույսները արյուն հագան: 1915 թվականին ես Էջմիածին ընկա, հետո Դիլիջան, հետո Երևան, քաղաքից քաղաք, փողոցից փողոց, մայթից մայթ, որբանոցից որբանոց, մահճակալից մահճակալ:

Դիլիջան, երրորդ որբանոց, շատ մեծ պատճառներ ունեմ ես քեզ չմոռանալու և չեմ մոռանա: Ես քեզ չեմ մոռանա հենց թեկուզ այն պատճառով, որ մի գիշեր, երբ բոլոր որբերն օրորվում էին Մորփեոսի գրկում, ես վեր կացա անկողնիցս, հագնվեցի և գողի պես դուրս սողացի ննջարանից: Ես զգուշությամբ սերտարան մտա, վառեցի լույսը և սեղանի վրա դրի իմ տետրակները: Քիմիական թանաքի բուրմունքը շոյեց իմ ռունգերը, և ես ասես այդ բուրմունքով էլ հարբած, գրեցի իմ առաջին բանաստեղծությունը «Հայրենիք» վերնագրով և Հայրենիքի մասին: Երբ առավոտը բացվեց, որբերից ոչ մեկը տեղյակ չէր, որ գիշերը կատարվել է մի մեծ, շատ մեծ իրադարձություն... Երբ բացվեց առավոտը, ես նայեցի իմ ընկերների վրա, և ինձ թվաց, որ ես, եթե ոչ երկու, գոնե մի գլխով բարձր եմ իմ ընկերներից... և այդ հրաշքը կատարվեց ընդամենը մի գիշերվա ընթացքում:

Հայտնի չէ, թե որքան ես պիտի շարունակեի գիշերներով աճել, եթե մի օր, օր ցերեկով, մի քանի որբերի չընտրեին և Երևան չուղարկեին թեմական դպրոցում սովորելու համար: Սովորելը՝ սովորել, բայց ես շարունակեցի իմ գաղտնի տեսակցությունները Հելիկոնի մուսաների հետ, և որովհետև այդ շրջանում ինձ հաջողվեց մինչև ականջներս սիրահարվել աղջիկների որբանոցի ֆեյաներից մեկին, բնականաբար և լայնացավ իմ ստեղծագործական թեմատիկան, և ես սկսեցի հանդես գալ իմ աշակերտական տետրերում՝ որպես հայրենիքի և սիրո երգիչ: Ես տասներեք, տասնչորս տարեկան էի և ինձ համարում էի բանաստեղծ:

Մի օր գլխի ընկա, որ իսկական բանաստեղծ լինելու համար շատ քիչ է տետրակներ լցնել ոտանավորներով, որ բանաստեղծ լինելու համար նախ և առաջ հարկավոր է տպագրվել: Երագումս տեսնում էի անունս տպված թերթում և սիրտս ճխում էր ուրախությունից:

Ու ասա 1917 թվի ուշ աշնանը, ես դողացող սրտով փոստարկղ նետեցի իմ մի բանաստեղծությունը: Նրանից հետո ես ամեն օր իրիկնամուտին նստում էի փողոցի վրա նայող որբանոցի պատին և սպասում փոստային ցրիչին: Այսպես, մի օր, ցրիչը պարզեց ինձ «Աշխատանք» թերթը, որի երկրորդ էջի վրա ես տեսա իմ բանաստեղծությունը: Ես հուզված և տագնապահար վար նետվեցի պատից և, թերթը դրոշակի նման գլխիցս բարձր բռնած, որբանոց մտա:

1920 թվականին ես տասնյոթ տարեկան էի, «սպագա խոստացող» բանաստեղծ, արդեն արժանացած մեծ բանաստեղծ Եղիշե Չարենցի բարի ուշադրությանը ...

Կազմակերպվեց Հայաստանի պրոլետարական գրողների ասոցիացիա, որին զինվորագրվեցի նաև ես: Հետագայում պարզվեց, որ ես իմ գրական խառնվածքով պրոլետարական գրող չեմ: Ես տպեցի բանաստեղծությունների մի ժողովածու, որը հայտարարվեց մանրբուրժուական, բռնեմային և էլի շատ բաներ, որի համար և վտարվեցի ասոցիացիայից: Այս մասին պաշտոնապես հայտարարվեց մամուլում: Իմ միակ և մեծ մխիթարությունն այն էր, որ Չարենցը նույնպես ասոցիացիայի անդամ չէր:

Ես Լենինական գնացի առանց գրական անձնագրի,- այդ 1925 թվականին էր,- և հանդիպեցի դեռ գրեթե պատանի Մկրտիչ Արմենին: Արմենի համար նույնպես նեղ էին ասոցիացիայի շրջանակները. նա նույնպես Չարենցին բարձր էր գնահատում ասոցիացիականներից, և նա համաձայնվեց գրական մի նոր խմբակ ստեղծել, անկախ ասոցիացիայից և նրա դեմ: Մենք կազմակերպեցինք գրողների «Հոկտեմբեր» միությունը: Վարչության պատվավոր նախագահ ընտրեցինք Եղիշե Չարենցին, որն այն ժամանակ գտնվում էր արտասահմանում:

Վերադարձավ Չարենցն արտասահմանից, և մենք վերակառուցեցինք «Հոկտեմբերը»: Այն դարձավ «Նոյեմբեր միություն»: Չարենցն ընտրվեց վարչության նախագահ:

Տարիների ընթացքում փոխվեցին և վերափոխվեցին գրական կազմակերպությունները, «Նոյեմբեր»-ից մի քառյակ մնաց անդավաճան իր սկզբունքներին,- Չարենց, Բակունց, Արմեն և տողերիս գրողը,- 1936 - 1937 թվականներին այս քառյակը ենթարկվեց ռեպրեսիայի՝ զոհ տալով Ե. Չարենցին և Ա. Բակունցին՝ մեր գրականության երկու անկրկնելի արժիվներին, առաջինը մեծ բանաստեղծ, իսկ երկրորդը նույնքան մեծ արձակագիր...

... 1936 թվականի օգոստոսի 9-ի գիշերը ես ձերբակալվեցի: Ինձ տարան «Ինտուրիստ» ռեստորանից: Վահրամ Փափազյանի և Հրաչյա Ներսիսյանի հետ կոնյակ էինք խմում և ձմերուկով թարմացնում կոկորդներս: Ես չգարմացա: Մի ամիս առաջ, հուլիսի 9-ի գիշերը, Թբիլիսիում Բերիայի սաղրանքներին զոհ գնաց Հայաստանի կոմկուսի սիրված ղեկավար Ադասի Խանջյանը:

Ջրոսանքի չէին հանում: Առաստաղից մի քիչ ցած. պատի բացվածքից ես միայն զգացի, որ աշուն է: Հետո ձմեռ եղավ, ապա գարուն և նորից ամառ: Ինձ փոխադրեցին ընհանուր կամերա: Այստեղ ավելի ուրախ է:

Դատավարություն: Դատավարությունը փակ է, երեք բոլակ տևողությամբ: Երկու տարի է անցել իմ ձերբակալության օրից: Ես գտնվում եմ քննիչի սենյակում, նստած մի աթոռի վրա: Ես խնդրում եմ, որ ինձ թույլ տան զուգարան գնալու: Քննիչը սեղմում է կոճակը: Ներս է մտնում բութ, արևառ դեմքով մի պահակ: Քննիչը բացատրում է.

– Տար սրան:

Գնում ենք՝ ես առաջից, պահակը ետևից:

– Ա՛ջ,- հրահանգում է պահակը, և ես աջ եմ թեքվում:

– Չախ,- հրահանգում է պահակը, և ես ձախ եմ թեքվում:

– Ինձ կճանչնա՞ս,- լսում եմ ետևիցս: Պահակս է:

– Ոչ, - ասում եմ ես:

– Ետ մի նայի, ձախ... - հրահանգում է նորից նա: - Չե՞ս հիշում, հինգերորդ որբանոցից, Միանոսն եմ:

Հիշեցի: Խնուցի էր, ծույլ և բարի:

– Քեզ ո՞վ ըսավ բանաստեղծ էլի... ներս մտի:

Ներս եմ մտնում: Դեմից ինձ նայում է մի ծանոթ, մռայլ անձնավորություն: Միրտս տրոփում է: Ես հանկարծակիի եմ գալիս: Որտե՞ղ եմ տեսել ես նրան և ե՞րբ: Այսքան ծանոթ և այսքան անծանոթ: Մենք նայում ենք իրար գրեթե անթարթ աչքերով: Ես ժպտում եմ, նա էլ է ժպտում: Մոտենում եմ:

Դեմը մեծ հայելի է: Երկու տարի հետո ես առաջին անգամ հանդիպում եմ ինձ...Շատ եմ փոխվել, եթե չժպտայի, հազիվ թե ճանաչեի այդ խոժոռ կալանավորին:

Ձինվորական կոլեգիայի գերագույն դատարան: Ես մեղադրվում եմ տեռորի և Հայաստանը Սովետական Միությունից անջատելու ու կապիտալիստական աշխարհին միացնելու մեջ: Ես պիտի սպանեի՝ Բերիային: Ես դատապարտվեցի տասը տարվա ազատազրկման: Նույն Միանոսն ինձ առաջնորդեց դեպի դատապարտվածների կամերան:

– Ինչքա՞ն տվին,- հարցրեց նա շշուկով:

– Տասը տարի:

– Փա՛ռք աստծուն: Էժան ես պրծե:

Հիմա մեզ համար արդեն պարզ էր, որ մեզ պիտի ուղարկեն Հայաստանից դեպի հյուսիսները: 1938 թվականի աշնանը մեզ գիշերով ապրանքատար ավտոների մեջ լցրին, կայարան հասցրին: Կայարանում չկար ոչ մի կենդանի շունչ, բացի զինվորականներից: Մեզ մեծ զգուշությամբ կառամատույց հանեցին և մեր քայլերն ուղղեցին դեպի վազոնները:

Եվ այսպես, յոթերորդ օրը մեզ հրամայվեց վերցնել մեր իրերը և դուրս գալ գնացքից: Մենք գտնվում էինք Վոլոգդա կայարանում:

Այս անգամ մեզ բարձեցին բաց ապրանքատար ավտոները և քշեցին քաղաքի փողոցներով: Ուշ աշուն էր: Դեղին մի արև ողողել էր քաղաքը:

Վոլոգդայի քաղաքական մեկուսարան...

Միբիր, գեղեցիկ երկրամաս, լավ է ապրել քո անծայրածիր բացատներում և անտառներում, որպես ազատ քաղաքացի, սակայն դժվար ես դու կալանավորի համար: Մեզ բեռնաթափեցին Կրասնոյարսկ քաղաքից մի քանի կիլոմետրի վրա փռված բաժանման ճամբարում: ...Ինձ

նմանների հետ քշվեցի Մարիինակ՝ մի նոր ճամբար:

Երեք ամիս ապրեցի այս ճամբարում: Մի անգամ, այդ երկրորդ թե երրորդ օրն էր, ես նստել էի մեր բարակի տախտակամածի երրորդ հարկում և հանգստանում էի հողային ծանր աշխատանքից հետո: Վարը, ճիշտ իմ դիմացը, դրված էր մի երկար սեղան, որի մոտ կալանավորները նստած նամակներ էին գրում: Իմ ուշադրությունը գրավեց մեծ և ազդեցիկ դիմագծերով, ոլորուն, աղ-պղպեղ մազերով մի մարդ: Նա էլ նստած նամակ էր գրում: Որտե՞ղ եմ ես տեսել այս մարդուն,- մտածում եմ ես և ոչ մի կերպ չեմ կարող հիշել, բայց որ տեսել եմ, դա դուրս է ամեն կասկածից: Այսքան ծանոթ և այսքան անծանոթ: Թվում է, որ ահա պիտի ասեմ նրա անունը, բայց փախչում է նրա անունն էլ, նա՛ ինքն էլ: Վերջացրեց նամակը, ծրարեց և սկսեց գրել հասցեն: Ես չկարողացա ինձ զսպել և վար սողացի իմ երրորդ հարկից: Անցա նրա մոտով, հետ - հասցեն է գրում, ետ դարձա և ... էվրիկա:

Էգերտը, այն ժամանակ մեծ աղմուկ հանած կինոդերասան Էգերտն էր, որին ես տեսել էի «Արջային հարսանիք» կինոժապավենում, Էկրան հանված Լուինաչարսկու պիեսի համանուն սցենարով: Ի՞նչ զարմանալի հանդիպում:

Հաջորդ օրվանից մենք միասին էին աշխատում: Պատգարակով հող էին կրում: Հետաքրքիր պատմող էր և խոսակից: Երբ հոգնում էինք, հրահանգում էր՝ ծխել:- Ներս էր քաշում ծուխը և հառաչում, ապա ժպտալով ասում՝ «Այսպես: Ահա մի էջ սովետական կինեմատոգրաֆիայի պատմությունից»: Մյուս անգամ՝ «Այսպես: Մի էջ հայ գրականության պատմությունից»: Սովորեց «Ծիծեռնակ» երգը և ինձ հետ երգում էր մեծ զգացմունքով և հայի նման ու հայի չափ տխրում...

Օգոստոսի վերջերին մոտ երկու հարյուր հոգի հանեցին լազերից և ասացին, որ երկու շաբաթով գնում ենք մոտակա կոլխոզ բերք հավաքելու: Էգերտը չկար մեր ցուցակում: Մենք բաժանվեցինք և ճանապարհ ընկանք զինված պահակների և շների հսկողությամբ: Ասացին, որ երկու ժամվա ճանապարհ է, բայց մենք քայլեցինք մինչև երեկո: Գիշերեցինք բաց դաշտում, առավոտյան շարունակեցինք մեր ճանապարհը և երեկոյան միայն հասանք այն ճամբարը, որը կոչվում էր Նովոիվանովսկի ճամբարային երրորդ կետ:

Եկել էինք երկու շաբաթով, բայց մեր էտապից շատերը մահացան այնտեղ, իսկ ես ապրեցի մինչև 1947 թվականը...

Թուղթ ու մատիտ չտեսա ես այդ ութ տարիների ընթացքում, բայց անաշխատ էլ չմնացի: Աշխատեցի ես բահով, սղոցով, կացինով, եղանով, երկաթե ձողով, աշխատեցի կոմբայնի և սերմնագտիչի վրա և երբ ձեռներս թուլացան, բրուտների համար ոտքերով ցեխ հունցեցի: Այդ ութ տարիների ընթացքում ես հասկացա, որ մարդն ավելի դիմացկուն է, քան քարը:

Ինձ հանձնվեց տասնվեց հոգուց բաղկացած մի բրիգադ. դրանց մեջ կային գյուղացիներ, երկու իրավաբան, երեք կուսակցական աշխատող և մեկ չինացի արտիստ, որն, իր ասելով, շրջել էր ամբողջ աշխարհը: Բարեբախտաբար աշխատանքը վեր չէր մեր ուժերից: Մենք մեծ ճանապարհի երկայնքով մեկ մատնաչափ սածիլներ պիտի տնկեինք, որոնք պիտի մեծանային և արգելեին ձյան հոսանքը: Ձյունարգելակներ էին կոչվում այդ բուսական ամբարտակները: Արևոտ օր էր: Մեզ թվում էր, որ մեր աշխատանքը անարդյունք աշխատանք էր և սարքված էր հյուծված կալանավորներին անաշխատ չթողնելու համար: Մենք մինչև երեկո սածիլեցինք մոտ մեկ ու կես կիլոմետր տարածություն: Այսպես՝ մեկ շաբաթ: Տարիներ հետո, 1947 թվականի օգոստոսի տասին, երբ ես ազատվեցի, մեծ ճանապարհի երկարությամբ խշշում էր կանաչ ծառերի երկարավուն մի զանգված: Իմ սիրտը լցվեց ուրախության և անձկության արցունքով: Ահա մեր աշխատանքի բարի արդյունքը, իսկ աշխատողների մի մասը մահացան ազատություն չտեսած:

Չնայած, որ ես դատապարտված էի տասը տարվա ազատազրկման (և հինգ տարվա ձայնազրկման...), այնուամենայնիվ ինձ բաց թողին միայն տասնմեկ տարի հետո: Պատճառը. զարմանալի է. ինձ ուղեկցող վճռի փաստաթղթում մեքենագրուհին բաց էր թողել մի վրիպակ - ժամկետի վերջը 1946 թվականի փոխարեն (1936-1946) տպված էր 1947... ես մի տարով գերակատարեցի ինձ բաժին ընկած դառն պլանը:

1947 թվականի օգոստոսի 10-ին ես ազատվեցի: Ճամփորդական ռյուկզակն ուսիս, ես մտա առաջին ճամբարային կետը, ուր գտնվում էր գլխավոր գրասենյակը: Ինձ հայտնեցին, որ կարող եմ վերադառնուլ հայրենիք, հայրենիք՝ միևնույն Երևան: Ես խնդրեցի տալ ինձ Քանաքեռ:

Տվին: Ահա և Մարիինսկ կայարանը...

Քայլում են կայարանի կառամատույցով հետ ու առաջ և ուրախ են, որ ոչ մի պահակ ինձ չի հետևում:

1947 թվականի օգոստոսի 20-ին ես Երևան մտա: Ես նախընտրեցի ոտքով մտնել քաղաք: Կայարանից մինչև Շիլաչի ձգվող մերկ տարածությունը վերածվել էր գեղեցիկ պողոտայի, զարդարված 4-5 հարկանի տուֆակերտ շենքերով: Մի՞թե ես խանգարում էի, անցավ մտքովս, և սիրտս լցվեց արցունքով... Ո՞ր գնալ: Մայրս մահացել էր դեռ 1944 թվականին, կինս ամուսնացել, շուրջս անձանոթ մարդիկ: Ես հիշեցի Եսենինին. «Իմ երկրում, ես, ասես, օտարերկրացի եմ...»:

Իմ տասնմեկ տարիների, ինչպես նաև այդ 444 օրերի մասին, որ ես ապրեցի Երևանում, ես պիտի գրեմ անպայման, եթե ապրեմ ևս մի քանի տարի: Չորս հարյուր քառասունչորս օր ես ապրեցի տագնապներով, կարճատև ժպիտներով: Միտքարականն այն էր, որ այդ օրերին ինձ գտան երիտասարդ բանաստեղծները, որոնք աշակերտական սեղանից կարդացել և սիրել էին իմ գրքերը:

Նոյեմբերյան մի գիշեր երկրորդ անգամ ինձ ձեռքակալեցին: Ինձ ընդունեց Ներսեսը, նա, որ ինձ ընդունել էր 1936 թվին:

– Նորի՞ց եկար, – հարցրեց նա շշուկով:

– Ես չեկա, բերին, – պատասխանեցի ես:

Նույն ներքնահարկը: Դրսում անձրևն էր մաղում, ներսում՝ արցունքը:

1949 թվական: Ապրիլ: Էտապ: Տաժանակիր, դաժան էտապ ինը քաղաքների ինը բանտերով: Կրասնոյարսկ երկրամասի Կանսկ քաղաքում մեզ բեռնեցին ապրանքատար ավտոներում և քշեցին երկաթգծից արևելք:

Մենք բաժին ընկանք Կուռայ գյուղի կոլխոզին:

Յմահ արստրականներ - այս էր մեր սոցիալական դրությունը: Մենք ազատ էինք տվյալ գյուղում և ամսական երկու անգամ ենթակա ստուգման: Աշխատել կոլխոզում, աշխօր վաստակել և ապրել, ահա խնդիրը:

Ինձ վստահեցին կոլխոզի 323 գոճիները. ես նրանց հովիվն էի և խնամատարը:

Մենք ազատվեցինք և Երևան վերադարձանք 1954 թվականի ամռանը:

* * *

Ի՞նչ կարող եմ ասել իմ գրական կենսագրության մասին: Գիրն ու գրականությունը սիրել եմ վաղ մանկությունից: Այն օրից, երբ ես հասկացել եմ, իմացել կամ գիտակցել, որ գիրք գրողն ու ստեղծողը մարդն է, մի ցանկություն եմ ունեցել՝ գիրք գրել, գիրք ստեղծել: Իմ առաջին ոտանավորը լույս է տեսել 1917 թվականին, իսկ առաջին արձակ գործը՝ «Մի գույգ կոշիկների պատմությունը», 1923 թվին: Իմ արձակի՞ց է բխել բանաստեղծությունը թե՞ ընհակառակը, այդ մասին թող քննադատները վիճեն, ես ժպիտով եմ նայում այժմ իմ բանաստեղծության նվազող ակունքներին, իսկ արձակի ջրերում ես լողում եմ ազատ և վստահ, երբեմն իսկական լողորդի նման:

... Շատ է խոսվում վարպետության մասին: Կա այդպիսի բան: Մի կոշկակար լավ կոշիկներ է կարում, մյուսը՝ վատ՝ նույն կաշվից: Վարպետությունը գրողի հետ է ծնվում, միասին: Որքան շատ բան ունենա ասելիք գրողը, այնքան մեծ վարպետ է նա: Որքան մեծ է նրա խոսքը, այնքան մեծ է նրա վարպետությունը: Ոչ վարպետ գրողը ասելիք չունի աշխարհին և նրան զուր է խորհուրդ տալ, թե՛ նատիր և բարձրացրու վարպետությունը: Ի՞նչ վարպետությունը բարձրացնելու մասին խոսք կարող է լինել, երբ նա ասելիք չունի: Գրականության պատմության մեջ շատ կան օրինակներ, երբ մի գրող գրում է մի լավ, բարձր արվեստով գիրք, որին հաջորդում են թույլ գրքեր: Նույն գրողն է, նույն գրիչը, նույն գրասեղանը: Ի՞նչ պատահեց. նրա վարպետությունը կորա՞վ: Ոչ: Առաջին գիրքը լավ է ստացվել, որովհետև գրողը ասելիք է ունեցել, մյուս գրքերի մասին քննադատները գրում են, որ վարպետություն չկա... Ոչ թե վարպետություն չկա, այլ գրողն ասելիք չունի: Ունենար ասելու բան, նա գիրքը կգրեր նույն վարպետությամբ, ինչ առաջինը:

Իմ անձնական փորձով ես եկա նաև այն ընդհանուր եզրակացության, որ գրողը պիտի գրի ապրված նյութի մասին: Այստեղից էլ ընթերցողին գտնելու և քո ստեղծած աշխարհի

«քաղաքացի» դարձնելու ուժն ու կարողությունը: Եթե գրողը գրում է մի գործ, որը չի տեսել, չի հուզվել նրա հերոսների հետ, չի ապրել միջավայրում ու վատ է ճանաչում ընտրած նյութը, նա չի կարող ընթերցողին գերել, հուզել, ապրեցնել:

Ապրված նյութը, եթե այն հասել է այն աստիճանին, որ անհնարին է չգրել, գրողը կարող է կրել իր մեջ տարիներ շարունակ: Ես իմ «Մանկությունը և պատանեկությունը» գրեցի 1928-1930 թվականներին: Այդ թվականներին հաջորդեցին գրական պայքարի անհանգիստ տարիներ: Չկար ստեղծագործական առողջ մթնոլորտ: Ես ինձ չէի գտնում՝ գրելու իմ տրիլոգիայի վերջին մասը: Սկսեցի մի նոր վեպ, «Գուրգեն խանի տոհմը». մի քանի մաս տպեցի ամսագրում և թողեցի կիսատ, սկսեցի մի չափածո վեպ՝ «Արձանագործ Մուրը», որը ենթարկվեց անավարտ վեպի ճակատագրին: Միևնույն ամսագրում երկու գործ կիսատ թողած, 1936 թվականին կորցրի և՛ ազատություն, և՛ ստեղծագործելու հնարավորություն:

Անցավ տասնվեց տարի: 1953 թվականին ես Ձերթինսկում աշխատում էի որպես տեղական փոքրիկ կոլխոզային շուկայի գիշերային պահակ: Ժամը 5-ին սկսվում էր իմ գիշերը և առավոտյան ժամը 10-ին միայն վերջանում: Չմեռային սառնաշունչ, երկար գիշերներ: Տանջալից էին երկար գիշերները, անվերջանալի: - «Նստիր և գրիր, - ասաց մի օր Անտոնինան, - ճիշտ է, գրածներդ երբեք լույս չեն տեսնի, բայց գոնե գիշերները կկարճես... կամ, ո՞վ գիտե, գուցե...»: - Պետք է միայն... չմեռնել... արդարությունը կհաղթի, - գուցե հազարերորդ անգամ կրկնում եմ ես:

Ես նայեցի պահակատան փոքրիկ, խարխուլ սեղանին, նրա վրա դրված նավթե լամպին: Իմ մեջ ասես հնչեց հնօրյա, լավ օրերի հետ կապված մի երգ, վաղուց-վաղուց մոռացված: Ես ինձ գտա տեղական վաճառախանութներից մեկում, գնեցի աշակերտական տետրակներ, աշակերտական գրիչ ու թանաքաման, երբ գիշերն իջավ, նստեցի իմ խարխուլ սեղանի մոտ ու մոտ քաշեցի նավթի լամպը: Ասես մի կոճակ սեղմվեց և օրերն ու շաբաթները, ամիսներն ու տարիները թավալեցին դեպի ետ: Ես հասա 1930 թվականին և մտքիս աչքերով տեսա իմ «Մանկություն և պատանեկություն» գրքի վերջին էջի վերջին տողը.

«- Այո, մայրիկ, պատանեկությունը վերջացավ...»:

Դեռ քսաներեք տարի առաջ ես գիտեի, թե որտեղ եմ հասել և որտեղից պիտի շարունակեմ: Նստեցի և գրեցի: Ու սևացան աշակերտական տետրի սպիտակ էջերը:

Գիշերվա ընթացքում մի քանի անգամ ես հագնում էի իմ շնամորթե մաշված վերարկուն, հրացանը նետում ուսիս և դուրս էի գալիս, ստուգում երկու խանութների կողպեքները և նորից վերադառնում իմ աշխատանքին: Կար և՛ ցուրտ, և՛ քաղց: Ես իմ շնչով տաքացնում էի մատներս և շարունակում թղթին հանձնել այն, ինչ հեռավոր անցյալ էր, խորապես ապրված և գրվելու վաղուց պատրաստ մի ժամանակաշրջան, 1917-ից մինչև 1920 թվականը, մինչև սովետական կարգերի հաստատումը Հայաստանում:

Հետագայում, երբ տպվեց այդ գործը, իմ ընթերցողներն ու քննադատները հասատեցին, որ ծանր պայմաններում գրված այդ գրվածքում ծիծաղն ու հումորն ավելի դիպուկ են ու կենսասհաստատ, քան առաջին երկու մասերում, որոնք գրված են եղել ազատ և բարեկեցիկ պայմաններում:

Այսպես էլ է պատահում: Ամեն գրող ունի իր ստեղծագործական գաղտնիքները, որոնք հաճախ ինքը՝ այդ գաղտնիքների տերն ու տիրակալն է, չի կարող բացատրել:

Վերջացնենք: Ապրված է 60 տարի: Ստեղծված է մի համեստ գրականություն: Եթե հաշվենք, որ գիտակցական կյանքն սկսում է յոթ տարեկանից, այդ յոթ տարիներին ավելացնելով գաղթի, փողոցի, որբանոցների յոթ տարիները և այս տասնչորս տարիներին ավելացնելով 1936-1954 թվականների ժամանակաշրջանը, ինձ կմնա քսանութ տարի: Սակայն եթե այս րոպեին ներս մտնեք ահեղ և ամենակարող Եհովան, նստեք իմ դիմաց, մի ծխախոտ վառեք և ասեք.

- Տալիս եմ քեզ երկրորդ կայնք, գծիր քո երկրորդ կյանքի ուղին օրորոցից մինչև գերեզման, ինչպես որ ցանկաս և, կկատարվի քո կամքը... ինչպե՞ս կուզեիր ապրել...

Ես նրան կպատասխանեի, առանց վարանելու.

- Ճիշտ այնպես, ինչպես ապրեցի:

ԲԱՌԱՐԱՆ

Մորփեոս - քնի և երազի աստվածը հունական դիցաբանության մեջ

Հելիոն - լեռ Հունաստանում, որի վրա, ըստ հույների պատկերացումների, բնակվում էին մուսաները: Հունաստանում մուսաների բնակավայր էր նաև Պառնաս լեռը, որտեղ նրանք ապրում էին իրենց հովանավոր աստծու՝ Ապոլոնի հետ:

մուսա - հին հունական դիցաբանության մեջ ներշնչանք, ներշնչանքի աղբյուր, գիտության և արվեստների հովանավոր աստվածուհի

Ֆեյա - հավերժահարս, գեղեցկուհի

բոհեմա - մտավորականության, արվեստագետների ազատ միջավայր

ասոցիացիա - նկատի ունի Հայաստանի պրոլետարական գրողների ասոցիացիան, որը թշնամական դիրք ուներ Մահարու հանդեպ

ռեպրեսիա - բռնադատում

կամերա - բանտախուց

կոլեգիա - հանձնաժողով

տեռոր - ահաբեկություն

կառավարություն - երկաթուղային կայարանում ուղևորման հարթակ

աղ-պղպեղ մազեր - ալեխառն մազեր

լազեր - համակենտրոնացման ճամբար

կոլխոզ - գյուղացիական կոլեկտիվ ընկերություն

կոմբայն - միաժամանակ մի քանի գործողություն անող գյուղատնտեսական մեքենա

բրուտ - կավագործ, կավից ամանեղեն պատրաստող արհեստավոր

ամբարտակ - պատնեշ, պատվար, արգելք

ռյուկզակ - ուսապարկ

մինուս - հանած, այստեղ՝ բացի

Շիլաչի - թաղամաս Երևանի երկաթուղային կայարանից դեպի կենտրոն տանող ճանապարհին

էտապ - պահակախմբի հսկողությամբ որևէ տեղ տարվող կալանավորների խումբ

աշխօր - աշխատանքային օր, աշխատանքի չափման միավոր

տրիլոգիա - եռագրություն, նկատի ունի իր «Մանկություն», «Պատանեկություն», «Երիտասարդության շեմին» վիպակները:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ե՞րբ ու որտե՞ղ է ծնվել Գուրգեն Մահարին: Մահարի նրա գրական ազգանունն է, իսկ ո՞րն է իսկականը:

2. Ինչպիսի՞ ճակատագիր է վիճակվել Գուրգեն Մահարուն: Ե՞րբ են նրան արտրել առաջին անգամ:

3. Ի՞նչ գրքեր է նա հրատարակել մինչև առաջին արտրը:

4. Ե՞րբ են Մահարուն արտրել երկրորդ անգամ: Պատմե՛ք արտրական կյանքի տարիների մասին:

5. Ի՞նչ Մահարին հրատարակել երկրորդ արտրից վերադառնալուց հետո:

6. Ուրիշ ի՞նչ գրողներ 1930-ական թվականներին ենթարկվեցին քաղաքական հալածանքների:

7. Ի՞նչ վերաբերմունք է ունեցել Չարենցը Մահարու հանդեպ և ինչպե՞ս է դա արտահայտել գրական գործունեության մեջ:

8. «Ինքնակենսագրական»-ի մեջ ինչպե՞ս է Մահարին մտաբերում իր որբանոցային տարիները, առաջին բանաստեղծության ծնունդն ու տպագրությունը:

9. Ի՞նչ էր, ըստ Մահարու, գրական վարպետությունը:

10. Եթե Մահարուն հնարավորություն տրվեր երկրորդ անգամ ապրել իր կյանքը, ինչպե՞ս կցանկանար ապրել:

1

Չալոն իմ շո՛ւնն էր, չալ-չալ աչքո՛ւն էր,
Չալոն չքնաղ էր, պայծա՛ռ Չալո.
Ընկնում էր ոտիս, աչքը փակում էր,
Ծածկվում էր տատիս հին շալով:

Ես հանում էի մեր հին գգրոցից
Գույնզգույն լաթեր ու սրմա,
Չարդարում էի պոչից մինչև վիզ
Ու տանում դաշտերը նրան:

Չալոն քայլում էր պչրուիու նման,
Սլվլում պոչը բռնած ցից,
Քսվում էր ոտիս, մռռում էր մռայլ,
Մռռում էր հպարտ հաճույքից:

Տուն էի բերում մութ փողոցներով,
Շների աչքերից անտես.
Դանդաղ իջնում էր կապույտ երեկոն
Ու ծածկում սար ու դաշտեր:

2

Չալոն իմ շո՛ւնն էր, չալ-չալ աչքո՛ւն էր,
Չալոն չքնաղ էր, պայծա՛ռ Չալո.
Ընկնում էր ոտիս, աչքը փակում էր,
Բայց բանը վերջացավ չարով:

Գաղթի մութ ճամփին կորավ իմ շունը,
Ո՞վ գիտե՛՞ ո՞ր ձին կոխտտեց...
Շուրջը մեռնում էր վերջին աշունը,
Կննաց ինձ ո՛չ մի ընկեր...

3

Մի աղջիկ եղավ իմ երկրորդ սերը,
Խաժ աչքով աշխույժ մի աղջիկ,
Ոսկեգույն էին նրա մազերը
Ու բուրում էին դարչին:

Մի օր միասին գնացինք այգի,
Հուլիսյան գիշերն էր նագում.
Նա չալ-չալ շորեր ուներ իր հագին,
Իսկ այգում խաղողն էր հասնում:

Նստեցինք մենք թավ որթատունկի տակ,
Նա դրեց գլուխը ծնկիս,
Ես շոյում էի նրա վիզը տաք
Ու նայում մշուշված դեմքին:

Օ, սե՛ր իմ, սե՛ր իմ... - ինձ հառել էին
Բիբերը նրա մլարուն.
– Չալո՛ն է նայում նրա աչքերից,
Չալոն է տխուր նայում:

Անհուշ նագում են որթատունկերը,
Իսկ հետո անձրևն է խշշում.
Քեզ չեմ մոռացել, կորած ընկե՛րքս,
Քեզ չեմ մոռացել, իմ շո՛ւն...

.....

Օրերի հեռվում նրա հաչոցը
Հնչում է կարծես լալով...

Չալոն իմ շունն էր, չալ-չալ աչքո՛ւն էր,
Չալոն չքնաղ էր, պայծա՛ռ Չալո...

ԲԱՌԱՐԱՆ

չալ-չալ աչքուն էր - չալ-չալ աչքեր ուներ
գգրոց - դարակ, արկղ, որի մեջ պահում են զանազան իրեր
լաթ - հին շորի կտորներ
սրմա - ծարիր, կոպերը գունավորելու ներկ
սչրուհի - զարդարված գեղեցկուհի
սվլում - շարժում, խաղացկուն
դարչին - անուշահոտ համեմունք
թավ - խիտ
որթատունկ - խաղողի բարձր տունկ

Այս ստեղծագործությունը Մահարին շատ տեղին բնորոշել է բալլադ, և իրոք այն ունի գրական այդ տեսակին առանձնահատուկ բոլոր հատկանիշները:

Բալլադ բառը թարգմանաբար նշանակում էր պար: Իսկ բալլադը՝ որպես գրական ստեղծագործություն, նշանակում է երգի և պարի ուղեկցությամբ կատարվող բանաստեղծություն, որը հայերեն կոչվում է **պարերգություն**:

Բալլադը ոչ մեծ ծավալի ստեղծագործություն է, որի մեջ կան հերոսներ և գործողություններ: Հիմքը որևէ լեգենդ է, ավանդույթ կամ արտասովոր դեպք: Գործողությունները զարգանում են արագ ու լարված, առանց մանրամասնությունների և, որպես օրենք, ունենում են հուզական մեծ հագեցվածություն:

Այս բոլոր հատկանիշներն էլ, ահա, առկա են Մահարու բալլադի մեջ: Բալլադներ գրել էն նաև Հովհաննես Հովհաննիսյանը, Հովհաննես Թումանյանը, Ավետիք Իսահակյանը, Եղիշե Չարենցը, Գեղամ Սարյանը և ուրիշներ: Թումանյանի հայտնի բալլադներից են «Փարվանա»-ն, «Աղթամար»-ը, «Չարի վերջ»-ը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ի՞նչ է բալլադը:
2. Ինչի՞ մասին է Չալոյի և առաջին սիրո մասին պատմող բալլադը:
3. Մեր պատմության ո՞ր ժամանակաշրջանը նկատի ունի Մահարին բալլադում:
4. Ի՞նչ էր Չալոն բալլադի քնարական հերոսի համար:

5. Ինչպե՞ս էր քնարական հերոսը վարվում Չալոյի հետ:
6. Ինչպե՞ս ավարտվեց քնարական հերոսի ու Չալոյի ընկերությունը:
7. Ո՞վ փոխարինեց Չալոյին:
8. Հուլիսյան գիշերին աղջկա աչքերից ո՞վ էր նայում:
9. Ինչպե՞ս է ավարտվում բալլադը:

ՕՐՈՐ, ՕՐՈՐ...

Արևավոր, արևավոր իմ սերերին,
 Իմ հույզերին արևավոր ու նո՛ր, ու նո՛ր,
 Իմ լույսերին ու լուսավոր իմ հույսերին,
 Ընկուզենո՛ւն լայնասաղարթ օրո՛ր, օրո՛ր,
 Օրոր, օրոր:

Օրոր մարգին, արտույտներին, ծառին, ձորին,
 Կածաններին իմ մենավոր, կանաչ բարդուն,
 Օրոր, քնքուշ իմ աքասի՛, օրոր, մորի՛,
 Օրո՛ր սարին, հանդին, արտին, օրո՛ր մարդուն:
 Օրոր, օրոր:

Շամբուտներին ու ամպերին մութ ու անձև,
 Անտառներին, արոտներին, քամուն, քարին,
 Օրո՛ր սրտին իմ՝ արտի պե՛ս անձրևածե՛ծ,
 Օրո՛ր սրտին՝ վարդերի պես արնակարմիր,
 Օրոր, օրոր:

Օրոր նրանց՝ արևային երգիչներին,
 Որոնք մի օր երգ երգեցին ու անց կացան,
 Կարդացողին օրոր, սրտոտ ու մտերիմ,
 Կարդացողին, որ եղել է, հիմա չկա,
 Օրոր, օրոր:

ԲԱՌԱՐԱՆ

լայնասաղարթ - լայն սաղարթ ունեցող, **սաղարթ**՝ տերև, տերևների ամբողջությունը, տերևներն ու տերևախիտ ճյուղերը
շամբուտ - ճահճուտ

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Բանաստեղծը ո՞ւմ է ասում «Օրոր, օրոր»:
2. Անձնական ապրումը և բնության պատկերներն ինչպես՞ են զուգակցվում բանաստեղծության մեջ:
3. Թվարկե՛ք այն ամենը, ինչին բանաստեղծը օրոր է ասում:
4. «Օրոր»-ը՝ որպես օրորոցային բանաստեղծություն, առավել չափով ի՞նչ բովանդակություն ունեցող երկերին է բնորոշ: Հիշե՛ք օրորոցային երգերի օրինակներ հայ գրականությունից:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶ

(1914-1984)

Հովհաննես Շիրազը հայ քնարերգության մնայուն անուններից է:

Նա իր ստեղծագործության մեջ ի մի բերեց զարնան զարթոնքի տրամադրությունները, հայ ժողովրդի պատմական բախտի փիլիսոփայությունը, մայրական սիրո, աշխարհի առեղծվածի գաղտնիքները: Գրեց բանաստեղծություններ, պոեմներ ու քառյակներ և իր անկեղծությամբ ու անմիջականությամբ գրավեց ժողովրդի սիրտը: Մեր ասելը քիչ է, ժողովուրդն իրոք պաշտում էր նրան:

Հովհաննես Շիրազի իսկական անունը և ազգանունը Օնիկ Կարապետյան է: Օնիկը դարձավ Հովհաննես, Կարապետյանին փոխարինեց Շիրազը՝ որպես վարդաստան, ինչպես նրա ցողաթաթախ պոեզիան էր: Շիրազը քաղաքի անուն է Պարսկաստանում, որտեղ ծնվել և ստեղծագործել են մեծ բանաստեղծներ Սաադին ու Հաֆեզը: Շիրազ անունով ապագա բանաստեղծին մկրտել է արձակագիր Ատրպետը: Իր անունը բանաստեղծը բացատրում էր նաև որպես Շիրակի որդի՝ Շիր-ազն:

Ծնվել է 1914 թվականի ապրիլի 26-ին Գյումրիում: Հայրը հողի աշխատավոր էր, որ 1920-ին գոհ գնաց թուրքերին, մայրը մեծ դժվարությամբ էր պահում ընտանիքը: Եղավ մի պահ, որ, չկարողանալով հոգավ ընտանիքի կարիքները, մայրը որդուն և երկու դուստրերին հանձնեց մանկատուն:

Շիրազը մեծացել է փողոցներում, շուկաների ճանապարհին: Ջուր է ծախել, փորձել է արհեստ սովորել:

1925-1932 թվականներին Գյումրիում ստացել է յոթնամյա կրթություն: 1931-ին «Մասնագործ» թերթում, ուր աշխատում էր որպես ցրիչ, տպագրվում է նրա առաջին թոթովանքը: Չի ուշանում նաև առաջին գիրքը՝ «Գարնանամուտ», որը լույս է տեսնում 1935 թվականին և միանգամից Շիրազին դարձնում հայտնի բանաստեղծ: Նույն թվականին տպագրվում է նաև նրա «Միամանթո և Խջեզարե» պոեմը՝ դարձյալ մեծ հաջողություն բերելով նրան:

1936-1941 թվականներին Շիրազը ուսանում է Երևանի պետական համալսարանի բանասիրական բաժանմունքում: Հետագա ամբողջ կյանքի ընթացքում նա եղել է ազատ ստեղծագործող:

Տպագրվում են նորանոր գրքեր՝ «Երգ Հայաստանի» (1940), «Բանաստեղծի ձայնը» (1942), «Երգերի գիրք» (1942), «Լիրիկա» (1946): Լույս աշխարհ է գալիս «Բիբլիական» պոեմը (1946): Շիրազին մեծ հռչակ բերեցին «Բնար Հայաստանի» ծողովածուի երեք հատորները (1958, 1964, 1974): Դրան էլ հաջորդեցին «Հայոց դանթեականը» պոեմը (1965, Բեյրութ, 1990, Երևան) և «Հուշարձան մայրիկիս» (1968) ծողովածուն:

Շիրազի անունը նախ և առաջ կապվում է հայրենասիրական քնարերգության հետ: Նա փառաբանեց հայրենիքը, ծխացրեց պատմական Հայաստանի կարոտն ու հիշողությունը՝ իր պոեզիայի գլխավոր խորհրդանիշ դարձնելով Արարատը:

Շիրազի պոեզիան արտակարգ հարուստ է սիրային տրամադրություններով: Նա երգեց ազատ ու ազնիվ սերը, որ վեհացնում ու բարձրացնում է մարդուն: Նա փորձեց ճանաչել մարդկային կյանքի առեղծվածը՝ գրելով «Բիբլիական» փիլիսոփայական պոեմը, բազմաթիվ բանաստեղծություններ ու քառյակներ:

Շիրազն այն բանաստեղծներից էր, որ գրեց մոր մասն՝ մորը դիտելով որպես մի հավերժական աստվածություն, որը որքան երկրային, նույնքան էլ երկնային է: «Հուշարձան մայրիկիս» գիրքը նրա մոր և ընդհանրապես մայրերի մեծարումն էր:

Շիրազը՝ որպես բանաստեղծ, գալիս էր մեր ժողովրդի ընդերքից: Իսկ նրա գրական ավանդույթների հիմքը ամբողջ հայ գրականությունն է, հատկապես հայ միջնադարյան պոեզիան:

Շիրազն ստեղծեց մի յուրահատուկ քնարերգություն, որը և՛ պարզ է ժողովրդական երգի նման, և՛ բարդ, ինչպես ժամանակակից մարդու ներաշխարհը: Նրա պատկերները վարար են, լիքը և ճոխ: Բնատուր հզոր ձիրքը մշտապես առաջնորդել է նրան դեպի պոեզիայի աշխարհը և նպաստել բացահայտելու ժամանակակից մարդու հոգու ու մտքի առեղծվածները: Ամենակարևորը՝ նա փորձեց աշխարհի գաղտնիքները ճանաչել ժողովրդական իմաստությամբ և եր-

բեք չսխալվեց: Ընդհակառակը՝ դրա փոխարեն արժանացավ ոչ միայն ժողովրդական, այլև համաժողովրդական սիրո:

Ժողովրդի հոծ բազմությունն էլ նրան վերջին ճանապարհ դրեց: Շիրազը մահացել է 1984 թվականի մարտի 14-ին Երևանում և թաղվել հայոց մեծերի պանթեոնում:

ՀՈՎՀԱՆՆԵՄ ՇԻՐԱԶԻ ՄԱՍԻՆ

Ուշադրություն պիտի դարձնել այս պոետի վրա: Պիտի դաստիարակել նրան, մեծ ապագա է խոստանում: Գուրգուրեցեք, ընդհանուր աղմուկի մեջ ժողովրդական լիրիկա է բերում:

Շիրվանգադե

«Շիրազը Երևանի և ամբողջ աշխարհի հայ բանաստեղծներուն մեջ ինքնուրույն տեղ մը գրավելու ներշնչյալ հմայիչ քնարերգակ մեկն է:

Արշակ Չոպանյան

Շիրազը հոյակապ դեմք է մեր պոեզիայի Պառնասում, հորդաբուխ ու ճշմարիտ բանաստեղծ, նրա ամեն մի բանաստեղծությունը մի գյուտ է զարմանալի պատկերներով: Համաշխարհային գրական գոհարներ եթե կազմվեն, ես մեծ սիրով տեղ կգայի «Էքսպրոմտին», «Բիբլիականին» և այլ բանաստեղծությունների:

Հ. Շիրազը հայ ժողովրդի վշտի դարավոր մառախուղից ծագած աստղն է:

Ավետիք Իսահակյան

Շիրազի «Բիբլիական» պոեմը հայ գրականության մեջ անսովոր երևույթ է, փիլիսոփայական իմաստով չափազանց խոր, այն միաժամանակ ունի բարձր գեղարվեստական գրվածքի բոլոր արժանիքները՝ Շիրազին բնորոշ պատկերների թարմությունը և ինքնատիպությունը... Շիրազը մեր սրտից է խոսում. ինչքան ազգային, այնքան համամարդկային է նա:

Վիկտոր Համբարձումյան

Շիրազն առեղծված է: Բնության թելադրանքով իր մեջ պաշտպանում էր մեծ բանաստեղծին: Նրան տեսել եմ ներաշխարհը սուզված վիճակում. աղքատը նստած էր, հիսուն ռուբլի տվեց գնաց: Հետո լաց եղավ աշխարհի ճակատագրի համար՝ ինչու՞ ինքը ունենա, իսկ նա չունենա:

Շիրազը հանճար է: Բնականից օժտված, սարսափելի խելոք մարդ էր:

Շիրազի բոերանից բառը թռչում է, ինչպես թռչունը բնից:

Շիրազին հիշում ենք, որպեսզի նրանով մեզ հանենք ճահիճից: Շիրազին հիշելով՝ կարեկցում ենք ինքներս մեզ:

Համր Սահյան

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Երբ՞ է ապրել Հ. Շիրազը: Որտեղի՞ց է ծագում նրա Շիրազ գրական անունը:
2. Թվարկե՛ք Շիրազի հիմնական ժողովածուները:
3. Բնութագրե՛ք Շիրազին որպես բանաստեղծ:
4. Ի՞նչ հիմնական մոտիվներով է նա ստեղծագործել:
5. Ո՞րն է Շիրազի քնարերգության հիմքը, ի՞նչ գրական ավանդույթներից էր նա գալիս:
6. Ովքե՞ր ի՞նչ կարծիքներ են հայտնել Շիրազի մասին:

ԹԱԳԱԴՐՈՒՄ

Հոգիս արթնացավ հարավի բույրից,
Ինձ է դուրս կանչում զեփյուռը նրա,
Չյունն էլ արևի ջահել համբույրից
Ուրախ լալիս է դաշտերի վրա:
Ելնեմ, ծաղկունն է ձնծաղիկների,
Չյունից ինձ նայող աչերն համբուրեմ,
Գնամ հետևից ծիծեռնակների,
Նրանց հետ ետ գամ, գարունը բերեմ,
Բարձրանամ կապույտ գահը լեռների,
Արևն իբրև թագ իմ գլխին առնեմ,
Հագնեմ ծիրանին արշալույսների,
Գարնան թագավոր ինձ թագադրեմ,
Եվ հրովարտակ արձակեմ մի խիստ,
Որ աղբյուրները հավերժ կարկաչեն,
Որ ծաղկեն լեռներն իմ արևանիստ,
Որ ծով դաշտերը հավերժ կանչեն,
Որ հավերժանան գմբուխտ դրախտով,
Որ բեկվի իմ դեմ խորհուրդը մահվան,
Որ մարդը ցնծա հավերժի բախտով:
Եվ ես երջանիկ կլինեմ այնժամ,
Եվ գուցե այնժամ ես մահը սիրեմ,
Երբ անմահ լինեմ, երբ հավերժանամ,
Երբ գարունները ողջ թագավորեմ...

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչի՞ մասին է «Թագադրում» բանաստեղծությունը:
2. Ի՞նչպես կմեկնաբանեք «Հոգիս արթնացավ հարավի բույրից» պատկերը:
3. Գարնան գալուստն ինչպե՞ս է նկարագրվում այս պատկերի մեջ.

*Չյունն էլ արևի ջահել համբույրից
Ուրախ լալիս է դաշտերի վրա:*

Ինչպե՞ս կմեկնաբանեք «ջահել համբույր» պատկերը:

4. Արթնանում է ամբողջ բնությունը, բնության հետ՝ նաև մարդը, որն իրեն տեսնում է բնության ծաղկունքի մեջ: Ինչպե՞ս է բանաստեղծը ներկայացնում այդ հատվածը: Ինչպե՞ս է մարդը իրեն գարնան թագավոր թագադրում:
5. Գարնան թագավորը ի՞նչ հրովարտակ է արձակում:
6. Շիրագը երագում էր հավերժական գարուն, որ նշանակում է լուծել նաև մահվան առեղծվածը: Դա էլ նշանակում է, որ մարդը հավերժական կյանք պիտի ունենա: Նա գրում է.

*Եվ գուցե այնժամ ես մահը սիրեմ,
Երբ անմահ լինեմ, երբ հավերժանամ,
Երբ գարունները ողջ թագավորեմ...*

Հնարավո՞ր է Շիրագի երագած մարդու անմահությունը:

7. Շիրագի ժողովածուներից առանձնացրե՛ք գարնան, զարթոնքի, բնության մեծարման շնչով գրված բանաստեղծություններ, կարդացե՛ք և փորձե՛ք հասկանալ դրանց իմաստը:
8. Դո՛ւրս գրե՛ք այս բանաստեղծության մեջ կիրառված մակդիրները:

9. Պատկերավորման ի՞նչ միջոց է կիրառված «Արևն իբրև թագ իմ գլխին առնեմ» տողում:

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԵՐԳԸ (Վերելք)

Աչքերիս մեջ՝ գարնան օրեր,
Ճամփես՝ բախտիս սարերն ի վեր,
Ելնում եմ ես քարերն ի վեր,
Ելնում եմ ես սարերն ի վեր,
Քարեր, սարեր, դարերն ի վեր:

Բախտս աստղերն են վեր պահել,
Ջահել եմ ես ու ձիս ջահել,
Չեմ նկատում քարեր ճամփիս,
Չեմ նկատում սարեր ճամփիս,
Քարեր, սարեր, դարեր ճամփիս:

Շանթն է բեկում ճակտիս վրա,
Մահ՝ չգիտեմ՝ կա՞ թե՞ չկա,
Ելնում եմ ես ահերն ի վեր,
Ելնում եմ ես մահերն ի վեր,
Ահեր, մահեր, գահերն ի վեր:

Աչքերիս մեջ՝ գարնան օրեր,
Ճամփես՝ դեպի աստղերն անմեռ.
Ինձ ելնելու քարեր կան դեռ,
Ինձ ելնելու սարեր կան դեռ,
Քարեր, սարեր, դարեր կան դեռ...

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Բնույթով ինչպիսի՞ բանաստեղծություն է «Հայ ժողովրդի երգը»:
2. Ինչի՞ խորհրդանշաններ են քարերը, սարերը, դարերը, ահերն ու գահերը:
3. Ժողովրդի պատմական երթի ճանապարհին Շիրազը ժխտում է անգամ մահվան գաղափարը: Ինչպե՞ս է ժխտում և ի՞նչ պատկերներով:
4. Ի՞նչ պատկերներով է բանաստեղծը ներկայացնում հայ ժողովրդի անցած պատմական ճանապարհը:
5. Կարո՞ղ եք այս բանաստեղծությանը երաժշտություն հարմարեցնել և երգել քայլերգի շեշտադրությամբ:

ԷՔՍՊՐՈՍՏ (Պոեմ)

Մենք խաղաղ էինք մեր լեռների պես,
Դուք հողմերի պես խուժեցինք վայրագ:

Մենք ձեր դեմ ելանք մեր լեռների պես,
Դուք հողմերի պես ոռնացիք վայրագ:

Բայց մենք հավերժ ենք մեր լեռների պես,
Դուք հողմերի պես կկորչիք վայրագ:

Էքսպրոմտը գրական փոքրածավալ երկ է, որ նշանակում է հանպատրաստից, հանկարծակի գրված ստեղծագործություն: Էքսպրոմտի վարպետ էր Եղիշե Չարենցը: Այս էքսպրոմտը Շիրազը գրել է 1941 թվականին ընդդեմ ֆաշիստական հորդանների, ընդդեմ բոլոր նրանց, ովքեր սանձազերծեցին Երկրորդ համաշխարհային պատերազմը, որի դեմ իր լեռների պես ոտքի կանգնեց նաև հայ ժողովուրդը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ի՞նչ է էքսպրոմտը:
2. Ե՞րբ է գրվել Շիրազի «Էքսպրոմտ»-ը և ի՞նչ առիթով:
3. Ի՞նչ խորհրդանշաններ է օգտագործել բանաստեղծը:
4. Հավերժական լեռների և ժամանակավոր հողմերի պատկերը իմաստային ինչպիսի՞ անցումներով է նա ներկայացրել:
5. Այս փոքրածավալ էքսպրոմտը բանաստեղծը համարել է պոեմ. ինչո՞ւ:

ԿՏԱԿ

Որդիս, քեզ ի՞նչ կտակեմ, ի՞նչ կտակեմ, իմ բալիկ,
Որ ինձ հիշես վշտի մեջ, թե խինդի մեջ քո գալիք.
Գանձեր չունեմ, բայց գանձն ի՞նչ, գանձը լույսն էր աչքերիս,
Դու ես միակ իմ գանձը, դու ես գանձը գանձերիս:
Քեզ այնպիսի գանձ կուզեմ ես կտակել հայրաբար,
Որ չի կարող կտակել ուրիշ երկրում ոչ մի հայր,-
Ես քեզ այն եմ կտակում, որին այս մեծ մեր դարում
Փոքրիկ մարդիկ են բանտել ու շղթայել ամպերում:
Քեզ մեր սարն եմ կտակում, որ դուրս բերես սև ամպից,
Որ տուն բերես շալակած արդարությամբ մեր անբիծ,
Ու կբերես, իմ բալիկ, թեկուզ քո խեղճ թաթիկով
Մեր սարն այս կողմ շուռ կտաս՝ արդարությանդ ուժն է ծով:
Ու երբ բերես, իմ բալիկ, սիրտս էլ շիրմից կհանես,
Կբարձրանաս ու սիրտս ազատն ի վեր կտանես
Ու կթաղես իմ սիրտը ձյունների տակ Մասիսի,
Որ շիրմում էլ՝ դարավոր հուր կարոտից չմրսի:
.....
Քեզ Մասիսն եմ կտակում, որ դու պահես հավիտյան,
Որպես լեզուն մեր հայոց, որպես սյունը քո հոր տան:

ԻՄԱՑԻՐ

Արարատ սարը դարեր շարունակ համարվել է հայ ժողովրդի գոյության խորհրդանշանը: Արարատը երգվել ու փառաբանվել է բազմաթիվ բանաստեղծների կողմից: Բազմաթիվ նկարիչներ են վրձնել նրա վեհատեսիլ գագաթները: Ըստ աստվածաշնչյան աշխարհաստեղծումի՝ մարդկության երկրորդ ծնունդը կապվում է Արարատի հետ:

Համաշխարհային մեծ ջրհեղեղից հետո Նոյը իր տապանով բարձրացավ Արարատի գագաթը և փրկեց մարդկությանը: Նրա Մեմ, Քամ, Հաբեթ որդիներից ծնունդ առան աշխարհի ազգերը, այդ թվում՝ հայ ժողովուրդը, որը սերվեց Հաբեթից:

Արարատը հանգած հրաբուխ է, բարձրությունը 5165 մ: Հարաբերական բարձրությամբ (4300 մ) աշխարհի ամենաբարձր լեռն է: Արարատը երկգագաթ է՝ մեծը կոչվում է Մասիս (5165 մ), փոքրը՝ Սիս (3925 մ):

Մեր հները օգտագործել են Ազատն Մասիս արտահայտությունը: Ազատ՝ զենդերեն նշանակում է սրբազան, պաշտելի, ազնվական: Որպես մարդկության փրկության ապավեն «Աստածաշունչ» մատյանում հիշվելու համար քրիստոնեության շրջանում ևս Արարտը համարվել է սուրբ սար:

Որպես մարդկության փրկության ապավեն «Աստվածաշունչ» մատյանում հիշվելու համար քրիստոնեության շրջանում ևս Արարատը համարվել է սուրբ սար:

Արարատի հետ բազմաթիվ ավանդություններ են կապված: Մեր մատենագրության մեջ Արարատը հիշատակվում է Ագաթանգեղոսի, Խորենացու և մյուսների երկերում: Նարեկացու համար Արարատը «մեծության կշռորդ էր», Թովմա Արծրունու համար՝ «Մեծավայելուչ թագավոր»: Այսպես Արարատին անդրադարձել են գրեթե բոլոր հայ գրողները: Իսկ Խաչատուր Աբովյանը 1829 թվականին Ֆրդրիխ Պարրոյի հետ բարձրացել է Արարատի գագաթը:

Շիրազն իր «Կտակ» բանաստեղծության մեջ կոչ է անում ազատել Արարատը գերությունից, որովհետև Երևանից վեհ ու գեղեցիկ տեսքով երևացող մեր սրբությունը բռնագրավվել է Թուրքիայի կողմից:

Շիրազը նաև կտակում է իր սիրտը թաղել Արարատի ձյունների մեջ: Նրա այդ բաղձանքը իրականացվել է: 2008 թվականին հայ լեռնագնացների մի խումբ բարձրացել է Արարատ, իր հետ տարել Շիրազի սիրտը և թաղել հավերժական ձյունների մեջ:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ի՞նչ գիտես Արարատ սարի մասին:
2. «Կտակ» բանաստեղծության մեջ Շիրազը ո՞ւմ է կտակում Արարատը և ինչու՞:
3. Ի՞նչ է Արարատը հայ ժողովրդի համար:
4. Արարատը, Մասիսը բազմիցս հանդիպում են Շիրազի բանաստեղծությունների մեջ: Գտե՛ք, առանձնացրե՛ք և կարդացե՛ք դրանք՝ հասկանալու համար Շիրազի «Կտակ»-ի էությունը:

(Մորս գերեզմանը)

Չյուն է իջնում, կուտակվում
Մորս վրա վերևից,
Ասես փետուր է թափվում
Հրեշտակի թևերից:

Գերեզմանի այս հեռվում
Մեղմ դիզվում է թախծալից,
Մորս վրա մարմարվում,
Շիրմաքար է թվում ինձ:

Այնպես մեղմիկ է դնում
Աստված փաթիլ փաթիլին,
Որ չցավի ողջ կյանքում
Մորս ցաված սիրտը հին:

Փաթիլվում է մեղմաձյուն,
Մարմարվում է մեղմաքար,
Աստված ինքն է ստեղծում
Մորս վրա շիրմաքար:

Հ. Շիրազը մի ամբողջ գիրք է գրել՝ նվիրված մորը: Այդ գիրքը կոչվում է «**Հուշարձան մայրիկիս**»: Մայրական սերը հայ քնարերգության մեջ պատկերել են շատերը: Կարելի է հիշել Ա. Իսահակյանի բանաստեղծությունները, Ե. Չարենցի «Մորս համար գագեկ»-ը:

Այս ասպարեզում Շիրազը հզոր մի քայլ արեց դեպի առաջ: Մայրը ամեն ինչ է նրա համար՝ և՛ հույսի դուռ, և՛ տան մատուռ, և՛ սեղանի հաց, և՛ տան Աստված: Մայրը նրա համար մարդկության, խղճի, բարության մի մեծ մարմնացում է, մի բուռ մայր Հայաստան, մի ամբողջ աշխարհ: Ահա թե ինչու նրա մահը տիեզերական ողբի է նման: Դրա համար է բանաստեղծը գրում.

*Անցո՛րդ, խոնարհիր
Գլուխը քո սեզ.
Այստեղ հանգչում է
Մի բուռ տիեզերք...*

«Չյուն է իջնում, կուտակվում» տողով սկսվող բանաստեղծությունը Շիրազը չի վերնագրել, բայց ենթավերնագրել է «Մորս գերեզմանը»: Նա Յույց է տալիս, թե ինչպես բնությունը ձյան փաթիլներից շիրմաքար դնում մոր հողաթմբին: Նուրբ փաթիլները մեղմ կուտակվում են իրար վրա, այնպես, որ հանկարծ ցավ չպատճառեն մորը, որն ամբողջ կյանքում հոգս ու ցավ է քաշել:

Բանաստեղծությունը Շիրազը հասցրել է հանդիսավոր ծիսական արարողության և պաշտամունքի շունչ ներարկել նրան:

Այս բանաստեղծությունը **եղերերգ է** (էլեգիա): Եղերերգը բովանդակությամբ տխուր բանաստեղծությունն է: Ողբից տարբերվում է նրանով, որ եղերերգը թախծոտ է և այդ թախիծի մեջ կա լուսավոր ու վեհ մի բան:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Մորը նվիրված ի՞նչ գիրք է գրել Հ. Շիրազը:
2. Ինչպիսի՞ պատկերներ է օգտագործում «Չյուն է իջնում, կուտակվում» բանաստեղծության մեջ:
3. Այս բանաստեղծության մեջ ո՞վ է մոր վրա շիրմաքար դնում և ինչպե՞ս:
4. Ո՞վ է մայրը Շիրազի համար, և, ընդհանրապես, մոր կերպարով ի՞նչ է խորհրդանշում բանաստեղծը:
5. «Հուշարձան մայրիկիս» գրքից առանձնացրե՛ք մորը նվիրված մի քանի այլ բանաստեղծություն և ձեզ համար կազմե՛ք մայրական բանաստեղծությունների փոքրիկ մի շարք:

ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆ (1914-1993)

Համո Սահյանը բնության մեծագույն քնարերգու է: Աստված նա ասում էր մայր բնությանը, ինչն էլ նրա համար դառնում է մարդու էությունը բացահայտելու հիմնական չափ ու չափանիշ: Նրա ստեղծագործության մեջ բնությունը ձեռք է բերում մարդկային գծեր, իսկ մարդու էությունն էլ նմանվում է բնությանը: Այս փոխադարձ անցումների մեջ էլ բացահայտվում են մարդկային ներաշխարհի ամենախոր ծայրերը:

Համո Սահյանը ծնվել էր որպես Հմայակ Սահակի Գրիգորյան: Հմայակը դարձել է Համո, իսկ Սահյան ազգանունն ստեղծել է հոր՝ Սահակի անունից:

Ծնվել է 1914 թվականի ապրիլի 14-ին Մխիթանի շրջանի Լոր գյուղում: Ծնողները բնաշխարհիկ պարզ աշխատավոր մարդիկ էին: Սա մի նահապետական գերդաստան էր, ուր մեծանում էր ևս չորս երեխա: Կրթությունն ստացել է Լորի դպրոցում: Դ-ա այն դպրոցն է, որտեղ 1915-1916 թվականներին աշխատել էր Ակսել Բակունցը, և որին դեռևս հիշում էին որպես Ալեքսանդր վարժապետ: Ակսել Բակունցի շունչը կենդանի ապրել է Համո Սահյանի հոգում:

Մանկության տարիները նաև բնությունից դասեր առնելու ժամանակ էր: 10-12 տարեկան երեխան նաև տան աշխատավոր էր, որ պիտի հորը օգներ տնտեսության բոլոր հարցերում: Այսպես դաշտում ու սարում աշխատելիս էլ նա ճանաչել է բնության աշխարհը: Մանկության տարիների տպավորությունները եղել են նրա և՛ կենդանի դպրոցը, և՛ գիտելիքների համալսարանը: Ահա այս տարիների տպավորություններից ծնված հրաշալի մի բանաստեղծություն.

Կածանն ինձ տաներ անտառը՝ ցախի,
Անտառն իմ գլխին ուլունքներ թափեր:
Սուլոցի փոխվեր սարսուռն իմ վախի,
Եվ ոչ մի շշուկ ոտքս չկապեր:

Կացինս թողած կաղնու փչակում,
Պարանս ժայռի փեշերին թողած,
Շապիկիս թևքը՝ մասրենու ճանկում,
Փեշը մոշենու փշերին թողած՝

Թռչեի թրջված հավքի ետևից
Եվ չբռնեի մինչև իրիկուն...
Հարցնեի հողից, ջրից աստղերից,
Գտնեի կածանն ու դառնայի տուն:

Հայրս ինձանից բան չհարցներ,
Չնայեի ոչ մի խնդիրք ու լացի,
Ինձ «պարան, կացին ու ցախ դարձներ»...
Եվ մայրս կանչեր իրիկնահացի:

Այս տարիներից էլ ապագա բանաստղծի մեջ ձևավորվում է երկու հատկանիշ՝ առարկայական աշխարհի գեղարվեստական ընկալում և տեսածը որպես տպավորությունների, փոխաբերությունների ու զուգորդությունների շարք պատմելու արվեստ:

1927 թվականին Սահյանը տեղափոխվում է Բաքու: Այնտեղ ավարտում է Ստեփան Շահումյանի անվան հայկական միջնակարգ դպրոցը, այնուհետև 1937-ին՝ երկամյա ուսուցչական դասընթացը, իսկ 1939-ին հեռակա ուսուցմամբ՝ Բաքվի մանկավարժական ինստիտուտի բանասիրական բաժանմունքը:

1939-1941 թվականներին Բաքվում աշխատել է «Խորհրդային գրող» ամսագրի խմբագրությունում: Այստեղ էլ տպագրվում են նրա առաջին բանաստեղծությունները: Թեև սկսել է գրել

12 տարեկանից, բայց իրեն համարում է 1940-ականների բանաստեղծական սերնդի ներկայացուցիչ: Փաստորեն, 1930-ական թվականները նրա համար եղել են գրական նախափորձի տարիներ:

1941-1945 թվականներին մասնակցել է Երկրորդ համաշխարհային պատերազմին և Կասպից ու Սև ծովերում ծառայել է ռազմածովային նավատորմում: Այստեղ՝ Վոլգայի ափին, նավի տախտակամածին միայնակ կանգնած, նա տեսիլքի պես տեսնում է իրենց գյուղի հայրենի բնաշխարհը և գրում «Նաիրյան դալար բարդի» բանաստեղծությունը: Գրվում են նաև նորանոր գործեր, որոնցից էլ մի քանի տարի անց ծնվում և Երևանում տպագրվում է առաջին գիրքը՝ «Որոտանի եզերքին» (1946): Որոտան գետը, որ հոսում էր նրա բնաշխարհով, խորհրդանշում է բանաստեղծի գրական ուղղվածությունը:

1951-ին Համո Սահյանն ընտանիքով փոխադրվում է Երևան: Աշխատում է «Ավանգարդ» թերթում, «Ոգնի» հանդեսում: 1965-1967 թվականներին եղել է «Գրական թերթ»-ի գլխավոր խմբագիրը: 1967-1988 թվականներին Հայաստանի կառավարությանն առընթեր Պետական մրցանակներ շնորհող հանձնաժողովի քարտուղարն էր: Եղել է Հայաստանի Գերագույն խորհրդի պատգամավոր: 1975-ին «Սեզամ, բացվիր» գրքի համար արժանացել է Հայաստանի Պետական մրցանակի դափնեկրի կոչման:

Սահյանը շատ էր սիրում շրջագայել հայրենի բնաշխարհում: Բնաշխարհը նրա պատկերային մտածողության շտեմարանն էր:

Համո Սահյանի ստեղծագործական ուղին թեև երկար տևեց, բայց այն շատ միասնական է: Սահյանն իրեն համարում էր ժողովրդական ոգու բանաստեղծ և ըստ ամենայնի գալիս էր շարունակելու Հովհաննես Թումանյանի գրական ավանդույթները: Այս կապակցությամբ գրել է. «Իմ բանաստեղծական աշխարհի ճանապարհը ցույց է տվել Թումանյանը, իսկ բանալին Եսենինն է տվել» (Մերգեյ Եսենինը ռուս բնապաշտ բանաստեղծ էր):

Տարիների ընթացքում Սահյանի գրական համբավը դահլիճներ ու երկրպագուներ նվաճեց՝ նրան բերելով համազգային ճանաչում ու պատիվ:

Համո Սահյանի հիմնական ժողովածուներն են՝ «Մայրամուտից առաջ» (1964), «Զարափների երգը» (1968), «Սեզամ, բացվիր» (1972), «Իրիկնահաց» (1977), «Դադի ծաղիկ» (1986), «Ինձ բացակա չդնեք» (1988):

Ինչպես է ծնվում Համո Սահյանի բանաստեղծությունը: Ըստ նրա՝ «Բանաստեղծությունը սովորաբար հայտնվում է հանկարծակի: Մի տողը գալիս է ինքն իրեն, որպես աստվածային պարզ (պարտադիր չէ, որ բանաստեղծության առաջին տողը լինի): Մնացածը գրում ես ինքդ: Եվ եթե գրածդ տողերը համազոր են ինքնիրեն եկած տողին, ուրեմն բանաստեղծությունը հիմնականում արդեն կա: Բանաստեղծությունը սովորական վիճակում հայտնվում է, երևի, սովորական առօրյայում...»: Նա միշտ գերապատվություն էր տալիս «Նորին մեծությունն առաջին տողին», «ինքնեկ տողին»: Ըստ նրա՝ «Այդ տողը կարող է դառնալ բանաստեղծության կամ տանիքը, կամ էլ այն ժամանակավոր սանդուղքը, որ տունը կառուցելուց հետո այլևս պետք չի գալիս»:

Սահյանն այն համոզման էր, որ ընթերցողը գրողին հավատում է միայն այն դեպքում, «երբ նրա բանաստեղծության մեջ նրա կյանքն է, նրա ճակատագիրը»: «Ես գրում եմ իմ մասին, շարունակում է նա: Եվ այդ իմ մասին գրած բանաստեղծություններում ուրիշները ճանաչում են իրենց»:

Սահյանի համար արվեստի գերագույն օրենքը բնականությունն էր, ինչն էլ որոշում է նրա խոսքի ձևը, տողերի դասավորությունը, հանգի դերը, կրկնությունների նշանակությունը, լեզվի ու պատկերի յուրահատկությունը: Այս ամենով Սահյանը միասնական շնչի, միաձույլ պատկերի բանաստեղծ է: Նյութը նույնն է, նույնն է և ինքը: Այս ամենով հանդերձ Համո Սահյանի քնարերգության մեջ առանձնանում են բովանդակային մի քանի ուղղություններ՝ երգ երգի մասին, բնության երգը, Հայաստանի երգը, աշխատանքի երգը, սիրո երգը, և այս ամենը միասնաբար՝ որպես մարդու և հավերժության երգ:

Համո Սահյանը մահացել է 1993 թվականի հուլիսի 16-ին և թաղվել Երևանում, հայոց մեծերի պանթեոնում:

«Բանաստեղծություն, նույնիսկ լավ բանաստեղծություն շատերն են գրում, բայց պոեզիա են մտնում քչերը, նրանք, ովքեր գալիս են խորհրդանշանների, պատկերների, բառի, շեշտի իրենց համալիրով, իրենց այբուբենով, և այս քչերից պոեզիայի մեջ մեծ են դառնում և մեծ են կոչվում այն եզակիները, ում համալիրը, ում այբուբենը հնարավոր լրիվությամբ վերծանում է սեփական հոգու, այո, հենց բեռնագիրը: Այլապես՝ հոգով հարուստ, ներքուստ բանաստեղծ այնքան մարդիկ կան, որոնք այդպես էլ բանաստեղծ չեն դառնում, քանի որ պոեզիան ճամփորդություն է դեպի ինքը, բանաստեղծի ինքնահայտնագործումն է, ինքնահայտնագործմամբ՝ մի նոր աշխարհի հայտնագործումը: Սահյանը մեծ բանաստեղծ է: Սահյանը այսօրից ավելի վաղվա բանաստեղծ է:

Հրանտ Մաթևոսյան

Համո Սահյանի բանաստեղծական ակնառու արժեքներից մեկը պետք է համարել նաև նրա բանաստեղծական բարձր կուլտուրան, բանաստեղծություն կառուցելու նրա վարպետությունը: Համո Սահյանը գիտի կառուցել սլացիկ ու սահուն տող, կուռ քառյակ, գիտե վարպետորեն հանգավորել և ժամանակին ավարտել բանաստեղծությունը:

Վահագն Դավթյան

Համո Սահյանը Կովկասի ժամանակակից խոշորագույն բանաստեղծներից է: Գլխավորը նրա մեջ իսկությունն է:

Կայսին Կալիև, Բալկար բանաստեղծ

Իր ողջ գունեղ նկարչականությամբ հանդերձ Սահյանի պոեզիան բոլորովին էլ նկարչագեղ-գեղագարդային չէ, իր ողջ պարզասրտությամբ հանդերձ իմաստուն է, իր ողջ պարզությամբ հանդերձ բարդ է, կատարման թեթևությունը չի բացառում նրբությունն աչքի՝ զգացմունքի՝, տեխնիկայի՝:

Ալլա Մարչենկո, ռուս բանաստեղծ

Քար: Եգ: Գետ: Քարափ: Մասրենի: Թռչուն: Ամպ: Արևամուտ: Ճանապարհ: Երգ: Այգաբաց...

Ես դիտմամբ եմ առանձնացնում այս գոյականները: Դուք վերցնում եք դրանք իբրև բնության պարզ: Եվ սովորական առարկայի մեջ բացում եք նրա աշխարհը: Բայց առարկայի աշխարհը չէր բացվի, եթե դրա հետ միաժամանակ չբացվեր ձեր աշխարհը, պոեզիայի աշխարհը:

Ձեր բանաստեղծություններում պարզը դառնալով բարդ և բարդը դառնալով պարզ, հոգի չեն հանում, հանելուկներ չեն առաջադրում:

Դուք խոսքի նկարիչ եք: Բնանկարի մեջ դուք կարողանքում եք տալ դիմանկարը, դիմանկարի մեջ՝ բնանկար: Դուք գույների վարպետ եք: Գույնը արտահայտում է մարդու հոգեկանը, նրա զգացմունքներն ու մտքերը: Գիծը և գույնը կրկնում են հեղինակի ներքին շարժումը:

Լև Օզերով, ռուս բանաստեղծ

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ե՞րբ և որտե՞ղ է ծնվել Համո Սահյանը: Ինչպե՞ս է ձևավորվել նրա գրական անունը և ազգանունը:
2. Ի՞նչ դեր է կատարել գյուղն ու բնաշխարհը Սահյանի բանաստեղծական ձևավորման գործում:
3. Աշխատանքային ի՞նչ գործունեություն է ծավալել Սահյանը:

4. Որո՞նք են նրա հիմնական ժողովածուները:
5. Ինչպե՞ս է Հ. Սահյանը բացատրում բանաստեղծության ծնունդը:
6. Ովքե՞ր և ինչպիսի՞ կարծիքներ են հայտնել Համո Սահյանի մասին:
7. Համո Սահյանի բանաստեղծություններին ծանոթանալուց հետո դուք ևս փորձեք ձեր ինքնուրույն կարծիքը հայտնել նրա ստեղծագործության վերաբերյալ: Նրա ո՞ր բանաստեղծություններն են ձեզ դուր գալիս և հատկապես ինչո՞ւ:

ԱՆՈՒՆԴ ՏԱԼԻՍ

Հայաստա՛ն, անունդ տալիս,
 Ժայռի մեջ մի տուն եմ հիշում,
 Ալևոր կամուրջի հոնքին
 Ծիծառի մի բույն եմ հիշում,
 Թեքված մի մատուռ եմ հիշում
 Եվ բերդի տեղահան մի դուռ,
 Ավերակ տաճարի մի վեմ
 Եվ բեկված մի սյուն եմ հիշում:

Հիշում եմ լքված մի թոնիր,
 Բերանին մամռոտած մի խուփ,
 Մամռոտած որմի խոռոչում
 Մասրենու վարսաթափ մի թուփ,
 Աշխարհի քարերին մաշված,
 Աշխարհից խռոված մի ցուպ,-
 Եվ հեռվում ինչ-որ ուշացած
 Ձիերի դոփյուն եմ հիշում:

Արևոտ մի սար եմ հիշում,
 Ճակատին ձյունի պատառիկ,
 Սարն ի վար բարակ մի առու-
 Շուրթերին հայրեն ու տաղիկ,
 Ցորենի կանաչ արտի մեջ
 Առվույտի կապույտ մի ծաղիկ
 Եվ արտի եզրին՝ մենավոր
 Մի բարդու շրշյուն եմ հիշում:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Հայաստանի անունը տալիս ի՞նչ պատկերներ է հիշում բանաստեղծը:
2. Բանաստեղծի թվարկած պատկերները, ըստ ձեզ, բնորո՞շ են Հայաստանի բնաշխարհին:
3. Ինչո՞ւ է մատուռը թեքված, բերդի դուռը՝ տեղահան, տաճարը՝ ավերակ:
4. Ինչո՞ւ է թոնիրը լքված և բերանի խուփը մամռոտած: Այդ պատկերը ձեզ ի՞նչ է հուշում:
5. Վերջին տան մեջ Հայաստանի բնանկարն է: Կարո՞ղ եք այն համեմատել Մարտիրոս Սարյանի, Հակոբ Հակոբյանի Հայաստանը պատկերող նկարների հետ:
6. Դո՛ւրս գրեք այս բանաստեղծության մեջ օգտագործված մակդիրները:

ՈՒՐ ՈՐ ՆԱՅՈՒՄ ԵՄ

Ուր որ նայում եմ, քարե բարձունք է,
Քարե արցունք է, քարե ժպիտ,
Քարե սարսուռ է ու քարե սունկ է,
Քարե ծաղկունքի քնքշանք է բիրտ:

Քարերի վրա քարե վագրեր են,
Ուր որ է պիտի պատռեն իրար:
Քարե երդեր են, քարե վանքեր են,
Քարե հավքեր են քիվերն ի վար:

Քարե մրրիկ է ու քարե բուք է,
Քարե բողոք է ու քարե բերդ,
Քարե շեփոք է, քարե թմբուկ է,
Քարե թափոք է, քարերի երթ...

Քարե ընդվզում, քարե տանջանք է,
Քարե ավար է, առևանգում...
Քարե զարմանք է ու զարհուրանք է,
Քարե թռիչք է, քարե անկում:

Քարե ամպրոպ է ու ծիածան է,
Քարե լծկան է ու քարե մաճ.
Քարե մագաղաթ, քարե մատյան է,
Քարե խորհուրդ է ու քարե խաչ:

Մեր բաժին աստված, քո սիրտն էլ քար էր,
Որ մեզ քարերը տվիր նվեր,
Բայց քո կյանքը կարճ, մերը երկար էր,
Ու երկարում է քարերն ի վեր:

ԲԱՌԱՐԱՆ

քիվ - հորիզոնական ելուստ, որ դուրս է ձգվում պատի վերին մասին կամ պատուհանների ու որմների վերևից

թափոք - հանդիսավոր երթ, որևէ տեղ գնացող մարդկանց երթ, հոգևորականների թափոք, թաղման թափոք

ավար - պատերազմի ժամանակ թշնամուց գրաված ամեն ինչը, բռնությամբ հափշտակված ունեցվածք, կողոպուտ

առևանգել - աղջիկ փախցնել, հափշտակել, թաքուն տանել

մաճ - արորի կոթը, որից բռելով մաճկալը վար է անում

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Այս բանաստեղծությունն ամբողջությամբ ևս Հայաստանի բնանկարն է: Հայաստանին բնորոշ ի՞նչ հիմնական հատկանիշն է այստեղ դարձել բնապատկերի հիմք:

2. Ինչու՞ է բանաստեղծությունը վերնագրված «Ուր որ նայում եմ»: Ի՞նչ է ուզում ասել դրանով հեղինակը:

3. Այս բանաստեղծության մեջ քանի՞ հատկանիշ է վերնագրված քարին՝ սկսած քարե բարձունք, քարե արցունք, քարե ժպիտ արտահայտություններից: Շարունակե՛ք մեկ առ մեկ արտասանել ու թվարկել:

4. Քանի՞ անգամ է օգտագործված քար բառը և քար բառի այդքան կրկնությունը Հայաստանի մասին ի՞նչ տպավորություն է ստեղծում ձեր մեջ:

5. Ինչպես՞ է ավարտվում բանաստեղծությունը: Ի՞նչ է ուզում ասել հեղինակը վերջին տա մեջ:

6. Համանման բանաստեղծություններով լի են Համո Սահյանի գրքերը: Գտե՛ք, կարդացե՛ք և համեմատե՛ք այս գործի հետ:

7. Ի՞նչ եք հասկանում, երբ Սահյանն ասում է «Ջնար դարձրի քարը» («Չարչարանքի գինը»):

Ծովն էր, գիշերն էր, ես էի և դու,
Չորս հոգով էինք, էլ ոչ ոք չկար,
Թե իմանար մեզ ինչից է զրկում,
Առավոտն ինքն էլ երևի չգար:

Մենք մեզ իրար մեջ որոնում էինք,
Դաշնությունն էինք հյուսում մեր հոգու,
Աստղերից կախված օրորվում էինք...
Ծովն էր, գիշերն էր, ես էի և դու:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ջնարական այս բանաստեղծությունը ի՞նչ տրամադրություն է արթնացնում ձեր մեջ:
2. Գիշերային անդորրն ու ներդաշնակցությունը ի՞նչը կարող էր խանգարել:
3. Ինչպիսի՞ պահ է: Հնարավո՞ր է, որ այդ պահը վերածվի հավերժության: Եթե այ՛ն՝ ինչպե՞ս, եթե ոչ՝ ինչո՞ւ:

ԻՄ ՔԱՐԱՓՆԵՐՆ ՈՒ ԵՄ

Ձեր լռությունը զնգում,
Չրնգում է ձորով մեկ,
Ձեր լռության համերգում
Ինձ բացակա չղնեք:

Համբերություն եմ ասում,
Ակնարկներս կրկնեք,
Համբերության հանդեսում
Ինձ բացակա չղնեք:

Ձեր շուրջը ամպ է, կայծակ,
Քնով չանցնեք, չքնեք:
Քնեցիք էլ, արթնացաք,
Ինձ բացակա չղնեք:

Թվում է, թե կամենաք,
Մի օր երկինք կթռնեք...
Ձեր թռչքի ժամանակ
Ինձ բացակա չղնեք:

Ձեր պնդության պաշարով
Դուք աշխարհներ կսնեք,
Իմ մեղմության պատճառով
Ինձ բացակա չղնեք:

Ես եմ քարե պատարագ,
Ձեզնից սերված, ընդունեք,
Դուք, ձեր կամքին հակառակ,
Ինձ բացակա չղներ:

Ոչ խոստումներ, ոչ երդում,
Չսպասեք ու չքննեք...
Անվերջ, անշարժ ձեր երթում
Ինձ բացակա չղներ:

ԲԱՌԱՐԱՆ

պատարագ - ժամերգություն, քրիստոնեական եկեղեցու գլխավոր պաշտամունքային արարողությունը, փոխաբերաբար՝ խորհրդատվությամբ տոգորված հաճելի երգեցողություն, նվագ

Այս բանաստեղծությունը Համո Սահյանի ամենավերջին գործերից է և գետեղված է «Ինձ բացակա չղներ» (1993) գրքի վերջում: Բանաստեղծն սպասում էր գրքի տպագրությանը, բայց այն լույս տեսավ նրա մահից հետո: Կյանքի ներկա-բացակայի մեջ գրողը պատվիրում է իրեն բացակա չղել, այսինքն՝ իրեն որոնել ոչ թե մեռածների մեջ, այլ ապրողների, որովհետև կենդանի են ու մարդկանց հետ խոսում են նրա բանաստեղծությունները:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Բանաստեղծը ո՞ւմ է ուղղում խոսքը և ի՞նչ է պատվիրում:
2. Ի՞նչ խորհուրդ է կրում իր մեջ «Ինձ բացակա չղներ» տողը և ինչո՞ւ է այն կրկնվում յուրաքանչյուր տան վերջում:
3. Ինչո՞ւ է բանաստեղծն իրեն բնորոշում «Քարե պատարագ» արտահայտությամբ: Ի՞նչ է պատարագը և արդյո՞ք այն կարող է քարե լինել: «Քարե պատարագ» արտահայտությունը համեմատե՞ք «Ուր որ նայում եմ» բանաստեղծության հետ, ուր ամեն ինչ քարե է, քարը անգամ նա քնար դարձրեց, այսքանից հետո արդեն պարզ կդառնա, որ Համո Սահյանի ստեղծագործական աշխարհում հնարավոր է նաև «քարե պատարագ»-ը:
4. Ինչպե՞ս է ավարտվում բանաստեղծությունը: Ի՞նչ էք կարծում «բացակա չղելու» նրա պատվիրանը կատարվե՞լ է թե՞ ոչ:

ԱՆՏԱՌՈՒՄ

Անտառում ամպի ծվեցներ կային,
Կապույտ մշուշներ կային անտառում.
Օրոր էր ասում աշունն անտառին.
Բայց դեռ անտառի քունը չէր տանում:

Շշուկներ կային անտառում այնքա՛ն,
Եվ խոնավ-խոնավ բուրմունքներ կային...
Իրար փաթաթված ստվեր ու կաժան
Ու հետքե՛ր, հետքե՛ր, հետքե՛ր մարդկային:

Եղյամն էր սունկի գլուխն արծաթում,
Մրսում էր կարծես վայրի նշենին,
Ծածանում,
Հանգստանում էր հողմը բացատում՝

Եղնիկի հորթը՝ մամուռը դնչին,
Թռչում էր իր մոր բառաչի վրա,
Եվ որսկանը թաց խոտերի միջին
Կորած հետքերն էր որոնում նրա:

Փայտահատը հին երգն էր կրկնում
Եվ տաք սողոցն իր յուղում էր կրկին,
Թեղին անտառքեր ականջ էր դնում
Տապալված կաղնու խուլ հառաչանքին:

Անտառապահի տնակի առաջ
Խարույկն իր խաղաղ ծուխն էր
Եվ խարույկի մոտ եղևնին կանաչ

Անտառում խորին խորհուրդներ կային,
Եվ արձագանքներ կային անտառում,
Օրոր էր ասում աշունն անտառին,
Սակայն անտառի քունը չէր տանում:

ԲԱՌԱՐԱՆ

Ծվեմ - պատառիկ, այստեղ՝ ամպի քուլա

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Տարվա ո՞ր եղանակն է պատկերված «Անտառում» բանաստեղծության մեջ:
2. Ինչպե՞ս է հեղինակն ստեղծում աշնանային բնապատկերը:
3. Համո Սահյանի այս բանաստեղծությունից և մյուս ժողովածուներից դո՛ւրս գրեք բոլոր այն ծառերի, թփերի, ծաղիկների, խոտերի, նաև կենդանիների ու թռչունների տեսակների անունները, որոնք նա հիշատակել է:
4. Բնության նկարչական ընկալման տեսակետից փորձե՛ք բացատրել բանաստեղծության երրորդ տունը.

*Եղյամն էր սունկի լուխն արծաթում,
Մրսում էր կարծես վայրի նշենին,
Հանգստանում էր հողմը բացատում՝
Ականջն ամպրոպի ազդանշանին:*

5. Ինչպե՞ս է այս գործում առաջին և վերջին տների միջոցով ստեղծվել կառուցվածքային օղակ: Ի՞նչ իմաստային հոգեցվածություն ունեն այդ տները:

ՄԱՍՐԵՆԻ
Մարտիրոս Սարյանին

Կախվել է ժայռը անդունդի վրա,
Եվ դարեր այդպես կախված է մնում,
Ջրերի մեջ են ոտքերը նրա,
Իսկ գլխին հոգնած ամպերն են քնում:

Կախվել է ժայռը, կորընթաց իջել
Ժամանակների ջանքով անմեկին,
Երկնքի և խոր անդունդի միջև
Դարձել քարեղեն ուրույն մի երկինք:

Եվ այդ քարեղեն երկնքի միջից
Մարի մի թուփ է գլխավայր բուսել,
Որ դալարել է երկնքի շնչից,
Բայց ոչ մի անգամ երկինք չի տեսել:

Երկինք չի տեսել թուփն այդ հիրավի,
Երկինքն էլ երբեք չի տեսել նրան,
Միայն գետի մեջ բեկված արևի
Գունատ ցուլքերն են դողացել վրան:
Յուրտ քամիներն են ոստերը քրքրել,

Հողմերն են ծեծել բոլոր կողմերից,
Բայց նա ժեռ քարից սնունդ է առել
Եվ ջուր է առել խոնավ հողմերից:

Չի գիջել նա իր արմատը վերջին
Արհավիրքների զարկին անխնա,
Ճոճվել է անգամ ճնճղուկի շնչից,
Բայց հողմի շնչին դիմացել է նա:

Դիմացել է՝ պիրկ պարանի նման
Արմատով կառչած քարե երկնքին,
Շյուղեր է տվել և ամեն գարնան
Բնքշորեն ծաղկել, բուրել է կրկին:

Եվ շնչում են դեռ, զվարթ սուսափում,
Գարնանը ծաղկում ոստերը նրա,
Աշնանը կարմիր մատուր են թափում
Անդունդով անցնող կաժանի վրա:

Կախվել է ժայռը անդունդի վրա...
Եվ հավիտյան էլ կախված մնա թող,
Քանի քարեղեն զանգվածը նրա
Մասրենու համար երկինք է ու հող:

ԲԱՌԱՐԱՆ

կորընթաց - կորացած վար իջնել
պիրկ - ձիգ, ամուր, ուժեղ

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչի՞ խորհրդանշան է մասրենու թուփը բանաստեղծի համար:
2. Ո՞ւմ է նվիրված այս բանաստեղծությունը և ինչո՞ւ:
3. Ինչո՞ւ է մեկ այլ առիթով Համո Սահյանն ասում. «Մասրենին եմ եմ»:
4. Ինչպե՞ս է ներկայացվում մասրենին: Որտե՞ղ է այն աճել:
5. Ի՞նչ դժվարություններ է հաղթահարել մասրենին և ինչպե՞ս է պահպանվել:
6. Բանաստեղծությունից դու՞րս գրեք մի քանի հանգուցային բառեր և արտահայտություններ (մասրենի, ժայռ, անդունդ, դար, ամպ... շարունակե՛ք):
7. Մասրենու պատկերը հանդիպո՞ւմ է Համո Սահյանի այլ գործերում, հենց թեկուզ ձեր անցած «Անունդ տալիս» բանաստեղծության մեջ:
8. Միայն մասրենու պատկերի օգտագործմամբ Սահյանը գրել է 15-ից ավելի բանաստեղծություն, դրանց մասին կարելի է մի ամբողջ ուսումնասիրություն գրել և կարդալ դասարանում: Կարելի է նաև մասրենուն նվիրված գործերն ուսումնասիրել խմբերով. մեկ խումբն առանձնացնում է այն բանաստեղծությունները, որոնց մեջ հիշատակվում է մասրենին, մյուս խումբը դուրս է գրում մասրենուն բանաստեղծի տված բնութագրական հատկանիշները, երրորդ խումբը տեղեկատու աղբյուրներից հավաքվում է տվյալներ մասրենու մասին: Վերջում կարելի է այդ ամենը միավորել մեկ ամբողջության մեջ և ամփոփել դասը:

ՄԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆ

(1919-2006)

Միլվա Կապուտիկյանը իր ժամանակի ամենից ավելի գնահատված բանաստեղծներից է: Սկսելով բանաստեղծությամբ՝ նա հետագայում անցավ նաև ուղեգրության և հրապարակագրության:

Միլվա (Միրվարդ) Կապուտիկյանը ծնվել է 1919 թվականի հունվարի 20-ին Երևանում: Նրա հայրը՝ Բարունակ Կապուտիկյանը, ազգային գործիչ էր, ՀՅԴ անդամ, խմբագիր, որն սպանվեց 1920 թվականին:

Ավարտել է Երևանի թիվ 19 ցուցադրական դպրոցը, որը հիմա կրում է մեծ քննադատ Նիկոլ Աղբալյանի անունը: 1936-1941 թվականներին ուսանել է Երևանի համալսարանի բանասիրական բաժանմունքում: 1949-1950 թվականներին ուսումը շարունակել է Մոսկվայի Մ. Գորկու անվան գրական ինստիտուտի բարձրագույն դասընթացներում:

Պատանեկան տարիներից հանդես եկավ նրա գրական ձիրքը, իսկ երիտասարդական տարիներից՝ քաղաքացիական ուղղվածությունը: Նա դարձավ իսկական խորհրդային գրողի կերպար՝ կրելով այդ տարիների կուսակցական գաղափարախոսության ամբողջ պատասխանատվությունը: Այդ իսկ պատճառով նրան շռայլորեն տրվեցին բազմաթիվ մրցանակներ, կոչումներ, շքանշաններ:

Մահացել է 2006 թվականի օգոստոսի 25-ին Երևանում:

Սկսած 1940-ական թվականներից մինչև կյանքի վերջը հրատարակել է բազմաթիվ գրքեր, որոնցից ավելի հիշարժան են «Սրտաբաց գրույց» (1955), «Մտորումներ ճանապարհի կեսին» (1961), «Յոթ կայարաններ» (1966), «Դեպի խորքը լեռան» (1972), «Չմեռ է գալիս» (1983) ժողովածուները:

Նրա ստեղծագործության հիմնական մոտիվների մեջ իրենց տեղն ունեն և՛ սիրային, և՛ հայրենասիրական քնարերգությունը, իսկ ժամանակի հանդեպ գրողի քաղաքացիական դիրքորոշումն արտահայտվել է ամբողջ կյանքի ընթացքում գրած բազմաթիվ բանաստեղծությունների մեջ:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ե՞րբ և որտե՞ղ է ծնվել Միլվա Կապուտիկյանը:
2. Ի՞նչ կրթություն է ստացել և որտե՞ղ:
3. Որո՞նք են Միլվա Կապուտիկյանի հիմնական ժողովածուները:
4. Շատ սեղմ բնութագրե՛ք Միլվա Կապուտիկյանի քնարերգության հիմնական տրամադրությունները:

ՔԵԼԵ, ԼԱՌ

Գիշեր-ցերեկ նույն երգն է իմ ունկերում,
Չայնի տեղակ ծուխ է ելնում այդ երգից.

Ու ծխի մեջ կսկծում է մի ծերուկ՝
«Քելե՛, լատ, քելե՛ էրթանք մըրր էրգիր»:

Արնոտել է ոտքը ճամփից քարքարոտ,
Մանգաղն ուսած, գաղթի մախաղը մեջքին.

Դեռ քայլում է սարով, ձորով, աշխարհով՝
«Քելե՛, լատ, քելե՛ էրթանք մըրր էրգիր»:

Աչքերի մեջ համառ մի ուխտ ու հարցում,
Ու մի զարմանք, խեղճ մի զարմանք անմեկին,

Հարցնում է իրեն, բախտին, աստղծուն՝
«Իմա՞լ կեղնի, իմա՞լ չերթանք մըր էրգիր»:

Իր ի՞նչ գործն է, թե կա սահման ու կա վեճ,
Իր ի՞նչ գործն է, թե կան ռումբեր ու հրթիռ,
Հողի, հոգու միամիտ կանչն է իր մեջ՝
«Իմա՞լ կեղնի, իմա՞լ չերթանք մըր էրգիր»:

Իմա՞լ կեղնի, ինքը՝ այստեղ, հողն՝ այնտեղ,
Արտը կծղել, սպասում է իր ձեռքին.
Ինչպե՞ս թողնենք տունն ու ջաղացը՝ անտեր,
«Իմա՞լ կեղնի, իմա՞լ չերթանք մըր էրգիր»:

Ինչպե՞ս խեղդենք իսկ խռովքը Սասնա տան,
Ինչպե՞ս մարենք այսքան կարոտ, վառք ու կիրք,
Այսքան երազ ինչպե՞ս թաղենք գետնի տակ,
«Իմա՞լ կեղնի, իմա՞լ չերթանք մըր էրգիր»:

Թե աշխարհում արդարություն կա վերուստ,
Ու թե դաշն են աստված, երկիր ու երկինք,
Պիտի փլվի՛ ամեն պատմեջ, ամեն սուտ,
Պիտի երթա՛նք, պիտի երթա՛նք մեր երկիր...

ԲԱՌԱՐԱՆ

մախառ - ուտելիքի փոքրիկ տոպրակ, որ կապում են մեջքին

լառ - որդի, գավակ, երեխա, տղա

իմալ - ինչպես

կծղել - չինձած հացահատիկը հասնելուց չորանալ ու թափվել, խոտաբույսը արմատի վրա չորանալ ու թափվել

իսկ - իսենթ, ծուռ

1970-ական թվականներին ստեղծվեց «Քելե լառ, քելե էրթանք մըր էրգիր» ժողովրդական երգը: Այն շատ լայն տարածում ստացավ, որովհետև արտահայտում էր ժողովրդի կարոտն ու սերը պատմական հայրենիքի հանդեպ: Ահա Կապուտիկյանն օգտագործել է այդ երգի տողերն ու տրամադրությունները և դրանցով 1983 թվականին ստեղծել է իր այս բանաստեղծությունը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչի՞ մասին է «Քելե լառ» բանաստեղծությունը:
2. Ի՞նչ կառուցվածք ունի բանաստեղծությունը: Բանաստեղծության մեջ ո՞վ է երգում «Քելե՛, լառ...» երգը:
3. Ի՞նչ տողով են ավարտվում բանաստեղծության տները: Չակերտների մեջ դրված տողերը որպես կրկներգ ի՞նչ իմաստ են հաղորդում բանաստեղծությունը:
4. Ի՞նչ ես հասկանում պատմական հայրենիք ասելով: Դեպի ո՞ւր է ուզում գնալ բանաստեղծության քնարական հերոսը: Հետաքրքրվե՛ք, թե ո՞րն է ձեր պապերի պատմական հայրենիքը՝ Վա՞մնը, Սասո՞ւնը, Կա՞րսը, Երզնկա՞ն, Բիթլի՞սը, Խո՞յը, Ջավա՞խքը Նախիջևա՞նը...
5. Ինչպե՞ս է ավարտվում բանաստեղծությանը: Ի՞նչ է քեզ ասում «Պիտի երթա՛նք, պիտի երթա՛նք մեր երկիր...» տողը:

ԱՂՈԹՔ ԱՐԱՐԱՏԻՆ

1

Օ, լյա՛ռն Արարատ,
Կանգնած հինավուրց քո ստորոտում՝
Ողողված եմ ես ո՛չ ջրհեղեղով,
Այլ քեզնո՛վ, քեզնո՛վ,
Եվ մարմնիս, հոգուս ամեն մի նյարդը, բջիջը, հյուլեն
Քաղցր նվում է՝
Ներծծված քեզնից ճառագած լույսով,
Ճառագայթային քո հիվանդությամբ:

2

Գու՛ նախնիներիս աճյունի կավից շաղախվա՛ծ չաստված,
Ես՝ էլեկտրոնիկ հաշվարկումներով լցված ուղեղս,
Քո կռապաշտն եմ, քո միամի՛տը...
Արդ՝ աստվածներից ձերբազատ հոգիս
Քո դեմ ծնկաչոք՝
Աղոթքի համար թևերն է պարզել,
Եվ առօրյայից կարծրացած լեզուս՝ անվարժ վերացման՝
Մագաղաթներից բա՛ռ է աղերսում:

3

Ո՛վ նախակերպար,
Որից իրենց ողջ ձևերն են առել, ոգի և խորհուրդ
Հայաստան երկրի արարիչները:
Մկի՛զբ սկզբանց,
Չուսպ ու քչախոս քո կառուցվածքի չափագրությունն է
Չափ ու ոճ տվել մեր քերթությանը՝
Գողթան երգերից մինչև Մասնա վեպ ու մինչև Քուչակ:
Քո գույգ զանգերի դողանջն է մաքուր,
Որ ձայնագրվել,
Դարձել է «Մուրբ-սուրբ», դարձել «Ծով ի ծով»,
Եվ ձույլ զանգվածը Հսիփսիմեի
Ձույլ գմբեթներիդ արտաքանդա՛կն է...

4

Օ, լյա՛ռն Արարատ,
Հայաստան երկրի պտղունց հողն եմ ես,
Մի փշուր քարը, մի խազ հնչյունը.
Կերպավորի՛ր ինձ ըստ քո պատկերի:
Բյուրեղապակյա սրբազա՛ն անոթ,
Նաև հեղուկ եմ.
Տեղավորի՛ր ինձ ձագարներիդ մեջ.
Հրահոս թուջ եմ,

Կաղապարի՛ր ինձ քո շրջանակով:

5

Տիպա՛ր լրումի,
Քո գիրգ գծերի գեղեցկությո՛ւնը հաղորդիր անձիս,
Քո այդ երկնառաք խոյացումի հետ
Չգի՛ր գլուխս ու վեր բարձրացու
Եվ օրինա՛կ տուր՝
Տառապանքի մեջ մնալ վեհապա՛նծ,
Եվ գերության մեջ տիրակա՛լ լինել:

6

Տո՛ւր նետարձակման պատրաստ նյարդերիս
Քո այդ քարեղեն համբերությունը՝
Անշարժանալո՛ւ աղեղի վրա,
Գամված մնալու այստե՛ղ, այս ափի՛ն,
Չի հայրենական գետի ջրերն էլ՝
Սիրելով հանդերձ կարող եմ խեղդե՛լ...
Ուսուցանիր ինձ ժայռո՛վ սալարկել հրաբուխներս՝
Քանզի ապաժամ, անմիտ ժայթքումից
Կարող է փլվել իմ իսկ Պոմպեյը.
Երկու տեգերիդ ներհայողական համակերցությամբ
Հաշտեցրո՛ւ ընդոստ երկվություններս...

7

Դու, որ ծնվել ես երկրի կեղևի փոխակերպումից,
Եվ պիտի ապրես՝ մինչև արևի սառցակալումը,
Որ ողորկվել ես, քանզի խորտակված գորք ու զարմերի
Փռչի՛ն է նստել սայրերիդ վրա,
Ինձ էլ վարժեցրու՝
Պահը դարերի կշռությո՛ն՝ չափել,
Եվ պատեհածին վիատումներս
Քո դարակուտակ փորձո՛վ կասեցրու...

8

Դու՝ Նոյյան տարվա՛,
Բայց և ամեն պահ՝ թարմ, ցողաշաղախ,
Ամեն նոր աչքում՝ նորովի՛ գծվող ամենանո՛րրը,-
Ինձ էլ ներշնչիր՝ միաբանելու իմ խորքերի մեջ
Տուշպան հիմնարկող նախահայրերիս
Արյունից արյուն իմ սրտին հասած գոռ գոշյունները՝
Տիեզերանավից երկիր հաղորդվող ազդածայներին:

9

Դու՝ բաբելոնյան բյուր ազգ ու ցեղի
Բյուր լեզուներով գրուցաբանված
Լե՛ռ սուրբգրական,

Գու՝ Սուրբ գրքի պես՝ աշխարհապատկան,-
 Բայց և նույն պահին
 Մինչև հուսկ վերջին ավագահատոյ
 Ամենամե՛րը, ամենահա՛յը,-
 Ինձ էլ սովորեցրու քեզ նմա՛ն լինել:
 Եվ ինձ էլ օժտիր անտրոհելի քո այդ դաշնությամբ՝
 Շունչ դառնալ, ոգի, գոյության խորհուրդ՝ հնամյա ցեղիս,
 Գամվել ու մնալ հողին իր դժվար,
 Իր դժվար բախտին,-
 Բայց և լայնանա՛լ ու անեզրանա՛լ,-
 Ու խառնե՛լ հոգիս
 Լուսնի տակ շնչող ամեն էակի, ամեն էության,
 Դեմ անել սիրտս՝ ջրհեղեղներում տվայտող մարդուն,
 Ժայռանալ նրա երեք ոտքի տակ,
 Հենարան լինել խեղդվող տապանին...

10

Օ, լյա՛ռն Արարատ,
 Կերպավորի՛ր ինձ ըստ քո պատկերի...

ԲԱՌԱՐԱՆ

հյուլե - տարր, որևէ բանի նվազագույն մասնիկ

կռապաշտ - հեթանոս, կուռք պաշտող

Մասնա վեպ - նկատի ունի «Մասնա ծոեր» դյուցազներգությունը

գիրգ - փափուկ, փափիկ, քնքուշ

երկնառաք - դեպի երկինք առաքված, շատ բարձր

ապաժամ - անժամանակ

Պոմպեյ - քաղաք հարավային Իտալիայում, Վեզուվ լեռան ստորոտին, որը կործանվել է 79 թվականի օգոստոսին Վեզուվի ժայթքման հետևանքով

ներհայողական - իր ներքին աշխարհը քննելով՝ կռահել, ըմբռնել, մտազննություն

երկվություն - երկու հակասական մտքերի ներքին բախում, երկընտրանք, հակասականություն

Տուշպա (Տոսպ) - Հնագույն քաղաք Վանա լճի արևելյան ափին, հիմնադրվել է Ք.ծ.ա. 827-825 թվականներին՝ որպես Արարատյան թագավորության կենտրոն

բարելոնյան ազգ ու ցեղ - Բարելոնի աշտարակաշինությանը մասնակցող 72 ազգ ու ցեղ

լեռ սուրբգրական - այսինքն՝ «Աստվածաշունչ» մատյանում հիշվող

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Քանի՞ մասից է բաղկացած բանաստեղծությունը: Այս տասնաբանյա աղոթքը ինչո՞ւ է հեղինակն ուղղում Արարատին: Ի՞նչ է Արարտը նրա ու ամբողջ ժողովրդի համար:

2. Ինչո՞ւ է Արարատին համարում «տիպար լրումի», այսինքն՝ կատարելություն: Ինչո՞վ են Արարատի կերպարի մարմնացումը մեր գրականությունը, երաժշտությունը, ճարտարապետությունը:

3. Ինչպե՞ս կբացատրեք 5-րդ և 7-րդ մասերի հետևյալ տողերը

Եվ օրինա՛կ տուր՝

Տառապանքի մեջ մնալ վեհապա՛նծ,

Եվ գերության մեջ տիրակա՛լ լինել:

Ինձ էլ վարժեցրու՝

Պահը դարերի կշռույթով չափել:

4. Ինչո՞ւ է բանաստեղծուհին ասում.

Օ, լյա՛ռն Արարատ,

Կերպավորի՛ր ինձ ըստ քո պատկերի...

ԽՈՌՎՔ

Հերի՛ք այս ցավը,

Այրող, հատնեցնող այս շաքարախտը,

Հոգնե՛լ եմ արդեն...

Ո՞վ լցրեց իմ մեջ՝

Երկար իր ճամփին պակասած, ծանրացած

Այս հին արյունը,

Որ երակներս նրա խուլ բեռից նվա՛ն անդադար,

Ազատացե՛ք ինձ իմ իսկ արյունից,

Ծանր արյունը ծանր ջրից էլ դժվա՛ր է կրել...

Ո՞վ ինձ անիծեց ծնվել հենց այստեղ,

Այս եսակենտրոն Մասիսի հանդեպ,

Որ հոգիս անվերջ թպրտա նրա ուղեծիրի մեջ

Ու վերադառնա նրա՛ն, միշտ նրա՛ն,

Հոգնե՛լ եմ նրա քար սառույցներին գամված մնալուց,-

Արձակեցե՛ք ինձ, ես Արտավազդ չե՛մ...

Ես էլ եմ ուզում քիչ թեթև՝ ապրել.

Ես էլ եմ ուզում Եվայի նման

Մանկորե՛ն, անխո՛հ

Տրվել արգելված պտղի հաճույքին

Եվ գեթ մի վայրկյան վտարել ինձնից

Աստծուն պատասխան տալու երկյուղը...

Ես էլ եմ ուզում թռչունների պես

Միայն ինձ համար, ինձ համա՛ր երգել.

Երգել բերկրանքի՛ց,

Որ ամեն տողս՝ ջրհորի խոնավ պարանի նման

Անվերջ չսուզվի հայոց դարերի խավար հատակը

Եվ երգիս դույր լցված շիճի՛ լաց ու արյունով...

Հերի՛ք է, հերի՛ք.

Ուզում եմ միայն, միայն մա՛րդ լինել, պայծառ բանաստե՛ղծ,

Ծիածանի պես ժպտո՛ւն, անխտի՛ր

Գրկել տառապած իմ հողագունդը,

Եվ, ոչ, չթեքել, երես չթեքե՛լ

Մարմարա ծովի շողոմ կապույտից:

Անձրևի նման տեղալ աշխարհի բոլոր դաշտերին,

Եվ չկսկծալ, որ Արտամետի չոր խնձորենուն

Լաց իսկ ցողելու իրավունք չունե՛մ:

Շիտակ գոհությամբ իմ սիրտն ու ձայնը

Տալ Նյուրնբերգյան արդար ատյանին.

Եվ ծառս չլինել՝ այն աններելի ներմանը ի տես,
 Որի շոյանքից ժանտերախ մահը դառնում է մահիկ,
 Որովայն պատռող վայրի եղջյուրը՝ դառնում լուսնեղջյուր...
 Ուզում եմ՝ շոյող երաժշտության պես՝
 Գլխովել այլաբառ խոսքի քաղցրությամբ,
 Եվ չնեղսրտել, չխոցվել անվերջ, որ նույն շուրթերը
 Հայրենի ազնիվ բարբառի հանդես
 Հա՛մը եմ, անհաղո՛րդ:
 Ուզում եմ մանկան զուլալ հավատով,
 Բուռն, անվերապահ
 Բաց անել հոգիս այլազգի դրկից-բարեկամի դեմ,
 Ուրիշի լեզվից հասկանալ միայն բարի՛ բառերը,
 Եվ չպղտորվել, և չկարմրել ուրիշի տեղակ,
 Երբ այդ նույն պահին սնափառ մեկը
 Անմիտ մի ջանքով ու փոքրոգորեն
 Ծգնում է խեղել ճշմարտի դեմքը՝
 Հաստված դարերո՛վ,
 Երկաթագրերով,
 Փորագրած քարի՛ն, կնքած քարերո՛վ...
 Ես էլ եմ ուզում
 Ջտվե՛լ, խաղաղվե՛լ,
 Հասնել դաշնության՝
 Լայն մի կշռությով չափել տիեզերքի անհունությունը,
 Եվ էլ չնայել հողին, քարտեզին, ուր սահմանները
 Կտրո՛ւմ հատում են
 Կենդանի մարմնի նյարդն ու երակը:
 Ես էլ եմ ուզում
 Աստղագնացի հետքերով գնալ,
 Լիաթոք ցնծալ գալիքի մարդու աստղային բախտով,
 Եվ, ոչ, չհիշե՛լ,
 Որ աստղերի պես ցանուցի՛ր ենք մենք,
 Որ միջաստղային ոչ մի երթուղի
 Մեզ չի՛ միացնի,
 Չի՛ հավաքի մեզ...

Հերիք է, հերի՛ք, հերի՛ք այս ցավը.
 Ինքս ինձնից պարպվել,
 Ինքս ինձնից փրկվել,
 Հեռանա՛լ, գնա՛լ, մեկնե՛լ եմ ուզում...

... Ախ, այս քարերը,
 Այս խեղճ քարերը,
 Այս խեղճ քարե՛րը,
 Որ ամեն քայլիս ոտքիս են դիպչում,
 Լքված որբի պես կախվում փեշիցս.
 Եկեք սրբե՛մ ձեր խանձված այտերի լացախառն փոշին...
 Ախ, այս գրե՛րը,
 Ժայռին, խաչքարին, մագաղաթներից, ավեր սյունն ի վար
 Սրբորեն խաչված,
 Անքնեն գրե՛րը.
 Ես ծնված օրից նրանց՝ ծնրադիր,
 Իմ լուռ աղոթքը դեռ չե՛մ ավարտել...

Ախ, այս ձայնե՛րը,
Գողթան լարերից ալիքներ առած
Եկած-ինձ հասած այս հին ձայնե՛րը.
Հացի համ ունեն,
Սիրո շող ու շաղ
Եվ խունկի բուրմունք.
Գալիս են, փռվում, շրջափակում ինձ,
Յորեն արտի պես բարձրանում-կանգնում,
Կտրում են ճամփաս, գգվում են դեմքս, փարվում ականջիս՝

«Արի՛, յար, արի՛, ես քեզ ի՞նչ արի»...
Ախ, այս կարոտը,
Հայի կարոտը, անթարգմանելի՛ն,
Ես ինչպե՛ս ճեղքեմ այս թանձրությունը.
Ու թե՛ ճեղքեմ էլ՝
Նույն այդ կարոտի անվերջ կարոտը
Ուրիշ ավերում, ուրիշ ունկերի, ուրիշ մի լեզվով
Ինչպե՛ս մորմոքամ...

Եվ Երևանը,
Այս Երևա՛նը,
Ինձ կյանք պարգևած,
Իմ կյանքը առած,
Իմ մա՛յրը, որդի՛ն, իմ ապավե՛նը:
Ուրիշ որտե՞ղ է
Հարության հրաշքն այսպես նյութացած,
Քար ու գույն դարձած և կոթողացած
Հայտնվե՛լ մարդուն:
Ես՝ այդ հրաշքի խորքն ու բերկրանքը
Օդի պես շնչող,-
Այդ հրաշքից դուրս՝
գճուխ ծխանի և զառավոտը Նավասարդի
Ինձ ով, ո՞վ կտա...
Եվ վերջապես նա,
Ինքը՝ Մասի՛սը.
Թե մեկ՝ բարձրացած,
Մի յոթն այդքա՛ն էլ գետնի խորքն իջած,
Բազմաշերտ, խրթին մեր էությունը՝
Հավերժ Մասի՛սը:
Հարավ-հյուսիսից, և՛ արևելքից, և՛ արևմուտքից
Բոլո՛ր կողմերից իմ հանդեպ ծագող
Արշալույս է նա,
Լույսի ավազան,
Որ ամեն մի պահ, ամեն նայելիս
Մկրտում է ինձ իր կապույտի մեջ,
Մաքրում, նորոգում...

Մեղա՛ ձեզ, մեղա՛,
Սրբազան իմ լեռ, իմ ծանր արյուն, իմ ճակատագիր,
Խռովքիս համար ու ընդվզումիս
Բյուր անգամ մեղա՛...
Այն ով չգիտե,

Եթե ճշում են՝ ցավից են ճշում,
Աչքը շրջում են՝ լույսի ուժից վեր պայծառությունից,
Վանում են իրար հանդիպման թափի՛ց,
Փախչում են միայն անհուն, անհաշիվ, դժվար սիրելուց,
Եվ ընդվզում են, երբ անհնար է լինում փախչելը,
Երբ անհնար է լինում միանալ...

Երկիր Հայաստան,
Դու դժվար իմ սեր, իմ սուրբ կապ ու գիր,
Թե մեկ հեռանում՝
Հազար ճամփայով ետ են գալիս քեզ,
Թե մի պահ պոկվում՝
Անկումի ահից հազար ձեռքերով քե՛զ են պլլվում,
Թե մի հեղ լռում՝
Հազար ճեղքերից նորից քո գովքն է
Դուրս ժայթքում թղթիս:
Երկիր Հայաստան,
Քեզնից ազատվելը՝ առավել է ծանր,
Քեզնից ազատվելն՝ անազատություն...
Արդ ես վերստին
Իմ ծանր արյան բեռից խոնարհված
Քո ծանր հողին,
Աչքերումս դեռ ընդվզումի պեծ, խռովքի ծվեն,
Մեղավոր շուրթով մրմնջում եմ ես.
- Ամենի՛ համար, ինչ տվել ես դու՝
Այս դժվար սիրուս, այս խռովքներիս, այս վերքիս համար,
Վերացումներիս, վեհացումներիս ու վառքիս համար,
Այս լիքը հոգուս՝ երգի չցամաքող ակունքի՛ս համար,
Քեզ բյո՛ւր օրհնություն,
Միայն օրհնություն...

ԲԱՌԱՐԱՆ

խռովք - հոգեկան բուռն ապրում, հուզում, տագնապ, վրդովմունք, մոլեգնություն, ալեկոծություն

ծանր ջուր - սովորականի համեմատ ավելի մեծ խտություն ունեցող ջուր, կիրառվում է միջուկային ռեակտորներում

ուղեծիր - երկնային մարմինների շարժման ուղին, գործունեության ուղի, ընթացք

շողում - շողոքորթ, կեղծավոր, խաբուսիկ

Նյուրնբերգյան արդար ատյան - դատավարություն Երկրորդ համաշխարհային պատերազմը սանձազերծած գլխավոր հանցագործների՝ նացիստական Գերմանիայի պարագլուխների դեմ (20. XI. 1945-1. X 1946, Նյուրնբերգ):

ժանտերախ - չարախոս, թշնամաբար տրամադրված

մահիկ - կիսալուսին, թուրքիայի զինանշանը

լուսնեղջյուր - կիսալուսին, լուսնի թերատ սկավառակը, երբ մանգաղի տեսք ունի

սնափառ - փառամոլ

գգվել - գրկել, շոյել, փայփայել, փաղաքշել

մորմոքել - կսկծալ, մրմռալ

խրթին - բարդ, դժվար հասկանալի, կնճռոտ, մանվածապատ

պլլվել - պարուրվել, փաթաթվել, նան՝ մխրճվել, խոյանալ

հեղ - անգամ

պեծ - կայծ, փայլ, ցուր, շող

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչո՞ւ է բանաստեղծությունը վերնագրված «Խռովք»: Ի՞նչ է նշանակում խռովք և ի՞նչ խռովքի մասին է խոսքը:
2. Ի՞նչ է նշանակում «Արձակեցե՛ք ինձ, ես Արտավազդ չե՛մ» տողը: Ո՞վ էր Արտավազդը:
3. Ինչո՞ւ հայոց ծանր բախտի տեր բանաստեղծը չի՞ կարող անհոգ ու թեթև լինել: Ինչո՞ւ չի կարող ազատվել իր ազգային ցավից:
4. Ինչպե՞ս կմեկնաբանես այս տողերը.
*Ախ, այս կարոտը,
Հայի կարոտը, անթարգմանելի՛ն...*
5. Խռովքից հետո ինչո՞ւ են ասվում այս տողերը.
*Մեղա՛ ձեզ, մեղա՛,
Սրբազան իմ լեռ, իմ ծանր արյուն, իմ ճակատագիր...*
6. Ինչո՞ւ է երկիր Հայաստանը դժվար սեր:
7. Ինչպե՞ս է ավարտվում խռովքը և վերջանում բանաստեղծությունը:

ՊԱՐՈՒՅՐ ՄԵՎԱԿ

(1924-1971)

Եթե այցելելու լինես Պարույր Սևակի ծննդավայր, քեզ հետ անպայման ծաղիկներ վերցրու, որ մի մասը դնես նրա հուշաքարին, որտեղ նա զահվեց, մյուս մասը՝ նրա սեփական այգում ծանրացած շիրմաքարին, որի տակ նա թաղված է:

Նա արժանի է այդ խոնարհումին ու պատվին, որովհետև աննպաստ ժամանակներում խոսեց ճշմարտության, արդարության, ազնվության մասին, ընդդեմ խավարի փառաբանեց լույսը և այդ ճանապարհին էլ մոխրացավ՝ իր կյանքով վճարելով ամեն ինչի համար:

Ամբողջ ստեղծագործական կյանքում Պարույր Սևակը գնաց խիզախումի՝ հանուն արվեստի մեջ դժվարի ու բարդի՝ ժխտելով հեշտն ու պարզը, գոհության կողքին դնելով մեծ դժգոհությունը, համակերպությանը հակադրելով ընդդիմությունը, անտարբերությանը՝ վառվող հոգին: Դա նա ապացուցեց իր անձնական ճակատագրով և գրական գործունեությամբ:

Պարույր Սևակը պապի անունով գրվում էր Ղազարյան, թեև իրենց տոհմի ազգանունը Սողոմոնյան էր: Սևակ գրական անունը նա օգտագործեց 1942 թվականից, երբ տպագրվեցին առաջին բանաստեղծությունները:

Պարույր Սևակը ծնվել է 1924 թվականի հունվարի 24-ին Վեդու շրջանի Չանախչի գյուղում: Հինգ նրա ծննդավայրը գտնվում է Արարատի մարզում, իսկ գյուղը վերանվանվել է Ջանգալատուն: Նրա ծնողները՝ Ռաֆայելը և Անահիտը, գյուղի պարզ աշխատավորներ էին: Իսկ նրանց տոհմը եկել էր Պարսկաստանի Սալմաստ գավառի Հավթվան գյուղից:

Սևակը սովորել է գյուղի դպրոցում և ավարտել գերագանց առաջադիմությամբ: 1940 թվականին նա արդեն Երևանի պետական համալսարանի բանասիրական բաժանմունքի ուսանող էր: Նրա զարգացմանը շատ նպաստել է ընթերցասիրությունը: Կարդում էր ամեն ինչ և կարդում էր շատ: Մտածում էր՝ դառնալ գրականագետ-գիտնական թե՞ բանաստեղծ: Պարույր Սևակն, իհարկե, դարձավ բանաստեղծ, բայց նա նաև նույնքան խոշոր գրականագետ է ու քննադատ:

1945-ին համալսարանը ևս նա ավարտում է գերագանց առաջադիմությամբ և ընդունվում է ասպիրանտուրա՝ «Հայ հին գրականություն» մասնագիտությամբ: Նաև աշխատում է «Ավանգարդ», «Գրական թերթ» պարբերականներում:

Նրա առաջին գիրքը՝ «Անմահները հրամայում են», լույս է տեսել 1948 թվականին:

1951-1959 թվականները Սևակի կյանքի մոսկովյան տարիներն են: Նա Մոսկվայի Գորկու անվան գրական ինստիտուտի պոեզիայի բաժնի ուսանող էր մինչև 1956 թվականը, իսկ դրանից հետո՝ թարգմանության ամբիոնի դասախոս: Մոսկվան նրան տալիս է լայն իմացություններ, ծանոթություններ, կապեր: Բայց հայրենիքի կարոտը տանջում էր նրան: Այդ կարոտի կանչով էլ 1957-1958 թվականներին Մոսկվայում նա գրեց «Անլռելի զանգակատուն» պոեմը, որը 1959-ին տպագրվեց Երևանում: Նույն թվականին էլ նա վերադարձավ հայրենիք: Սևակի փառքը համաժողովրդական ճանաչում ձեռք բերեց: Նրա պոեմը վերահրատարակվեց ոչ միայն Երևանում, այլև Բեյրութում ու Թեհրանում:

1963 թվականին Սևակն աշխատանքի է անցնում Հայաստանի գիտությունների ակադեմիայի գրականության ինստիտուտում և զբաղվում Սայաթ-Նովայի ժառանգության ուսումնասիրությամբ: Արդյունքը լինում է «Սայաթ-Նովա» մենագրությունը, որը 1967-ին նա պաշտպանում է որպես ատենախոսություն, միանգամից ստանում բանասիրության դոկտորի գիտական աստիճան և ապա՝ 1969-ին լույս ընծայում առանձին գրքով: Գրականագետ Սևակը շարունակում է իր աշխատանքը Սայաթ-Նովայի և հայ միջնադարյան տաղերգուների կապերի ուսումնասիրության ուղղությամբ:

1960-ականները նաև Պարույր Սևակի բանաստեղծական վերելքի տարիներն էին: Լույս է տեսնում նրա «Մարդը ափի մեջ» (1963) ժողովածուն, որը նոր խոսք էր գեղարվեստական մտածողության մեջ: Այս տարիներին Սևակը գրում է նաև իր պոեզիայի նորարարական էությունը բացահայտող այնպիսի կարևոր հոդվածներ, ինչպիսիք են «Հանուն և ընդդեմ «ռեալիզմի նախահիմքեր»-ի», «Դեպի մեծ ուղեծիր», «Տերյանը պահանջում է», «Դժվարը իրենից հասուն լինելն է» և այլն:

1966-ին ընտրվում է Հայաստանի գրողների միության վարչության քարտուղար, «Անլռելի զանգակատուն» պոեմի համար 1967-ին արժանանում է Հայաստանի Պետական մրցանակի դափնեկրի կոչման, ընտրվում է ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավոր...

Այս տարիներին էլ գրում է իր գլուխգործոցը, որը «Եղիցի լույս» ժողովածուն է: Այն պետք է լույս տեսներ 1969-ին, սակայն գրաքննությունը գրքի պատրաստի տպաքանակը (25 000 օրինակ) կալանքի ենթարկեց: Դա ծանր ազդեց բանաստեղծի հոգեվիճակի վրա: Շուրջ երեք տարի Մոսկվայում ձգձգվեց նաև դոկտորական ատենախոսության հաստատումը: Շատ մռայլ տրամադրությամբ մասնակցեց Հայաստանի գրողների 6-րդ համագումարի աշխատանքներին, որ գումարվեց 1971 թվականի հունիսի 1-2-ին: Հրաժարվեց ամեն ինչից...

Եվ ահա, չանցած մի քանի օր, տարածվեց նրա ողբերգական մահվան գույժը: 1971 թվականի հունիսի 17-ին նա ավտովթարի ենթարկվեց և մահացավ:

Մեկ անգամ չէ, որ նա կանխագգացել էր իր վաղաժամ և անբնական մահը: Այդ մասին նա գրել է.

ՀՊԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆ

Երբ վերջալույսն է մխրճվում է ամպերի մեջ՝ սանրի նման,
Ու հոտոտող բարակ քամին, շնիկի պես, կանգ է առնում
Ամեն թփի, ծառի, գուղձի և ամեն մի մարդու առաջ.
Ու երբ ցուրտը երիտասարդ ցույց է տալիս իր ուժն արդեն՝
Ստիպելով շապիկ կոճկել ու մրմնջալ խոսքեր դժգոհ.
Ու երբ մթան թավշի վրա օրվա հաչոցն է խլանում,
Իսկ հատ ու կենտ լույսերն ասես դառնում են հին զարդանկար,-
Միամիտ են դառնում նորից,
Հավատում են արդարության,
Ու թվում է, թե ես պիտի իմ... բնական մահով մեռնեմ...

ԱՇԽԱՐՀ... ԱՇԽԱՐՀ

Իսկ չե՞ս վախենում, որ հանկարծ... մեռնեմ
Ես վախենում եմ, շա՛տ եմ վախենում,
Բայց ո՛չ ինձ համար,
Այլ լոկ քե՛զ համար,
Իսկ եթե հանկարծ իմ մահով խախտվի
Համակշռված այս վիճակը քո,
Ո՞նց պիտի լինես,
Ի՞նչ պիտի անես:
Տե՛ս, որ իմ մահով քեզ չկործանե՛ս,
Սո՛ւտ ու փո՛ւտ աշխարհ,
Փուչ ու ո՛չ աշխարհ...

Ամբողջ հայ ժողովուրդը ձեռքերի վրա նրան հասցրեց հայրենի գյուղ և պահ տվեց սեփական այգու սեփական ձեռքերով փխրեցրած հողին:

Պարույր Սևակի մահվան կապակցությամբ տարբեր վարկածներ են առաջ քաշվում: Փաստն այն է, որ, չլինելով վարժ վարորդ, նա դարձել է ավտովթարի զոհ: Նրա հետ զոհվել է նաև կինը: Փրկվել են մեքենայի երկրորդ շարքում նստած երկու որդիները: Բայց Պարույր Սևակին հոգեբանորեն սպանեց այն վարչակարգը, որի մեջ նա ապրում էր, և որը կալանքի էր ենթարկել նրա գիրքը: Իսկ գրողի համար գիրքն ավելին է, քան անգամ սեփական կյանքը: Այդպիսի գրքերն արյունով են գրվում:

«Եղիցի լույս» ժողովածուն գրաքննության անհարկի միջամտություններով վաճառքի հանվեց բանաստեղծի մահից հետո... Սա նրա հարության և շարունակվող հոգևոր մեծ ներկայության սկիզբն էր...

Այսպիսի վիշտ, գոնե կյամքիս վերջին տարիներին, ես չէի ապրել: Չէի էլ պատկերացնում, թե ի՞նչն այլևս կարող էր ինձ այնքան ցնցել...

Դու ընդամենը անհատ էիր, բայց ինչպիսի՜ անհատ: Նման էիր լեռնային մի աղբյուրի, որն իր ուժը բնության ընդերքից է առնում ու բնության ուժն է բերում ժողովրդին: Եվ սիրում էիմք քեզ, որովհետև չենք կարող բնությանը չսիրել:

Ժողովուրդը քեզ ծնեց մաքառման գնով, ծնեց ժամանակին, որպեսզի քո միջոցով երգեր իր ցավն ու ուրախությունը: Այդպիսի անհատների՝ ժողովուրդը հեշտությամբ չի ծնում և չի կարող հեշտությամբ բաժանվել նրանցից:

Պարույր, սիրելի՛ գավակս, դու շատ լավ գիտեիր այս բոլորը, որ դու միայն քոնը չես: Դա պիտի գիտակցեն շատերը, դա պիտի լինի մեր առաքելությունը, մեր մտածողության արմատը: Եվ ճակատագիրը այդքան դաժան չպիտի լիներ քո հանդեպ, ժողովրդի հանդեպ:

Հունիսի 20-ին [բանաստեղծի թաղման օրը] ես մտքով քեզ հետ էի, ժողովրդի հետ և տեսնում էի ինչ է կատարվում աշխարհից հեռու, մեր հեռու սարերի գրկում: Իր մեջ մայր բնությունը, նրա ստեղծող ոգին, վատի դեմ ըմբոստ ու միշտ բարի բնավորությունը խտացնող, հողից ելած մի բեկոր էր ժողովուրդը հանձնում հողին: Դա ժողովրդական ողբերգություն էր:

Ես ականատես եմ եղել մեր ժողովրդի ճակատագրական ողբերգություններին, շատ դառն օրերին: Եվ եթե ես դեռ կամ այսօր, իբրև միակը մայր ժողովրդի լուսավոր բախտը երազած ու վաղուց արդեն անցած իմ սերնդի, ապա թերևս նրա համար միայն, որ այլևս կորուստ չտեսնեմ: Դու աշխարհ էիր եկել կորուստներից հետո, կորուստներ ծածկելու, ոչ թե կորուստ դառնալու:

Դու աշխարհ էիր եկել քո բնության ուժով և խոր, շատ խոր հավատում էիր այդ ուժին: Ժողովուրդը կշարունակի հավատալ Քո հավատին:

Հիշատակդ բարի, Սևա՛ջ Պարույր: Ժողովուրդը կսպասի Քո գալուն:

Մարտիրոս Մարյան

Ինչպե՛ս է նա իմաստավորել Հայաստանի տեղական բնակարը:

Ծնվելով գյուղացու հարկի տակ, իբրև հողի անկեղծ որդի, Սևակը դատապարտում էր պարզունակ, կեղծ ժողովրդականությունը: Նա մտավ պատմության և մշակույթի մեջ, ինչպես այգի է մտնում փորձված այգեպանը: Նրա մուսան ինտելեկտուալ էր: Մտածող, գիտության դոկտոր, հանրագիտարանային հետազոտիչ բանաստեղծն իր միտքը սուգում էր հայկական հին էպոսի խորքերը, նրբորեն զգում էր ռուսական պոեզիան, անգլերեն անգիր մեջբերումներ էր անում Էլիոթից:

Նա զգայուն էր ծաղկաթերթի, բառի, զգացմունքի հանդեպ: Չխնայեց իրեն: Սևակի բանաստեղծությունները կմնան: Նրանք շարունակում են հնչել և խորհել: Արվեստը և պատմությունը մահվան հաղթահարումն են:

Բանաստեղծի ոգին և անհատականությունը, որ ամփոփված են բանաստեղծական քառատողերում, «ցպահանջ» հասցեագրված են միլիոնավոր ապրող և դեռ չապրող մարդկանց: Այդ այդպես է: Բայց բանաստեղծի ինչ-որ, գուցե և ամենահնչեղ երգը, դեռ չծնված մեռավ իր հետ միասին: Եվ ոչ մի վերահրատարակություն չի լրացնի այդ բացը:

Մենք կորցրեցինք մաքուր ձայնի տեր մեր եղբորը՝ ընկերոջը կորցրեցինք... Կորուստը անփոխարինելի է:

Ռուսական պոեզիան սգում է Պարույր Սևակի մահը:

Անդրեյ Վոզնեսենսկի, ռուս բանաստեղծ

Պարույր Սևակ են կարդում, անհաղորդ նրա ապրումին, տառն են կարդում, առանց զգալու և իմանալու, որ Պարույրի կռիվը աշխարհի հետ էր՝ աշխարհի փրկության համար, մարդու հետ էր վեճը՝ մարդու փրկության, նրա հոգու անաղարտության համար:

Համո Սահյան

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ե՞րբ և որտե՞ղ է ծնվել Պարույր Սևակը:
2. Պարույր Սևակը Ղազարյան էր իր պապի անունով, բայց իրենց տոհմը Սողոմոնյան էր: Կարո՞ղ եք ասել, ուրիշ ի՞նչ հայտնի Սողոմոնյաններ կան 20-րդ դարում (երաժիշտ և բանաստեղծ):
3. Որո՞նք են Պարույր Սևակի մոսկովյան կյանքի տարիները: Ի՞նչ էր նա անում Մոսկվայում:
4. Թվարկե՛ք Պարույր Սևակի հիմնական ժողովածուները:
5. Պարույր Սևակի ժողովածուներից գտե՛ք այն բանաստեղծությունները, որոնց մեջ խոսում է ոչ բնական մահով իր վերջը գտնելու մասին:
6. Ե՞րբ և ինչպե՞ս է մահացել Պարույր Սևակը: Ի՞նչ վարկածներ գիտես նրա մահվան կապակցությամբ:
7. Ովքե՞ր ի՞նչ են ասել Պարույր Սևակի մասին: Գտե՛ք և կարդացե՛ք Համո Սահյանի, Վահագն Դավթյանի և մյուսների գրած բանաստեղծությունները Պարույր Սևակի մասին:

ՎԱՐՔ ՄԵԾԱՑ

Ո՛ւշ-ո՛ւշ են գալիս, բայց ո՛չ ուշացած,
Ծնվում են նրանք ճի՛շտ ժամանակին:
Եվ ժամանակից առաջ են ընկնում,
Դրա համար էլ չեն ներում նրանց:

Անտոհմ չեն նրանք կամ անհայրենիք.
Հասարակ հորից ու մորից ծնված՝
Մերում են նրանք և ա՛յն վայրենուց,
Որ էլ չէ՛ր կարող ապրել քարայրում:

Մերում են նրանք և ա՛յն ծերուկից,
Որ նախընտրում էր քնել տակառում:
Մերում են նրանք և ա՛յն պատանուց,
Որ սիրահարվեց իր իսկ պատկերին:

Մերում են նրանք բոլո՛ր նրանցից,
Որ սատանային հոգին են ծախում,
Միայն թե անե՛ն մտածածն իրենց,
Ի՞նչ փույթ, թե սատկեն ժամանակից շուտ:

Անվտանգ, ինչպես հրդեհն արևի,
Անվնաս, ինչպես օգտակար լոբտուն,
Վախ են ներշնչում պետություններին
Մինչև իսկ իրենց կամքի հակառակ:

Արքաների հետ խոսում են «դու»-ով,
Եթե, իհարկե, լսում են նրանց,
Իսկ թե չեն լսում՝ մե՛կ է, չեն լռի,
Կխոսեն նույնիսկ իրենց կոշկի՛ հետ:

Ով սահմանում է նոր օրենք ու կարգ,
Հայտարարվում է և օրենքից դուրս:
Բայց չե՛ն վախենում նրանք չար մահից,
Ապրում են դժվար ու մեռնում են հեշտ:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչպե՞ս եք հասկանում և մեկնաբանում ամբողջ բանաստեղծության իմաստը: Այս հարցին պատասխանելուց առաջ փորձե՛ք բանաստեղծությունը կարդալ և ընկալել մաս-մաս:
2. Ինչպե՞ս կմեկնաբանես առաջին տունը: Ի՞նչ անուններ կարող ես հիշել Սևակի ակնարկած մեծերի շարքում, որոնց մասին գրում է.

*Ծնվում եմ նրանք ճի՛շտ ժամանակին
Եվ ժամանակից առաջ եմ ընկնում,
Դրա համար էլ չեմ ներում նրանց:*

Այդ անունների մեջ դու տեսնո՞ւմ ես Եղիշե Չարենցիցն, հենց իրեն՝ Պարույր Սևակին, իսպանացի բանաստեղծ Լորկային, միջնադարյան գիտական մտքի առաջամարտիկներ Գալիլեո Գալիլեյին, Ջորդանո Բրունոյին, մեծ բանաստեղծ Դանտեին, որին արտրեցին և որի հանդեպ երկու անգամ մահվան դատապարտելու որոշում կայացրեցին: Գտե՛ք, կարդացե՛ք նրանց կյանքը պատմող գրքեր և փորձի՛ր ճանչել նրանց:

3. Ո՞ւմ նկատի ունի Պարույր Սևակը, երբ գրում է. «Սերում եմ նրանք և ա՛յն ծերուկից, // Որ նախընտրում էր քնել տակառում»: Հույն ո՞ր փիլիսոփայի մասին է ակնարկում հեղինակը: Իսկ շարունակության մեջ գրում է. «Սերում եմ նրանք և ա՛յն պատանուց, // Որ սիրահարվեց իր իսկ պատկերին»: Իսկ հիմա հունական դիցաբանությունից ո՞ւմ է ակնարկում բանաստեղծը:

4. 2-րդ, 3-րդ և 4-րդ տներում խոսվում է մեծերի ծագումնաբանության մասին: Ի՞նչ պատկերներով և ի՞նչ ձևով է բանաստեղծը ներկայացնում այդ ծագումնաբանությունը:

5. Ինչպե՞ս կմեկնաբանեք բանաստեղծության 5-րդ և 6-րդ տները:

Ի՞նչ է նշանակում «արևի անվտանգ հրդեհ» պատկերը: Ի՞նչ եմ բանաստեղծները ներշնչում պետություններին: Կարո՞ղ ես հիշել այդպիսի գրողների հայ և համաշխարհային գրականության մեջ:

6. Ի՞նչ է ուզում ասել բանաստեղծը, երբ գրում է. «Իսկ թե չեմ լսում՝ մե՛կ է, չե՛մ լռի, // Կխոսեն նույնիսկ իրենց կոշկի՛ հետ»: Կոշիկը կարո՞ղ է խոսողին լսել, թե՞ կարևորն այն է, որ նրանք իրենց մտքերն արտահայտեն:

7. Փորձե՛ք առանձին գրողների և, առաջին հերթին, Պարույր Սևակի օրինակով բացատրել բանաստեղծության վերջին տան իմաստը:

8. Իսկ հիմա, բանաստեղծությունն առանձին մանրամասներով վերլուծելուց ու ընկալելուց հետո, փորձե՛ք պատասխանել սկզբում տրված հարցին: Համաձայն եք այն տեսակետին, որ ամբողջ բանաստեղծության իմաստը մեծերի ազնիվ, համարձակ վարքի փառաբանությունն է, ըստ որի՝ հանուն իրենց գաղափարների նրանք նույնիսկ պատրաստ են վճարել սեփական կյանքով:

9. Կարդացե՛ք «Դարակեսի հիմներ», «Բանաստեղծը» բանաստեղծություններն ամբողջությամբ և ցո՛ւյց տվե՛ք այն ընդհանուրը, որ բնորոշ է այս ու «Վարք մեծաց» գործերին: Նույն կերպ ուսումնասիրիր նշված շարքերում, նաև շարքերից դուրս գետեղված համանման բանաստեղծությունները:

ՆՈՐՕՐՅԱ ԱՂՈԹՔ

Արդեն 10 տարի, 110 տարի, 1010 տարի
Ես վախենում եմ,
Շա՛տ եմ վախենում
Բյուրավոր ու բո՛ւթ հավատացյալից,
Բյուրատեսք ու սո՛ւտ հավատացյալից:
Եթե աստված եք,
Փչեցե՛ք նրանց բոլոր մոմերը,
Մարեցե՛ք նրանց կանթեղներն ամեն,
Հանգցրե՛ք նրանց ջահերն այլազան,

Որ... եղիցի լո՛ւյս:
 Եվ ո՛չ մի գավթում մի՛ ընդունեցեք
 Նրանց մատաղը,
 Որ իրենցը չէ, այլ գողացված է:
 Մերժեցե՛ք նրանց զո՛հն էլ խոստացյալ,
 Որ... զոհ չգնա ինքը հավատը՝
 Մաքո՛ւր-վսե՛մը,
 Անկե՛ղծ-անսո՛ւտը:
 Ու թե աստված եք,
 Ամուր փակեցեք ձեր ականջներն էլ
 Նրանց սողոսկուն աղոթքի դիմաց.
 Անգի՛ր-ինքնահո՛ւ-հաշվեկշռվա՛ծ այն աղոթքների,
 Որով խաբում են ո՛չ իրենց,
 Այլ ձե՛զ:
 Եվ բավակա՛ն է, հասկացե՛ք ընդմիշտ,
 Որ աստծուն նո՛ւյնիսկ հայհոյողները
 Շա՛տ ավելի են գերադասելի,
 Վասնզի նրանց բարկացրել է ինքը հավատը՝
 Խոցվա՛ծ-արյունո՛տ,
 Այրվո՛ղ-ապտակվա՛ծ,
 Ցավա՛ծ-ճչացո՛ղ,
 Մանո՛ւկ հավատը,
 Որ հայր դառնալու համար է ծնվել:
 Ու եթե հայր եք,
 Մի՛ թողեք,
 Որ սուտ հավատացյալներն սպանեն նրան:
 - Ինչքան էլ ծանր է մանուկ թաղելը,
 Մանուկ պահելը ծանր է ավելի...

Քանաստեղծական շարքը միավորում է նյութի բովանդակությամբ, գաղափարով, լեզվով ու ոճով ընդհանրություններ ունեցող գործեր: Պարույր Սևակն այն քանաստեղծներից է, որոնք մտածում են շարքերով, ինչպես, օրինակ՝ «Մարդը ափի մեջ», «Դիմակներ», «Դարակեսի պարզևները», «Աստծու քարտուղարը» և այլն: Շարքերը՝ որպես օրենք, ունենում են նաև գործողությունների, ապրումների ներքին շարժում, որը գաղափարների զարգացման ընթացքն է: Ահա այդպիսին է նաև «Եղիցի լույս» գրքի «Եղիցի լույս» շարքը, որի մեջ էլ զետեղված է «Նորոյա աղոթք» քանաստեղծությունը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ի՞նչ է քանաստեղծական շարքը:
2. Պարույր Սևակի ո՞ր ժողովածուի ո՞ր շարքի մեջ է զետեղված «Նորոյա աղոթք» քանաստեղծությունը:
3. Ինչի՞ մասին է «Նորոյա աղոթք» քանաստեղծությունը:
4. Ո՞ւմ դեմ է կռվում քանաստեղծը և ի՞նչ է երագում:
5. Ինչպիսի՞ մակդիրներով է բնորոշում ճշմարիտ հավատը:
6. Ինչպիսի՞ մակդիրներով է բնորոշում կեղծ հավատացյալների աղոթքը:
7. Ինչպե՞ս կմեկնաբանես քանաստեղծության վերջին երկու տողը:

*Ինչքան էլ ծանր է մանուկ թաղելը,
 Մանուկ պահելը ծանր է ավելի...*

8. Ըստ ձեզ՝ Պարույր Սևակը տեղի՞ն և ժամանակի՞ն է հնչեցրել իր «Նորոյա աղոթք»-ը:

Ո՞ւմ էր հասցեագրված նրա խոսքը: Այս բանաստեղծության իմաստը խորությամբ հասկանալու համար լավ կլինի ծանոթանալ նաև «Եղիցի լույս» շարքի մյուս գործերին:
Լրացուցիչ ընթերցանության համար

ՄԻ ՊԱՀ ԶՂՋՈՒՄ ԵՄ

Ես օգնեցի բոլորին, ես ինձ միայն չօգնեցի,
Կորով տվի ամենքին, միայն ինքս հոգնեցի:

Խորհուրդներով իմ խելոք խելք հավաքած գնացին
Քանի՜ - քանի՜ սը կյանքում - ե՛ս լի գիժ մնացի:

Ով հանդիպեց՝ ստացավ մի թաս գինի ինձանից,
Լոկ ես գինի չըմպեցի իմ սեփական հնձանից:

Ի՞նչ եմ եղել ողջ կյանքում՝ հարսանքավոր ու քավոր,
Մինչ ամենից ավելի ինձ էր օջախ հարկավոր:

Վստահեցին ոմանք ինձ - հոգիս դարձավ գաղտնարան,
Վստահեցի շատերին - գաղտնիքս առան ու տարան:

Ու զղջում եմ ես մի պահ. սեր ու բարիք եմ ցրել,
Մինչդեռ պետք էր սեր հայցել, իսկ բարիքը՝ վաճառել...

Այս բանաստեղծությունը գետեղված է «Մարդը ափի մեջ» շարքում, գրել է 1957 թվականին Մոսկվայում: Ներկայացնում է իր նվիրվածությունը մարդկանց, որին ի պատասխան ինքը ոչինչ չի ստացել: Այդ իսկ պատճառով մի պահ զղջում է իր արած լավությունների համար:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչի՞ համար է զղջում բանաստեղծը: Մեկ առ մեկ թվարկեք նրա հիասթափության շարժանիքները:

2. Եթե բանաստեղծը զղջում է իր արած լավ բաների համար՝ «սեր ու բարիք եմ ցրել», և փորձում է սաստել իրեն («Մինչդեռ պետք էր սեր հայցել, իսկ բարիքը՝ վաճառել...») արդյո՞ք հետագայում ևս նա չպետք է ապրեր շռայլ ինքնանվիրումով:

3. Ըստ ձեզ՝ հնարավո՞ր է, որ բանաստեղծը դառնար հաշվեմկատ:

ԲԱՐԵԽՈՍ ԵՂԻՐ ԻՄ ԵՎ ԻՄ ՄԻՋԵՎ

Օգնի՜ր ինձ, Մարիամ,
Անաղարտ մնամ
Ա՛յն ճահճանման աղտ-աղարտի մեջ,
Որ դժգոհություն բառով է կոչվում:

Դժգոհությունից ես շա՛տ եմ դժգոհ:
Օգնի՜ր ինձ, Մարիամ,
Ե՛վ ասեմ՝ ինչո՛վ.
Բարեխոս եղիր ի՛մ և ի՛մ միջև,
Որ բանն ավարտվի ինքնահաշտությամբ:

Ես խռովել եմ նաև աշխարհից.
Ե՛կ ու վերստին հաշտեցրու դու մեզ,

Թե չէ ես այսպես ապրել չե՛մ կարող:

Ուզում եմ նայել ինձ ու աշխարհին
Լիացա՛ծ, ժպտո՛ւն ու գո՛հ աչքերով՝
Հաղթելով և՛ քաղցը, և՛ պապակ փափագ:

Ուզում եմ ապրել անչար ու բարի՝
Գմբեթի ճեղքում բուսած տուղտի պես...

Մի բու թառել է իմ գույգ աչքերին.
Թռցրո՛ւ նրան:
Մի ձու սպիտակ ինձ բիբ է դարձել.
Կորցրո՛ւ այդ ձուն:

Ճանճեր են նստած ինձ վրա
Այնպե՛ս,
Ինչպես քունջուրը կաթնահունց հացին:
Ճանճը քունջուր թ չէ.
Հացս չի՛ ուտվում:

Ճանճով է լցված իմ նե՛րսը նաև,
Ինչպես վարսանդը՝ խաշխաշի սերմով:
Խաշխաշ չե՛մ ուզում.
Կակա՛չ դարձրու:

Ասում են, իբր, կապույտի վրա
Չեն նստում ճանճերը:
Լսո՞ւմ ես, Մարիա՛մ,
Ինձ ներս ու դրսից կապո՛ւյտ հագցրու...

ԲԱՌԱՐԱՆ

աղտ-աղարտ - կեղտոտություն

պապակ փափագ - բուռն տենչ, մի բանի բուռն կարոտ՝ փափագ ունեցող

տուղտ - ծաղկաբույս

քունջուր (քնջուր) - միամյա յուղատու բույսի հատիկները, որ օգտագործվում է սնունդի մեջ

վարսանդ - ծաղկավոր բույսերի բազմացման տեղը ծաղիկի կենտրոնում

խաշխաշ - կակաչ, կակաչի միջուկը, որի մեջ կան ձեթ և ավիոն (թմրանյութ) պարունակող սերմեր

Այս բանաստեղծությունը Պարույր Սևակը գրել է 1963 թվականին: Չետեղված է «Եղիցի լույս» գրքի «Նորից չեն սիրում, սիրում են կրկին» շարքում:

Բանաստեղծը մաքրագործման տենչով խոսքը ուղղում է տիրամայր Մարիամին, խնդրելով, որ նա հաշտեցնի իրեն իր իսկ հետ, որ ինքը հաշտ ու խաղաղ ապրի, մոռանա դժգոհությունը: Խնդրում է նաև իրեն ներսից և դրսից կապույտ հագցնել: Կապույտը երկնքի ու մաքրության գույնն է, որի վրա կեղտ՝ ճանճեր չեն նստում: Ջլատիչ իրականության մեջ երկփեղկված մարդու ինքնահաշտեցման տենչն է ամբողջ բանաստեղծությունը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչպե՞ս կմեկնաբանեք բանաստեղծության վերնագիրը:
2. Ինչո՞ւ է բանաստեղծը դիմում տիրամայր Մարիամին:
3. Ի՞նչ է խնդրում բանաստեղծը:
4. Ինչո՞ւ է բանաստեղծը դժգոհ, խռով, դրա փոխարեն ինչպիսին է ցանկանում է լինել:
5. Ինչպիսի՞ պատկերներ է օգտագործում իր երկվությունը ցույց տալու համար:
6. Ինչի՞ խորհրդանիշն է ճանճը:
7. Ինչի՞ խորհրդանիշն է կապույտը:

ԱՐՎԵՍ

Քամին է երգում ինչ-որ եղանակ,
Որ Բեթհովենին պատիվ կբերեր:

Մութ հորիզոնին աղոտ այգալույս՝
Մի Ռեմբրանդյան նորահայտ նկար:

Շեքսպիրին է կյանքը ձեռ առնում՝
Իր ողբերգական դրամաներով...

Իսկ մե՞նք՝ ե՛ս և դու արվեստ ենք խաղում
Եվ... մի այնպիսի՝ համզվածությամբ,

Որ Սերվանտեսի հերոսն էլ չուներ...

ԲԱՌԱՐԱՆ

Լյուդվիգ վան Բեթհովեն (1770-1827) - գերմանացի երգահան: Աշակերտել է Մոցարտին: 27 տարեկանից խլացել է: Բազմաթիվ սիմֆոնիաների, կոնցերտների ու սոնատների հեղինակ: Հայտնի են նրա հատկապես իններորդ սիմֆոնիան, «Կրեյցերյան սոնատ»-ը:

Հարմենս վան Ռեյն Ռեմբրանդ (1606-1669) - հոլանդացի գեղանկարիչ: Հայտնի են նրա «Ինքնանկար Սասկայի հետ», «Անառակ որդու վերադարձը» և շատ այլ նկարներ:

Վիլիամ Շեքսպիր (1564-1616) - անգլիացի թատերագիր, բազմաթիվ ողբերգությունների և կատակերգությունների հեղինակ՝ «Համլետ», «Օթելլո», «Մակբեթ», «Լիր արքա», «Ռոմեո և Ջուլիետ», «Միրո ապարդյուն ճիգեր», «Ոչինչից մեծ աղմուկ»: Հ. Թոմանյանի բնորոշմամբ Շեքսպիրը համաշխարհային գրականության արևն է:

Միգել դե Սերվանտես Սաավեդրա (1547-1616) - իսպանացի թատերագիր և արձակագիր: Հանրահայտ «Դոն Կիխոտ» վեպի հեղինակը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ի՞նչ է ուզում ասել Պարույր Սևակը այս բանաստեղծությամբ: Ըստ նրա՝ ի՞նչ է արվեստը և ո՞րն է արվեստի հիմքը:

2. Ինչո՞ւ է Պարույր Սևակը հիշում համաշխարհային արվեստի այնպիսի մեծագույն ներկայացուցիչների անուններ, ինչպիսիք են Բեթհովենը, Ռեմբրանդը, Շեքսպիրը, Սերվանտեսը:

3. Ինչպե՞ս կմեկնաբանեք բանաստեղծության վերջին երեք տողերը:

4. Արվեստի բարձրագույն չափանիշ, որ ստեղծել են համաշխարհային նշանակության մեծությունները, որոնց անունները հիշատակում է Պարույր Սևակը, և կայնք՝ իր դեռևս չյուրացած արվեստով: Այս բանաստեղծության մեջ ո՞րն է ավելի առաջնային, ի՞նչն է ավելի գերադասում Պարույր Սևակը:

ՄՈՒՇԵՂ ԳԱԼՇՈՅԱՆ (1933-1980)

Մուշեղ Գալշոյանը 1960-1970-ական թվականների հայ արձակի արժանավոր ներկայացուցիչներից մեկն է: Նա գրականություն բերեց արևմտահայության այն սերնդի կյանքը, որը կռվել էր պատմական հայրենիքի համար, զենքը ձեռքին ստիպված նահանջել եղեռնագործ թշնամու յաթաղանից, վերահաստատվել Հայաստանի պահպանված մի հատվածում և հիմա, արդար վրեժի ցասումը սրտում, հեռանում էր կյանքից: Դա հայրենասիրական առողջ գրականություն է, որ սերունդներին է փոխանցում պատմական հայրենիքի կարոտն ու հիշողությունը և մի օր այն ազատագրելու հույսը:

Մուշեղ Գալշոյանը (Մանուկյան) ծնվել է 1933 թվականի դեկտեմբերի 13-ին Թալինի շրջանի Կաթնաղբյուր գյուղում՝ եղեռնից փրկված սասունցու ընտանիքում: Մանկության և պատանեկության տարիներին ապագա գրողը լսել է հոր ու համագյուղացիների պատմությունները կորուսյալ ծննդավայրի մասին, ոգեշնչվել հայրենիքի համար ուղի ելած հերոսների պայքարով, ինչն էլ նրա մեջ թանձրացրել է կարոտի մորմոքը: Այդ պատմություններից ու տպավորությունների էլ հետագայում պետք է հյուսվեին նրա պատմվածքներն ու վիպակները:

Մուշեղ Գալշոյանը սովորել է հայրենի գյուղի միջնակարգ դպրոցում, այնուհետև դարձել Երևանի գյուղատնտեսական ինստիտուտի այգեգործական բաժանմունքի ուսանող, որն ավարտել է 1957 թվականին: 1958-1960 թվականներին աշխատել է մասնագիտությամբ, ապա նվիրվել գրական գործունեության: Որպես լրագրող աշխատել է թերթերում և «Գարուն» ամսագրում:

1969-1971 թվականներին ուսանել է Մոսկվայի Գորկու անվան գրական ինստիտուտի բարձրագույն դասընթացներում: 1975-1977 թվականներին աշխատել է «Մովետական գրող» հրատարակչությունում՝ որպես գեղարվեստական գրականության բաժնի վարիչ: Այդուհետև անցել է ստեղծագործական աշխատանքի:

Նա շատ լավ գիտեր իր հայրենիքը, ճանաչում էր նրա յուրաքանչյուր անկյունը և այդ մասին գրել է խոր մտահոգություններով լի բազմաթիվ ակնարկներ, որոնք զետեղված են «Ծաղկած քարեր» (1973) ժողովածուի մեջ: Սակայն նրա տարերքը գեղարվեստական գրականությունն էր:

1969-ին լույս տեսավ «Կռունկ» ժողովածուն, որի մեջ զետեղված էին «Ձորի Միրոն» և «Կածանի ճամփորդներ» վիպակները: Դրան հաջորդեց «Բովտուն» (1974) վեպը: Նրա գրական ձիրքը կատարյալ արտահայտություն ունեցավ «Մարութա սարի ամպերը» պատմվածքների ժողովածուի մեջ, որը լույս տեսավ գրողի մահից հետո՝ 1981-ին: Այդ գրքի համար նա արժանացավ Հայաստանի Պետական մրցանակի դափնեկրի կոչման:

Մահացել է 1980 թվականի հոկտեմբերի 15-ին ողբերգական պատահարի հետևանքով:

Դեպքը տեղի է ունեցել այսպես:

Ազատամարտիկի հոգեբանությամբ ապրող գրողը դարձավ «Որսորդ» միության անդամ, որպեսզի զենք պահելու իրավունք ունենար: Այդ օրը հրացանը ձեռքին ընկերների հետ դուրս են եկել շրջագայելու հայրենի բնության գրկում: Նստել են հանգստանալու: Հրացանը դրել է գետնին: Հետո հիշել է, որ ազատամարտիկի համար հրացանը սրբություն է, չի կարելի դնել գետնին: Հրացանի փողը դեպի իրեն է բարձրացրել, որպեսզի դնի ծնկներին, այդ պահին հրացանի ձգանը դեմ է առել մի կոշտ մացառի, շարժումից կրակել և արճիճն ամբողջ կոտորակը լցվել է նրա մարմնի մեջ:

Թաղվել է հայրենի գյուղում:

Մուշեղ Գալշոյանը գրականություն բերեց արդեն պատմություն դարձող կենդանի հերոսների կերպարներ: Նրանք բոլորն էլ հողի պարզ աշխատավորներ են, բայց նրանց միավորում է ճակատագրի ընդհանրությունը: Նրանք այն սերնդի ներկայացուցիչներն են, որոնք բռնի հալածվել են իրենց ծննդավայրից և հիմա ապրում են այդ ծննդավայրի հուշերով, կարոտներով և այնտեղ վերադառնալու երազանքով: Այդ սերնդի համար վերադարձի ճանապարհները փակ էին, նրանք բոլորն էլ կյանքից հեռացան մի անամոք թախիժով, որ նաև հայրենիքի փրկության ավանդ էր հաջորդ սերունդներին:

Ահա այս մասին գրեց Մուշեղ Գալշոյանը, որի պատմվածքներից «Մամփրե արքան» գե-տեղված է «Մարութա սարի ամպերը» ժողովածուի մեջ:

Մուշեղ Գալշոյանը որպես գրող իրեն տեսավ բանահյուսության պատառիկներ հավաքողի, հեռացող արժեքները փրկողի ու այդ մասին պատմողի դերում: Նրա հերոսները հենց այդ բանահյուսության պատառիկներն են, որոնք գալիս են մի իրականությունից, որը շատ ավելի մոտ է ազգային դյուցազներգությանը: Ասես «Մասնա ծռեր»-ի շարունակվող պատմության ու նոր պատումների մարմնավորումը լինեն: Այդպես են բոլորը, և Մուշեղ Գալշոյանն իր գրականությամբ կենդանի էր պահում բանահյուսական ավանդույթը:

ՄՈՒՇԵՂ ԳԱԼՇՈՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Օր չկա, որ չհիշեն Մուշեղ Գալշոյանին: Մեծ կորուստ էր: Ափսոս: Ժողովուրդը միշտ հեղի-նակի կերպարի կարիքն ավելի ունի, քան նրա գրածի: Մուշեղն ինքը պատրաստի կոերպար էր, ազգային չտեսնված կերպար: Մուշեղը աճեց աչքիս առաջ: Մի օր ասաց՝ Միսիան եմ գնում, գործուղում: Գնաց: Եկավ: Լույս տեսավ «Ծաղկած քարեր»-ը: Այս ակնարկով իսկ մեծ է: Ցավ կա: Մուշեղի ցավը ժողովրդի ցավն է: Մուշեղի կերպարը ժողովրդի մեջ կա: Ժողո-վուրդն այնպես է ջոկում՝ ով իրենն է, ով՝ իրենը չէ: Մուշեղի հրաժեշտին այդքան մարդ հա-վաքվելը պատահական չէր: Միայն մեծը կարող է միավորել այդքանին: Գիտեի՞ք՝ սիրված է, բայց որ այդքան մտել է ժողովրդի տարբեր խավերի մեջ և այդ աստիճան ժողովրդավարու-թյուն է վայելում, չգիտեի՞ք:

Մուշեղը հաշվի էր առնում՝ վաղը ինչ կարող է պատահել: Տառապում էր մինչև բառը գտնե-լը: Բայց տառապանքը ցույց չէր տալիս: Չայնը լսում եմ, աչքերը, առաքինի դեմքը՝ տեսնում: Մի տեղ ռանչայար, մի տեղ մաքուր ազնվական, մի տեղ «ծուռ» բայց միշտ անսահման ազնիվ, անկեղծ մարդ:

Համո Սահյան

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ե՞րբ և որտե՞ղ է ծնվել Մուշեղ Գալշոյանը:
2. Ի՞նչ միջավայրում են անցել նրա մանկության և պատանեկության տարիները: Որտեղի՞ց էին նրա ծնողները, համագյուղացիները, որոնք էլ դարձան նրա գրական հերոսները:
3. Ի՞նչ կրթություն է ստացել Մուշեղ Գալշոյանը:
4. Ի՞նչ գրքեր է հրատարակել նա:
5. Ինչի՞ մասին է գրում Մուշեղ Գալշոյանը:
6. Ի՞նչ պատահարի զոհ դարձավ գրողը:
7. Համո Սահյանը ինչպես է գնահատել Մուշեղ Գալշոյանին:

ՄԱՍՓՐԵ ԱՐՔԱՆ

(Կրճատումներով)

1

Մամփրեն անագին ժամանակ հետևում էր, թե երրորդ դասարանցի թռռնուհին ինչպես է այբուբենը սովորեցնում եղբորը, որպես թե նախապատրաստում է, որ տղան գալ տարի այբուբենը սերտած գնա դպրոց: Եվ տես, թե ինչպես է սովորեցնում. շուտասելուկի պես, -ա-բ-գ-դ-ե-զ...-առանց հնչեցնելու, առանց ներդաշնակելու: Բա Մամփրեի սովորած այբուբենը ա՞յդ էր, այդպե՞ս էր: Վարժապետ տեր Հարությունը նահատակվեց, այբուբենը հո չփոխվե՞ց:

Իսկ երբ թռռնուհին ճլտեց թռռանը, Մամփրեն էլ չհամբերեց.

– Աղջի՛:– Եվ հերտտ ոտքի ելավ:– Մխալ-մխալ կզրուցե քիչ է, հըլը տղին էլ կճլտե:– Եվ

այբբենարանը խլեց-շարտեց մահճակալին, իսկ տղային քաշեց ծնկների արանքը:

– Քու քուրն սուտասան է, ձգուկ, էդ փափռեճի գրուցին ականջ մի՛ պահե:

Այա հերստո դարձավ թռռնուհին.

– Էդ ի՞նչ սուտ ու փուտ է կտվորեցնիս տղին:

– Սուտը...,- թռռնուհին ուզեց շշարել պապին, բայց զսպեց իրեն:- Գրքում է եղպես գրված:

– Բեր տեսնիմ,- խիստ պահանջեց պապը:

Թռռնուհին տարակուսած նայեց. պապը, ախր, տառաճանաչ չէ, ճիշտն ու սխալը էդ ինչպե՞ս պետք է ստուգի և այն էլ, այն էլ՝ գրքով: Եվ փոթկացրեց ափի մեջ:

– Գիրքն հոս բեր... Դե բաց ու ինչպես մեջ գրքին է, եղպես գրուցե: Կարդա հատիկ-հատիկ,- խիստ պահանջեց Մամփրեն,-կարդա մեկիկ-մեկիկ ու մեկիկ-մեկիկ ցուցամատե:- Եվ աչքը բաց էջին լարված՝ սպասեց:

– Այբ-բեն-գիմ-դա-եչ-զա...

Մինչ Մամփրեն փորձում էր աշալուրջ հետևել, թռռնուհու ցուցամատը ցուլաց, և նա շուտասելուկով կտրեց այբուբենի երկու շարքը:

– Համբերե:- Նեղսրտեց Մամփրեն:- Քեզ ասի հանդարտիկ կարդա: Հատիկ-հատի կարդա ու ցուցանե:

– Ա՛յբ...բե՛ն...գի՛մ...դա՛...

– Համբերե: Գիմ-ից հետո նորեն կարդա:

Թռռնուհին շփոթվեց և սկսեց նորից.

– Ա՛յբ...բե՛ն...գի՛մ...,- հարցական նայեց պապի աչքերին:

Մամփրեն լարված սպասում էր:

– ...դա՛,- թռռնուհին մատնացույց արեց և ուզեց շարունակել, բայց Մամփրեն ընդհանտեց:

– Համբերե:-Լարված նայում էր տառերի շարուկին:- Հըը գիմ-ն ցուցամատի:

– Էս է:

– Գիմ-ից հետո հարկ է, որ եղնի՛ էլ, Հովակիմ:

– Ի՞նչ:

– Ել, Հովակիմ,- նեղսրտեց Մամփրեն:

– Ել, Հովակիմ:- Ափի մեջ փոթկաց թռռնուհին:- Այդպիսի բան չկա:

– Լավ նայե:

– Չկա, այ պապ, չկա:- Չիք:- Եվ ափերը հաղթական շրխկշրխկացրեց:- Տեսա՞ր, որ սուտ ու փուտ չեմ սովորեցրել: Դե, արի:- Եվ քաշեց եղբոր թևից:

– Համբերե:- Եվ թռռանը ծնկների արանքում սեղմած, մտածկոտ հայացքը այբբենարանին՝ Մամփրեն շնչաց:- Թե եղպես է. գիրքն է սխալ:

Թռռնուհին քաշում է եղբոր թևից:

– Համբերե,- հերստեց Մամփրեն և թռռանը պինդ սեղմեց ծնկների արանքը:- Այբուբենը ես կտվորեցնեմ իմ ձգուկին:

* * *

– Ա՛յբ, բե՛ն, գի՛մ,

Ել, Հովակիմ

Դա՛, ե՛չ, զա՛,

Լծիր եզան:

Վարժապետ տեր Հարությունը արտասանում էր, և իրենք խմբով կրկնում էին: Տեր Հարությունը հայոց տառերն էր ասեղնագործում ճերմակ պաստառին, հետն էլ արտասանում այբուբենը, և իրենք խմբով կրկնում էին -

Է՛, ը՛թ, թո՛,

Վե՛ր կաց, Թաթո,

Ժե՛, ինի՛, լյո՛ւն,

Կապիթր քո շուն:

Տեր Հարությունը մեծ ու ճերմակ պաստառը կախել էր Տիրամոր նկարի կողքին և վառ կարմիրով հյուսում էր տառերը: Հայոց տառերը կարմիր են, բացատրում էր տեր Հարությունը, քանզի սուրբ Մաշտոցը իր սրտից է հանել ի լույս: Եվ կարմիր են, քանզի թրծվել են արդար Արեգակով: Եվ կարմիր են, քանզի սրբազան կռիվների են մասնակից եղել: Եվ ասեղնագործում էր հանդարտիկ, հեռվից ու մոտիկից ուշադիր զննելով, երբեմն այնպես վերացած, որ իրենց թվում էր, թե հայոց տառերը նոր-նոր հորինվում են, և տեր Հարությունն է ստեղծողը: Օրը՝ մեկ տառ: Եվ օրեր շարունակ իրենք կրկնում, հա կրկնում ու սերտում էին այբուբենը -

Խե՛, ծա՛, կե՛ն,
Ո՞ր է Հակեն:
Հո՛, ձա, դա՛տ,
Միհրան, Միհրդատ:
Ճե՛, մե՛ն, հի՛,
Կգանք հիմի:

Գյուղում բոլորը գիտեին, որ տեր Հարությունը ճերմակ պաստառին կարմիր տառեր է ասեղնագործում և որպես թե ի հիշատակ մշեցի այն ուսուցչի, որին սուլբանը, ասում են, կախադան է հանել: Մահապարտ այդ ուսուցիչն է հայոց այբուբենը հանգավորել այսպես,- Ա՛յբ, բե՛ն, գի՛մ, Ե՛լ, Հովակիմ,- ներդաշնակ այնպես, որ երեխաները շուտ սովորեն այբուբենը և բոլորովին չմոռանան -

Նո՛ւ, շա՛, ո՛,
Պրծի՛, Շավո՛,
Չա՛, պե՛, ջե՛,
Ուշ է, Վաչե՛:

Ասում էին նաև, որ տեր Հարությունը շուտով Հնդու աշխարհ պետք է գնա, և գրերը տանելու է Հնդու աշխարհի հայերին: Ուրիշները թե՛ տառերը ասեղնագործում է ի սեր աշխարհի ծայրը հասած մեն ու մինուկ մի հայի, ճերմակ պաստառին հյուսած հայոց կարմիր գրերը նրան է ուղարկելու՝ աշխարհի ծայրը հասած ու մոլորված մինուկ ու մինուճար պանդուխտ հային: Նրան է ուղարկելու: Ո՛չ, բոլորին առարկում էր գյուղի ամենատարեցը և գյուղի ամենահզոր ընկուզենու տեր Օհան պապը (ասում էին, որ նա՝ Օհան պապը, և իր հսկա ընկուզենին տարեկիցներ են): Ո՛չ, առարկում էր Օհան պապը, տեր Հարությունը գրերն ուղարկելու է սուլբանին մվեր: Այո՛, այո՛, մվեր, սուլբանին մվեր՝ ի հեճուկս:- Դու մշեցի ուսուցչին կախադան հանեցիր, իսկ սուրբ Մաշտոցի գիրն ի՞նչ կարող ես անել:- Այս մեկ: Եվ ապա:- Դու սուլբան ես, բայց քո սեփական տառերը չունես և քո արյունոտ հրամանները գրում ես այլոց տառերով: Իսկ մենք թագավոր չունենք, բայց ունենք սեփական գիր: Եվ, իմացած եղիր, որ սուրբ Մաշտոցի գիրն էլ մեր թագավորն է: Եվ մենք քո արնոտ ձեռքը մերժում ենք և մեր արդարախոս ու արդարամիտ թագավորի ձեռքը համբուրում ու դնում ենք մեր գլխին: Ա՛յ, այդպես:- Ամեն մեկն իրենն էր ասում, իսկ տեր Հարությունը լուռ ու խորհրդավոր ասեղնագործում էր տառերը, օրը՝ մեկ տառ: Երբեմն նաև պատմություններ էր անում սուրբ Մաշտոցի և նրա արարչագործ, անպարտելի, ասպետ զինվորների - գրերի մասին: Հրաշք բաներ, որ լսում էին բերանբաց և ընկնում հեքիաթների աշխարհը... բայց ամենաշատը, ամենաշատը այբուբենն էին սերտում. կրկնում, հա կրկնում ու սերտում էին -

Ռա՛, սե՛, վե՛վ,
Ծագեց արև:
Տյո՛ւն, բե՛, ցո՛,
Մարդ աստծո:

Հետո մի մամիկ լուր տարածեց, թե տեր Հարությունը երազ է տեսել, երազում ճերմակ ձիավոր սուրբ Սարգիսը հայտնվել է ու ասել՝ շուտով ջրհեղեղ է լինելու: Ճերմակ ձիավոր սուրբ Սարգիսն է ձին կանգնեցրել ու ասել տեր Հարությունին: Եվ նա հիմա շտապում է ասեղնա-

գործել հայոց կարմիր տառերը և ծոցը դրած՝ բարձրանալ Արարատ: Դրա համար էլ մեծ-լայն սավանի վրա է հյուսում և գլխա-գլխատառերով... Եվ գյուղը հավատաց: Եվ հավատացին իրենք՝ երեխաները, հավատացին, որովհետև վարժապետը այդ օրը եկավ և հայտարարեց,- զավակներս, այսօր մեր վերջին դասն է. սուրբանը պատերազմ է հայտարարել աշխարհին Ռուսիո: Եվ ես աճապարում եմ ավարտին հասցնել ասեղնագործած գիրն իմ:- Իսկ նախնական պայմանավորվածությունը այլ էր. քանի դեռ ինքը՝ վարժապետը, տառերն է հյուսում, այդ ընթացքում իրենք պետք է ամեն օր, չհաշված կիրակի օրերը, ամեն օր արտասանեին, կրկնեին ու սերտեին այբուբենը, և ապա՝ գործն ավարտելուց հետո, վարժապետը տառ առ տառ պետք է սովորեցներ գրերը: Այդպես էին որոշել, բայց եկավ և ասաց: - Պատերազմ է, զավակներս, և ձեր հայրերին, հարկավ, ասկյար կտանեն: Գնացեք ձեր հայրերի մոտ: Եթե տերը կամենա, նորեն կհավաքվեք, և ձեզ կուսուցանեն սուրբ Մաշտոցի գրերը: Իսկ այժմ, զավակներս, վերջին անգամ միասին հնչեցնենք այբուբենն հայոց:- Եվ այբուբենի վերջը այնպե՛ս էին ձգում, այնպե՛ս էին ձգում, առանց պայմանավորվելու բոլոր երեխաները միաշունչ (և վարժապետն ինքն էլ, վարժապետն էլ) վերջը այնպե՛ս էին ձգում... Չէին ուզում, որ այբուբենը վերջանա -

Վյո՛ւն, փյո՛ւր, քե՛,
Քելե՛, Սրբե,
Ե՛վ, օ՛, ֆե՛,
Օ՛, ինչ գով է:

– Դե՛, զավակներս, տերն ընդ ձեզ:

Առավոտ էր, բայց գյուղը լուռ էր: Այբուբենին դաշնած կանչերը, որ իրեն թվում էր, թե մշեցի վարժապետը իրենց գյուղից, հենց իրենց գյուղից է վերցրել, բարձրաձայն ու բարձրախոս իրենց գյուղացիներից, այդ կանչերը չկային: Այն, ինչ ամեն օր կար, այդ առավոտ չկար, իսկ այն, ինչ չպետք է լիներ, կար. գյուղի շներն էին խառնվել իրար, կտուրներին կանգնած, դնչներն ի երկինք՝ կատաղի հաչում էին: Շները ինչպե՛ս էին հասկացել, որ թուրքաց սուրբանը պատերազմ է հայտարարել ռուսաց ցարին: Շները արևոտ ու գուլալ օրով և օր ցերեկով ձեն-ձենոց ոռնում էին, իսկ գյուղի այրերը հավաքվել էին Վարի թաղում՝ Օհանի ընկուզենու տակ... Մի մասը ուրախ էր, որ սուրբանը պատերազմ է հայտարարել՝ արյունով ներկված գառի վերջն է եկել, ուրեմն, և աստված մոլորեցրել է սուրբանին, և նա ռուսաց ցարին կռիվ է հայտարարել: Ռուս սաղաթների սվինները այս անգամ կփայլեն Ծիրնկատարին, կշողշողան Անդոկ կեռան կատարին: «Քեռին» այս անգամ անպայման կգա:

Իսկ մյուս մասը նոր պատերազմը գտնում էր որպես նոր աղետ, ռուսը, իհարե, կհաղթի, կասկած չկա. սաղաթի սվինից ասկյարը դողում է, ռուսը միշտ է հաղթել և էլի կհաղթի: Ռուսաց սվինը կհաղթի, այո, բայց վերջում, վերջում, ամենավերջում կհաղթի Եվրոպայի դիվանագիտությունը: Այո՛, Եվրոպայի նենգ քաղաքականությունը հաղթող դուրս կգա: Ա՛յ, այդպես կլինի: Այդպես եղել է և այդպես կլինի: Եվ անիշխան ու անզեն ժողովուրդը կպատժվի իր երազի, հույսի և ռուսասիրության համար:

Գյուղ հասած լուրը ավետի՞ս էր, թե՞ բոթ... Ավետի՞ս է, թե՞ բոթ... Օհանի ընկուզենու տակ հավաքված այրերը այդպես էլ չորոշեցին, բայց որ գյուղը սուրբանի անարդար բանակին զինվոր չի տալու, դա արդեն քննելու բան չէր: Ռ՞վ, հայորդին դառնա յաթաղանակիր ասկյար և կռվի ռուս սաղաթի դե՞մ... չի եղել և չի լինի: Պատմությունը այդպիսի մի օրինակ, գեթ մի փաստ չի արձանագրել:

Եվ մտախոհ ցրվեցին. ով «չախմախի» թվանք ունի, թող լիցքավորի, ով թուր ունի, թող սրի, ով մի կարգին չախու ունի, թող սրի:

Հոր հետ քայում էին լուռ, ելվերում էին իրենց թաղը՝ Վերին... Վերին թաղ, Վերին թաղ և Վերին թաղի վերին տուն... Տան թիկունքին սարալանջն էր, լանջին՝ շաղգամի արտը, և շաղգամի արտն ի վեր՝ Մեհրեաղբյուրը: Առավոտյան ինքը Մեհրեաղբյուրի ջուրը կապեց շաղգամի արտին և ապա գնաց այբուբենը սերտելու: Իսկ, ահա, ջուրը կտրվել էր... Օսմանի լակոտ, Օսման, աղբյուրի ջուրը էլի նա է կտրել, այդ ճպոռտ լակոտը: Որտեղ՞ից հայտնվեցին ու հարամեցին գյուղը: Գյուղը, փողոցը, հողը, ջուրը, աղբյուրը: Էն խեղճ պառավի (անունն ինչպե՞ս էր)

հիմար որդին դարիպության գնաց, գնաց հիմարը ու էլ չերևաց, և պառավը մեռավ, և պառավի հիմար որդու փոխարեն որտեղից որտեղ այդ հարամ Օսմանը հայտնվեց ու տիրացավ տանը: Իր անունը՝ Օսման, լակոտի անունը՝ Օսման, աշխարհում էլ ուրիշ անուն չկա: Հայտնվեց, տիրացավ պառավի տանը և ասում է, թե տունը գնել է. գայմագամից, այսինքն՝ գավառապետից թուրք ունի: Երեկ-մյուս օր է հայտնվել, բայց գյուղի անունը արդեն աղավաղել-հարմարացրել է իր լեզվին, իսկ Մեհրեաղբյուրը կնքել է Աթաբունար, որպես թե հին անունը՝ աղբյուրի նախնական անունը այդ է եղել՝ Աթաբունար: Մադայելի ծնունդ, այդպիսի բան ինչպե՞ս կարող է լինել. չէ՞ որ աղբյուրը Մեհրի անունով է: Առյուծ Մեհրի անունով: Աղբյուրն իր պատմությունն ունի, Մեհրը, ուրեմն, Սասնա տան Մեհրը, հենց այստեղ՝ այս սարի վրա է առյուծին հանդիպել, հանդիպել ու դատարկ ձեռք ճղել է առյուծին և, աստծո հրամանով, այդտեղից առյուծին հանդիպած ու ճղած տեղից, աղբյուր է բխել: Ա՛յ, այդպես է եղել: Եվ Մեհրը կնքվել է Առյուծ Մեհր, իսկ աղբյուրը՝ Մեհրե: Ա՛յ, այդպես է եղել...

Եվ լցված ու հերստտ քշեց դեպի աղբյուրը... Սուլթանը ռուսաց ցարին պատերազմ է հայտարարել, վարժարանը փակվեց, հորը ուզում են ասկյար տանել, վարժարանը փակվեց, գյուղի շները օրը ցերեկով խառնվել են իրար, վարժարանը փակվեց, դու էլ, Օսմանի ճպռոտ լակոտ, դու էլ Մամփրեի՞ն ես կռիվ հայտարարել: Հիմա կտեսնենք...

Այո՛, աղբյուրի ջուրը Օսմանն էր կտրել, իրեն հասակակից, ճպռոտ, բայց ցիցքիք այդ լակոտը: Ջուրը շուռ էր տվել իրենց տան կողմ և մատել էր ուրթին:

Եվ հասնելն ու ոտքի տակ առնելը մեկ եղավ... հետո թևից բռնեց-շարտեց իրենց հարամ տան կողմ և դարձավ ջուրը կապելու: Ծնկեց ուրթի մոտ և...

* * *

– Օխտաշշ...- Մամփրեն, թռանը ծնկների արանքում սեղմած, ձեռքը տարավ գլուխը: Ծոծրակի մոտ այնպես իրական պոռթկաց ցավը, ինչպես, է՛, այն օրը, երբ այդ նենգ լակոտը, այնուամենայնիվ, թիկունքից քարով զարկեց-ջարդեց իր գլուխն ու փախավ: Փախչում էր և, ուսն ի ետ, քարերի պես շարտում,- Աթաբունար... Աթաբունար,- որպես թե՛ աղբյուրի անունը Մեհրե չէ, աղբյուրը քունը չէ...

Մամփրեն ցավով տմբտմբացրեց անցած հուշերին - Օսման, դու ճպռոտ լակոտ էիր, բայց դու պարծենալու իրավունք ունես. նենգորեն ջարդեցիր Մամփրեի գլուխը և մնացիր անպատասխան... Կոտորում եղավ, գաղթ եղավ, և Մամփրեն ճար չունեցավ, քեզ ոտքի տակ զցելու հնար չունեցավ: Մարաթուկ վկա, Մամփրեն քեզ այնպես կտորորեր, որ դու այլևս չէիր պղծի աղբյուրի սուրբ անունը: Սուրբ և տիրակոչ: Դու ավարառու անօրեն ես, բայց իրավունք ունես պարծենալու. աղբյուրի անունը, այնուամենայնիվ, պղծվեց, իսկ Մամփրեն հայոց գրին այդպես էլ անծանոթ մնաց... Տեր Հարությունը հյուսած տառերը դրեց ծոցն ու ելավ Արարատ, գնաց ու կորավ վիհերում ու ձյունների մեջ, և ինքը՝ Մամփրեն, հայոց տառերին անծանոթ մնաց:

Իսկ ե՞րբ սովորեր՝ կոտորումի ժամանակ, գաղթի ճանապարհի՞ն, հետո... հետո՝ պատերազմի դաշտո՞ւմ... Ե՞րբ: Բայց եղավ, այդպիսի մի պատեհություն եղավ, ախր, հայտնվեց, բայց այն էլ ինքը չկարողացավ օգտագործել. իր հիմար բնավորության պատճառով՝ խռովկանության: Այս նոր՝ Քարագլուխ գյուղի սովետականացման առաջին տարիներին գյուղում անգրագիտության վերացման կայան բացվեց, ախր լիկկայան: Վարժապետը ջահել, իրենից շատ ջահել մի տղա էր: Եվ հենց առաջին օրը ի՞նչ արեց այդ լղպորը. մատը տնկեց իր կողմ, թե՛ մեկից տասը հաշվիր: Վիրավորվեց, բայց, դե, վարժապետն էր պահանջողը, հաշվենք թե՛ տեր Հարությունը:

– Մեզ, էրգու, իրիք...

– Երկու... երեք,- ուղղեց լիկկայանի վարժապետը:

– Երկու... եր... երեք..., չուրս...

– Չորս,- ուղղեց վարժապետը:

– Չուրս... չուր... չորս,- քրտնած տակից դուրս եկավ,- չորս, հինգ, վից...

– Վեց,- ուղղեց վարժապետը:

– Վից:

– Վեց:

– Վի... վից...- և հա փորձեց, վարժապետն էր ստիպում, ու հա՛ անարդյունք, և վիրավորված ու խռով թողեց հեռացավ լիկկայանից: Չլիներ այդ անհնազանդ «վիցը» (վեց-վեց-վեց... տե՛ս, թե ինչ հանգիստ է պտտում լեզուն, վից կամ վեց, ի՞նչ տարբերություն), չլիներ այն հիմար վարժապետը, այն ժամանակ Մամփրեն տառերը սովորած կլիներ: Դրանից հետո այլևս ի՞նչ տառ, ի՞նչ գիր... Լավ է դեռ, տեր Հարությունի սովորեցրած այբուբենն էլ չի մոռացել, զարմանալի է, որ չի մոռացել. քանի՞ տարի է անցել. վաթսունչորս, վաթսուհի՞նգ, բայց տե՛ս, որ հիշում է,- ա՛յբ, բե՛ն, գի՛մ, Ե՛լ, Հովակի՛մ...- Հա, լիկկայանից հետո այլևս ի՞նչ գիր. մինչև քիչ ու միչ ուշքի եկավ, էլի պատերազմ, և Մամփրեն՝ ճակատային, և գիր չիմանալու պատճառով, նամակ չգրելու պատճառով գյուղում լուր էր տարածվել, թե Մամփրեն անհայտ կորած է: Իսկ պատերազմից հետո... Խենթություն կլիներ, որ կովից տուն գալուց հետո Մամփրեն նստեր ու գրերը սովորեր... Եվ այդպես էլ տեր Հարությունի ասած ժամանակը չեկավ: Չեկավ և... բայց... գուցե հիմա՞ է, հայոց գիրը սովորելու իր ժամանակը:

– Հըմը թող զիս, ձգո՛ւկ:- Մամփրեն թռռանը հրեց ծնկների արանքից, ոտքի ելավ և սկսեց անհանգիստ քայլել:

«Մարաթուկ վկա, սուրբ Մաշտոցի գրերն սովորելու Մամփրեի օրն ու ժամանակը նոր-նոր տեղ է հասե»:

2

Եվ գյուղը դրնգաց. Մամփրեն որոշել է տառաճանաչ դառնալ: Մամփրեն՝ ութսունին մոտ, ութսուն տարի առանց գրի յուր է գնացել, իսկ ահա որոշել է գրել-կարդալ սովորել:

Ով լսում էր, հանկարծակիի եկած՝ Մամփրեի տան կողմն էր նայում. այնպես թե՛ տունը հրդեհվել է, հետո տեսնում էր՝ տունը խաղաղ ծխում է, դառնում ծիծաղում էր,- խելո՞ւ է Մամփրեն:

Իսկ ով մուտք ու ելք ուներ Մամփրեի տունը, գնում-տեսնում էր. Մամփրեն՝ խելքը տեղը, շատ լուրջ, շատ զգաստ և շատ գործնական կուրծքն ի վար մեկնված է հատակին, դիմացը՝ այբբենարանը, դիմացը՝ տետրեր, ձեռքին՝ կարմիր մատիտ և գլխավերևում՝ որպես ուսուցիչ՝ թռնուռիկն:

– Ասա ա:

– Ա՛յբ:

– Մեծատառ Ա:

– Մեծտառ Ա:

– Մեծտառ չէ, մե-ծա-տառ

– Մե-ծա-տառ Ա:

– Դե գրիր մեծատառ Ա:

Եվ Մամփրեն մատիտը երկար թքոտում է:

Սև մատիտով գրիր:

– Չէ՛, ձգո՛ւկ, սուրբ Մաշտոցի գրերն հարկ է, որ գրվեն կարմիրով: Ասա ինչո՞ւ. քանզի սուրբ Մաշտոցը գրերն իր սրտից է հանել ի լույս:

– Լռություն:

– Համբերե՛ զիմ խոսքն ավարտիմ, ձգո՛ւկ, համբերե՛: Ուրեմ, սուրբ Մաշտոցի գրեր կարմիր են, քանզի թրծվել են արդար Արեգակով: Եվ կարմիր են, քանզի սրբազան կռիվների են մասնակից եղել: Իմացա՞ր:

– Ուսուցիչը ե՞ս եմ, թե՞ դու: Դե գրիր մեծատառ Ա: Հո չե՞ս մոռացել:

– Չէ՛, ձգո՛ւկ, չէ՛, մոռանալու բան չէ, ջուխտակ առվակ կողք կողքի սարից կիջվարեն-կթափվեն պստիկ առվակի մեջ, ու առվակները ավելի կլցվեն ու ավելի կբարձրանան, ու աջակողմյան առվակից պստիկ մեկ առվակ ճոթ կտա դեպ աջ ու քչիկ կերթա ու էլի կդառնա իջվար: Էս քեզ մեծատառ Ա: Պատկերն իմ աչաց դեմն է...

Յա՛ ... Հարևանը, ժայտը դեմքին, անկյունում նստած է: Ե՞րբ է հայտնվել: Ինչո՞ւ է եկել և ի՞նչ է ուզում:

– Գրասենյակ չերթա՞նք, Մամփրե:

– Չէ, ջանմ... Գրասենյակ:

Մամփրեի խելքն էր շատ, որ աշունքվանից գարուն գրասենյակից դուրս չէր գալիս: Պրծա՛վ: Այլևս ոչ մի գրասենյակ: Թող պարապ-սարապները գնան, ծխեն ու դատարկ խոսեն, խոսեն ու ծխեն և խեղդվեն իրենց ծխի մեջ: Մամփրեն կարևոր գործ ունի, նպատակ ունի, Մարաթոնիկն տված ուխտ ու պայման ունի Մամփրեն, մինչև սուրբ Մաշտոցի գրերը չսովորի, ոտք չի դնի գյուղամեջ: Վերջ: Եվ... և խնդրում է, որ չխանգարեն իրեն: Այդքան բան:

Բայց էլի գալիս էին, երբեմն նաև նրանք, ովքեր ընդհանրապես մուտք ու ելք չէին ունեցել Մամփրեի տանը: Պարզապես հետաքրքիր էր. Մամփրեն ինչպե՞ս է սերտում ու գրում տառերը, ասում են՝ միշտ կուրծքն ի վար մեկնված, ոչ թե սեղանի մոտ նստած, այլ հատակին պառկած: Եվ գալիս էին ի տես:

Բայց մի օր Մամփրեն կատաղեց: Մի ջահել էր եկել և սուսուփուս, աննկատ նստել անկյունում, իսկ Մամփրեն այդ օրը սովորում էր մի տառ, որը իրեն դուր չէր գալիս: Պետք է սովորեր ճիշտ արտասանել և վարժ գրել Թ-ն: Իսկ տառը նրան դուր չէր գալիս, հատկապես Թ-ի կտիչը: Այն, որ այդ տառը շիտակ առվակների սկզբունքից, կարծես, դուրս է. կարճ ու երկար, բայց միշտ շիտակ ու գեղեցիկ առունների պատկերը կարծես խախտում է. դա դեռ ոչինչ. պատահում է նաև առու, որ մի տեղ լճանում է, բայց Թ-ի կտիչը ուղղակի կատաղեցնում էր նրան: Եվ սկզբում նույնիսկ այդ տառը սովորելուց ուզեց հրաժարվել, այդքան տառերի մեջ մեկն էլ թող չիմանա: Բայց թոռնուհին հարցը կտրուկ դրեց՝ կամ պետք է սովորի, կամ ինքը ընդհանրապես հրաժարվելու է ուսուցչությունից: Եվ Մամփրեն համաձայնեց գրել Թ-ն, բայց առանց կտիչի: Իսկ երբ Մամփրեն աչքերը մոտիկ-մոտիկացրեց այբբենարանի Թ-ի էջին. գննեց և նկատեց, որ... օհո՛ն, Մամփրեն նկատեց, որ այբբենարանում Թ-ի գլխին նկարված է նաև Գ-ն և... և, ի՞նչ, Սասունցի Գավթի նկարը... Այո, այո, Սասունցի Գավթի: Ահա հեծած է Քուռկիկ Չալալին և կայծակ թուրը թափով ետ է բերել ու թռցրել Թ-ի կտիչը: Հենց այդպես: Նկատեց և շուռ եկավ թոռնուհու աչքն ու ճակատը բերեց-կայցրեց այբբենարանի բաց էջին:

– Քու աչքերն լեն բաց ու տես, տես՝ Գավթին, Սասուն Գավթին նմանապես էդ չարանուն տառի կտիչի հետ համաձայն չէ: Համաձայն չէ ու, տես-տես, Թուրկեծակին քաշել ու, առըհա՛ կտիչին: Տե՛ս, տե՛ս:

– Թոռը պոկվեց պապի ձեռքից: - Դա նկար է:

– Նկար է, հըմը ո՞ւմ նկարն է: Տե՛ս, տե՛ս:- Եվ թոռան գլուխը նորից կայցրեց այբբենարանի բաց էջին:- Տե՛ս:

Այս ծեծկոտուքի վրա անկյունում նստած ջահելը փոթկած, և Մամփրեն հերսոտ ոտքի ելավ...

Ո՞ւմ տղան էր, ո՞ւմ թոռն էր՝ Մամփրեն չիմացավ, բայց ձեռնափայտով հասցրեց արանքը ճողջ ջահելի թիկունքին և հայհոյելով ու ձեռնափայտը թափ տալով՝ դուրս ելավ:

Ուշ աշնան թուխպ օր էր, էլի անձրև էր մղում, և բակը թաց էր:

Մամփրեն ձեռնափայտը թափ տվեց ջահելի ետևից և դարձավ ցեխի մեջ գծեց անդուր տառը, կտիչը երկար քաշեց և տրորեց,- բու կտիչ...,- տրորեց, հայհոյեց ու տրորեց: Մամփրեն ցեխի մեջ գծեց տառը, կտիչը երկար քաշեց և կայծակ թուրը, որ ձեռնափայտն էր, վրա բերեց,- բու կտիչ...,- և թռցրեց կտիչը, Մամփրեն ցեխերի մեջ նկարեց տառը և տրորեց կտիչը...

Ջահելը ճամփեզրին կանգնած նայում էր փրփրած ծերունուն և արդեն գիտեր, որ նրա հերսն ու հայհոյանքը իր հետ կապ չունեն: Եվ այնքան վարակիչ էր ծերունու կիրքը, որ ջահելը որոշեց գնալ և նրա հետ ոտքի տակ առնել տառի կտիչը:

Բայց Մամփրեն ձեռնափայտով նորից քշեց նրան:

Այդ օրն ի հետ այլևս ոչ մեկը չայցելեց Մամփրեին:

Եվ կամաց-կամաց՝ ձմռան հետ, մոռացան նրան: Թե հարսանիքների ժամանակ կամ տխրության հիշեցին, հիշեցին ժպտալով,- ձմեռ է. փոթորիկ է մտել Մամփրեի գլուխը, զարնան հետ դուրս կգա:

Եվ զարնան հետ Մամփրեն հայտնվեց գյուղում:

Մամփրեն պատերազմից, կովի դաշտից էր եկել, Մամփրեն դարիպությունից էր եկել,

Մամփրեն սահմանն անցել-գնացել էր Էրզիր և ահա եկավ: Գյուղի հավաքատեղիում այդպես դիմավորեցին, նրանք, որ նստոտած էին քարերին, ոտքի ելան, նրանք, որ ոտքի էին, ընդառաջ գնացին, ձեռքսեղմում, նույնիսկ ողջագուրություն, և Մամփրեն թև ու թևատակն ազատելու համար թղթերը խցկեց գրպանները: Թղթերը խցկեց գրպանները, ձեռքվեց ու կարոտած նստեց իր քարին:

Եվ եղավ իմաստուն մի լռություն:

Գյուղի հավաքատեղիում այդպիսի խորհրդավոր մի լռություն մեկ էլ տարիներ առաջ էր եղել, երբ լուր հասավ, թե ռուս մի տղա, տոհմանունով՝ Գագարին, Տիեզերք է թռել-դեպի աստված:

Եվ ինչպես այն ժամանակ, հիմա նույնպես, լռությունը խախտեց տարեկիցներից ամենաանհոգը՝ Անդարդ Ավեն:

– Է, Մամփրե, բարի տեսանք: Քու չարչարանքն՝ ապաշխարանք:

Այ, հենց դա չէր ուզում Մամփրեն: Հայացքը զարնանագուլ գետնին՝ Մամփրեն մտածեց. այնուամենայնիվ, լռությունը խախտողը Ավեն չպետք է լիներ. ցավի, ուրախության և խոսքի կշիռը չիմացող Անդարդ Ավեն չպետք է լիներ խորհրդավոր լռության խախտողը:

– Տառերն թամամ սովորեցի՞ր, Մամփրե:

Մշեցի Խաչոն, նեղսրտած, ձեռնափայտը դեմ արեց Ավեին.

– Համբերե: Քանց երեխա ինչո՞ւ կթռվռաս:

Մշեցի Խաչոն, որ Մամփրեին ուսնկից էր, վերականգնեց պահին վայել լռությունը, քրքաց-հասկացրեց, որ մեջ ընկնող-խանգարող չլինի, հարմարվեց իր քարին և ձեռքը հանդարտիկ դրեց մամփրեի ծնկին:

– Օղորմի քու անուշ ծնողաց, Մամփրե: Մարաթուկ վկա, քու արածն, քու արածն, Մամփրե, մեծ մարդու արած էր, մեծ բան էր:– Եվ խիստ բարձրացրեց ձեռնափայտն ու շեփ-հայացք նետեց Ավեի կողմ:– Ու ամեն մարդու բան չէ: Օղորմի քու անուշ ծնողաց:– Կրկնեց մշեցի Խաչոն և շարունակեց բորբոք ու ներշնչված:

Եվ ասաց, թե ճշմարիտ է, որ ինքը աշնանից մինչև այսօր չի գնացել Մամփրեի տուն, Մամփրեին չի երևացել՝ պարզապես չի կամեցել խանգարել, բայց զօր ու գիշեր, մտոք, Մամփրեի հետ է եղել և աղոթել է, որ Մամփրեի ուխտը ի կատար ածվի: Ինքն էլ փորձեց, ախր, հոգի ունի տալու և պետք է խոստովանի. ինքն էլ փորձեց սովորել սուրբ Մաշտոցի գրերը: Երբ լուր առավ, թե Մամփրեն այդպիսի սուրբ ուխտ է կապել, ինքն էլ գոտեպնդվեց: Բայց որդին խանգարեց, որդին աղջկա ձեռքից վերցրեց-չպրտեց մի կողմ, թե՛ պապիդ իզուր մի՛ չարչարիր: Հա փորձեց, հա որդին դեմ կանգնեց, ինքը համառեց, և որդին համառեց. ինքը մշեցի էր, իսկ որդին մեցու որդի՝ ավելի հաստկող, և որդին ի չիք դարձրեց Խաչոյի ուխտը և... և մինչև այսօր՝ աշունքվանից մինչև հիմա, Խաչոն որդու հետ ոչ հաշտ է, ոչ խռով: Բայց Մամփրեն, Մամփրեն իր ուխտն ու պայմանը կատար ի ամեց: Քիչ բան չէ. օր ծերություն, սուրբ Մարաթուկը Մամփրեին թող երկար կյանք տա, Մամփրեն երկար ապրելու իրավունք ունի, բայց օր ծերության մարդը ելնի ու սովորի գրերը, հաշվիր, թե այդ մարդը ոչ թե սովորել է, այլ, մեղա սուրբ Մաշտոց, մեղա, այլ ինքն է հորինել: Հա՛, Մարաթուկ վկա, այդպես է: Ու հիմա, հիմա տարոնցի Խաչոն, Մաշտոցի հայրենակից Խաչոն ավելի շուտ Մամփրեի իմացած հայոց գրին է հավատում, քանի իր որդու, քան իր թոռների:

– Օղորմի քու անուշ մոր, Մամփրե, սուրբ Մաշտոցի գրերն ի՞նչ տեսք ունեն և ի՞նչ բնույթ ունեն: Մեկ-երկու նմուշ պատկերե, Մամփրե:

Մամփրեն, որ գլուխկախ լսում էր Խաչոյին (փառք աստծո, ուրեմն գյուղում բոլորը չէ, որ իր արածը ընդունել են խենթություն), հիմա շտկվեց և ձեռքը տարավ գրպանը, որ թերթերից ընտրի՝ գլխատառ գիրը և բացատրի, բայց միտքը փոխեց. գտավ մի կտոր ճիպոտ և ուղիղ մի գիծ քաշեց խոնավ գետնին:

– Էս ի՞նչ է, Խաչո:

Մշեցի Խաչոն երկմտեց, իսկ Անդարդ Ավեն ելավ-կանգնեց գծի գլխին և շտապեց:

– Գիծ է: Հիմա ես էլ գծեմ ու իմ պապի պապն էլ գա ու գծե:

– Համբերե,- Խաչոն ձեռնափայտով քշեց Ավեին:– Նստիր քու տեղն ու մեր արևն մի ծրարե:

– Հաշվենք, թե առու է, Խաչո: Առվակ:– Մամփրեն գիծը խորացրեց:– Առվակ է ու ոչ թե դաշտի առվակ, սարից իջվարող առվակ է՝ շիտակ ու բարակ ու գուլալ: Մեկ ուրիշ նմանատիպ առ-

վակ կողքն ի հետ կիջվարեն՝ շիտակ ու բարակ ու գուլալ:- Եվ գուգահեռ գծեց:- Ու էս ջուխտակ գուլալ առվակներն սարից կիջվարեն ու կհանդիպեն ու կմիանան մեկ ավելի պատիկ առվակի՝ լանջն ի հետ գնացող: Էս է:- Մամփրեն ճիպոտով գուգահեռ առվակները միացրեց:- Միացան... թե միացան, թե առվակներն զարկվան իրար, ուրեմն ջուրն կշատանա, ուրեմն առվակներն կլցվեն ավետափ, ուրեմն հարկ է, որ մի տեղից ջուրն ճոթ տա... Էս է: Ուրեմն ճոթ կտա, քչիկ մի կերթա ու... ո՞ր պետք է էրթա, Խաչո, սար է, չէ՞, ուրեմն կդառնա ու էսպե՛ս կիջվորեն: Էս էղավ, ուրեմն, սուրբ Մաշտոցի առաջին տառն ու մեծ տառն՝ Ա:

Պատի տակ նստոտածները՝ բոլորը համերկրացիներ, բոլորը տառերին անձանոթ, լուռ նայում էին Մամփրեի գծած տառին և սպասում, թե Մամփրեն էլի ինչ կասի:

– Գրերից մի քանիսն շիփ-շիտակ առվակների պատկերից փոխս են: Էն էլ թե ինչո՞ւ, սուրբ Մաշտոցի կամքն է: Մեկ-երկուսն էլ կան, որ... որ, մեղա, մեղա, սուրբ Մաշտոց... Էդ մեկ-երկուսն, Խաչո, իմ սրտին դուր չեն գա:

Եվ գծեց Թ-ն ու կտիչը կտրեց:

– Կտիչ է, օձի կտիչ է, ու իմ սրտին դուր չի գա:

Այս մեկ:

Մյուսը: Եվ գծեց Բ-ն: Ա՛յ, մեծ առու է: Առու է, թե գետ է՝ մեծ է, քանզի մի տեղ լիճ է կազմել: Ահա: Ապա մի առվակ (առվակ, թե գետակ) գալիս է, թափով գալիս-զարկում-կտրում է այդ մեծ առուն (թե գետը): Չարկում-կտրում-անցնում է: Կտրելը՝ կտրում է, բայց, չզիտես ինչու, չի ձգվում, չի երկարում՝ այ, այսպես... Եվ հատիչը՝ Բ-ի պոչը հատող գիծը, ձգեց ու տարավ. քանի ձեռքը երկարում էր և քանի ճիպոտը տանում էր՝ ձգեց:

– Ա՛յ, էսպես, աստված քու տուն սարքե, ինչո՞ւ էս առվակի դեմն առե,- դիտողություն արեց Մաշտոցին և ներողություն խնդրեց:- Մեղա՛, սուրբ Մաշտոց, մեղա: Հըմը իմ կարճ խելքով, Խաչո, էն առվակն, էն գետակն, որ մեծ առու ու գետ կկտրի, էդ առվակի ճամփեն հարկ է, որ էդնի երկար ու երկար:

Էլի լռություն եղավ... Մամփրեն այդ ո՞ր աշխարհն է հասել, ո՞ր աշխարհից է գալիս, ո՞ր աշխարհի մասին է այսպես ճարտար պատմում... Օր ծերություն Մամփրեն ելավ ու զարկեց (Դավթի հրեղեն թո՞ւրն էր Մամփրեի ձեռքին), զարկեց և պարիսպներ խորտակեց և հորիզոններ բացեց իր համար, երկրից հասավ մինչև երկինք և սուրբ Մաշտոցի հետ վեճի մեջ է: Իսկ իրենք... իրենք մնացին իրենց քարերին կպած՝ քարի ոստի պես:

Նույնիսկ անդարդ Ավեն էր անձպտուն ու բերանբաց նայում Մամփրեի գծած հրաշք տառին, որ տառ չէր, այլ գետ ու գետակի հանդիպում ու հատում: Մամփրեն է ասում:

– Ուրեմն, Խաչո, հայոց գրերն գետերի ու գետակների, սարն ի վար իջվարող ու սարն ի հետ գնացող առվակների՝ շիտակ ու գուլալ ու կանաչափ առվակների հոսք է, կցվնոք է ու հատոնք: Էդպես պատկերացրու:

Ուշադիր ու լուրջ լսում էին (հաճելի էր ու շոյող), և Մամփրեն որոշեց հասկացածը մինչև վեջ բացատրել տարեկիցներին:

Ուրեմն՝ այդպես: Բայց կան նաև տառեր, որ դաշտի, հարթավայրի առվակների պատկերն ունեն. ահա՛ ծայր առան, ոլորվեցին ու տեղն ու տեղը սուզվեցին, ահա՛ ոլորվեցին ու լճացան: Տառերից մի քանիսն էլ, ուրեմն, դաշտային առվակի պատկերն ունեն: Բայց այդ պատկերներով տառերը քիչ են: Ինչո՞ւ: Քանզի հայոց աշխարհը լեռնային է և գրերի շատը, ուզի-չուզի, լեռնային գետակների, առուների ու առվակների պատկերը պետք է ունենային:

Այս էլ՝ այսպես:

Սակայն տարօրինակն ու զարմանալին, անչափ զարմանալի հայոց գրերից վերջին գիրն է՝ Ֆ-ն: Ահա պատկերը:

– Սարեն էսպե՛ս,- և ճիպոտով գծեց,- մեկ գետակ, մեկ առվակ է ուղիղ կիջնի ու... ու, սուրբ Մարաթուկ, ու մի վիշապ, էսպե՛ս. փաթաթվել է սարից իջվարող գուլալ ու տակ գետակին... Էսպե՛ս փաթաթվել է՝ գլուխն գետակի ակունքին ու կծոժած պոչն՝ գետակի վերջին: Էսպե՛ս փաթաթվել ու կֆշշա ու կֆշշա: Ֆ,- հնչեղ արտասանեց Մամփրեն,- Ֆ,- կրկնեց,- վիշապի ֆշշոց կլսի՞ք... Էդ է: Փաթաթվել է շիտակ ու գուլալ գետակին ու կֆշշա ու կֆշշա, կֆշշա...

Այս ի՞նչ փորձանք է, այս ի՞նչ արմանք-զարմանք բան է և ինչպե՞ս հասկանալ: Գուցե Մաշտոցն է սխալվել, մեղա, մեղա. տառապանքից, հոգնածությունից, ուրախությունից, որ վերջին գրին է հասել, սխալվե՞լ է: Տարոնցի սուրբ Մաշտոցն անսխալական է:

Եվ Մամփրենն իր կարճ խելքով ահա թե ինչ է մտածում.

– Վայ թե,- և թափով խփեց ծնկին,- վայ թե, սուրբ Մաշտոցն իր արարած տառերի ճակատագիրն է գուշակե: Հա՛, Մարաթուկ վկա:

Տառերն արարելիս, վայ թե, վերջին տառի պատկերն այդպես է հայտնվել աչքի դիմաց՝ գուլալ գետակ ու գետակին փաթաթված վիշապ: Այդ պատկերն է ցուացել աչքի դիմաց, և սուրբ Մաշտոցն դողացել է նոր-նոր լուսաշխարհ բերած իր գրերի ճակատագրի համար, սորտփել է ու ցավից տնքացել, արմանք-գարմանք քար կտրել, և դրա համար էլ նախավերջին տառը, որ Օ-ն է, գարմանք ու ցավով բացված շուրթերի պատկերն ունի՝ Օ:

– Մարաթուկ վկա, էդպես է եղե, Խաչո:

Իհարկե, Մաշտոցը կարող էր տեսիլքը շնորհունել. կարող էր այդ չարկամ պատկերը շարտել Եփրատն ու իր գրերի վերջին գիրը արարել այլապատկեր, բայց չի կամեցել ոչ իրեն խաբել, ոչ ժողովրդին հայոց և, ցավն ի սերտ, տեսիլքը ընդունել է՝ ի ցույց և ի գգուշացում...

– Մարաթուկ վկա, էդպես է եղե, Խաչո:

Եվ Մամփրենն գուլալ գետակին փաթաթված վիշապը ջնջեց, ապա ձեռքը տարավ գրպանը և հիշեց.

– Գրերն սովորելուց թռնիկն ստիպեց, թե ջղարենն թող: Ու ես թարկեցի: Հըմը էսօր իմ սիրտն ծխել շատ կուգե:

Եվ Խաչոյի վառած ծխախոտն առավ ու հակվեց ծնկներին:

Ահագին ժամանակ լուռ էին:

Հայոց գրերը խլվում էին Մամփրեի ներսում, թռվում էին հայացքի դիմաց, և նա անհագիստ էր: Տունը կանչում էր նրան: Գրապահարանում նա արդեն իր անկյունն ուներ՝ այբբենարանը, կարմիր տառերով լցված տետրերը, անգրել տետրեր, ծայրած ու անծայր կարմիր մատիտներ, ռետին: Տետրերն ու մատիտները կանչում էին, և նա ուզում էր ոտքի ելնել, բայց գարնան առավոտի արևը շատ էր դուրալի: Գարնան արևը, խոնավ գետնի գույը, սարերի ձնհալով լցված գյուղի կենտրոնական առուն, աղբյուրի ծորանից պոռթկացող ջրի շիթը... Ջուրը փշրվում է քարե գոմ, և մանրիկ շիթերը պարս էին բռնել աղբյուրի գլխին: Եվ Մամփրենն հիշեց. վարժապետ տեր Հարությունը ասում էր՝ սուրբ Մաշտոցից առաջ հայոց գրեր են եղել և հայոց բան՝ փորված քարե սալիկներ: Հայոց վայրագ թշնամին ջարդուփշուր է արել հայոց քարե մատյանները, և գրերը թևավորվել են. կերպարանափոխվել մեղուների և թռել սարերը... Տեսնես սուրբ Մաշտոցից առաջ եղած հայոց գրերի վերջին տառը ի՞նչ պատկեր է ունեցել...

– Մամփրե,- Անդարդ Ավեն խորհող լռություն չի սիրում,- էսպես իմաստուն խոսք կա՝ ուսումն եփած հաց է, մարդու թևի տակ դրած:

- Թյուու,- Մամփրենն մեկեն բռնկվեց,- թյու էդ խոսքին առաջին անգամ շունչ տվողին, թյու էդ խոսքին թև տվողներին:

Ուրեմն Մաշտոցը տառերը երկնեց նրա համար, որ հայերը այդ գրերով հա՞ց աշխատեն: Վարժապետ տեր Հարությունը ասում էր, որ սուրբ Մաշտոցը հայոց առաջին դպրանոցները բացեց հայոց երկրի սահմանագրերում: Ծրջում էր հայոց սահմաններով, վարժապետներ կրթում, դպրոցներ բացում... Եվ այդ դպրանոցները բերդեր էին սահմանագրերում: Բերդեր և գորանոցներ: Քանզի տառերը՝ Մաշտոցի գրերը, զինվորներ են: Գեղեցկադեմ, մաքուր և գուլալ, և արի զինվոր: Զինվորներ: Ոչ թե ասկյարներ, այլ զինվորներ:

Երկրի սահմանները պաշտպանող զինվորներ:

Արդարության, ճշմարտության համար կռվող զինվորներ:

Գեղեցիկն ու բարին պաշտպանող զինվորներ:

Եվ հայոց երկրի թշնամոց դեմ կռվող հերոս զինվորներ:

Ահա այդպես: Եվ վարժապետ տեր Հարությունն էր ճիշտ, ոչ թե Օհանը: Գիշտ չէր Օհանը՝ Էրզրի իրենց գյուղի ամենատարեց մարդը, նա, որ հզոր ընկուզենի ուներ և իր ընկուզենու հասակակիցն էր, ճիշտ չէր, որ ասում էր, թե հայոց գիրը հայոց թագավորն է, արքան է: Հայոց գրերը հայոց զինվորներն են: Իսկ թագավորը, թագավորը Մամփրենն է, Մամփրենն է արքան, այսինքն՝ նա, ով այդ զինվորներն ունի իր հրամանի տակ և նրանց կռիվ է տանում հանուն հայրենիքի, հանուն արդարության, հանուն ճշմարտության, հանուն գեղեցիկի: Իսկ Մամփրե արքան կարող է հանկարծ փախչոտ մեկը լինել և զինվորներին հիմար հրամաններ տալ, այդ դեպքերում նա արդեն արքա չէ, այլ սովորական մի փախչոտ և հրաման տալու իրավունք չու-

նի, այլ ամենաշատը, ամենաշատը պետք է հետևի, թե իսկական արքայի հրամանի տակ զինվորներն ինչպես են շարժվում, դեպի ուր են շարժվում, դեպի ուր են շարժվում և ինչ են անում և, եթե կարող է, թող մաքրի իր փախնքը: Այդ Մամփրե արքան կարող է հանկարծ նենգ մի ավազակ լինել, իսկ ավազակն արդեն արքա չէ, ավազակ է ու կա, և նրա պիղծ հրամանի տակ այդ զինվորները կարող են դառնալ ասկյարներ: Այսպես:

Մամփրեն հերստոտ ոտքի ելավ:

Եվ լցված հասավ տուն, գրապահարանի իր անկյունից վերցրեց անգրել մի տետր, կարմիր մատիտ, նստեց սեղանի մոտ և թափով ու գլխատառերով գրեց.

«Մամփրեն արքա է, իսկ սուրբ Մաշտոցի գրերն զինվորներ են»:

Նա գրել էր առանձին բառեր - ասա, արա, սար, տար - գրել էր անուններ - Արարատ, Սանասար, Սիրան, Տիրան... - բայց լրիվ մի նախադասություն, ամբողջական մի միտք՝ սա առաջինն էր: Եվ գրեց առանց ճիգ ու ջանքի, միանգամից և հուզվեց միայն գրելուց հետո, երբ գնեց թիկունք թիկունքի զգաստ շարված կարմիր գլխատառերը:

Հետո գրածը խնամքով անջատեց տետրից, խնամքով ծալեց-դրեց ծոցը, նստեց դռանը և սպասեց. ուր որ է թռնուհին դասից գա:

* * *

Սակայն առաջին հայտնվողը փոստատարը եղավ:

– Քեռի Մամփրե,- խնդմնդաց փոստատարը,- թերթերի՞ն ես սպասում:

Շան թուլա: Եթե Մամփրեն գրել կարող է՝ ահա... կարդալ... կարդալը ավելի դյուրին է:

Եվ թերթերից ընտրեց փոքրածավալը. ինչ խոսք, փոքրը մատչելի է... Հերթը մեծերին էլ կհասնի: Բացեց շրջանային թերթը, և մի լուսանկար մեկեն բռնեց հայացքը... Վահ, սա իրենց հարևանուհի Ծաղիկը չէ՞: Շտապ դարձավ հարևանի տան կողմ, չնայած գիտեր, որ Ծաղիկը ձմեռանոցում է. Ծաղիկը կթվորուհի է, իսկ ֆերման ձմեռանոցից դեռ գյուղ չի բարձրացրել: Ծաղիկի սկեսուրը երեկ հեռվից հեռու հարսի հետ կռիվ էր տալիս, թե՛ եկ քո լակոտներին տեր կանգնիր, դռանը կանգնած նայում էր ձմեռանոցի կողմ, և լացն ու անեծքը իրար խառնած կռիվ էր տալիս:

Մամփրեն ուշադիր նայեց լուսանկարին... Այո՛, Ծաղիկն է: Չնայած լուսանկարում սիրուն է. այնպես մաշված ու կնճռոտ չի երևում, ինչպես իրականում կա, բայց նա է՝ Ծաղիկն է:

«Էս խղճուկ հարսնուկի նկարն ինչո՞ւ են կայցրե մեջ թերթին, ու ի՞նչ խաբրիկ է»:

Գիրկապ կարդաց ակնարկի վերնագիրը «Քարագլխի դուստրը»:

– «Դուստր ի՞նչ»:- Գլուխը բարձրացրեց:

Թռռնուհին թվառալով գալիս էր:

Մամփրեն հեռվից ժպտաց թռռնիկին և ձեռքը տարավ գրպանը:

– Տես ու գնահատե՛: Եվ ամաչկոտ ժպիտը դեմքին՝ գլուխկախ սպասեց:

– Արքա... Պահ-պահ-պահ, հենց տառերը սովորեց, դարձավ արքա: Եթե այդպես լիներ...

Մամփրեն, իհարկե, ավելի բարձր գնահատականի էր սպասում. ուսուցիչը գնահատեց մի-այն ուղղաշար տառերը, իսկ միտքը չհասկացավ: Բայց թռռնուհին շտապում էր:

– Համբերե, ձգուկ: Դուստրն ի՞նչ է:

– Դուստր՝ աղջիկ:

– Լավ մտածե՛:

– Դուստր նշանակում է աղջիկ:- Եվ շտապեց տուն:

Մամփրեն գրածը խնամքով ծալեց-դրեց ծոցը և նորից թերթը ձեռքն առավ: Ուրեմն՝ Քարագլխի աղջիկը... Թող այսպես լինի: Աղջիկ թե հարս՝ մեկ է, Ծաղիկի մասին է: Բայց ի՞նչ են գրել:- Նա... մանկուց... երագում է... էր... կթվորուհի... դառնալ...- Կարգին տեղ չհասավ: Մամփրեն բառ-բառ կարդաց երկրորդ անգամ, երրորդ անգամ, ապա վարժ, ամբողջ նախադասությունը, միանգամից:- Նա մանկուց երագում էր կթվորուհի դառնալ:

– Թյո՛ւ, սատանի՛ ծնունդ:- Մամփրեն ինքն էլ չիմացավ, թե ինչպես ճմռթեց թերթն ու շարտեց: Բայց և շտապեց հովից թրթռացող թերթի ետևից:- Տառերն են ավիստ, սուրբ Մաշտոցի գրերի համար է մեղք:- Եվ թերթը հարթեց-դրեց անթատակն ու հուզված սկսեց քայլել տնամերձ:

Ծախված հոգի, քեզ ո՞վ է ասել, թե այդ խեղճ հարսնուկը դեռ մանկուց երազում էր կթվորուհի դառնալ: Մամփրեն, ախր, լավ է ճանաչում. աղջիկ ժամանակ Ծաղիկը Մամփրեի ձախակողմյան հարևանն էր և դարձավ աջակողմյան հարևանի հարսը: Էդ խեղճ աղջիկն, ախր, ուսուցչուհի էր ուզում դառնալ, Մամփրենն հո լավ գիտի, մեկ ուսուցչուհի, մեկ բժշկուհի, մեկ պարուհի, մեկ... Թռվռուն աղջիկ էր և հազար ու մեկ երազ ուներ... Մատանի ճուտ, ճշմարտությունն ասա: Գրի՛ր, որ աղջիկը, այսպես ու այսպես, հազար երազ ուներ, բայց, կյանք էր, վիճակ էր, բախտ էր, ամուսնացավ, երեխաները թափվեցին գլխին և երեխաներին հաց ու թաց էր պետք, աշխատել էր պետք, և Ծաղիկ անվանակիր հարսնուկը փեշերը պոկեց երեխաներից և գնաց ֆերմա, դարձավ կթվորուհի: Դիշտը գրեիր, ճշմարտությունը գրեիր, արդարը գրեիր... Մարդու երա՞զն էլ մարդուց, նույնիսկ անցած-գնացած երա՞զն էլ խլեն... Մադայելի ծնունդ, գրեիր, արդարամիտ ու ճշմարտախոս ծնված գրեիր ինչո՞ւ ես դարձնում ստալեզու-ստախոս, և քեզ ո՞վ է իրավունք տվել, որ սուրբ Մաշտոցի զինվորներին այդպիսի պիղծ հրաման տաս: Ո՞վ է իրավունք տվել... Այդ փալնքոտը քանի՞ տարեկան կլինի... Ջանի տարեկան էլ լինի, փալնքոտ է, ինչպես Անդարդ Ավեն... Եվ Ավեի որդին է, թոռն է, արնակիցն է. Մաշտոցի գիրը նրա համար եփած հաց է, թևի տակ դրած հաց. կեր ու ման արի... Այս փալնքոտն է պատճառը, ծախված հոգիներն են պատճառը, որ մրոտած թղթերը, թերթերը, գրերը շան ոտի հետ քշվում են... Այսքանը դեռ գյուղում, փոքրիկ մի գյուղում... Իսկ քաղաքներ կան, աշխարհում աշխարհի չափ մեծ քաղաքներ կան... Անցյալ ամռանը՝ իրիկնապահին, ինքը՝ Մամփրեն, քիչ մնաց թե խեղդվեր Երևանի փողոցում: Լեռներից հանկարծ մի քամի փրթավ-մտավ քաղաք և թղթեր հանեց երկինք, կարծես չալտիկ ագռավների ոհմակ էր, որ խշշոցով հարձակվեց քաղաքի վրա: Ապա մի թերթ, ամբողջական ու բաց ու մեծ մի թերթ եկավ ու ծեփվեց Մամփրեի դեմքին: Եվ ինչպես էր կառչել, ինչպես էր կառչել, պատռվում էր, ճղճղվում էր, բայց չէր հեռանում դեմքից: Շունչը, հա-հա, կտրվելու էր: Անցած ամռան այդ իրիկնապահի պատկերը՝ քաղաքի երկնքում խշրտացող թղթերը, չալտիկ ագռավների ոհմակ երևաց աչքին, լեշակերների խշտացող ոհմակ. այդպես երևաց, որովհետև ամռան այդ օրն ինքը՝ Մամփրեն, տառերին դեռ անծանոթ էր և մտհան էր արել վարժապետ տեր Հարությունի խոսքը՝ գրերը զինվորներ են, իսկ հիմա, հիմա Մամփրեն հասկանում է, թե այդ օրը, այդ իրիկնապահին ինչ էր կատարվում քաղաքի երկնքում...

Պարտված զինվորների փախուստ էր:

Այո՛, այո՛, այդպես էր. եթե տառերը զինվորներ են (և զինվորներ են), այդ զինվորներին սխալ հրամաններ էին արձակել, հիմար հրամաններով էին շարժել ու պարտության մատնել և ահա՛ լեռներից իջած մի քամի և... պարտված զինվորները փախչում էին... Ախ, այդ փալնքոտը՝ Ծաղիկի մասին գրողը, հիմա ընկներ Մամփրեի ձեռքը... Բայց ո՞ր էին փախչում պարտված գրերը այն երեկո... Պարտված գրերը ո՞ր պետք է փախչեն, այս երկրից հո դուրս չե՞ն գա: Նորից պետք է իջնեն երկիր, և երկիրը, երկիրը պետք է լցվի պարտված զինվորներով և գլուխը կորցրած՝ պետք է պտտվի, պտտվի, պտտվի... Ինչքա՞ն գիր գրված կլինի աշխարհում: Աշխարհի բոլոր լեզուներով ինչքա՞ն գիր գրած կլինեն: Եթե փռես, երկիրը քառասուն տակ կծածկվի, գրերն էլ հետը: Իսկ եթե այդ բոլոր-բոլոր-բոլոր գրվածքները ճշմարիտ լինեին, ինչի համար արարվել են աշխարհի բոլոր գրերը՝ ճշմարտությունը պաշտպանելու և սուտը մերժելու, բիրտ ու նենգ ուժերի դեմ կռվելու, կռվելու և հերոսանալու և սրբագործվելու... Եթե այդպես լիներ, եթե աշխարհի բոլոր գրերով գրվածքները արդարաշունչ լինեին: Այսպես եթե շարունակվի, այսպես եթե շարունակվի, աշխարհի բոլոր տառերը, որ ծնունդով անարատ են, տառերը, որ կոչումով ասպետ զինվորներ են, կբարոյալքվեն: Հա՛, Մարաթուկ վկա, կդառնան գող, ավազակ, թալանչի, մատնիչ, նենգ, դավաճան, վախկոտ, սուտասան, ստոր, ստրկամիտ, ծախու, անուղղելի դասալիք... Եվ... և Երկիր մոլորակը ուղեծրից դուրս կգա... Ախ, այդ վաճառված հոգին, այդ... այդ սաղայելի ծնունդը հիմա ընկեր Մամփրեի ձեռքը:

Երբ երեկո եղավ, և գերդաստանը քնեց, Մամփրեն վերցրեց տետրերը, վերցրեց այբբենաբանը. տեսար ու գրեիր մեկի պատկերը մտքից թռավ, վերցրեց մատիտներն ու ռետինը և նստեց սեղանի մոտ: Հիմա Մամփրեն այդ փալնքոտին այնպիսի դաս կտա. այնպիսի մի կոթոց կգրի, որ մուխը պնչներից դուրս գա և ողջ կյանքում ձեռքը գրեիրից ետ քաշի...

Բայց ինչպե՞ս սկսել, ինչպե՞ս դիմել...

Եվ ծոցից հանեց գրածը - Մամփրեն արքա է, իսկ սուրբ Մաշտոցի գրերը զինվորներ են -

հաճույքով կարդաց և մեկնեց սեղանին. պետք է գրել այսօրինակ՝ գլխատառերով, այսպես՝ թիկունք թիկունքի, զինվորների պես զգաստ շարված և, անշուշտ, կարմիր մատիտով: Եվ մատիտը թքոտեց:

«Տղա, փորի համար հոգին չեն ծախի: Դու հոգի չունես, տղա՛, սուրբ Մաշտոցի արդար զինվորներին անարդար հրաման մի արձակե: Դու արքա չես ու գրերին հրաման արձակելու իրավունք չունես: Քու հարամ աջը քեզ քաշե, տղա: Թե կրնկնիս իմ ձեռք...»:

Ստացվեց այնպես, ինչպես ուզում էր՝ գլխատառերը հավասար և ձիգ և առանց տողադարձի, որը Մամփրեն չսիրեց ու չընդունեց: Միայն Թ-ի վրա աջը դողաց, բայց տեղն ու տեղը զայրացավ և գրեց թափով ու առանց կտիչի: Մի քանի անգամ կարդաց գրածը, խնամքով ծալեց ու դրեց սեղանին:

Այս մեկ:

Որքան բան կա գրելու: Որքան և որքան ճշմարտություններ ունի ասելու Մամփրեն: Ափսոս, հազար ափսոս, որ գրերի հետ ուշ ծանոթացավ - օր ծերություն: Լավ էր գոնե, որ Մարաթուկը ուխտը կատարեց, և հիմա Մամփրեն կարող է Մաշտոցի զինվորները շարքի կանգնեցնել ու շարժել: Որքան է խոսել և միշտ՝ ճշմարիտը, ժողովներին որքան և որքան է ոտքի կանգնել: Հարյուր անգամ միայն՝ Խաչոյի համար: Այո՛, մշեցի Խաչոյի արտի, արտերի համար նախագահի, նախագահների դեմ հա ճակատ է տվել. խեղճ մարդը՝ մշեցի Խաչոն, տարին մի արտ էր պատրաստում լանջերին, ձորաբերնին, քարերի մեջ, նախագահը խլում էր, թև ու թիկունք ջարդելով՝ մշեցի Խաչոն քարցանք սարալանջերից էր հողը խլում, ձորից էր հողը խլում, նախագահը... նախագահը՝ Խաչոյից: Եվ ինքը՝ Մամփրեն, ամեն ժողովի ոտքի էր կանգնում՝ արդար չէ, բողոքում էր, սխալ է, և բացատրում էր՝ արտը Խաչոյից խլեցիք, իմացած եղեք, որ այդ արտը կկորցնեք, կտրորեք, կտաք բուլդոզերի բերանը, կլքեք-կտաք հեղեղի բերանը՝ կլցնեք ձորը (ինչպես որ եղավ, ինչպես որ եղավ): Թողեք, ասում էր, թող այդ լաթ արտը Խաչոյի ձեռքին մնա և սարալանջին կպած: Բայց լսողն ո՞վ էր: Քանզի խոսքը բանավոր էր՝ քամու բերան ընկած աշնան տերև: Իսկ գիրը, գիրը, ճշմարտախոս գիրը... Հաշվիր, թե խոսքդ քարի վրա ես քանդակել, ժայռերի վրա՝ միշտ աչքի դիմաց, հաշվիր, թե քանց ցորեն ցանել ես, և ծիլ է տվել, կանաչել է, հասունացել և ծփում է: Դե եկ ու մի նայիր, եկ ու ասա՝ այստեղ արտ չկա, և ասա, ասա՝ ցորենի հասուն արտը ոչ մեկին, ոչ մեկին պետք չէ: Ախ, եթե Մամփրեն հայոց գրերին էն գլխեն ծանոթ լիներ: Բայց ուշ չէ, բոլորովին էլ ուշ չէ, մի օրվա կյանք էլ ունենաս, այդ մեկ օրն էլ հարկ է, որ կռվես արդարության համար, ճշմարտության ու գեղեցիկի համար... Խաչոն դեռ «ավելորդ» մի արտ ունի, մշեցի Խաչոյի վերջին արտը դեռ մնում է սարալանջին, Խաչոն առվույտ է ցանել ու սպասում էր նախագահի վճռին: Ո՛չ, այդ արտի ճակատագիրն արդեն Մամփրեն է վճռելու: Մամփրեն հենց այս գիշեր Մաշտոցի ասպետ զինվորները կշարի և արևը չծագած՝ կքշի ուղիղ կոլտնտեսության գրասենյակ: Այդպես:

Մատիտը բռնում սեղմած՝ Մամփրեն մարտական քայլում էր. այլևս ոչ մի անկողին. առանց այն էլ քուն չի գալիս աչքերին, այլևս ոչ մի անկողին. առանց այն էլ ապրելու քիչ ժամանակ է մնացել, իսկ Մամփրեն անելիքներ ունի: Գործ ունի: Կռիվ ունի: Չորօրինակ...

Եվ հանկարծ գայթեց: Թվաց, թե տախտակապատ հատակին քար հայտնվեց-կտրեց ճանապարհը, զարկեց ոտքին: Մամփրեն գայթեց և ձեռքը տարավ գլուխը:

– Օխաաաա...- ծոծրակի մոտ այնպես իրական պոռթկաց ցավը, ինչպես, է՛, այն օրը, երբ ինքը Մեհրեաղբյուրի մոտ Օսմանի նենգ լակոտ Օսմանին լավ տրորեց, ապա ծնկեց՝ ջուրը դեպի իրենց շաղգամի արտի կողմ շտկելու, իսկ այդ ճաշոտ լակոտը, այնուամենայնիվ, թիկունքից քարով զարկեց-ջարդեց իր գլուխն ու փախավ և ուսն ի ետ քարերի պես շարտում էր,- Աթաբունար... Աթաբունար,- որպես թե՛ աղբյուրի անունը Մեհրե չէ, այլ Աթաբունար, որպես թե՛ աղբյուրը քունը չէ, այլ իմը...

– Օսման, ես քու հավատը...

Կտրումն ու գաղթը վրա տվեցին, և Մամփրենի ու քո կռիվը կիսատ մնաց: Եվ մնաց որքա՛ն ժամանակ, որքա՛ն ժամանակ, մինչև այսօր... Իսկ այսօր, հիմա, հենց այս գիշեր Մամփրեն քո նենգ հերը կանիծի... Ահա թե ինչի համար, թե ինչի համար, ինչի համար Մամփրեն սովորեց հայոց գրերը... Յա՛, Մարաթուկ...

Գլխապտույտի մեջ և աչքերը մթնդած և շունչը հևիհև ավիվում էր դեպի սեղանը և այն մտքից, թե կարող է հանկարծ շունչը փչել, Մամփրեն սարսռաց... Տե՛ր աստված, այդպիսի դաժա-

նություն չանես, այսքան կյանք ես պարզել Մամփրեին, շնորհիք նաև մեկ գիշեր, թաք մեկ գիշեր, այս գիշերն ի լույս: Եվ բավական է: Եվ Մամփրեն գոհ կմնա: Եվ Մամփրեն խաղաղ աչք կփակի: Մուրք Մարաթուկ, դու, դու ճանանչ ես, ախր, Մամփրեին, դու օգնիր, որ Մամփրեն իր անպատասխան կռիվը անի (ահա թե ինչի համար սովորեց հայոց գրերը), իր պատք-կռիվը տա, ապա կամքը քոնն է: Յա, Մարաթուկ...

Բայց հայացքի դիմաց մշուշ էր, ճերմակն ու կարմիրը խառնվել էին իրար: Նա բռունցքով տրորեց կուրծքը, քունքերը և օգնության կանչեց Էրզրի սարերի շունչը, տրորեց աչքերը և օգնության կանչեց սարերին փված ճանաչ եկեղեցիների գորությունը և մատիտը ձեռքն առավ... Հիմա, հիմա... Ահա թե ինչի համար, թե ինչի համար սովորեց հայոց գրերը:

Հիմա...

Բայց մատները չէին ենթարկվում, ձեռքը դողում էր, և հենց առաջին տատը ճղվեց:

– Քու անունը... Օսման:

Ոտքի ելավ և հուզված սկսեց քայլել... Հիմա, հիմա սիրտը կհանդարտի, դողը հիմա կանցնի, աչքերը կլուսավորվեն, կհանդարտի սիրտը, և Մամփրեն քո հարամ հերը կանիծի, ճամփաների դարանակալ ավազակ... Ահա թե ինչի համար, ինչի համար Մամփրեն սովորեց հայոց գրերը: Համբերիր, հիմա, հիմա...

Հետո ննջարանից բերեց որդու ծխախոտը, վրա-վրա ծխեց և քշեց դեպի սեղանը: Յա, Մարաթուկ...

Ընտրեց տերտերից լավագույնը, մատիտներից՝ ամենակարմիրը, թքոտեց մատիտն ու սկսեց...

Լուսաբացին որդին հորը գտավ սեղանի մոտ մարած, ճակատը սեղանին, սեղմված բռունցքում՝ մատիտը և ճակատի տակ՝ կարմիր գլխատառերով գիրը.

«Օսման, թալանչի Օսման, ուրեմն որպես ավազակ որ ճամփին կանգնեցիր, էդ ճամփեն քոնն է, հա՞: Քու թալանչի ձեռքն, որ դրան դիպավ, էդ տունը քոնն է, հա՞: Քու գիշատիչ աչքն որ սարը տեսավ, էդ սարը քոնն է, հա՞: Քու հարամ շունչն որ աղբրակին դիպավ, էդ աղբուրն քոնն է, հա՞... Աթաբունար... Մամփրեն ճար շունեցավ, թե քեզ տրորեր, տրորեր ու տրորեր, ու դու հասկանայիր, թե Տավորիկի սարերում ու ողջ Սասնո սարերում Աթաբունար հարամանուն աղբյուր չկա: Չկա ու չկա: Աղբուրի անունը Մեհրե էր, ու Մեհրե կմնա՝ Մեհրեաղբյուր: Պատմություն կա, արարիչ կա ու հնուց եկած գրույց. Առյուծ Մեհր, էդտեղ, հենց էդ աղբրակի բխած տեղն է հանդիպել առյուծին ու ճղել զառյուծն, ու, կամոք արարչի, տեղն ու տեղն աղբյուր է բխել: Եվ արարիչն ինքն է կնքել՝ Մեհրեաղբյուր: Արարիչն է ծնել, ու արարիչն է կնքել: Օսման, թալանչի Օսման, ես էլ մեռնեմ, դու էլ մեռնես, աղբյուրի անունը Մեհրե էր ու Մեհրե էլ կմնա:

Մամփրե արքա»:

ԲԱՌԱՐԱՆ

գալ տարի - հաջորդ տարի

ճլտել - թեթև ապտակ հասցնել

փապռեճ - խռիվ մազերով

հերսոտ - ջղային

շշպռել - նախատել, հանդիմանել, ամոթանք տալ

հոս - այստեղ

ցուցամատել - ցուցամատով ցույց տալ

աչալուրջ - ուշադիր

ցուցանել - ցույց տալ

փռթկալ - պայթյունով ծիծաղել

պաստառ - պատին կպցրած թուղթ, սավան, էկրան

Հնդու աշխարհ - Հնդկաստան

մամիկ - տատիկ, ծեր կին

ասկյար - թուրք զինվոր

դաշնած - ներդաշնակ
սալդատ - ռուս զինվոր
յաթաղանակիր - յաթաղան՝ կեռ սուր կրող
«չախմախի» թվանք - հրահանով կրակող հրացան
չախու - դանակ
ելվերում էին - ելնում իջնում էին
ճարոտ - անվա
Մադայել - սատանայի անուններից մեկը
ուրթ (ուրդ) - այստեղ՝ ջրի կապ, հանգույց, առվի սկիզբը
Մարաթուկ - Մուրթ Աստվածածին վանքը Մարութա սարում, որ գտնվում է Մասունում
սովետականացում - սովետական, այսինքն՝ խորհրդային կարգերի հաստատում
լիկկայան - հապավում է՝ լիկվիդացիոն կայան, որտեղ գրել, կարդալ չիմացողներին գրագիտություն էին սովորեցնում
լղպոր - փափլիկ, նիհար, լղկած, կակղած
զիս - ինձ
ջուխտակ - գույգ
կիջվարեն, իջվար - ներքև կիջնեն, կիջնեն վար
աչաց - աչքերի
դալար - մատղաշ
բամփել (բամբել) - ձեռքի թաթով թեթև խփել
փրփրած - զայրացած
այդ օրն ի հետ - այդ օրվանից հետո
ձեռքվեց - ձեռք տվեց, բարևեց
սպաշխարանք - գղջում, ավստասանք
թամամ - լրիվ, ամբողջ
քղքալ - կոկորդը մաքրել
ուխտ - երդում
մեր արևն մի ծրարե - մեր արևը մի ծածկիր
ջուրն ճոթ տա - ջուրը ելք ունենա
ճամփորդ հինգ ծերունի - մահվան ճանապարհը բռնած
կցվոնք է ու հատոնք - կցում է ու հատում
սորստիկ - սարսուռ, սարսուռ՝ դող զգալ, մրսելուց սրսրթալ, ցնցվել
ջղարա - ծխախոտի չոր տերևներից կամ մանրած մասերից փաթաթած սիգար
դուրալի - դուրեկան
գուռ - աղբյուրի առջև քարե ավազան
փսոր - փշրանք, մանր կտորների բաժանած մասեր
խաբրիկ, խաբար - լուր
անթատակ - թևատակ
պիղծ - կեղտոտ, անմաքուր, սրբություն չունեցող
չալտիկ (չալիկ) - խայտաբղետ, խատուտիկ
բիրտ - կոպիտ
գերդաստան - ընտանիք, արյունակից հարազատների ամբողջություն, տոհմ
կոթոց կգրի - կմերժի, ընդդեմ կգրի
քարցանք սարալանջ - քարերով պատված սարալանջ, ասես քար է ցանված
լաթ արտ - մի կտոր արտ
գայթել - սայթակել
շակել - շիտակել, ուղղել
մթնդած - մթնած, ոչինչ չտեսնող
սփլփել - ձեռքերով խարխափելով որոնել
ճանանչ - ճանաչ, հայտնի
աղբրակ - աղբյուրի ակ, աղբյուրի դուրս գալու տեղը, աղբյուր

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչպե՞ս է թոռանը պապը իր իմացած այբուբենը սովորեցնում: Ինքն այդ այբուբենը որտեղի՞ց գիտեր: Քանի՞ տարեկան կլիներ պապը:
2. Ինչպե՞ս է բացատրվում Մեհրեաղբյուրի անունը: «Սասնա ծռեր» դյուցազներգության ո՞ր հերոսի անվան հետ է այն կապվում:
3. Անցյալը և ներկան ինչպե՞ս են համատեղված պատմվածքում: Պապը հիշողությամբ ո՞ր է գնում, ի՞նչ է հիշում և ի՞նչ դաս է տալիս թոռանը:
4. Ո՞վ էր Մամփրեի հայոց լեզվի առաջին ուսուցիչը: Որտե՞ղ էր նա այբուբեն սովորեցնում, և ի՞նչ պատճառով Մամփրեն չհասցրեց գրագիտություն ձեռք բերել:
5. Խորհրդային ժամանակ, երբ հնարավորություն ներկայացավ տառաճանաչ դառնալ, ինչի՞ց նեղացավ Մամփրեն և այլևս չհաճախեց դասերի:
6. Կյանքի վերջում ո՞վ է Մամփրեին այբուբեն սովորեցնում:
7. Ինչո՞ւ է Մամփրեն հայոց տառերը գրում կարմիր մատիտով: Ինչպե՞ս ես հասկանամ նրա այս բացատրությունը. «... քանզի սուրբ Մաշտոցը գրերն իր սրտից է հանել ի լույս: ... Ուրեմն սուրբ Մաշտոցի գրեր կարմիր են, քանզի թրծվել են արդար Արեգակով: Եվ կարմիր են, քանզի սրբազան կռիվների են մասնակից եղել»:
8. Ինչո՞ւ Մամփրեն չէր սիրում մեծատառ Թ տառը: Ինչի՞ էր նմանեցնում այդ տառը:
9. Գրերը սովորելուց հետո՝ ինչո՞ւ էր հաղթական կեցվածք ընդունել Մամփրեն:
10. Ինչպե՞ս կբացատրես. «Հայացքը գարնանագուլ գետնին...», «ուսումը եփած հաց է մարդու թևի տակ դրած» արտահայտությունները:
11. Ինչպե՞ս է իր տարեկիցներին Մամփրեն ներկայացնում հայոց տառերի գծագրությունը: Ըստ նրա՝ Մաշտոցն ինչո՞ւ հայոց երկրի սահմաններին դպրոցներ բացեց:
12. Ի՞նչ է նշանակում հետևյալ միտքը. «Եվ այդ դպրոցները բերդեր էին սահմանագրերում: Բերդեր և գորանոցներ: Քանզի տառերը, Մաշտոցի գրերը զինվորներ են»:
13. Հայոց գրերով մահից առաջ ինչպե՞ս է թուրք թալանչի Օսմանից իր վրեժը լուծում Մամփրեն: Ի՞նչ է գրում նա արնագույն տառերով:
14. Ի՞նչ բարբառով է խոսում Մամփրեն: Այդ բարբառը նմա՞ն է «Սասնա ծռեր» դյուցազներգության հերոսների լեզվին: Եթե՝ այո, ապա՝ ինչո՞ւ:
15. Ինչո՞ւ Մամփրեն իրեն արքա հռչակեց: Ո՞ւմ արքան էր նա և որպես արքա ի՞նչ էր պատվիրում իր զորքին:

ՀՐԱՆՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ (1935-2002)

Հրանտ Մաթևոսյանը հայ արձակի վերջին խոշորագույն ներկայացուցիչն է: Իր ստեղծած ծանրակշիռ վաստակով նա արդեն հայ գրականության դասականների կողքին է: Նա հայ արձակին պարզևեց մի նոր աշխարհի և նոր հերոսներ, իսկ հայոց լեզուն նրա ստեղծագործություններում թանձրացավ պատմողականության աստիճանի և շողարձակեց քանաստեղծության նրբագեղությամբ:

Հրանտ Մաթևոսյանը ծնվել է 1935 թվականի փետրվարի 12-ին Լոռու Ահնիձոր լեռնային փոքրիկ գյուղում:

Յոթնամյա կրթությունը 1942-1949 թվականներին ստացել է ծննդավայրում: 1949-1950 թվականներին սովորել է Վանաձորի մանկավարժական ուսումնարանում: 1950-1951-ին ուսումը շարունակել է Լորուտ գյուղի դպրոցում:

1952-ից տեղափոխվել է Երևան և արհեստագործական ուսումնարանում երեք տարի սովորել է գրաշարի մասնագիտություն: Այնուհետև աշխատել է Երևանի տպարաններից մեկում: Ջուզահեռ սովորել և 1955 թվականին ավարտել է Երևանի Մանուկ Աբեղյանի անվան դպրոցը:

1957-1962 թվականներին Հրանտ Մաթևոսյանն ուսանել է Երևանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի պատմալեզվագրական քաժանմունքում: Ուսմանը զուգընթաց որպես սրբագրիչ աշխատել է «Սովետական Հայաստան» օրաթերթում, ուր և տպագրվել են նրա առաջին ակնարկները:

1959-1965 թվականներին «Սովետական գրականություն» ամսագրում և «Գրական թերթ»-ում շարունակել է սրբագրիչի գործը, այնուհետև դարձել գրական աշխատող:

1965-1967 թվականներին ուսումը շարունակվել է Մոսկվայի սցենարական երկամյա դասընթացներում: Մոսկովյան միջավայրը էապես նպաստում է նրա վերջնական ձևավորմանը:

1950-ականների վերջին և 1960-ականների առաջին տարիներին թերթերում և ամսագրերում սկսեցին տպագրվել Հրանտ Մաթևոսյանի ակնարկներն ու պատմվածքները: Գրական շրջանակներում մեծ հետաքրքրություն առաջացրեց «Ահնիձոր» ակնարկը: Կուսակցական-պաշտոնական կարծիքը խիստ բացասական էր, որովհետև երիտասարդ գրողը բացահայտել էր գյուղակյան կյանքի ծանր ճշմարտությունը, ինչը իշխանավորները ցանկանում էին կոծկել: Գրա համար նրա դեմ ընդունվեց որոշում, նրա հարցը քննարկվեց կուսակցական բարձրագույն ատյաններում և նրա դեմ գրվեցին հողվածներ:

Մուտքից իսկ պաշտոնապես փակեցին նրա գրական ճանապարհները: Ահա նրա դեմ ուղղված մեղադրական հողվածներից առանձին արտահայտություններ՝ «ոմն Հրանտ Մաթևոսյան», «քաղաքական կուպիտ սխալ», «մասնավոր սեփականատիրական միտումների փառաբանություն», «գրպարտչական հորինվածք» և այլն: Ահա այս մթնոլորտում պետք է տոկար, դիմանար և իր բնական ձիրքը բարձր գրականության վերածեր 26-27 տարեկան երիտասարդ գրողը:

Ի հակադրություն պաշտոնական խիստ բացասական կարծիքների՝ Հրանտ Մաթևոսյանն ունեցավ նաև ջերմ պաշտպաններ: Ասպարեզ էր մտնում մեծ մտահոգությունների տեր, անուրանալի ձիրքով օժտված մի նոր գրող: Հետագա վիպակներում և պատմվածքներում ժամանակակից գյուղաշխարհի պատկերումով նա ստեղծում է մարդկային հարաբերությունների, հողի ու մարդու, մարդու և բնաշխարհի կապի, սերունդների ժառանգորդական շղթայի ու բարոյական ըմբռնումների այն բարդ հանգույցը, որն իրենով արտացոլում է մեծ աշխարհի ամբողջական պատկերը: Մաթևոսյանի ոճը խիստ է ու վիպական, միաժամանակ հագեցած է քանաստեղծական նուրբ շնչով:

Նա հրատարակվել է «Օգոստոս» (1967), «Մեր վագրը» (1978), «Ծառեր» (1978), «Տերը» (1983) պատմվածքների և վիպակների ժողովածուները: Հետագա տարիներին լույս տեսան «Սպիտակ թղթի առջև» (2004), «Ես ես եմ» (2005) հողվածների և երկխոսությունների ժողովածուները, մի քանի անտիպ նյութեր և երկրի ժողովածուները:

Հրանտ Մաթևոսյանի գրական նյութերի բեմականացումով նկարահանվել են «Մենք ենք մեր սարերը», «Աշնան արև», «Տեր» շարժանկարները: Թատրոններում և հեռուստատեսությամբ ներկայացվել են «Աշնան արև», «Չեզոք գոտի» գործերը:

Հրանտ Մաթևոսյանը, ինչպես յուրաքանչյուր ազգային մեծություն, եկավ ու ասաց, որ հայ արվեստի չափանիշը Հայաստանում է և մի հեռավոր ու կորած Ահնիճոր-Ծմակուտով ու նրա մարդկանցով կարելի է XX դարի մեծ ու մնայուն գրականություն ստեղծել: Այդ չափանիշը նա տեսավ հայոց բնաշխարհի մեջ, հայ մարդու կերպարի ավանդականորեն ձևավորված պատմական հոգեբանության մեջ:

Իր մասին ինքը՝ Հրանտ Մաթևոսյանը, այս տողերն է գրել:

«Մաճ եմ բռնել, խոտ հնձել, կով ծնեցրել, պատվաստ դրել... առասպելի ջրհեղեղը եթե կրկնվեր՝ Նոյյան պես կարող էի վերստեղծել հողագործության ու անասնապահության մեծ մշակույթները և մարդկանց հիշողությունը եթե հանված խաթարվեր՝ կարող էի նորից ժողովել մարդկային բարոյականության օրենսգիրքը: Այս ամենի համար պարտական եմ այն հին Ահնիճոր գյուղին...

Ուզում եմ մի նոր հովիտ փռել և բնակեցնել նոր մարդկանցով ու կենդանիներով... Շատ կուզենայի, որ իմ հովիտը մեծ ու արևոտ լիներ, կուզենայի որ նրա բնակիչները միայն լավ մարդիկ լինեին, բայց ստիպված եմ լինել իմ ժամանակի տարեգիրքը:

Մաթևոսյանն արժանացել է Հայաստանի (1983) և Խորհրդային Միության (1984) գրական բարձր պարգևների՝ Պետական մրցանակների դափնեկրի կոչման:

Մեծ գրողը վախճանվեց 2002 թվականի դեկտեմբերի 18-ին Երևանում և թաղվեց հայոց մեծերի պանթեոնում:

ՀՐԱՆՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ինչպես Մաթևոսյանի բոլոր գործերը, «Ալխո»-ն էլ գրված է ինքնատիպ, գունագեղ ոճով ու գրիչով: Արձակագիրը այնպիսի արտահայտություններ և ոճական դարձվածքներ ունի, որոնք ուժ և փայլ են տալիս նախադասությանը:

Ընթերցողը բաժանվում է Ալխոյից [Ալխոն բեռնաձի է] մտերմացած նրան և երիտասարդ հեղինակին: Եվ եթե պարտադիր է կենդանիների, գազանների կամ թռչունների մասին պատումների վերջում որոնել ավանդական «բարոյական», ապա Հրանտ Մաթևոսյանի «Ալխո»-ի բարոյականը հավանաբար պետք է լինի՝ մի՛ տանջեք Ալխոյին, մի խանգարեք նրան, նա երկար ու մեծ ճանապարհ ունի գնալու:

Գորգեն Մահարի

Հրանտ Մաթևոսյանը հերոսներ չփնտրեց: Նա տեսավ, որ այսօր մեզ, մեր հասարակությանը հարկավոր են պարզ, հասարակ, համեստ ու ազնիվ աշխատավոր մարդիկ: Ծառ տնկող և ծառ ջրող մարդուց է սկսվում աշխարհն ու աշխարհի գեղեցկությունը:

Հրանտը վաղուց է գլխի ընկել, որ բարոյալքման, չաշխատելու միտումը գյուղի ներսում է: Գրողն այդպես է հայրենիք դառնում:

Համո Մահյան

Կարդալով Հրանտ Մաթևոսյան՝ դուք հանկարծ ձեզ զգում եք լեռնային գյուղական կյանքի խորքում, ընկալում հայկական ազգային բնավորության դժվար որսալի, բայց և անսխալ կերպով կռահվող էությունը: Իսկ հումորն ու կենդանի գրույցը հեղինակի հարազատ տարերքն են:

Գ. Տրեֆիլովա, ռուս քննադատ

Ես Հրանտ Մաթևոսյանի մասին չգիտեի ավելին, քան այն, որ գրում է հայրենի գյուղի մասին: Սակայն որպես գրող, նա շատ բանով էր ինձ ապշեցնում: Նրանում ասես չկային տաղանդի ստվերները: Խառնվածքի շռայլությունը, բնածին օժտվածությունը նրանում չունեին շինծու քմայքի, մթին խորխորատների ու անդունդների ցանցառության ու կաղիկ դիվականության այն բևեռային վայրիվերումները, որոնցով այնքան հարուստ է ռուսական

տաղանդը, մանավանդ հարազատ միջավայրից քաղաքային, մայրաքաղաքային օտար միջավայր տեղափոխվածը: Այստեղ ահա հասկանալի էր դառնում, որ մարդու բարեկրթությանը կրթությունը, չէ, քաղաքը չէ, տաղանդը չէ, այլ հատկանիշ է: Եվ որ վեհանձնությունը նույնպես հատկանիշ է: Մաքրությունը և: Բարեկրթությունը՝ նույնպես: Որովհետև նրանում հատկապես գյուղացին էր բարեկիրթ և ոչ թե գյուղացուց սերված, բարձրագույն կրթություն ստացած մարդը: Եվ հետո, ինչ ասել կուզի, հազիվ թե իմ հայրենակիցների մեջ հանդիպած լինեմ մինչ ի մահ հայրենիքի, հայրենի եզերքի, ժողովրդի, լեզվի ու պատմության հանդեպ ունեցած այսպիսի գտարյան նվիրվածության:

Մաթևոսյանին տրված էր որսալ ամենայն կենդանի էակի ու երևույթի համընդհանուր տրոփյունը: Շրջակա աշխարհը բեղմնավորում է նրան և բաբախում նրանում, ինչպես պտուղը:

Նրանից սերված արձակը մնան է կյանքի և ինքնին արդեն կյանքն է:

Անդրեյ Բիտով, ռուս գրող

Հրանտ Մաթևոսյանի ակնթարթը հագեցած է ու լի. դա կյանքի կարճ պահն է: Ակնթարթի մեջ կյանքի ամբողջ կեցությունը կարող է գործել իր շրջանը, ցեղը՝ ապրել դար ձգվող իր կյանքը: «Յեղ» բառը, «Յեղ» հասկացությունը Մաթևոսյանի համար հիմնարար նշանակություն ունի: Դա ոչ միայն մարդկային ցեղն է, այլև այն ամենը, ինչ գոյություն ունի արևի տակ:

Մաթևոսյանի համար սահման չկա շնչավորի և անշունչի համար, նրա համար սահման գոյություն ունի միայն կենդանիի ու մռայլի միջև:

Իգոր Չոլտտուսկի, ռուս գրող

Ծիծաղելի է այսօր Մաթևոսյանին «գյուղագիր» կոչել: Հենց այն պատճառով, որ Ծմակուտը նրա համար արդեն «նահապետական դրախտի» անկյուն չէ, այդպիսին այն չմնաց, ճաք տվեց, փշրվեց: Ծմակուտը այլ է՝ աշխարհ է, աշխարհի մանրակերտ, փոքրիկ միկրոկոսմոս, համապարփակ տիեզերք:

Եվ դա հնարավոր է եղել Հայաստանի գրականության մեջ: Այն հողում, որտեղ դարավոր արմատները միահյուսված են ժամանակակից շիվերին՝ միավորված՝ խտացած մշակութային հիշողությամբ:

Լև Անիսկի, ռուս գրող, գրականագետ

Հրանտ Մաթևոսյանի գրողական ձիրքի երկրային ձգողականությունը մեծ է ու անհաղթահարելի: Այդ ձիրքն աճեցրել են Հայաստանի դժվարին պատմությունը, նրա աշխատասեր ժողովուրդը: Նրա արմատները խորունկ են և սնվում են ազգային անապատ աղբյուրներից: Այդ բարեխիղճ և զգայուն ձիրքի շնորհիվ մեզ հարազատ ու հասկանալի է Հրանտ Մաթևոսյանի գեղարվեստական աշխարհը:

Եվգենի Գուցալո, ռուս քննադատ

ՀԱՐՑԵՐ և ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ի՞նչ գիտեք Հրանտ Մաթևոսյանի մասին, ինչպե՞ս կարող եք ներկայացնել նրան:
2. Որտե՞ղ է ծնվել, ի՞նչ աշխատանքային դաստիարակություն և կրթություն է ստացել ապագա գրողը:
3. Որտե՞ղ է աշխատել:
4. Ի՞նչ ակնարկով ազդարարվեց նրա գրական մուտքը և պաշտոնական մարմինների մողմից ինչպե՞ս ընդունվեց:
5. Ինչի՞ մասին է գրում Հրանտ Մաթևոսյանը:
6. Թվարկե՛ք նրա ժողովածուների վերնագրերը:
7. Թվարկե՛ք նրա գրական երկերի բեմականացումով նկարահանված շարժանկարները և ներկայացված թատերգությունները:

8. Ի՞նչ մրցանակների է արժանացել գրողը:

9. Ովքե՞ր և ինչպիսի՞ կարծիքներ են հայտնել Հրանտ Մաթևոսյանի մասին:

ԿԱՆԱԶ ԴԱՇՏԸ

Կայծակը չոր ճայթյունով բախվեց ծակոն, մի կողմ շարտվեց և թաղվեց կանաչ գետնի մեջ: Ժայռը կարծր էր, կայծակը հազիվ թե կարողացավ գորշ այդ ժայռից պոկել քարի մի երկու փշուր: Ժայռի տակ կանաչ գետնը այդ հովտում ճայթող բոլոր կայծակների գերեզմանոցն էր. գարունների և ամառների բոլոր կայծակները թաղվում էին ժայռի տակ, և մոտիկ կաղնին միշտ, ամեն ճայթյունի վախից սրսփում և, իր մտքում, կաղնիորեն շնորհակալ էր լինում ժայռին այն բանի համար, որ նա՝ ժայռը, հովիտ նետվող բոլոր կայծակները ձգում թաղում է իր տակ և կաղնուն փրկում խանձվելուց:

Քիչ առաջ, երբ կայծակը պտտվում էր հովտի և բլուրների վրա և մտածում էր ճայթել ու դեռ չէր ճայթել, քուռակի մայրը մեղմ խրխինջով կանչեց քուռակին. քուռակի մայրը գիտեր, որ կայծակը ճայթելու է, ճայթյունը վախեցնում է քուռակին, իսկ քուռակը կարծեց մայրն իրեն կանչում է կուրծք տալու և ականջ դրեց ինքը իրեն, ականջները շարժեց և ունկդրել սկսեց ինքը իրեն, թե ինքն արդյո՞ք ուզում է կուրծք ուտել, և այնքան էլ չէր ուզում ուտել, ուզում էր խոտերից ու ծաղիկներից հոտ քաշել և մեկիկ-մեկիկ ճանաչել խոտերը, և հենց այդ ժամանակ ճայթեց կայծակը: Քուռակը խրտնեց ու վազեց դեպի մայրը, բայց շատ էր վախեցել, մորը չէր տեսնում, ուրիշ կողմ էր փախչում: Մայրն ուզեց գնալ դեպի քուռակը, բայց վզի պարանոց խանգարեց: Եվ մայրը քուռակին խրխինջով կանչեց իր մոտ:

Քուռակը մեկ ամսվա քուռակ էր, միամսյա նրա կյանքում դա առաջին կայծակն էր: Նա պատասպարվեց մոր լանջի տալ: Մոր լանջի տակից, ականջները սրած, քուռակը մի քիչ լսեց անձրևի թմբկահարումը կաղնու տերևներից, մի քիչ նայեց ժայռին, մասրենու թփին, կաղնուն, աչքերը թարթեց և մոռացավ, որ ինքը վախեցել էր կայծակի ճայթյունից, կարծեց ինքը մոր մոտ էր եկել կուրծք ուտելու: Գանգուր, սև պոչիկը թափահարելով՝ քուռակը մտավ մոր փորի տակ: Պառավ ձին ոտքը ետ դրեց և թուլացրեց կաթի երակները, որպեսզի իր քուռակը ազատ ծծի և կուշտ ծծի:

Դա աստղագարդ քուռակ էր, այսինքն՝ ծածկված էր եղյամի հատիկների նման աստղիկներով: Ոտքերը բարակ ու երկար էին: Ետևի աջ ոտքի սրունքը սպիտակ էր: Ինքը կարծես եղյամոտ էր, ետևի աջ ոտքը՝ ձյունոտ: Վիզը բարակ ու երկար էր: Գլուխը փոքր էր, ճակատին կլորիկ սպիտակ կար, աստղածաղկի նման: Այդ հովտի առվից ջուր խմելու էին գալիս եղնիկներ, ուլեր ու գառներ, նաև՝ այդ ձին, որ շատ քուռակներ էր ունեցել, բայց այս քուռակը այս կանաչ դաշտի ամենագեղեցիկ արարածն էր: Բաշը և պոչը սև էին: Մենք չգիտեինք, թե ինչպիսին են քուռակի աչքերը, որովհետև նա խրտնում էր, և մենք չէինք կարողանում մոտենալ նրան, բայց ասնեք, որ այդ քուռակի աչքերը շատ գեղեցիկ աչքեր էին, քանի որ ձիերի աչքերը գեղեցիկ են լինում, շրջապատն արտացոլվում է ձիերի աչքերում: Քուռակի աչքերում հիմա արտացոլվում էին կաղնին, ծաղիկները, մասրենին, իր կարմիր մայրը և ամբողջս կանաչ հովիտը:

Նա մի քիչ հիմարիկ էր, բայց հիմարիկ էր փոքրության պատճառով: Անձրևի կաթիլը գլորվեց մտավ նրա ոտքերի արանքը, և նա խրտնեց ու փախավ մոր մոտից: Մայրը նրան ետ չկանչեց. անձրևը դադարել էր, կայծակ այլևս չէր ճայթելու, և հիմա արև էր:

Արևի մեջ կանաչ դաշտը փայլում էր: Թացության ու առատ լույսի մեջ փայլում էր նաև այդ հովտի միակ կաղնին, և մասրենու թոփն էր փայլում, և ձիու թաց մեջքը, և քուռակի՝ մեջքը, և առո՛ն, որ սկսվում էր մոխրագույն ժայռից և գալիս ու գնում էր կանաչ հովտով: Առվից կայծակի հոտ էր գալիս, և քուռակը մի քիչ խրտնեց: Մասրենուց նույնպես կայծակի հոտ էր գալիս. քուռակը մի երկու ցատկ խրտնեց, կանգ առավ, նայեց մասրենուն և տոտիկ-տոտիկ գնաց՝ նորից հոտոտելու:

Չին ճանաչում էի այդ հովտի բոլոր բույրերն ու հոտերը: Նա գիտեր բոլոր հովիտների ու բլուրների բույրերը, բայց այս հովտի բույրերն ավելի լավ գիտեր, քանի որ ձիուն այս հովտում հաճախ էին կապում արածելու: Կայծակի հուրն անցողիկ էր, արևի տակ, ցողի հետ հիմա պիտի ցնդեր: Ուրցի բույրը նույնպես այս հովտի բույրը չէր, ուրցի բույրը քամին էր նետել

բլուրներից հովիտ: Չին արածում էր և ոչխարի թաց բրդի հոտ էր զգում: Չին մտածում էր, որ բլուրների մյուս երեսին ոչխարներ են արածում, ուրեմն նաև գամփո շներ կան:

Բլուրների մյուս երեսին ոչխարներ էին արածում, հովտի թաց խոտը համեղ է, առվի ջուրը համեղ է, - մտածում էր պառավ ձին, - արևը ջերմացնում է, և քուռակը խրտնում ու մեծանում է հովտի ջերմ բարության մեջ:

Չին բարձրացրեց գլուխը. կաղնին կանգնած էր հանգիստ, ժայռը կեցած էր մի տեսակ քնածի պես, քուռակը մասրենուց հոտ էր քաշում: Արևը ջերմացնում էր, և խոտը համեղ էր, հարկավոր էր արածել: Չին գլուխը կախեց արածելու, մի երկու բերան խոտ պոկեց, բայց անհանգստացնող ինչ-որ բան կար, և ձին գլուխը բարձրացրեց:

Կանաչ հովտի մեջ անշարժ կանգնած, գլուխը՝ կարմիր պառավ ձին երկար նայեց հովտին և երկար ունկնդրեց լուրջունը: Ամեն ինչ առաջվա պես էր, կաղնին կեցած էր հանդարտ, ժայռը նիհարում էր, քուռակը թռչկոտում էր մասրենու մոտ: Եվ կարծես թե կարելի էր արածել, բայց կամիր ձին մոռթը չիջեցրեց մինչև գետին, գլուխը կտրուկ վեր նետեց և սպասեց ականջները սրած՝ որսալու համար հովտի բոլոր թաքուն ձայները: Եվ սպասեց ռունգները լայնացրած՝ զգալու օտար հոտերը: Թիթեռները շրշում էին, բզեզները երգում էին, առուն խոխոջում էր, վիզը ձգած՝ քուռակը պտտվում էր թիթեռի ետևից մասրենու շուրջը, բայց պառավ կամիր ձին ուզում էր լսել ոչ այդ ձայները և ուզում էր տեսնել ոչ այդ պատկերները: Հովտում, համենայն դեպս, վտանգ կար: Օդում այդ վտանգից ձայն չկար, հովտում այդ վտանգը չէր երևում, քամու մեջ այդ վտանգի հոտը չկար, բայց ձին չէր կարողանում արածել:

Պառավ կարմիր ձին սկսեց զայրանալ: Կարմիր պառավ ձին զայրանում էր այն բանի համար որ հովտում թշնամի կար, բայց այդ թշնամին չէր զգացվում, չէր լսվում և չէր երևում:

Կանաչ հովտում կանգնած՝ նայում ու լուրջունն ունկնդրում էին մոխրագույն ժայռը, փարթամ կաղնին, կարմիր պառավ ձին և մասրենու թուփը: Եվ ժայռի համար կանաչ հովտում չկար ոչ մի վտանգ, որովհետև կայծակ այսօր այլևս չէր լինելու: Կաղնին նայում էր, և կաղնու համար ամեն ինչ լավ էր, որովհետև կայծակ չէր լինելու, և ջերմ արև էր: Մասրենու համար նույնպես լավ էր, որովհետև քուռակի դուռը չէր հասնում նրա կատարի մի երկու ծաղկին: Իսկ պառավ կարմիր ձին լարված սպասումից քրտնեց:

Հովիտը դավաճանում էր ձիուն. հովտում թշնամի կար, բայց հովիտը չէր մատնում թշնամու ձայնը և թշնամու հոտը: Կարմիր պառավ ձին սիրտ չէր անում գնալ դեպի քուռակը. վախենում էր իր ոտնաձայների մեջ կորցնի թշնամու թաքուն ձայները: Կարմիր պառավ ձին սիրտ չէր անում շնչել. վախենում էր իր թոքերի աղմուկի մեջ կորցնի թշնամու թաքուն շնչառությունը: Կարմիր պառավ ձին աչքերը չէր թարթում. վախենում էր, որ իր աչքաթարթի հետ թշնամին տեղից կցատկի, և ինքը չի հասցնի նկատել նրա ցատկը:

Կանաչ հովտի մեջ այդպես անշարժ կանգնած էին ժայռը, կաղնին, մասրենին, ձին: Ժայռը նիհարում էր: Կաղնու կաղնիները ապահով զրահների մեջ լցվում էին հյութով, և կաղնու համար ամեն ինչ լավ էր: Մասրենին իր ծաղկաբաժակները բացել էր արեգակի դեմ և արև էր խմում, իսկ կարմիր պառավ ձին զայրույթից դողում էր: Երբեք, ոչ մի անգամ հովիտը ձիուն այդպես չէր դավաճանել: Գուցե կայակի՞՞ հոտն էր ձիու ռունգերին խանգարում զգալ այն հոտը, որ ուներ թշնամին, որը մոտերքում էր, մոտիկ մի տեղ էր և հոտ էր տալիս, բայց նրա հոտը թաքնվում էր կայծակի խանձահոտի տակ:

Քուռակը նայում էր մի բանի և սպա նայում էր մորը: Դ-արձյալ նայում էր նույն բանին, սպա նայում էր մորը: Այդ բանը մայրը չէր տեսնում, մոր մոտից այդ բանը չէր երևում: Քուռակը նայում էր այդ բանին, սպա գլուխը թեքում էր մոր կողմը: Մայրը կանգնած էր գլուխը բարձր, և մոր աչքերը վառվում էին:

Քուռակը վիզը ձգեց, դնչիկը պարզեց և գնաց դեպի այդ բանը, և այդ պահին մայրը զգաց գայլի զզվելի հոտը: Մայրը խրխինջ արձակեց ու նետվեց դեպի քուռակը և տեսավ, թե գետնից ինչքան սահուն ու երկար ցատկով գատվեց գայլը:

Բլուրների մյուս երեսին լավեց ձիու ջղային կարճ վրինջը: Բլուրների մյուս երեսին, ոչխարների մոտ, գամփո շները մի վայրկյան սրվեցին, մի քիչ սպասեցին ուրիշ ձայների և հանգստացան:

Կարմիր ձին նետվեց դեպի քուռակը, թափով նետվեց դեպի գայլն ու քուռակը, բայց տապալվեց: Նա պառավ ձի էր, ուրիշ անգամներ էլ ընկել էր, բայց ոչ մի անգամ այդպես

անսպասելի չէր տապալվել: Տապալվեց ու ելավ միանգամից: Նրան տապալել էին իր հուժկու թափն ու պարանը: Պարանը նրան խեղդում էր, պարանը նրան չէր թողնում թռչել իր փոքրիկի մոտ:

Քուռակը փախչում էր մասրենուց դեմը հեռու մի տեղ, քուռակն ուզում էր դեպի մայրը գալ, երկար շրջան տալով՝ քուռակը ձգտում էր դեպի մայրը, բայց գայլն ամեն անգամ կտրում էր նրա ճանապարհը և նրան հեռացնում ու դարձյալ հեռացնում էր: Իսկ պարանը խեղդում էր մորը: Եվ քուռակը ցատկեց գայլի վրայով դեպի մայրը, բայց գայլը տակից բռնեց նրա ետևի ոտքը, և քուռակն ընկավ: Քուռակը ճչաց ու վեր ցատկեց:

Բլուրների մյուս երեսին լավեց քուռակի սուր ծղրտոցը, և գամփռ շները սրվեցին, և գամփռ շների մեջ սրվեց սևադունչ Թոփուշ շունը:

Քուռակը ճչաց ու վեր ցատկեց, և այդ ժամանակ մայրը ծառս եղավ և ամբողջ ծանրությամբ ու ամբողջ կատաղությամբ ձգվեց դեպի գայլն ու քուռակը, և պարանը կտրվեց ու մտրակվեց մոր ոտքերին: Մայրը գնաց ամբողջ թափով, ամբողջ ուժով, ամբողջ կատաղությամբ ու ամբողջ սիրով: Նա շատ արագընթաց գամբիկ էր, բայց իր կյանքում երբեք այդպես թռիչքի պես չէր սլացել:

Բլուրների մյուս երեսին լավում էր նրա սմբակների խուլ դոփյունը: Հետո բլուրների մյուս երեսին հովտի ոչ մի ձայն չէր լսվում, և գամփռ շներն ու փոքրիկ հովիվը խաղաղվեցին:

Գայլը քուռակին թողեց ու ազատվեց տրորվելուց: Չին հարձակվում էր, և գայլը մի քիչ փախավ: Չին դարձյալ գալիս էր, և գայլը մի քիչ էլ ետ քաշվեց: Դունչը գետնին հպած՝ ձին գալիս էր, դանդաղ, սպառնալի՝ ձին գալիս էր, գայլը ճապաղվեց գետնին և ահա-ահա կարող էր ցատկել ու կախվել ձիու ռունգներից, և ձին շուռ եկավ:

Չին շուռ եկավ, և գայլը ցատկեց ու կանգնեց ձիու դեմ: Քուռակը լանջի տակ՝ ձին դարձյալ շուռ եկավ, և նրա հետ պտտվեց նաև գայլը: Գայլը անընդհատ պտտվեց, և ձին անընդհատ շուռ եկավ: Երկու կարճ ցատկով գայլը հայտնվեց ձիու դնչի տակ, բայց ձին դարձյալ հասցրեց շրջվել ու աքացի շարտել: Մի երկար ցատկով գայլը հայտնվեց ձիու դնչի տակ, և ձին չհասցրեց լրիվ շրջվել, գայլը կարողացավ նրան տրորել առջևի ոտքով: Գայլը ետ քաշվեց, բայց չփախավ, նստեց ու նայեց ձիուն, և ձին էլ նայեց գայլին: Եվ գայլը հասկացավ, որ ձին իր քուռակին պաշտպանելու է մինչև վերջ, և ձին հասկացավ, որ գայլը չի հեռանալու: Չին քրտնել էր, բայց գայլը նույնպես հոգնել էր: Գայլը նետվեց միանգամից: Դրանից հետո գայլն անընդհատ ցատկեց դեպի ձիու ռունգները, և ձին անընդհատ շրջվեց ու քուռակին անընդհատ պահեց լանջի տակ:

Արդեն երեկո էր, նրանց շարժումները դանդաղել էին, ձիու շուրջը գայլը պտտվում էր դանդաղ, գրեթե քարշ էր գալիս, գրեթե սողում էր, և ձին իր տեղում պտտվում էր դանդաղ, դժվար, երբեմն սայթաքելով և գրեթե ընկնելով: Նրանց աչքերը մթնել էին, և նրանք միմյանց հազիվ էին տեսնում: Հոգնածությունից նրանք խլացել էին:

Փոքրիկ հովիվը դուրս եկավ բլուրների գլուխ և նայեց մայրամուտին: Մայրամուտը կարմիր էր, մայրամուտի տակ գեղեցիկ էր հովտի միակ կաղնին... բայց այն, ինչ տեսավ փոքրիկ հովիվը, այնքան տգեղ էր, որ փոքրիկ հովիվը չէր կարողանում խոսել. գայլը կախվել էր կարմիր ձիու ռունգներից, և կարմիր պառավ ձին չէր կարողանում տրորել գայլին. կարմիր պառավ ձին արդեն-արդեն խոնարհվում էր:

– Այ տղա, հե՛յ,- կանչեցին դիմացի բլուրներից,- էն գելն էն ձիուն խեղդում է, այ տղա, հե՛յ... շներն ո՞ւր են, հե՛յ...

Փոքրիկ հովիվը բերանը բացեց ծղրտալու, բայց չկարողացավ ձայն հանել: Փոքրիկ հովիվը միայն ձեռքերը թափահարեց: Գամփռ շները սրվեցին ու նայեցին: Գամփռ շները տեսան ու թռան... Թոփուշը, Բորը, Սևոն, Բողարը, Չալակը, Չամբարը: Սևադունչ Թոփուշը վարպետ շուն էր, լուռ գնում ու բռնում էր, նա առջևից հիմա էլ լուռ էր վազում, իսկ Բողարը ջահել շուն էր, գայլերից դեռ մի քիչ վախենում էր. այդ պատճառով հաչում էր դեռ հեռվից, որպեսզի գայլերը փախչեն, և ինքը այդպիսով նրանց հետ չկռվի: Բողարը հիմա գնում էր հաչելով: Բողարը շատ արագավազ էր, նա հիմա Թոփուշից երբեմն առաջ էր անցնում, բայց չէր համարձակվում պոկվել խմբից ու գնալ մենակ, կանգնում էր և հաչելով սպասում Թոփուշին, վազում էր Թոփուշի կողքից, սակայն դարձյալ առաջ էր անցնում և դարձյալ դանդաղում:

Երբ ձին ահա-ահա պիտի ծնկեր, գայլը հեռվում, կարծես երազում, շների հաչոց լսեց:

Գայլը չուզեց հավատալ, թե շները հաչելով իր վրա են գալիս. բախտը հո չէր կարող լինել այնքան անողորմ, որ իր մեկ լրիվ օրվա չարչարանքն անտեղի անցներ, և ինքը իր երեք ձագի մոտ դառնար քաղցած ու դատարկ:

Երբ իր մեջ այլևս ուժ չկար, և ռունգների ցավերը բթանում էին, և աչքերը բոլորովին մթնել էին, և ականջները լիովին խլացել էին, մայր ձին հեռու-հեռվում շների հաչոց լսեց և հավատաց, որ շները հաչում են իր քուռակի համար և իր համար. բախտը հո չէր կարող լինել այնքան դաժան, որ նրա քուռակն ապրեր ընդամենը մի հունիս: Պառավ ձին գիտեր, որ շները մոտիկ են, և շների հաչոցը հեռավոր է թվում իր հոգնած խլության պատճառով: Պառավ ձին գիտեր, որ ինքը կարող է համբերել մի քիչ էլ, դեռ մի քիչ էլ, մինչև շների հասնելը ինքը պարտավոր է համբերել: Բայց ի՞նչ ծանր է շնչելը, ի՞նչ ծանր բեռ է դարձել այս կյանքը:

Շների հաչոցը պայթեց գայլի հենց ականջների մեջ, բայց գայլը դարձյալ չէր հավատում, որ այդպիսի տանջալից հաջողությունից հետո այդպիսի ձախողություն կպատահի: Չագերը տանը քաղցած, իր պտուկները դատարկ... Վիզը ծակծկեցին, ականջը ծակծկեցին, և գայլը բաց թողեց ձիու ռունգները: Թաթը բռնել էին: Թաթն ազատելու ուժ չկար: Գայլն ուզում էր քնել, քնել: Կռվելու ուժ չկար, գայլն ուզում էր մեռնել, հանգստանալ: Գայլը ճապաղվեց և բուկը սեղմեց գետնին, որպեսզի շները բուկը չբռնեն: Շները քրքրում էին նրա մեջքը, վիզը, քաշքշում էին ականջներից, իսկ նա բուկը պաշտպանում և հանգստանում էր շների կույտի տակ:

Գայլը մի թաթ կծեց, և շներից մեկը վնասուցով մի կողմ ցատկեց: Գայլը կանգնեց, և շները, շրջապատած, սպասեցին: Շների մեջ կանգնած՝ գայլը նայեց շներին, և նրանք շատ էին, և դժվար էր, անչափ դժվար էր, անհնար էր ազատվել նրանցից ու քարշ գալ դեպի տուն, ուր սպասում էին ձագերը: Ժանիքները բաց՝ գայլը նայեց շներին, շները նայեցին գայլին, մի պահ այդպես նայեցին միմյանց, և գայլը շփոթեց ինչ է անելու, և շները չգիտեին ինչ են անելու: Եվ շներից մեկը փշաքաղվեց, ցատկեց ու լանջով խփեց, շարտեց գայլին: Գայլը հագիվ կարողացավ չընկնել և հասկացավ, որ ամենավտանգավորը դունչը սև այդ շունն է:

– Այ տղա, հե՛յ... Էդ ո՞վ ես, հե՛յ... հասիր էն շներին օգնիր՝ թող խեղդեն, հե՛յ... - կանչեցին դիմացի բլուրներից:

Ձին հագիվ էր կանգնած մնում: Ձիու գլուխը ծանրանում ու խոնարհվում էր: Ձին զգում էր, որ քուռակը ծծում է, և հագիվ կարողանում էր ուրախանալ քուռակի ծծելուց: Ձիու գլուխը հակվեց, ծավեցին նաև առջևի ոտքերը, իսկ քուռակը դեռ ծծում էր: Ձին փուլ եկավ: Քուռակը հիմա կանգնած էր ձիու մոտ և սպասում էր մոր ելնելուն, սակայն մայրը չէր ելնում: Քուռակը դնչիկով խփեց մոր փորին, սակայն մայրը չկանգնեց, չարժվեց: Քուռակը նստեց մոր փորի մոտ, և ետևի ոտքը սաստիկ ցավեց, և սկսեց ծծել: Եվ մայրը դեռ կաթ էր տալիս, դեռ վարար, վարար, վարար կաթ էր տալիս, վերջին անգամ կաթ էր տալիս իր այլևս որբ քուռակին, իր կյանքում ունեցած ամենագեղեցիկ քուռակին, որն աստղագարդ էր, սև բաշն ու պոչը՝ զանգուր, սրունքը՝ սպիտակ և ճակատին՝ աստղածաղիկ, որը մի քիչ հիմարիկ էր, բայց հիմարիկ փոքրության պատճառով:

Գայլը, համենայն դեպս, կարողացավ փախչել: Եթե փախչել չկարողանար, նրա ձագերը որբ կմնային և, բոլորովին անօգ էին, կկոտորվեին, և գայլը կարողացավ փախչել: Դա փախուստ չէր, դա նահանջ էր քայլ առ քայլ, ցատկ առ ցատկ, մի քանի ցատկ առ մի քանի ցատկ. մի քանի ցատկից հետո, երբ շները հասնում ու քիչ էր մնում բռնեին, գայլը շուտ էր գալիս փշաքաղվում ու ժանիքները բացում, և շները կանգ էին առնում, և գայլը դարձյալ մի երկու ցատկ հեռանում էր:

Սևադունչ հսկա գամփռը այդպես էլ չկարողացավ բռնել գայլի բուկը, և գայլը չկարողացավ կծել ու վախեցնել նրան, բայց սևադունչ գամփռը գայլին հիմա չէր հետապնդում, որովհետև գայլի վզից մի փունջ մազ էր մտել նրա բերանը, և սևադունչը հիմա ետ էր ընկել և որձկալով ու փռշտալով՝ զզվանքով մաքրում էր բերանը: Սևադունչը չէր հետապնդում, իսկ մյուս շները վտանգավոր չէին, որովհետև վարպետ չէին:

Շները կորցրին գայլին, սպա կորցրին նաև հետքը, բայց երկար ժամանակ պտտվում, վազում, խառնվում ու ոռնում էին կանաչ հավտի մեջ, ուր հիմա մթնել էր ժայռը, հանգիստ կանգնած էր կաղնին, իր մի երկու ծաղկաբաժակը ցող հավաքելու էր պարզել մասրենին, և ուր ընկած էր կարմիր պառավ ձիու մարմինը: Քուռակը կանգնած էր մոր մոտ և մի քիչ

անհանգստանում էր, կարծես թե արդեն հասկանում էր պատահածը:

Մայրամուտի տակ ամբողջ հովիտը լուսավոր կանաչ էր, և սև էր, շատ մուգ սև էր պառավ կարմիր ձիու շուրջը: Պառավ ձիու կարմիր մարմինն ընկած էր այդ սև շրջանակի մեջ: Այդ սև շրջանակը ձիու և գայլի կռվի տեղն էր, այդ սևը ձիու տրորածն էր: Այդ սև, տրորված, քանդված, շատ տրորված գետնին նայելով կարելի էր հասկանալ, թե ինչքան երկար ժամանակ էր պտտվել պառավ ձին գայլի հետ ինքն իր շուրջը:

Սև այդ շրջանակը այդպես սև էլ մնաց մի երեք տարի, մի երեք տարի այդտեղ խոտ չէր ծլում, և մեր հին լավ ձիու սպիտակ կմախքն ընկած էր այդ սև շրջանի մեջ: Հետո կանաչը հաղթեց. կանաչ ծլեց այդ սև շրջանի մեջ, կմախքի արանքներից ծաղիկներ ծաղկեցին, խոտեր ելան, փարթամացան, և կանաչ հովիտը հիմա լիովին կանաչ է:

Երբ բլուրների գլխից նայում ես, կանաչ հովիտը լիովին կանաչ է, կաղնին վեհորեն կեցած է կանաչ հովտում, ժայռը նիբիելով ունկնդրում է ամպերի շրշյունը, մասրենին իր հինգ հատ ծաղկաբաժակը պահել է արևի տակ, և կանաչ դաշտում կապած արածում է աստղազարդ մի ձի՝ ետևի աջ ոտքի սրունքը սպիտակ, ոտքերը երկար, վիզը երկար, բաշն ու պոչը արևախառն ու թուխ, ճակատին՝ սպիտակ աստղածաղիկ: Երբ քայլ է գնում, ետևի աջ ոտքը մի քիչ ձգվում է, ջղային դողի պես, հին սպիտակ պատճառով:

Աստղածաղիկ ճակատով ձին բարձրացնում է գեղեցիկ գլուխը, և նրա աչքերի մեջ արտացոլվում են ժայռը, կաղնին, ծաղկած մասրենին, կանաչ հովիտը և կապույտ երկնքի սպիտակ ամպերը:

– Վերջացա՞մ:

– Վերջացավ:

– Ոչ

– Ինչո՞ւ ոչ:

– Ձի մայրիկը թող չմեռնի:

– Ես չեմ կարող ասել, թե մայր ձին չմեռավ, որովհետև մայր ձին մեռավ: Երբ փոքրիկ հովիվը վազելով իջավ բլուրների գլխից, մայր ձին մեռած էր, քուռակը տխուր կանգնած էր մոր կողքին: Երբ այն հովիվը, որ կանչում էր՝ «Այ տղա, հե՛յ», այդ հովիվը երբ իջավ դիմացի բլուրներից, մայր ձին արդեն լրիվ սառած էր, և ծեր հովիվն ու փոքրիկ հովիվը մի քիչ նստեցին պառավ կարմիր ձիու կողքին և մտածեցին, թե ինչպես են պահելու քուռակին:

– Հետո, ինչպե՞ս պահեցին:

– Մի ուրիշ ձիու կաթով:

– Ոչ, մայրը թող չմեռնի:

– Ես չեմ կարող ասել, թե մայրը չմեռավ, որովհետև ամբողջ ամառն այդ որբ քուռակին ես կերակրում էի ուրիշ ձիերի կաթով:

– Ասե՞մ թող ինչ լինի:

– Ասա:

– Բլուրների մյուս երեսի հովիվը թող բլուրների գլխին լինի և գայլին շուտ նկատի:

– Հովիվը բլուրների մյուս երեսին էր և գայլին նկատեց այն ժամանակ, երբ դուրս եկավ բլուրների գլուխ:

– Ձին ինչո՞ւ մեռավ:

– Երբ նստած էին պառավ կարմիր ձիու մարմնի մոտ, ծեր հովիվը փոքրիկ հովիվն ասաց, որ ձիու սիրտը պայթել է քուռակի համար վախենալուց, և զզվանքից ու կատաղությունից:

– Գայլի՞ց էր զզվել:

– Այո, գայլից:

– Շները գայլին թող խեղդեն:

– Ես չեմ կարող ասել. թե շները գայլին խեղդեցին, որովհետև մեր սևադունչ շունը գայլի մազ էր կուլ տվել և քիչ էր մնում ինքը սատակի:

– Փոքրիկ հովիվը դո՞ւ էիր:

– Ես էի, ձին մեր ձին էր, քուռակը մեր ձիու քուռակն էր:

– Հիմա քուռակը մեծացե՞լ է, կապա՞ծ է կանաչ հովտում:

– Այո, մեծացել է, կապած է կանաչ հովտում:

– Իր կարմիր մայրիկին հիշո՞ւմ է:

- Գուցե հիշում է իր կարմիր մայրիկին, որովհետև ձիերը հիշում են:
- Դե նորից պատմիր:
- Կայծակը չոր ճայթունով բախվեց որձաքարե ժայռին, մի կողմ շարտվեց և թաղվեց կանաչ գետնի մեջ: Մոխրագույն ժայռը կարծր էր, կայծակը հագիվ թե կարողացավ որձաքարե այդ ժայռից պոկել քարի մի երկու փշուր: Միայն թե մի քիչ վախեցավ կաղնին, որովհետև կայծակները խփում ու խանձում են կաղնիները, և շատ վախեցավ երկարոտն աստղագարդ փոքրիկ մտրուկը. քուռակին մտրուկ են ասում... այնպես վախեցավ, որ փախչում էր իբր մոր մոտ, բայց մորը չէր տեսնում և փախչում էր ուրիշ կողմ: Եվ կարմիր պառավ ձին մեղմ խրխինջով հայտնեց նրան իր տեղը...

ԲԱՌԱՐԱՆ

կաղնիորեն - կաղնու պես, կաղնուն հարիր, կաղնուն պատշաճ

քուռակ - ձիու կամ ավանակի ձագ

գատվել - բաժանվել, առանձնանալ

զամբիկ - էգ ձի, **հովատակ** - արու ձի

մտրուկ - ձիու արու քուռակ, նաև արու ձի

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ի՞նչ նկարագրությամբ է սկսվում պատմվածքը:
 2. Նկարագրե՞ք ձիուն ու քուռակին: Ի՞նչ էին անում նրանք կայծակի ժամանակ և կայծակից հետո:
 3. Կանաչ հովտի խաղաղ անդորրը ինչպես է խախտվում թշնամի գայլի ներկայությամբ, ինչպե՞ս է դա զգում կարմիր պառավ ձին:
 4. Ինչպե՞ս է սկսվում գայլի ու կարմիր պառավ ձիու մենամարտը: Ի՞նչ խորհուրդ ունի այս տողը. «Եվ գայլը հասկացավ, որ ձին իր քուռակին պաշտպանելու է մինչև վեհջ, և ձին հասկացավ, որ գայլը չի հեռանալու»:
 5. Ո՞վ է տեսնում ձիու և գայլի կռիվը և ի՞նչ է անում:
 6. Սովա՞ծ գայլին իր նույնքան սովա՞ծ ձագերն էին սպասում, իսկ կարմիր ձին կռվում էր իր քուռակին փրկելու համար: Ի՞նչ խորհուրդ կա կյանքի այս հավերժական պայքարի մեջ:
 7. Համեմատե՞ք այս նախադասությունները՝ «Գայլը չուզեց հավատալ, թե շները հաչելով իր վրա են գալիս. բախտը հո չէր կարող լինել այնքան անողոք, որ իր մեկ լրիվ օրվա չարչարանքն անտեղի անցներ, և իբնը իր երեք ձագի մոտ դառնար քաղցած ու դատարկ»:
«Մայր ձին հեռու հեռվում շների հաչոց լսեց և հավատաց, որ շները հաչում են իր քուռակի համար և իր համար. բախտը հո չէր կարող լինել այնքան դաժան, որ նրա քուռակն ապրել ընդամենը մի հունիս»:
 8. Ի՞նչ է կատարվում մայր ձիու հետ:
 9. Ի՞նչ է կատարվում քուռակի հետ:
 10. Ի՞նչ է կատարվում գայլի հետ:
 11. Ո՞վ է պատմում, ո՞վ է լսում այս պատմվածքը:
 12. Ինչպե՞ս է այն սկսվում և ինչպե՞ս է ավարտվում:
 13. Հնարավո՞ր է, որ պատմվածքն այլ վերջաբան ունենար. կարմիր պառավ ձին չսատկեր, այնքան կռվեր, մինչև շները հասնեին և գայլին հեռացնեին: Եվ ձի՞ն ապրեր իր քուռակի համար, և գայլը ապրեր իր ձագերի համար:
- Դասարանում քննարկե՞ք վերջաբանի հարցը, որ ինքը՝ հեղինակը ևս քննարկում է իր պատմվածքի փոքրիկ ունկնդրի հետ:

ՎԻՆՅԱՄ ՍԱՐՈՅԱՆ

(1908-1981)

Վիլյամ Սարոյանը համաշխարհային փառքի հասած ամերիկյան արձակագիր է: Նա ծագումով հայ է և ամբողջ կյանքում հավատարիմ է մնացել իր հայկական արմատներին: Նրա շատ հերոսներ հայեր են, իսկ գործերի մի մասը նվիրված է հայության կյանքին: Նա այնքան էր կապված Հայաստանի հետ, որ կտակեց իր աճյունի մի մասը թաղել Հայաստանում: Սարոյանի աճյունը հայրենի հողին է հանձնվել Կոմիտասի պանթեոնում, որտեղ հանգչում են մեր գրականության ու մշակույթի մեծությունները:

Վիլյամ Սարոյանը ծնվել է ԱՄՆ-ի Կալիֆորնիայի նահանգի Ֆրեզնո քաղաքում 1908 թվականի օգոստոսի 31-ին: Նրա ծնողները՝ Արմենակ և Թագուհի Սարոյանները, այդտեղ էին տեղափոխվել պատմական Հայաստանի Բիթլիս (Բաղեշ) քաղաքից: Նրանք պազ, աշխատավոր մարդիկ էին, որ իրենց հետ բերել էին իրենց մայրենի լեզուն, կենցաղն ու սովորույթը: Հայրը մահացել է, երբ Վիլյամն ընդամենը երեք տարեկան էր: Դրանից հետո շուրջ հինգ տարի նա մեծացել է մանկատանը: Մի կարճ շրջան Սարոյանն այցելել է հայկական դպրոց: Այնուհետև ընտանիքին օգնելու համար կատարել է բազմաթիվ այլ գործեր՝ թերթ ու կանաչի է վաճառել, բանվորություն է արել, հեռագրեր ընդունել ու բաժանել:

Սարոյանի հայրը գրական փորձեր է արել: Ահա այդ օժտվածությունն է, որ արթնանում է նաև որդու մեջ, և Սարոյանն սկսում է տպագրել իր պատմվածքները: Առաջինը լույս է տեսել 1933 թվականին հայկական «Հայրենիք» անգլերեն շաբաթաթերթում Սիրակ Գորյան ստորագրությամբ:

1934-ին տպագրվում է նրա առաջին գիրքը՝ «Խիզախ պատանին թռչող ճոճանձողի վրա և այլ պատմվածքներ»: Այդ գրքից արդեն պարզ դարձավ, որ Սարոյանը բոլոր նրանց հետ է, ովքեր որոնում են ապրելու իրենց իրավունքը, որոնց թեև կյանքը հարվածել է, բայց նրանք չեն կորցրել կյանքի սերը և արժանապատիվ ու հպարտ ապրելու իրավունքը:

Առաջին գրքի հոնորարով Սարոյանը եկավ Հայաստան, տեսավ իր նախնիների երկիրը, կապվեց նրա հետ: Այս շրջագայության ժամանակ նա ծանոթացավ նաև հայ գրողների հետ, որոնց մեջ էին Եղիշե Չարենցը, Գուրգեն Մահարին, Վահան Թոթովենցը ուրիշներ:

Առաջին գրքից հետո Սարոյանը լույս է ընծայում պատմվածքների մեկ տասնյակից ավելի ժողովածուներ, որոնցից կարելի է առանձնացրել հետևյալները՝ «Փոքրիկ երեխաներ» (1937), «Ողջույն քեզ, սեր» (1938), «Իմ անունը Արամ է» (1940), «Սիրելիս» (1944): Սարոյանը գրում է թեթև, պարզ, բայց շատ ներգործող ոճով: Նա միշտ պաշտպանում է ժողովրդի ստորին շերտերի պատիվը:

Նա հատկապես մեծ հաջողություններ է ունենում նորավեպի և պատմվածքի մեջ, որոնք արձակի փոքր ձևեր են: Քնարականությունը, թախիծը, երգիծանքը մի յուրահատուկ հմայք են հաղորդում նրա խոսքին: Նա կարողանում է եղբայրական հարազատություն ստեղծել բոլոր մարդկանց միջև:

Սարոյանը գրել է նաև վիպակներ, վեպեր և թատերգություններ: Վիպակներից հիշարժան է «Մարդկային կատակերգություն»-ը (1942), վեպերից՝ «Վեպի Ջեկսոնի արկածները» (1946), թատերգություններից՝ «Իմ սիրտը լեռներում է» (1939), «Ձեր կյանքի ժամանակը» (1939), «Հե՛յ, ով կա այդտեղ» (1942), «Խաղողի այգին» (1971) և այլն:

Սարոյանի ստեղծագործության մեջ շատ հիմնավոր տեղ ունի ինքնակենսագրական պատումը, որով նա ստեղծեց վիպակների շարք՝ «Ինչ-որ ծիծաղելի բան» (1953), «Հայրիկ, դու խենթ ես» (1956), «Մայրիկ, ես սիրում եմ քեզ» (1957), «Տղաներ և աղջիկներ» (1963): Սարոյանը կյանքի մի մասն անց է կացրել Եվրոպայում, հիմնականում Փարիզում: Ճանաչել է աշխարհի մեծագույն գրողներին ու արվեստագետներին: Ինքնակենսագրականին ավելացնելով հուշագրական պատումը՝ 1960-1970-ական թվականներին Սարոյանը գրեց իր նոր գործերը՝ «Ահա եկավ, ահա գնաց, ինքներդ գիտեք, թե ով», «Նամակներ Թեյբու փողոցի 74 համարից», «Վայրեր, որտեղ ես եղել եմ», «Պատահական հանդիպումներ»

Սարոյանի շատ գործեր թարգմանվել են աշխարհի ժողովուրդների լեզուներով: Նա համարվում է 20-րդ դարի համաշխարհային գրականության ամենամեծ դեմքերից մեկը: Նրա երկերը 1940 թվականից սկսված՝ թարգմանվել են նաև հայերեն: 1935-ից հետո նա Հայաստան է այցելել նաև 1960, 1976, 1978 թվականներին և հանդիպումներ ունեցել ժողովրդի ու մտավորականության հետ:

Վիլյամ Սարոյանին մենք համարում ենք օտարագիր հայ գրող:

Այն հայ գրողները, ովքեր հավատարիմ են մնացել իրենց հայկական ծագումին, բայց գրել են ոչ թե հայերեն, այլ օտար լեզուներով (անգրեյեն, ֆրանսերեն, իսպաներեն, ռուսերեն, բուլղարերեն) համարվում են օտարագիր հայ գրողներ:

Վիլյամ Սարոյանից բացի օտարագիր հայ գրողներ են նաև Լևոն-Չավեն Սյուրմեյանը, Մայքլ Արլենը, Մայքլ Արլեն Կրոսերը, Փիթեր Նաջարյանը, Դայանա Տեր-Հովհաննիսյանը, Փիթեր Բալաքյանը, Անրի Թրուայան, Շարլ Ազնավուրը, Ռուբեն Մելիքը, Վահե Քաչան, Արթուր Ադամովը, Մարիետա Շահինյանը, Ալիսիա Կիրակոսյանը, Սևդա Սևանը, Պիտեր Բալաքյանը և ուրիշներ:

Հիմա կժամոթանաք Վ. Սարոյան «Իմ սիրտը լեռներում է» թատերգության սեղմված տարբերակին:

ՎԻԼՅԱՄ ՍԱՐՈՅԱՆԻ ՄԱՍԻՆ

ԳՈՒՐԳԵՆ ՄԱՀԱՐԻ

ՎԻԼՅԱՄ ՍԱՐՈՅԱՆԻ ՀԵՏ

ՀԵՏԱԴԱՐՁ

Քառորդ դար առաջ, 1935 թվականին, Երևան ժամանեց երիտասարդ Վիլյամ Սարոյանը: Պետք է ենթադրել, որ այն՝ ժամանակ ես էլ երիտասարդ էի: Պետք է ենթադրել նաև այն որ նա ինձ մոտեցավ ու մտերմացավ այն պատճառով, որ իմ մեջ գտավ մի բան, որով օժտված էր ինքն էլ, - ես էլ, նա էլ սիրում էինք թափառել:

Մենք թափառում էինք և գրուցում մեծ մասամբ անցյալից. նա Բիթլիսից, ես՝ Վանից. նա ինձ նախանձում էր, որ ես ծնվել եմ Վանում և հիշում եմ Վանը, իսկ ինքը ծնված է «Քալիֆոռնիո մեջ» և հետևաբար՝ «բան մ'ալ չեմ հիշեր». բայց պատմում էր Բիթլիսից այնպիսի մանրամասնություններ, որ չէր կարող զարմանք չպատճառել ինձ: Հանգստացնելու համար, ամեն անգամ վերջում ավելացնում էր.

- Մայրս է պատմեր... Իրա՛վ կըսեմ:

Ինչպես հիմա, այն ժամանակ էլ նրա հայերենն իր հայերենն էր, իր շարահյուսությունն ու իր քերականությունը, ինչպես հիմա, այն ժամանակ էլ թվում էր, թե միայն իր ձայնով կարելի է այդպես հնչեցնել հայոց լեզուն, շեշտը անգլիական, բարբառը բիթլիսցիական... Ինչպես հիմա, այն ժամանակ էլ նա Վիլյամ Սարոյան էր, - զգայուն, անմիջական, մանկավուն, երբեմն կամակոր, բայց ինքնատիպ ու մեծաշնորհ:

Իմ հիշողության մեջ թարմ է մնացել օգոստոսյան շոգ այն ցերեկը, երբ ես նրան առաջարկեցի գնալ «Կապույտ մզկիթ»՝ պարսկական թեյ խմելու: Նա սիրով համաձայնեց: «Կապույտ մզկիթ» կամ «Գեոյ մեջիթ» կոչվածը այն հնամենի մզկիթն էր, որը հիմա Երևանի քաղաքային թանգարանն է: Սզկիթի բակում, հաստաբուն և սաղարթախիտ չինարների սովերում խփում էր զովաշունչ շատրվանը, իսկ նրա շուրջը դրված էին հասարակ սեղաններ և նստարաններ: Այստեղ հավաքվում էր Երևանի ինտելեգենցիան անուշաբեր, մուգ թեյ վայելելու: «Կապույտ մզկիթ» հասնելու համար հարկավոր էր անցնել արևկեզ, փոշոտ մի տարածություն, որի վրա այսօր կանգնած է Արարատի բնակելի շենքը և փռված է Կիրովի անվան մանկական զբոսայգին:

Փոշոտ ու քրտնաթոր կտրում ենք ահա այդ տարածությունը: Վիլյամ Սարոյանի ուշադրությունը գրավեց մի սովորական, շարքային ավանակ, որը գնում էր առաջ, հնազանդ տիրոջ ճիպտին, ականջները թափ տալով:

- Այս էշը ես եմ, - ասաց նա՝ մատով ցույց տալով էշը:

Ես, որ որոշ չափով վարժվել էի նրա հումորին, այս անգամ չկարողացա կողմնորոշվել, ի՞նչ է ուզում ասել նա:

- Ինչո՞ւ, - կարողացա միայն հարցնել ես:

- Հայրս կրսեր, երբ մեծանաս, էշ պիտի դառնաս, - պատասխանեց նա խորին լրջությամբ:

... Երբ Մոսկվայում մի ամիս առաջ լսեցի, որ ժամանել է Վիլյամ Սարոյանը և իջևանել «Նացիոնալ» հյուրանոցում, հիշեցի 1935 թվականի մեր թափառումները, հիշեցի երիտասարդ Վիլյամ Սարոյանին, մտածեցի գնալ ու ներկայանալ: Կշռադատելով իմ որոշումը, ես հասա այն եզրակացության, որ՝ ոչ, ո՛չ պետք է գնալ, ո՛չ պետք է ներկայանալ: Ես մտածեցի, որ միամտություն կլինի մտածել, որ նա ինձ կհիշի, պետք է թողնել երջանիկ պատահականության, նորից հետը ծանոթանալու համար:

Այդ երջանիկ պատահականությունը երկար սպասեցնել չտվեց իրեն: Երկու օր հետո Մոսկվայում գրողների միության արտասահմանյան բաժանմունքում ինձ ներկայացրեցին նրան.

- Ծանոթացեք խնդրեմ, մեր գրողներից...

Նա ժպտաց ուրախ, լայն ժպիտով, սեղմեց ձեռքս, ապա գոռաց իր զրնգուն ձայնով.

- Գուրզեն, մազերդ ո՞ր եմ... ես քեզ Երևանի մեջ պիտի փնտրեի, դու Մոսկվայի մեջ ինձի գտար:

Այսպես սկսվեցին մեր մոսկովյան, ապա երևանյան անմոռանալի օրերը Վիլյամ Սարոյանի հետ:

Չէ, սխալվել էր Վիլյամ Սարոյանի հայրը. մեծացավ նրա որդին և Արևմուտքի գրականության ջունգլիներում խլելով բնությունից իրեն սահմանված փառքի մեծ բաժինը, հպարտ և տիրական, մեծաքանքար և կորովի անցավ աշխարհի սրտի միջով, մնալով միշտ մարդ, միշտ Վիլյամ, մնալով մանավանդ, միշտ Սարոյան:

ԱՅՍՕՐՎԱ ՎԻԼՅԱՄ ՍԱՐՈՅԱՆԸ

Միջահասակից բարձր և թիկնեղ, տոհմիկ, հայկական դիմագծերով, որոնք վավերացված և հաստատված են ավելի քան տոհմիկ, բուն արևմտահայ բեղերով, լայն, խոհական ճակատ և խաժ ու խորունկ աչքեր, մետաղի զրնգուն ձայն, վարակիչ և կորովի մի ամբողջականություն՝ անկրկնելի ու եզակի իր տպավորությամբ, - ահա Վիլյամ Սարոյանը:

- Ասանկ բաեր, օղու...

Այս «օղու»-ն անգամ Վիլյամ Սարոյանի մոտ հայերեն է:

Առաջին միավոր բուսականների ընթացքում միայն գիտակցում և զգում ես, որ նստած ես համաշխարհային համբավի տեր գրողի մոտ: Բայց ահա այդ ճշգրիտ գիտակցությունը, այդ հուզիչ զգացողությունը նահանջում է հինգ-վեցերորդ գծի վրա և քեզ թվում է, որ խոսակիցդ հին ծանոթ է, վաղածանոթ ու հին մտերիմ, որի հետ դու շարունակում ես քո ընդհատված գրույցը:

Վիլյամ Սարոյանի մտածելու և խոսելու «եղանակը» նովելային է: Զիչ են գրող Վիլյամ Սարոյանի բացարձակապես վերջացած նովելները. մեծ մասամբ դրանք շարունակվում են, շարունակվում են ընթերցողի մտքերի և զգացումների ներաշխարհում: Ճիշտ այսպես էլ է բանավոր Սարոյանը: Երբ բաժանվում ես նրանից, դու շարունակում ես խոսել նրա հետ և «կախման կետերն» անգամ (խոսքը մտավոր լախման կետերի մասին է) անգոր են մի նոր թեմայի անցնելու համար:

- Երբ յոթ տարեկան էի, Քալիֆոռնիո մեջ մայրս ինձի հայկական դպրոց տվավ - լավ էր, շատ լավ էր. մեզի կուսուցաներ հայ քահանա տեր Գասպարը: Այս «շատ լավ էր» որ ըսի, մեկ շաբաթ քաշեց: Մայրս մեկ շաբաթ հետո հարցուց.

- Է, տղաս, ի՞նչ սովրեցար, պատմե՛ նայինք...

Ըսի՝

- Մայրիկ, սովրեցա «ահա՛, կատո՛ն բոնե՞ց գո՛նկ»:

Մայրս ըսավ.

- Այդ մենք վաղուց գիտենք: Գնա, լրագիր ծախե...

Ահա սկիզբը Վիլյամ Սարոյանի անհանգիստ և հարուստ կյանքի, որին վիճակված էր մեծ ընթացք և ապագա:

Դժվարին մանկություն և նույնքան դժվար պատանեկություն, միշտ հասարակ աշխատանքների վրա, միշտ օրվա ապրուստ դժվարությամբ հայթայթող հասարակ մարդկանց շրջապատում, պատանի, երիտասարդ, ապա չափահաս Սարոյանը պիտի ստեղծեր իր գրական-ստեղծագործական սարոյանական աշխարհը, որի բնակիչները պիտի լինեին իր ճանաչած մարդիկ: Խոր է ապրել կյանքը համբավավոր գրողը, խոր է զգացել կյանքի հակասություններն ու դժվարությունները, բայց այդ ծանոթությունը նա տարել է միշտ լավատես ժպիտով, գրեթե մանկական անմիջականությամբ, միշտ հեռու միաստիցիզմից և հռոնտեսությունից, բթամատը միշտ կյանքի զարկերակին, միշտ իրական կյանքում լավը որոնելու և անպայման գտնելու ցանկությամբ տառապող հոգու մակընթացություններով և տեղատվություններով, հաճախ հակասական, չարի դեմ անգեմ ու անգոր, բայց միշտ կավատես, բայց միշտ հումանիստ:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ե՞րբ և որտե՞ղ է ծնվել Վիլյամ Սարոյանը:
2. Կյանքի ի՞նչ ճանապարհ է անցել նա մինչև գրող դառնալը:
3. Ո՞րն է նրա առաջին գիրքը:
4. Առաջին գրքի հոնորարով Հայաստան գալով ո՞ւմ հետ հանդիպեց նա:
5. Ի՞նչ գիտես Վիլյամ Սարոյան գրական ժառանգության մասին:
6. Ինչո՞ւ ենք Վիլյամ Սարոյանին համարում օտարագիր հայ գրող:
7. Ինչպե՞ս է Գուրգեն Մահարին իր հուշերում մտաբերում Սարոյանին:

ԻՄ ՍԻՐՏԸ ԼԵՈՆԵՐՈՒՄ Է

Նրա՛ն,
Ով սրտով անեղծ է,
Ով կյանքում բանաստեղծ է,
Բարձրին ու ցածրին, ում կյանքը երգ է,-
Եվ ծերին մանուկ, և մանկանն անվիշտ,
Ով սրտով լեռներում է միշտ:

Ռոբերտ Բյորնս

ԻՄ ՍԻՐՏԸ ԼԵՈՆԵՐՈՒՄ Է

Իմ սիրտը լեռներում է, այստեղ ծանր են շնչում,
Իմ սիրտը լեռներում է, ուր քարայծն է թռչում,
Վայրի վիթ է որսում և հալածում այծյամ.
Իմ սիրտը լեռներում է, ուր էլ որ ես գնամ:

Մնաս բարով, Շոտլանդիա՛, մնաս բարով, Հյուսիս,
Դու վեհ ծննդավայր խիզախ ժողովրդիս,
Ուր էլ թափառեն ես ու դեզերեն տրտում,
Դուք կմնաք հավետ իմ կարոտած սրտում:

Մնաք բարով լեռներ՝ ձյունոտ ու լուսալանջ,
Մնաք բարով կիրճեր և հովիտներ կանաչ,
Մնաք բարով մթին թավ անտառներ քարվեժ

Մնաք բարով գետեր և թնդացող ջրվեժ:

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

Չոնի - ինը տարեկան տղա

Բեն Ալեքսանդր - բանաստեղծ, Չոնիի հայրը

Մարե - Չոնիի տատը

Չասպեր Մեք-Գրեգոր - մի մարդ, որի սիրտը լեռներում է

Պարոն Կոսակ - նպարավաճառ

Եսթեր - նրա սիրունիկ դուստրը

Քանիմզեմ - տուն վարձու տվող գործակալ

Հարևաններ, ծերանոցի ծառայող, փոստատր

Վայրը՝ մի տուն Կալիֆորնիայի Ֆրեզնո քաղաքի Սան Բենիտո փողոցի վրա:

Պարոն Կոսակի նպարեղենի խանութը:

Ժամանկը՝ 1914 թվականի օգոստոս և նոյեմբեր ամիսները:

Մի հին սպիտակ, խարխուլ փայտաշեն տուն Կալիֆորնիայի Ֆրեզնո քաղաքի Սան Բենիտո փողոցի վրա: Առաջը գավիթ ունի: Շրջապատում ուրիշ տներ չկան: Դժգույն ամայություն և կարմիր երկինք՝ ահա ամբողջը: 1914 թվականի օգոստոսյան օրերից մեկն է, իրիկնադեմ: Արևը թեքվում է դեպի մայրամուտ:

Իննամյա Չոնին, որ արտաքուստ դժվար է ասել, թե քանի տարեկան է, շարժուն ու ճարպիկ, նստել է գավիթի աստիճաններին՝ աշխարհից վերացած, սուզված բարձր ու նվիրական երազների մեջ: Հեռվում մի գնացք է սուլում տխրագին կանչերով: Լարված ուշադրությամբ լսում է Չոնին, գլուխը հավի ճիտի պես մի կողմի վրա, ճգնելով հասկանալ այդ կանչերի իմաստը և միաժամանակ ըմբռնել ամեն ինչ իր շրջապատում: Նրան այդ բանը չի հաջողվում, և երբ կանչերը դադարում են, նա հանդարտվում է: Տասնչորսամյա մի տղա, հեծանիվ նստած, պաղպաղակ ուտելով և շալակին լրագրերի կապոցներ՝ լուռ անցնում է ճանապարհի եզրով, մոռացած թե՛ իր ուսերի ծանրությունը, թե՛ հեծանիվը, որին նստած է, ամբողջական կլանված պաղպաղակ վայելելու մեծագույն հաճույքով ու երանությամբ: Չոնին ցատկում է տեղից և ձեռքով է անում տղային, իր մանկական հոգու ամբողջ բարությամբ ժպտում է նրան, սակայն անուշադրության է մատնվում: Նորից նստում է իր տեղը և ականջ դնում զվարթաձայն, բայց և բարկացած մի թռչնակի, որը ուժգին, սակայն անիմաստ գեղգեղանքից հետո թռչում հեռանում է:

Տնից լսվում է Չոնիի հոր մթագին ձայնը՝ իր հորինած բանաստեղծությունն արտասանելիս:

ՉՈՆԻԻ ՀԱՅՐԸ - Չանձրալի օրը լռիկ սահում է վշտոտ, վիրավոր սրտի միջով և... (**Դառնագին դադար**): Եվ... (**Արագորեն**): Չանձրալի օրը լռիկ սահում է վշտոտ, վիրավոր սրտի միջով և... (**Դադար**): Չեղավ: (**Մոնչոց է հանում և սկսում նորից**): Ողբագին, դողդող օրը գայթում է լքված, մենավոր խեղճ սրտի միջով:

Չոնին լսում է: Նա վեր է կենում և փորձում է գլխի վրա կանգնել, ձախողվում է, նորից է փորձում, ձախողվում է, նորից է փորձում և հաջողվում է: Գլխի վրա կանգնած միջոցին նա լսում է աշխարհի ամենահիմայիչ և ամենահիասքանչ նվագը՝ շեփորով մենանվագ. «Իմ սիրտը լեռներում է» երգի մեղեդին է:

Շեփորահարը, մի շատ ծեր մարդ, մենանվագն ավարտում է տան առաջ: Տղան, ուսնելով, վազում է դեպի ծերունին, ապշած, հիացած և շփոթահար:

ՉՈՆԻ - Հրաշալի է: Էլի եմ ուզում լսել:

ՄԵՔ-ԳՐԵԳՈՐ - Երիտասարդ, կարող՞ ես մի բաժակ ջուր բերել մի ծերուկի, որի սիրտը այստեղ չէ, այլ լեռներում:

ՉՈՆԻ - Ո՞ր լեռներում:

ՄԵՔ-ԳՐԵԳՈՐ - Շուրջանդական լեռներում: Չէ՞ որ ես ջուր ուզեցի:

ՋՈՆԻ - Ի՞նչ է անում ձեր սիրտը շոտլանդական լեռներում:

ՄԵԶ-ԳՐԵԳՈՐ - Իմ սիրտը թախծում է այնտեղ: Կարո՞ղ ես մի բաժակ պաղ ջուր բերել:

ՋՈՆԻ - Ձեր մա՞յրը որտեղ է:

ՄԵԶ-ԳՐԵԳՈՐ - (**Մի բան հնարելով մանկան համար**): Իմ մայրը Տալսայում է, Օկլահոմա նահանգում, բայց նրա սիրտը այնտեղ չէ:

ՋՈՆԻ - Ոտե՞ղ է նրա սիրտը:

ՄԵԶ-ԳՐԵԳՈՐ - (**Բարձրաձայն**): Շոտլանդական լեռներում: (**Մեղմ**): Ես սաստիկ ծարավ եմ, երիտասարդ:

ՋՈՆԻ - Այս ինչպե՞ս է, որ ձեր ընտանիքի անդամները իրենց սրտերը միշտ լեռներում են թողնում:

ՄԵԶ-ԳՐԵԳՈՐ - (**Շեքսպիրյան ոճով**): Մենք այդպես ենք: Այսօր այստեղ ենք, վաղը՝ չկանք:

ՋՈՆԻ - (**Մեկուսի**): Այսօր այստեղ ենք, Վաղը չկա՞նք: (**Մեք-Գրեգորին**): Այդ ո՞նց պետք է հասկանալ:

ՄԵԶ-ԳՐԵԳՈՐ - (**Փիլիսոփայորեն**): Այս բույսերն ողջ ենք, հաջորդին՝ մեռած:

ՋՈՆԻ - Իսկ ձեր մոր մա՞յրը որտեղ է:

ՄԵԶ-ԳՐԵԳՈՐ - (**Մի բան հնարելով, բայց բարկացած**): Վերմոնտում է, Ուայթ Բիլր կոչվող մի փոքրիկ քաղաքում, բայց նրա սիրտը այնտեղ չէ:

ՋՈՆԻ - Նրա խեղճ թորշոմած սիրտը նույնպե՞ս լեռներում է:

ՄԵԶ-ԳՐԵԳՈՐ - Հենց այնտեղ է, լեռներում: Տղաս, ես ծարավից մեռնում եմ:

Տնից դուրս է գալիս Ջոնիի հայրը, կատաղած, կարծես վանդակից նոր դուրս պրծած լինի, և որդու վրա մոնչում է վագրի նման, որ նոր է արթնացել ահեղ տեսիլներից:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - Ջոնի, ի՞նչ ես կպել էր խեղճ ծերունուց: Մի սափոր ջուր բեր նրան, քանի դեռ չի ընկել մեռել: Էդպե՞ս եմ ես քեզ կրթել, սատանան տանի:

ՋՈՆԻ - Ճամփորդ մարդ է, ուզում եմ հարցուփորձ անել: Ի՞նչ է, չի՞ կարելի:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - Ջուր հասցրու ծերունուն, սատանան տանի: Ի՞նչ ես ցցվել մնացել: Ջուր տուր նրան, ասում եմ, քանի դեռ չի ընկել մեռել:

ՋՈՆԻ - Ինքդ նրան ջուր տուր: Ոչինչ չես անում:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - Ինչպե՞ս ոչինչ չեմ անում: Դու հո գիտես, Ջոնի, որ ես հենց հիմա էլ մտքումս մի նոր բանաստեղծություն եմ գրում:

ՋՈՆԻ - Ի՞նչ իմանամ: Պարզապես կանգնած ես գավիթում՝ թևերդ քշտած:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - (**Բարկացած**): Դու այդ պարտավոր ես իմանալ: (**Գռռալով**): Դու իմ որդին ես: (**Ձարմանքով**): Դու որ չիմանաս, ո՞վ պիտի իմանա:

ՄԵԶ-ԳՐԵԳՈՐ - (**Չվարթ**): Բարի երեկո: Ձեր որդին ինձ պատմում էր, թե որքան մաքուր ու զով է եղանակը այս կողմերում:

ՋՈՆԻ - (**Շփոթված, բայց հասկանալու փափագով՝ մեկուսի**): Սուրբ Մովսես, ես եղանակի մասին բան չասացի: Որտեղի՞ց է հնարում:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - (**Արիստոկրատական մեծաշքությամբ**): Բարև ձեզ: Չէի՞ք կամենա ներս մտնել և մի փոքր հանգստանալ: Մեզ համար պատիվ կլիներ ձեր մասնակցությունը մեր ընթրիքին:

ՄԵԶ-ԳՐԵԳՈՐ - (**Առանց ավելորդ ձևականության**): Պարո՞ն, ես քաղցից մեռնում եմ: Անմիջապես կգամ: (**Ուզում է մտնել, Ջոնին առաջը կտրելով նայում է նրան**):

ՋՈՆԻ - (**Երագողի պես**): Կարո՞ղ եք նվազել «Կենացս խմիր քո աչքերով» երգը: Թե իմանաք որքան եմ ուզում այդ երգը լսել շեփորի հնչյուններով: Իմ սիրած երգն է: Աշխարհում դրանից լավ երգ չկա:

ՄԵԶ-ԳՐԵԳՈՐ - (**Առանց պատրանքի**): Տղա՛ս, երբ դու հասնես իմ տարիքին, կիմանաս, որ երգերը կարևոր չեն, կարևորը հացն է:

ՋՈՆԻ - (**Մրտանց**): Մեկ է՝ շատ կուզեի, որ նվազեք այդ երգը:

(**Մեք-Գրեգորը գնում է դեպի գավիթը և սեղմում է Ջոնիի հոր ձեռքը**):

ՄԵԶ-ԳՐԵԳՈՐ - (**Բազմանշանակալից**): Իմ անունը Ջասպեր Մեք-Գրեգոր է: Ես

դերասան եմ:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - (Բերկրալից): Մեծապես ուրախ եմ ձեզ հետ ծանոթանալուս համար: (Ինչպես արքան է հրամայում): Ջոնի, մի սափոր ջուր բեր պարոն Մեք-Գրեգորին:

Ջոնին վագում է տան ետևը:

ՄԵՔ-ԳՐԵԳՈՐ - (Ծարավից մեռնելով, հոգոց հանելով, բայց, այնուամենայնիվ, ասելով ճշմարտությունը): Հիանալի տղա է:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - (Կարծես սովորական մի բան ասի): Ինձ նման հանճար է:

ՄԵՔ-ԳՐԵԳՈՐ - (Հոգնած մռնչալով): Դուք նրան շատ եք սիրում, չէ՞:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - (Ուրախացած, որ ապրում է): Մեքնք միևնույն մարդն ենք: Նա իմ շունչն ու հոգին է: Նկատեցի՞ք ինչ ժիր է:

ՄԵՔ-ԳՐԵԳՈՐ - (Ուրախացած, որ տակավին ողջ է): Նկատեցի:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - (Հպարտությամբ և բարկությամբ): Ինքս էլ եմ այդպես, միայն թե ավելի մեծ և նվազ պայծառամիտ:

Ջոնին արագ-արագ բերում է մի սափոր ջուր և մեկնում է պարոն Մեք-Գրեգորին: Ծերունին ետ է գցում ուսերը, բարձրացնում է գլուխը, ռունգերը լայնանում են: Նա խոնչում է, աչքերը լայն բացված են, սափորը մոտեցնելով շուրթերին՝ մի երկար ումպով խմում է ամբողջ ջուրը, իսկ Ջոնին և հայրը ապշած ու հիացած դիտում են այդ տեսարանը: Ծերունին խոր շունչ է քաշում, նայում է շուրջը, ապա դեպի երկինք և ապա Սան Բենիտո փողոցի ծայրը, ուր երեկոյան արևը արդեն մայր է մտնում:

ՄԵՔ-ԳՐԵԳՈՐ - (Մտախոհ, տրտմազին, ուժասպառ, ցածրաձայն): Երևի թե իմ տունը մի հինգ հազար մղոն հեռու լինի էստեղից: Բան կա՞ ուտելու, գոնե մի կտոր հաց ու պանիր, որ իմ մարմինն ու շունչը իրար կպած մնան:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - (Իսկը Նապոլեոնը): Ջոնի՛, վագիր նպարավաճառի մոտ և մի ֆրանսիական հաց ու մի ֆունտ պանիր բեր:

ՋՈՆԻ - (Օրհասական ձայնով): Տուր փողը:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - (Բանաստեղծորեն, հպարտությամբ): Դու գիտես, որ ես մի պենս էլ չունեմ, Ջոնի՛: Պարոն Կոսակին ասա, թող ապառիկ տա:

ՋՈՆԻ - (Հնազանդ որդի, բայց դժկամ): Չի՛ տա: Առանց այդ էլ հոգնել է մեզ ապառիկ տալուց: Ասում է, որ մենք չենք աշխատում և երբեք չենք մարում մեր պարտքերը: Մենք նրան պարտք ենք քառասուն սենթ:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - (Անհամբեր, գրգռված): Գնա և մեր վիճակը բացատրիր նրան: Դու գիտես, որ դա քո պարտականությունն է:

ՋՈՆԻ - (Պաշտպանելով իր իրավունքները): Նա բացատրություն չի ուզում: Ասում է, որ լսել անգամ չի կամենում: Նա իր քառասուն սենթն է ուզում: Ուրիշ ոչինչ:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - (Նապոլեոն): Գնա մոտը և համոզիր, որ հաց տա ու մի ֆունտ պանիր: (Բնքշորեն, խնդրանքով, փաղաքշական): Էդ գործը գլուխ բեր, Ջոնի՛: Դու կարող ես:

ՄԵՔ-ԳՐԵԳՈՐ - (Անհամբեր և քաղցած): Գնա՛, տղա՛ս, ու պարոն Կոսակին ասա, թող քեզ հաց տա ու մի ֆունտ պանիր:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - Գնա՛, Ջոնի՛: Դու դեռ երբեք դատարկ դուրս չես եկել այդ խանութից, միշտ մի բան բերել ես: Տասը թույլ ժամանակ եմ տալիս: Կվերադառնաս արքայավայել ուտելիքով: (Իր գվարձության համար): Կամ առնվազն դուքսին վայել...

ՋՈՆԻ - Զգիտեմ: Պարոն Կոսակն ասում է, որ մենք նրան հիմարի տեղ ենք դրել: Նա ուզում է իմանալ, թե դու ինչ աշխատանք ես անում:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - (Մոլեգին): Դու էլ գնա և պատմիր: (Հերոս): Ես թաքցնելու ոչինչ չունեմ: Ես բանաստեղծություն եմ գրում գոր ու գիշեր:

ՋՈՆԻ - (Վերջապես տեղի տալով): Լավ, բայց չեմ կարծում, որ դա ազդի նրա վրա: Նա ասում է, որ դու շարունակ նստած ես տանը և աշխատանք չես փնտրում: Նա ասում է, որ դու ծույլ ու պարապ մարդ ես:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - (Գռռալով): Գնա՛ նրա մոտ, Ջոնի՛, և ասա՛ այդ մեծասիրտ սլովակին, որ ինքը խենթ է: Շտապիր այնտեղ և ասա այդ իմաստուն, այդ բարեկիրթ ու փառավոր մարդուն,

որ քո հայրը մեր ժամանակի չճանաչված ամենամեծ բանաստեղծներից մեկն է:

ՋՈՆԻ - Նրա ի՞նչ հոգն է, պա՛, բայց ես կգնամ: Կաշխատեմ ամեն ինչ անել: Տանը բոլորովի՞ն բան չունենք:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - (Ողբերգորեն, գոչելով): Միայն բոված եգիպտացորեն: **(Մեք Գրեգորին):** Այս վերջին չորս օրը միայն բոված եգիպտացորեն ենք կերել: Ջոնի՛, եթե ուզում ես, որ ես իմ պոեմն ավարտեմ, գնա՛ ու հաց ու պանիր ճարիր:

ՋՈՆԻ - Կաշխատեմ մի բան անել:

ՄԵՔ ԳՐԵԳՈՐ - Շատ չուշանաս, Ջոնի՛: Ես հինգ հազար մղոն հեռու եմ իմ տնից:

ՋՈՆԻ - Վազելով կգնամ, պարո՛ն Մեք-Գրեգոր:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - (Ի զվարճություն Աստծուն): Թե ճանապարհին հանկարծ փող գտնես, հիշի՛ր՝ հավասար կբաժանենք:

ՋՈՆԻ - **(Կատակից ուրախացած):** Շատ լավ, պա՛:

Ջոնին դուրս է վազում փողոց:

Պարոն Կոսակի նպարեղենի խանութը: Կոսակը քնած է թևերը գլխի տակ ծալած: Ջոնին թափով ներս է մտնում: Կոսակը բարձրացնում է գլուխը: Նա մի սիրունատես, բարեկիրթ, ծանրաբարո մարդ է, մեծ, խարտյաշ, հնաձև բեղերով: Յնցում է գլուխը՝ ջանալով զարթնել:

ՋՈՆԻ - (Դիվանագիտորեն): Պարո՛ն Կոսակ, եթե դուք ընկնեիք Չինաստան և աշխարհում ոչ բարեկամ ունենայիք և ոչ էլ փող, չէի՞ք հուսա, որ որևէ մեկը ձեզ մի ֆունտ բրինձ տար:

ԿՈՍԱԿ - Ուզածդ ի՞նչ է:

ՋՈՆԻ - Հենց էնպես, ուզում եմ մի քիչ խոսել: Դուք ուրախ կլինեիք, չէ՞, եթե արիական ցեղի անդամներից մեկնումեկը ձեզ մի փոքր օգնություն ցույց տար, պարո՛ն Կոսակ:

ԿՈՍԱԿ - Ինչքա՞ն փող ունես:

ՋՈՆԻ - Խոսքս փողի մասին չէ, պարո՛ն Կոսակ: Չինաստանում լինելու մասին է:

ԿՈՍԱԿ - Ինչ որ չեմ տեսել, չգիտեմ:

ՋՈՆԻ - Ձեզ ինչպե՞ս կզգայինք Չինաստանում, այդ վիճակի մեջ, պարո՛ն Կոսակ:

ԿՈՍԱԿ - Չգիտեմ, Ջոնի՛: Ես ի՞նչ գործ ունեմ Չինաստանում:

ՋՈՆԻ - Ասենք թե այցելել եք այդ երկրը: Զաղցած եք, հինգ հազար մղոն տնից հեռու եք և աշխարհում ոչ մի բարեկամ էլ չունեք: Հապա կլինե՞ր, պարոն Կոսակ, որ բոլորը մերժեին ձեզ նույնիսկ մի ֆունտ բրինձ տալ:

ԿՈՍԱԿ - Երևի չէր լինի, բայց ոչ դու ես Չինաստանում, Ջոնի՛, ոչ էլ քո հայրը: Դու էլ, հայրդ էլ պետք է տնից դուրս գաք և, ի վերջո, մի օր աշխատեք: Լավ է՝ հենց հիմիկվանից սկսեք: Ես ձեզ այլևս նպարեղեն չեմ տա, որովհետև գիտեմ, որ չեք կարող վճարել:

ՋՈՆԻ - Պարո՛ն Կոսակ, դուք ինձ սխալ եք հասկանում: Սա 1914 թիվն է և ոչ թե 1913-ը: Իմ խոսքը նպարեղենի մասին չէ: Ես խոսում եմ Չինաստանում ձեզ շրջապատող կռապաշտ մարդկանց մասին, որոնք թույլ են տալիս, որ դուք սովից մեռնեք:

ԿՈՍԱԿ - Սա Չինաստանը չէ: Այստեղ պետք է գործ գտնես ու ապրուստդ ապահովես: Ամերիկայում ամեն մի մարդ պետք է աշխատի:

ՋՈՆԻ - Պարո՛ն Կոսակ, ենթադրենք թե ձեզ հարկավոր է հաց և մի ֆունտ պանիր, որ սովից չմեռնեք: Դուք կքաշվեի՞ք այդ բաները խմորել մի քրիստոնյա միսիոներից:

ԿՈՍԱԿ - Այո՛, կքաշվեի: Ես կամաչեի խնդրել:

ՋՈՆԻ - Նույնի՞սկ, եթե գիտենայիք, որ կվերադարձնեք երկու հաց և երկու ֆունտ պանիր նրա տված մեկ հացի և մեկ ֆունտ պանրի փոխարեն: Նույնիսկ ա՞յդ դեպքում, պարո՛ն Կոսակ:

ԿՈՍԱԿ - Նույնիսկ ա՞յդ դեպքում:

ՋՈՆԻ - Այդ արդեն չեղավ, պարո՛ն Կոսակ: Դա պարտավորի խոսք է, և դուք այդ գիտեք: Ուրեմն, դուք պարզապես սովից կմահանք Չինաստանում, պարո՛ն Կոսակ:

ԿՈՍԱԿ - Հոգ չէ, թե կմահանամ: Դու և քո հայրը պարտավոր եք վճարել հացի և պանրի համար: Ինչո՞ւ հայրդ մի աշխատանք չի գտնում:

ՋՈՆԻ - **(Անմիջապես փոխում է գրոհի ձևը՝ մտքի փոխարեն դիմում է զգացմունքին):**

Ինչպե՞ս եք, պարո՛ն Կոսակ:

ԿՈՍԱԿ - Ես լավ եմ, Ջոնի՛: Դու ինչպե՞ս ես:

ՋՈՆԻ - Ավելի լավ լինել հնարավոր չէ, պարո՛ն Կոսակ: Երեխաներն ինչպե՞ս են:

ԿՈՍԱԿ - Բոլորն էլ լավ են, Ջոնի՛: Ստեփանը արդեն սկսել է քայլել:

ՋՈՆԻ - Հրաշալի է: Անջելա՞ն ինչպես է:

ԿՈՍԱԿ - Անջելան սկսում է երգել: Քո տատիկն ինչպե՞ս է:

ՋՈՆԻ - Տատիկս լավ է: Նա էլ երգելու փորձեր է անում: Ասում է, որ ավելի լավ է օպերայի երգչուհի լինել, քան թե Անգլիայի թագուհի: Ձեր կինը՝ տիկին Մարթան, ինչպե՞ս է:

ԿՈՍԱԿ - Օ՛հ, հրաշալի:

ՋՈՆԻ - Ինչքան ուրախ եմ, որ ձեր տանն ամեն ինչ լավ է: Ստեփանը մի օր մեծ մարդ է դառնալու, ես գիտեմ:

ԿՈՍԱԿ - Հույս ունեմ: Ես նրան կուղարկեմ քոլեջ և կհոգամ, որ բոլոր հնարավորություններն ունենա ուսում ստանալու, մի բան, որից ես զուրկ մնացի: Չեմ ուզում, որ նա էլ ամբողջ կյանքում դժվարություններ քաշի:

ՋՈՆԻ - Ես մեծ հավատ ունեմ Ստեփանի հանդեպ, պարո՛ն Կոսակ:

ԿՈՍԱԿ - Ի՞նչ ես ուզում, Ջոնի՛, ինչքա՞ն փող ունես:

ՋՈՆԻ - Պարո՛ն Կոսակ, ես էստեղ չեմ եկել որևէ բան գնելու: Դուք գիտեք, որ ես սիրում եմ մեկ-մեկ էսպես հանգիստ փիլիսոփայել ձեզ հետ: (**Արագորեն, աղաչական**): Խնդրում եմ մի ֆրանսիական հաց տաք և մի ֆունտ պանիր:

ԿՈՍԱԿ - Դու պետք է կանխիկ վճարես, Ջոնի՛:

ՋՈՆԻ - Իսկ Եսթերը: Ինչպե՞ս է Եսթերը, ձեր սիրունիկ դուստրը:

ԿՈՍԱԿ - Լավ է, Ջոնի՛, բայց դու պետք է կանխիկ վճարես: Դու և քո հայրը այս երկրի ամենավատ քաղաքցիներն եք:

ՋՈՆԻ - Ուրախ եմ, որ Եսթերը լավ է, պարո՛ն Կոսակ: Այսօր մեզ հյուր է եկել Ջասպեր Մեք-Գրեգորը: Մեծ դերասան է:

ԿՈՍԱԿ - Երբեք անունը լսած չկամ:

ՋՈՆԻ - Մի շիշ էլ գարեջուր տվեք, պարոն Մեք-Գրեգորի համար:

ԿՈՍԱԿ - Ես քեզ գարեջուր չեմ կարող տալ:

ՋՈՆԻ - Կարող եք, համոզված եմ:

ԿՈՍԱԿ - Չեմ կարող: Մի ֆրանսիական հաց կտամ ու մի ֆունտ պանիր, ուրիշ ոչինչ: Հայրդ որ գործ է անում, ի՞նչ գործ է անում, Ջոնի՛:

ՋՈՆԻ - Հայրս բանաստեղծություններ է գրում, պարո՛ն Կոսակ: Միայն այդ գործով է զբաղված: Նա աշխարհի ամենամեծ բանաստեղծներից մեկն է:

ԿՈՍԱԿ - Երբևէ փող ստանո՞ւմ է:

ՋՈՆԻ - Նա փող երբեք չի ստանում: Հորս արածը ոնց որ ձեր թխած կարկանդակները, որ ինքներդ ուտել չեք կարող:

ԿՈՍԱԿ - Ես չեմ սիրում այդ տեսակ աշխատանք: Ինչո՞ւ քո հայրը չի աշխատում այնպես, ինչպես բոլորը, Ջոնի՛:

ՋՈՆԻ - Նա ավելի դժվար աշխատանք է անում, քան մյուսները: Իմ հայրը կրկնակի ծանր աշխատանք է անում, քան միջին մարդը:

Պարոն Կոսակը Ջոնիին տալիս է մեկ ֆրանսիական հաց և մի ֆունտ պանիր:

ԿՈՍԱԿ - Իմացիր, այժմ դուք ինձ պարտք եք ուղիղ հիսունհինգ սենթ, Ջոնի՛: Այս անգամ մի բան տվեցի, բայց այլևս չեմ տա:

ՋՈՆԻ - (**Շեմքին**): Եսթերին ասեք, որ ես իրեն սիրում եմ:

Ջոնին խանութից վազում է դուրս: Պարոն Կոսակը ընկնում է մի ճանճի ետևից, ճանճը փախչում է, նորից է հետապնդում, ճանճը դարձյալ փաչում է, նա ճանճին հետապնդում է խանութով մեկ, ամբողջ ուժով հարվածելով պատերին, այդ ձևով արտահայտելով իր բողոքը աշխարհի դեմ:

Նույն տունը: Ջոնիի հայրը և ծերունին նայում են փողոցն ի վար՝ ակնկալելով, որ Ջոնին կվերադառնա ուտելիքով: Նրա տատը կանգնած է գավիթում՝ նույնպես անհամբերությամբ սպասելով

ուտելիքի:

ՄԵԶ-ԳՐԵԳՈՐ - Կարծես թե ուտելիք է բերում:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - (Հպարտությամբ): Անկասկած: (Նա ձեռքով է անում գավիթում կանգնած պառավին, որը ներս է վազում սեղանը զցելու: **Ջոնին** վազում է դեպի հայրը և **Մեք-Գրեգորը**): Ես գիտեի, որ դատարկ չես դառնա:

ՄԵԶ-ԳՐԵԳՈՐ - Ես՝ նմանապես:

ՋՈՆԻ - Պարոն Կոսակն ասաց, որ մենք պարտք ենք իրեն ուղիղ հիսունհինգ սենթ: Ասաց, որ այլևս մեզ ապառիկ ոչ մի բան չի տա:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - Այդ իր կարծիքն է: Ինչի՞ մասին խոսեցիր:

ՋՈՆԻ - Սկզբում խոսեցի Չինաստանում սովամահ լինելու մասին: Հետո հարցուփորձ արի, թե ինչպես է նրա ընտանիքը:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - Է, ինչպե՞ս են բոլորը:

ՋՈՆԻ - Հրաշալի: Բայց փող չգտա: Նույնիսկ մի պենսանոց:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - Օ, ոչինչ: Փողը դեռ ամեն ինչ չէ:

Նրանք մտնում են տուն:

Հյուրասենյակ: Բոլորը նստած են սեղանի շուրջ: Ընթրիքը վերջացած է:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - (**Մեք-Գրեգորին**): Գուցե մի բա՞ն նվագեք: Կարծում եմ տղաս շատ կուրախանա:

ՋՈՆԻ - (**Ցատկելով ոտքի**): Նվագե՞ք, պարո՞ն **Մեք-Գրեգոր**:

ՄԵԶ-ԳՐԵԳՈՐ - Շատ լավ, **Ջոնի**:

Մեք-Գրեգորը վեր է կենում և սկսում է շեփոթել: Հետզհետե նրա շեփոթն ավելի բարձրագույն է հնչում, ավելի գեղեցիկ և ողբազին, քան հնչել է որևէ շեփոթ աշխարհում: Տասնութ հարևաններ հավաքվում են դռան առաջ և ծափահարում են, երբ նա ավարտում է նվագը:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - Ազնիվ հարևաններ և բարեկամներ, ահավասիկ ձեր առաջ կանգնած է Ջասպեր **Մեք-Գրեգորը**, մեր ժամանակի շեքսպիրյան ամենամեծ դերասանը: (**Դադար**): Այդ իմ կարծիքն է:

ՄԵԶ-ԳՐԵԳՈՐ - (**Որպես դերասան**): Ես հիշում եմ իմ առաջին ելույթը Լոնդոնում 1851 թվականին, կարծես երեկ լիներ: Տասնչորսամյա մի տղա էի **Գլազգոյի** աղքատ թաղամասերից: Իմ անդրանիկ դերը՝ սուրհանդակ էր մի թատերգության մեջ, որի անունը, դժբախտաբար, մոռացել եմ: Խոսքեր չունեի, իսկ շարժում՝ ինչքան կուզեք, շարունակ վազում էի մի սպայից մյուսը, սիրահարից՝ իր սիրուհուն և նորից դեպի ետ. ու այսպես անվերջ: (**Դիմելով բազմությանը**): Իմ բարեկամներ, հաճույքով կուզենայի ձեզ համար մի նոր երգ նվագել այս ոսկեփող շեփոթով, բայց երկար ժամանակ է՝ ինչ հեռացել եմ տնից և սաստիկ հոգնած եմ: Եթե բարի գտնվեք ամեն մեկդ ձեր տուն գնալ և շտապով մի-մի պատառ ուտելիք բերել, ապա ես, հպարտությամբ ոգեպնդվելով, ձեզ համար կնվագեմ մի երգ, որը հիմնովին կփոխի յուրաքանչյուրիդ կյանքի ընթացքը, Ձեր կյանքը մղելով միայն դեպի լավը:

Մարդիկ ցրվում են: Վերջին գնացողը լինում է Եսթեր Կոսակը, որը լսում է ամբողջ ճառը և ապա վազում է տուն: **Մեք-Գրեգորը**, **Ջոնիի** հայրը և **Ջոնին** նստում են աստիճաններին և լուռ սպասում: Գնացողները մեկ առ մեկ վերադառնում են՝ ուտելիք բերելով **Մեք-Գրեգորի** համար:

Շնորհակալ եմ, բարեկամներս, շնորհակալ եմ:

Նա կանգնում է հանդիսավոր դիրքով, սպասելով կատարյալ լռության, շտկում է իրեն, կատաղորեն նայում է շուրջը, շեփոթը մոտեցնում է շուրթերին, սակայն մի պահ գրգռվում է Եսթեր Կոսակի պատճառով, որը ձեռքին մի սմբուկ բռնած, շտապ-շտապ, աղմուկով գալիս միանում է բոլորին: Երբ տիրում է լռություն, նա նվագում է «Իմ սիրտը լեռներում է» երգը: Մարդիկ արտասվում են, ծունկի են իջնում, երգում են խմբով՝ և ապա հեռանում: **Մեք-Գրեգորը** հանդիսավորությամբ դիմում է Բեն

Ալեքսանդրին և Ջոնիին:

Պարո՛ն, եթե ձեզ համար նեղություն չէ, ես կուզենայի միառժամանակ ձեր տանը ապրել:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - (Ուրախացած և զարմացած): Պարո՛ն, իմ տունը ձեր տունն է: **(Մտնում են ներս):** **(Քաղցած, բարձրաձայն):** Ջոնի՛, գնա պարոն Կոսակի խանութը և մի քիչ բան բեր ուտելու: Դու ձեր գիտես, Ջոնի՛: Գնա մի որևէ բան ճարիր:

ՋՈՆԻ - (Քաղցած, բարկացած և բարձրաձայն): Մենք պարոն Կոսակին պարտք ենք ութսունհինգ սենթ: Նա մեզ այլևս ոչ մի բան չի տա առանց փողի:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - Մոտը գնա, Ջոնի՛: Քեզ կհաջողվի այդ հիանալի սլովակից մի քիչ ուտելիք ստանալ մեզ համար:

ՋՈՆԻ - (Հուսահատորեն): Է՛հ, պա՛:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - (Չարմացած, գոռալով): Ի՞նչ: Դու՛ իմ որդին, և այդպես հուսալքվա՞ծ: Առա՛ջ: Ես այդ ձևով եմ մաքառել անգութ աշխարհի դեմ, երբ դու դեռ ծնված չէիր: Քո ծնունդից հետո մենք միասին ենք մաքառել և պիտի մաքառենք մինչև վերջ: Մարդիկ բանաստեղծություն սիրում են, բայց չեն հասկանում, ահա ամբողջ ցավը: Ոչ մի բան չի կարող մեզ կասեցնել, Ջոնի՛: Գնա այդ խանութը և մեզ համար ուտելիք ճարիր:

ՋՈՆԻ - Շատ լավ, պա՛: Կաշխատեմ: **(Վազում է դեպի շենքը):**

Նույն տունը: Վրան այժմ մի մեծ ցուցանակ կա՝ «Տրվում է վարձով»:

1914 թվականի նոյեմբեր ամսի առաջին օրերից մեկը, արշալույսից առաջ: Մոտալուտ ձմեռ է: Արևը ծագելիս մի մեծ շքեղ ժայիտ ողողում է նրա դեմքը: Նա աչքի ծայրով նայում է առավոտյան լույսին, կարծես դա իր թաքուն խաղընկերը լինի, որի հետ իրար շատ լավ են հասկանում: Նա թևերը բարձրացնում է, մեծ հանդիսավորությամբ մի քանի անգամ գլուխկոնձի է տալիս, ապա տեղից պոկվում է, վազում տան շուրջը և վերադառնում մյուս կողմը՝ համարյա պարելով:

Ոչ հեռվում անցնում է մի բեռնատար գազք, մոտիկ տարածության վրա գետինը ցնցելով:

ՋՈՆԻԻ ՏՍՏԸ - (Հայերեն, որ նրա իմացած միակ լեզուն է): Իմա՞կ ես, գա՛ն ջան:

ՋՈՆԻ - (Որը հայերեն հասկանում է, բայց չի խոսում, անգլերեն): Լա՛վ եմ:

ՋՈՆԻԻ ՏՍՏԸ - Քու հեր իմա՞կ է:

ՋՈՆԻ - Չգիտեմ: **(Բարձրաձայն՝ հորը):** Է՛յ, պա՛, ինչպե՞ս ես: **(Դադար: Ավելի բարձրաձայն):** Պա՛: **(Դադար: Լռություն):** Քնած կլինի:

ՋՈՆԻԻ ՏՍՏԸ - Տուն փող կա՞:

ՋՈՆԻ - Փո՞ղ: **(Գլուխը տարուբերելով):** Ոչ:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - (Ներսից): Ջոնի՞:

ՋՈՆԻ - (Ոտքի ցատկելով): Պա՛:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - Դու ինձ կանչեցի՞ր:

ՋՈՆԻ - Հա: Ինչպե՞ս ես:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - Լավ եմ, Ջոնի՛: Դո՞ւ ինչպես ես:

ՋՈՆԻ - Ես լավ եմ, պա՛:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - Դրա՞ համար ինձ արթնացրիր:

ՋՈՆԻ - (Տատին): Նա լավ է: **(Հորը, ավելի բարձր ձայնով):** Տատն ուզում է իմանալ, թե ինչպես ես:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - (Հայերեն՝ մորը): Աղեկ եմ, մարե՛: Բարի լույս:

Ջոնիի հայրը գավիթ է ելնում, շապիկը կոճկելով, գլխով բարևում է մորը, աչքի պոչով նայում է արևին՝ ճիշտ այնպես, ինչպես Ջոնին էր նայել, ժպտում նույն ձևով, ամբողջ մարմնով ձգվում ու նայում է արևին, ապա ցատկելով իջնում է աստիճաններից և մեկ անգամ գլուխկոնձի է տալիս, թեև անհաջող՝ գետին է փռվում մեջքի վրա:

ՋՈՆԻ - Ավելի շատ վարժություն պիտի անես, պա՛: Շարունակ նստած ես:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - (Մեջքի վրա): Քո հայրը մեծ բանաստեղծ է, Ջոնի՛: Դիշտ է, ես քեզ նման հաջող գլուխկոնձի չեմ տալիս, բայց որպեսզի իմանաս, թե ինչ հզոր մարզիկ եմ ես, կարդա այն բանաստեղծությունը, որ երեկ գրեցի:

ՋՈՆԻ - Իսկապե՞ս լավն է, պա՛:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - Լա՞վ: (**Լարախաղացի պես ոտքի թռչելով**): Հոյակա՛պ է: Ուղարկելու եմ «Աթլանտիկ» ամսագրին:

ՋՈՆԻ - Օ՛, մոռացա, պա՛: Դռան առաջ մի լրագիր կա:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - (**Գավիթն ի վեր ելնելով**): Առավոտյա՞ն լրագիր է, Ջոնի՛:

ՋՈՆԻ - Հա՛:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - Օ՛, դա հրաշալի անակնկալ է:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - (**Վերցնելով լրագիրը և բանալով այն**): Շնորհքով տղա է: (**Կարդում է խորագրերը**):

ՋՈՆԻԻ ՏՍՏԸ - (**Դիմելով Ջոնիի հորը, Ջոնիին, ինքն իրեն և աշխարհին**): Էն դարիս մարդն ո՞ւր է:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - (**Լուրերով տարածված**): Հը՞մ:

ՋՈՆԻ - Ո՞ր մարդը:

ՋՈՆԻԻ ՏՍՏԸ - Դու գիտես, լաո՛: Էն հալիվորը, որ փող կփչեր: (**Նա մնջախաղով ցույց է տալիս, թե ինչպես են փող փչում**):

ՋՈՆԻ - Օ՛հ, պարոն Մեք-Գրեգորը: Նրան տարան ծերանոց:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - (**Լրագիրը կարդալով**): Ավստրիա, Գերմանիա, Ֆրանսիա, Անգլիա, Ռուսաստան, Յեպելիմներ, Սուգանավեր: Գնդացիներ: Ռումբեր: (**Գլուխը տարուբերելով**): Նորից գժվել են:

ՋՈՆԻԻ ՏՍՏԸ - (**Ջոնիին, հանդիմանական**): Հայերեն խոսիր, լաո՛:

ՋՈՆԻ - Ես հայերեն խոսել չգիտեմ:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - (**Ջոնիին**): Ի՞նչ է պատահել:

ՋՈՆԻ - Տատիկը պարոն Մեք-Գրեգորի մասին է հարցնում:

ՋՈՆԻԻ ՏՍՏԸ - (**ՋՈՆԻԻ հորը**): Որտե՞ղ է նա:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - (**Հայերեն**): Ետ տարան ծերանոց:

ՋՈՆԻԻ ՏՍՏԸ - (**Գլուխը տխրությամբ օրորելով**): Վախ, վախ, վախ, խեղճ հալիվոր բանտարկյալ:

ՋՈՆԻ - Ծերանոցը բա՞նտ է, պա՛:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - Հաստատ չգիտեմ, Ջոնի՛:

ՋՈՆԻԻ ՏՍՏԸ - (**Կատաղած, ճիշտ այնպես, ինչպես իր որդին և թոռնիկն են խոսում, երբ զայրացած են**): Հորի՞ հալիվորներու տուն գնաց: Հիդա տուն չի՞: Ե՞րբ կիգա: (**մտնում է ներս**):

ՋՈՆԻ - Դիշտ է ասում, պա՛: Ինչո՞ւ պարոն Մեք-Գրեգորը չի վերադառնում և մնում մեզ մոտ: Ինչ է՛ անպայման ծերանոցո՞ւմ պիտի ապրի:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - Մարդը որ ծերանում է, Ջոնի՛, որ շա՛տ է ծերանում ու ոչ փող ունի, ոչ էլ հարազատ, նրա տեղը ծերանոցն է:

ՋՈՆԻ - Ես պարզապես երբեմն կարոտում եմ նրան: Դու չե՞ս կարոտում:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - Դժմարիտն ասած, կարոտում եմ, Ջոնի՛:

ՋՈՆԻ - Ես միշտ հիշում եմ նրան, մանավանդ նրա նվագը: Իսկ նրա ջութ խմե՛լը: Մոռանալո՞ւ բան է:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - Նա հոյակապ մարդ է:

ՋՈՆԻ - Իսկապե՞ս նրա սիրտը լեռներում է, պա՛, ինչպես ինքն էր ասում:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - Ոչ բառացիորեն:

ՋՈՆԻ - Եվ իսկապե՞ս նա հինգ հազար մղոն հեռու է տնից:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - Առնվազն այդքան:

ՋՈՆԻ - Ի՞նչ ես կարծում, նա մի օր կհասնի՞ տուն:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - Նա ծեր մարդ է, Ջոնի՛: Անպայման կհասնի:

ՋՈՆԻ - Ուզում ես ասել՝ նա գնացք և նավ կնստի և կհասնի՞ այդ լեռները:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - Այդպես չէ, Ջոնի՛: Նրա հասնելը մի քիչ տարբեր կլինի դրանից: Նա կմեռնի:

ՋՈՆԻ - Դա՞ է տուն հասնելու միակ ճանապարհը:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - Դա միակ ճանապարհն է:

Այս ամբողջ ժամանակ Ձոնիի հայրը թերթում է լրագիրը, իսկ Ձոնին գանազան ճարպիկ շարժումներ է կատարում, քայլում է գավիթի բազրիքների վրայով, ներքև է ցատկում, գլուխկոնձի տալիս, տնկվում գլխի վրա: Նա իր հարցերից մի քանիսը տալիս է այդպես գլխի վրա տնկված: Մոտիկից լսվում է ականջ ծակող մի սուլոց:

ՁՈՆԻ - (Անհամբեր): Պարոն Վիլին է, պա՛, փոստատարը: **(Ձոնիի հայրը թռչում է ոտքի, լրագիրը ձեռքից վայր է ընկնում):** Ի՞նչ ես կարծում՝ գուցե Նյու Յորքից մեզ նամակ է եկել և գուցե մեջն էլ մի չե՞կ է դրված:

ՁՈՆԻԻ ՀԱՅՐԸ - Չգիտեմ, Ձոնի՛:

Պարոն Վիլին, հեծանիվ նստած, գալիս է: Քիչ է մնում հեծանիվից ընկնի Ձոնիի հոր պատճառով:

ՊԱՐՈՆ ՎԻԼԻ - (Ցած թռչելով հեծանիվից այնպես, կարծես ձիուց է իջնում): Բարի՛ լույս, պարոն Ալեքսանդր:

ՁՈՆԻԻ ՀԱՅՐԸ - Բարի՛ լույս, պարոն Վիլի:

ՁՈՆԻ - Մեզ նամակ կա՞, պարոն Վիլի:

ՊԱՐՈՆ ՎԻԼԻ - (Պայուսակից նամակների մի կապոց հանելով և երիզը թուլացնելով սկսում է նայել): Թույլ տուր տեսնեմ, Ձոնի՛: Եթե չեմ սխալվում, ես այստեղ մի բան պետք է ունենամ հորդ համար:

ՁՈՆԻ - Նյու Յորքի՞ց է:

ՊԱՐՈՆ ՎԻԼԻ - (Դուրս քաշելով մի տափակ ծրար): Այո՛, Նյու Յորքից է, Ձոնի՛: Պարոն Ալեքսանդր, կարծես ձմեռն արդեն մոտ է: Այս առավոտ սագերը չվում էին:

ՁՈՆԻԻ ՀԱՅՐԸ - (Հուզված, լարված, սակայն արտաքուստ անփույթ): Այո՛, գիտեմ: **(Ինքն իրեն):** Գիտեմ: Գիտեմ:

ՁՈՆԻ - Երբևիցե թե Նյու Յորքից նամակ ստանամ, միշտ պահելու եմ:

ՊԱՐՈՆ ՎԻԼԻ - (Զրուցելու ցանկությամբ): Ինչպե՞ս են գրո՞ծերը, պարոն Ալեքսանդր:

ՁՈՆԻԻ ՀԱՅՐԸ - Ես առ այսօր բախտավոր եմ եղել իմ գործով, պարոն Վիլի, շնորհակալ եմ:

ՁՈՆԻ - Հայրս մի անգամ եղել է Նյու Յորքում: Եղել ես, չե՞, պա՛:

ՁՈՆԻԻ ՀԱՅՐԸ - Այո՛, եղել եմ, Ձոնի՛: Ինչպե՞ս է ձեր ընտանիքը, պարոն Վիլի:

ՊԱՐՈՆ ՎԻԼԻ - (Նա հեռանում է ծրարը ձեռքին): Յտեսություն, պարոն Ալեքսանդր, ցտեսություն, Ձոնի՛:

ՁՈՆԻԻ ՀԱՅՐԸ - Պարոն Վիլի՛:

Պարոն Վիլին ծրարը մեկնում է նրան: Նրանք հրաժեշտ են տալիս, և պարոն Վիլին, հեծանիվ նստելով, գնում է: Ձոնիի հայրը ծրարը պահում է իր առաջ, ակնհայտորեն ցանկանալով բանալ, բայց վախենում է:

ՁՈՆԻ - (Անհամբեր): Դե լավ, պա՛: Բաց արա նամար: Ի՞նչ ես սպասում:

ՁՈՆԻԻ ՀԱՅՐԸ - (Բարկացած, գոռալով): Ձոնի՛, ես վախեցած եմ: Չեմ հասկանում, թե ինչպես ես՝ քո հայրը, կարող եմ այսքան վախեցած լինել:

ՁՈՆԻ - Վախեցած չես երևում, պա՛: Նամակը ումի՞ց է:

ՁՈՆԻԻ ՀԱՅՐԸ - «Աթլանթիկ» ամսագրից: Հիշո՞ւմ ես էն բանաստեղծությունները, որ ես գրեցի պարոն Մեք-Գրեգորի էստեղ լինելուց հետո:

ՁՈՆԻ - Գուցե նրանք գնել են էդ բանաստեղծությունները:

ՁՈՆԻԻ ՀԱՅՐԸ - Գնել են, ո՞նց չէ: Նրանք բանաստեղծություններ չեն գնում, Ձոնի՛: Նրանք մարդու ահաբեկելով մեռցնում են: **(Կարդալով իր անունը և հասցեն մեծ հանդիսավորությամբ, ահավոր սարսափով և սոսկալի զայրությամբ):** Բեն Ալեքսանդր, Սան Բենիտո փողոց 2226, Ֆրենզո, Կալիֆորնիա:

ՁՈՆԻ - Նամակը քեզ է հասցեագրված, պա՛: Ինչո՞ւ բաց չես անում:

ՁՈՆԻԻ ՀԱՅՐԸ - (Գոռալով): Վախեցած եմ, ասացի քեզ: Ես սոսկահար եմ ու ամոթահար:

Այդ բանաստեղծությունները հոյակապ էին: Ինչպե՞ս կարող է պատահել, որ ես վախենամ:

ՋՈՆԻ - (Հանդուգն): Մի՛ վախենա, պա՛:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - (Ձայրացած): Ինչո՞ւ նրանք բարձրաձայն փառաբանում են ամեն բան, բացի լավագույնից: Ինչո՞ւ են կործանում իրենք իրենց, մահվան գործիքների ետևից ընկնելով, և դեն են նետում այն ամենը, ինչ ծառայում է կյանքին: Ես այդ բանը չեմ կարողանում հասկանալ: Ոչ մի հույս մեզանից և ոչ մեկի համար:

ՋՈՆԻ - Մի՛ հուսահատվիր, պա՛: (Կատաղած): Ո՞վ է այդ գրողի տարած «Աթլանթիկ» ամսագիրը:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - (Բարկացած): Հեռացիր, Ջոնի՛: Գնա էստեղից: Գնա՛: Խնդրում եմ:

ՋՈՆԻ - (Նույնպես բարկացած): Լավ, պա՛:

Ջոնին անցնում է տան ետևը, դարձյալ երևում է, մի պահ նայում է հորը, ապա գիտակցում է, որ պետք է հեռանալ:

Ջոնիի հայրը ակներև է, որ հասկանում է՝ «Աթլանթիկ» ամսագիրը ետ է ուղարկել իր բանաստեղծությունները: Նույնչափ ակներև է և այն, որ նա չի կարող դրան հավատալ: Այն էլ պարզ է, որ բանաստեղծությունները հոյակապ են, որովհետև ի՛նքը այդպիսին է: Վագրի պես քայլում է ետ ու առաջ: Թեև նրա շրթունքները փակ են, բայց թվում է, թե խոսում է շրջապատի հետ: Վերջապես, նա մոլեգնությամբ պատռում է ծրարը: Ծրարը ցած է ընկնում: Ջոնիի հոր ձեռքին իր բանաստեղծությունների ձեռագրին է: Ծանր սպիտակ թղթի մի թերթիկ սահում է գետնին: Նա կանգնում է ամբողջ հասակով, շատ բարձրահասակ, շատ հպարտ և կարդում է բանաստեղծություններն իր համար, էջերն արագորեն դարձնելով:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - (Կատաղորեն): Օ՛, դուք՝ խելագարներ, ողբալի ապուշներ:

Նստում է գավիթի աստիճաններին և երեսը թաղում՝ ձեռքերի մեջ: Մի քանի րոպե հետո նա այդ բանաստեղծությունները, որ դրված էին աստիճանների վրա, ոտքով շարտում է գետնին և, նորից վերցնելով առավոտյան լրագիրը, աչքի է անցկացնում խորագրերը:

Առա՛ջ, սպանեցեք բոլորին, պատերազմ հայտարարեք մեկը մյուսին: Ժողովեք մարդկանց հագարներով և հոշոտեք նրանց: Հոշոտեք նրանց խեղճ սրտերը, նրանց խեղճ հոգիները և նրանց թշվառ մարմինները: Այլանդակեք նրանց: Պղծեք նրանց երազները: Ահաբեկեք նրանց, խեղեք նրանց՝ իրար հանդեպ ատելություն բորբոքելով: Ապականեք կյանքի առասպելը, դուք՝ իրար հանդեպ ատելություն բորբոքելով: Ապականեք կյանքի առասպելը, դուք՝ խելագարներ, քանզի ձեր մեծությունը չափվում է ձեր կատարած ավերմունքով:

Ջոնին երևում է տան մոտ, հոր կողմից անտեսանելի: Նա տեղում քարացել հորն է լսում: Երկինքը սկսում է մթնել:

Դո՛ւք՝ աշխարհի նենգամիտներ: Դո՛ւք՝ եղկելիներ և անօրեններ:

Նա ոտքի է կանգնում, մատն ուղղում ասես ընդդեմ աշխարհի:

Առա՛ջ: Թող որոտան ձեր անգոր թնդանոթները: Դուք ոչ մի բան չեք կարող սպանել: **(Խաղաղված, ժպտալով):** Աշխարհում բանաստեղծներ մի՛շտ կլինեն:

Լուռ փայլատակում:

Նույն տունը: Երկինքը խավար է, ինչպես լինում է փոթորիկի ժամանակ: Հանկարծ լսվում է որոտի մի խոր, հեռավոր թնդում և երևում է մի սրընթաց փայլակ: Ջոնիի հայրը գավիթի աստիճաններին կանգնած ժպտում է անմիտ, անմխիթար, ողբերգական ժպիտով: Շուրջը ամեն ինչ նույնն է. բանաստեղծությունների թերթիկները ընկած են գետնին, ծրարը, լրագիրը՝ նույնպես:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - (Գլուխը անմտորեն տարուրեղելով, անկարող հաշտվելու իրողությանը): Ջո՛նի: **(Դադար, փոքր-ինչ բարձրաձայն):** Ջո՛նի: **(Դադար: Այս անգամ արդեն մեղմ):** Ջո՛նի:

(Գոռալով): Չո՛նի: (Տղան մոտենում է և երկչուս կանգնում հոր առաջ: Հայրը վեր է նայում կրակվող աչքերով, կեցվածքը՝ հանդուգն, դառն, համառ, զորավոր):

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - (Գորովալից, բայց սոսկալի ուժով): Նախաճաշե՞լ ես, Չոնի՛:

ՋՈՆԻ - (Երկչուսությամբ): Ես քաղցած չեմ, պա՛:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - Ներս գնա և կեր:

ՋՈՆԻ - Քաղցած չեմ:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - Արա՛, ինչ ասում եմ:

ՋՈՆԻ - Մինչև դու չուտես, ես չեմ ուտի:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - Ես քաղցած չեմ:

ՋՈՆԻ - Ես կզգամ պարոն Կոսակի մոտ. տեսնե՞մ, մի բան կարո՞ղ եմ ճարել:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - (Նվաստացած, տղայի թևը բռնելով): Ո՛չ, Չոնի՛: (Լռում է, ակնհայտորեն աշխատելով դրությունը բացատրող բառեր գտնել): Չո՛նի: Ես կարծում էի, թե մենք մի քիչ փող կատանանք: Չէի կարծում, որ էսպես կլինի: Դե, ներս գնա և կեր:

ՋՈՆԻ - (Աստիճանները բարձրանալով): Դու էլ պետք է մի բան ուտես: (Մտնում է տուն):

Փայլակ, առանց որտի:

Գալիս են գրասենյակային աշխատողի հագուստով մի մարդ և մի երիտասարդ ամուսին իր կնոջ հետ, որի գրկին երեխա կա:

ՔԱՆԻՆԳԵՄ - Սա է տունը: Վարձը՝ ամսական վեց դոլար: Այնքան էլ շքեղ չէ, բայց անձրևից ու ցրտից պաշտպանվելու համար լավ է: (Չոնիի հայրը նայում է այդ մարդկանց: Նրա հայացքը պառկել է: Քանինգընը առաջանում է դեպի Չոնիի հայրը՝ երկարելով ձեռքը, մինչ մյուսները մնում են խմբով կանգնած): Հիշո՞ւմ եք ինձ: «Տրվում է վարձով» ցուցանակը ես փակցրի վերևում:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - (Բարձրանալով): Հիշում եմ: Բարձ ձեզ:

ՔԱՆԻՆԳԵՄ - (Շփոթված): Ը՛հ... Գիտեք ինչ, պարոն Գորին՝ տան տերը, քաղաքում չէ, իսկ այս մարդիկ տուն են որոնում: Շատ շտապ:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - Անշուշտ, ես կարող եմ ազատել, երբ կամենաք: Նրանք կահ-կարասի ունե՞ն:

ՔԱՆԻՆԳԵՄ - (Աղքատ ընտանիքին դառնալով): Կահ-կարասի ունե՞ք:

ԱՄՈՒՄԻՆԸ - Ո՛չ:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - (Ամուսիններին): Կարող եք ինը վերցնել: Շատ բան չկա, բայց պետք կզա: Մի շատ լավ վառարան ունեմ:

ԿԻՆԸ - (Աղքատի արժանապատվությամբ): Մենք չենք ուզում ձեր կահ-կարասին վերցնել:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - Բարի: Ես երեք ամսվա վարձը չեմ վճարել: Կահ-կարասին կթողնեմ վարձի դիմաց:

Տները վարձու տվող գործակալը ջանում է ինչ-որ բան ասել:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - Բան չկա: Ցավում եմ, որ ես 18 դոլար չունեմ: Կահ-կարասու արժեքը մոտավորապես այդքան է: Դուք կարող եք թույլ տալ, որ այս մարդիկ օգտագործեն դրանք, մինչև պարոն Գորին վերադառնա: (Ամուսիններին): Ուզո՞ւմ եք տեսնել տունը:

ԱՄՈՒՄԻՆԸ - Վատ չի երևում:

ՔԱՆԻՆԳԵՄ - (Գնալով): Ուրեմն հարցը լուծված է: (Այդ մարդկանց): Վարձը ամսական վեց դոլար է: Չուրն էլ հաշված:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - Դուք կարող եք տեղափոխվել, երբ կամենաք:

ԱՄՈՒՄԻՆԸ - Շատ շնորհակալ ենք: Մենք կվերադառնանք այսօր իրիկնադեմին կամ վաղը:

Նրանց գնալու պահին հայտնվում է Չոնին ձեռքին մի փսես. մեջը երկու շերտ հաց և խաղողի մի փոքրիկ ողկույզ:

ՋՈՆԻ - Ովքե՞ր էին այդ մարդիկ:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - Հենց էնպես, անցորդներ էին:

ՋՈՆԻ - Ի՞նչ էիք խոսում:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - Հենց էնպես խոսում էինք, Ջոնի՛:

ՋՈՆԻ - (Աղաղակելով, շատ բարկացած): Բեզ ամուր պահիր, պա՛:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - (Դառնալով և նայելով որդուն սիրով, հրճվանքով, հիացմունքով, խնդրությամբ և հանկարծ ծիծաղելով): Ես ոգով ամուր եմ, Ջոնի՛: Թող աշխարհը աշխարհ լինի և Աստծու սերը ամենուրեք:

ՋՈՆԻ - (Կատակելով): Լավ, ուրեմն: Եկ ուտենք:

Նա ափսեմ դնում է սանդուղքի վերևի աստիճանին, և նրանք, միասին նստելով, սկսում են ուտել: Ուտում են լուռ, իրար նայելով. տղան աչքի պոչով նայում է հորը, ինչպես նայել էր արևին, հայրը նույն կերպ նայում է որդուն: Տղան սկսում է ժպտալ: Հայրը նույնպես սկսում է ժպտալ:

ՋՈՆԻ - Խաղող սիրո՞ւմ ես, պա՛:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - Իհարկե, սիրում եմ:

ՋՈՆԻ - Պա՞:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - Ի՞նչ է:

ՋՈՆԻ - Իսկապե՞ս դա նման է բանտի:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - Երբեմն թվում է, թե նման է: Երբեմն էլ մտածում եմ, որ չի կարող բանա լինել:

ՋՈՆԻ - Ի՞նչը, պա՛:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - Կարծում եմ՝ թե մեկը և թե մյուսը, Ջոնի՛: Հասկացա՞ր: Երկուսն էլ:

ՋՈՆԻ - Ես ուրիշ բան եմ ուզում ասել. քո կարծիքն ի՞նչ է, նա տան կարոտը կզգա՞:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - Անկասկած կզգա:

ՋՈՆԻ - Երանի ետ գար:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - Որքա՞ն կուզենայի նորից տեսնել նրան:

ՋՈՆԻ - Ես շարունակ նրան եմ հիշում:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - Ես նույնպես: Եվ միշտ պիտի հիշեմ նրան:

ՋՈՆԻ - Ես էլ: Իսկ նա պարտավո՞ր էր վերադառնալ այնտեղ, պա՛:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - Երևի պարտավոր էր:

ՋՈՆԻ - Դուրեկան երիտասարդ էր:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - Խոսքդ էն երիտասարդի մասի՞ն է, որ եկավ ու տարավ նրան:

ՋՈՆԻ - Հա՛, դու գիտե՛ս: Էն երիտասարդը, որ այնպես վճռական ձայնով էր խոսում, կարծես ճառում էր ժողովրդին:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - Լավ երիտասարդ էր:

Ափսեի վրա մնացել է խաղողի մի հատիկ:

ՋՈՆԻ - Վերցրու կեր, պա՛:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - (Չվարթացած): Ո՛չ, դա քո բաժինն է, Ջոնի՛: Ես հաշվեցի:

ՋՈՆԻ - Շատ լավ, պա՛: (Նա վերցնում է խաղողի վերջին հատիկը և ուտում): Դա գողությո՞ւնն է, պա՛:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - (Չավեշտով): Ոմանք ասում են՝ գողություն է, ոմանք ասում են՝ ոչ: (Դրամատիկ): Իմ կարծիքով դա գողություն չէ: (Բղավելով): Վազերի վրայից քաղեցիր, չէ՞:

ՋՈՆԻ - Վազերի վրայից քաղեցի, պա՛:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - (Չավեշտով): Ուրեմն դա չի կարող գողություն համարվել:

ՋՈՆԻ - Իսկ ե՞րբ կարող է գողություն համարվել:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - (Չեռքով շարժում անելով, իբրև թե եղածը մի բան չէ): Իմ դատողությամբ, Ջոնի՛, գողություն է, երբ դու առանց անհրաժեշտության վնաս ես հասցնում և կամ անգթությամբ ես վերաբերվում մի անմեղ էակի ու անարժան կերպով շահ ու կամ ուժ ես ստանում դրանից:

ՋՈՆԻ - Օ՛հ: (Դադար): Ուրեմն, եթե դա գողություն չէ, պա՛, գնամ մի քիչ էլ քաղեմ: (Վեր է կենում): Խաղողը շուտով կվերջանա: (Գնում է):

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - (Ծիծաղելով, տղայի գնալուց հետո): Որդյակ իմ, Ջոնի: Աստված իմ, որքա՛ն բախտավոր եմ ես: Որքա՛ն երախտապարտ: **(Գետնից վերցնում է բանաստեղծությունների ձեռագիրը, դնում է վերարկուի գրպանը և քայլում է դեպի փողոց):**

Պարոն Կոսակի նպարտեղենի խանութը: Նորից պարոն Կոսակը քնած է՝ ձեռքերը գլխի տակ ծալած: Խանութը ավելի աղքատիկ է թվում, քան առաջ: Ընտանիքն ակներևաբար սպառել է պաշարը: Ջոնիի հայրը կամաց մտնում է խանութ, գրեթե երկչոտությամբ: Պարող Կոսակը բարձրացնում է գլուխը և կանգնում:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - (Գրեթե հանցավորի պես): Ես Ջոնիի հայրն եմ:

Երկուսն էլ կանգնած մի պահ նայում են իրար, նրանցից ամեն մեկը և՛ ուրախ, և՛ շփոթված, և՛ զգացված, և՛ գոհացած աշխարհի միևնույն բաների՝ ազահության, նենգության, անազնվության, անհավասարության վրա: Նրանք սկսում են ժպտալ և ապա ջերմորեն ձեռք են թոթվում:

ԿՈՍԱԿ - Ես ձեզ իսկույն ճանաչեցի: Ջոնին պատմել է ինձ ձեր մասին: Պատիվ է ինձ համար:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - Դուք բարի մարդ եք:

ԿՈՍԱԿ - Չգիտեմ:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - (Դանդաղ): Ես եկել եմ մնաս բարով ասելու: Ներողություն խնդրելու: Ընդհանրապես հայտնելու:

ԿՈՍԱԿ - (Արագ): Չի՞նի՞ թե հեռանում եք:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - Դժբախտաբար, այո:

ԿՈՍԱԿ - Ափսոս, մենք բոլորս պիտի կարոտենք Ջոնիին:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - Ես փող չունեմ: Ես ձեզ պարտք եմ:

ԿՈՍԱԿ - Այդ ոչինչ:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - Հնարավոր է, որ էլ չտեսնեմ ձեզ: **(Գրպանից հանում է բանաստեղծությունների ձեռագիրը: Հուժկու):** Ես բանաստեղծ եմ: Ահա մի քանիսը իմ բանաստեղծություններից: **(Արագ):** Ես դրանք չեմ առաջարկում այն գումարի դիմաց, որ պարտք եմ ձեզ: Փողի հարցը ուրիշ է: **(Խնդրելով):** Չէի՞ք պահի արդյոք, ձեր արած լավության դիմաց:

ԿՈՍԱԿ - (Անկեղծորեն): Ես չեմ կարող ձեր բանաստեղծությունները վերցնել: **(Դադար):**

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - Ես կարծում էի, թե ձեր գործերը լավ են:

ԿՈՍԱԿ - Ժողովուրդը փող չունի: Չգիտեմ, թե ինչպես եմ նոր մթերք բերելու:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - Ցավում եմ:

ԿՈՍԱԿ - Չմռանը ավելի դժվար է: Մթերանոցները փակվում են: Գործ չկա: Ես կարող էի մարդկանց մի բան տալ պարտքով, բայց այս ձմեռ փող չունեմ նոր մթերքի համար: Երևի ստիպված լինեմ խանութը փակել: Հազիվ ընտանիքիս բավարարի:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - (Զգացված և զայրացած): Այս բանաստեղծությունները... Թույլ տվեք ասել, որ սրանք իմ ամենալավ գործերն են: Ես ուզում եմ դրանք թողնել ձեզ մոտ:

Պարոն Կոսակի դուստր Եսթերը, յոթ տարեկան մի սիրունիկ աղջիկ, ներսի դռնից մտնում է խանութ:

ԿՈՍԱԿ - Սա իմ դուստր Եսթերն է: Եսթեր, սա Ջոնիի հայրն է:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - Ջոնին ինձ պատմել է քո մասին:

ԵՍԹԵՐ - (Ուրախացած, բայց ամաչելով): Բարձ ձեզ:

ԿՈՍԱԿ - Նրանք էստեղից գնում են:

ԵՍԹԵՐ - (Ցնցված): Օ՛հ:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - Ջոնին քեզնից բաժանվելու է:

Աղջկա շուրթերը դողում են: Աչքերում երևում են արցունքներ: Նա ետ է դառնում և վազում է խանութից դուրս:

ԿՈՍԱԿ - Էսպես է միշտ:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - Երեխաներ են: Միգուցե այս բանաստեղծությունները կտաք նրան:

ԿՈՍԱԿ - Հաճույքով: Բան չկա, մի քիչ լաց կլինի և վերջ:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - Վերցրեք: (**Բանաստեղծությունները պարոն Կոսակին տալով**): Դուք ինձ բարիք արած կլինեք դրանք ընդունելով: (**Բարձրաձայն: Աստծուն և աշխարհին**): Այն բանաստեղծությունը, որ չի կարդացվում՝ բանաստեղծություն չէ: Հնարավոր է, որ ընդամենը մեկ ընթերցողի եմ ես արժանի: Եթե այդպես է, ես ուզում եմ, որ այդ ընթերցողը դուք լինեք:

ԿՈՍԱԿ - Շնորհակալություն: Ես դրան անարժան եմ:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - (**Ժպտալով**): Մնաք բարով:

Ջոնիի հայրը դուրս է գալիս խանութից: Նպարավաճառը գրպանից հանում է ակնոցը, դնում աչքերին և, խանութի մեջտեղում կանգնած, սկսում է կարդալ ինքն իր համար, շրթունքները անձայն շարժելով: Նրա դեմքի արտահայտությունը հետզհետե փոխվում է: Անձրև է սկսվում: Փոքրիկ Եսթերը վերադառնում է խանութ:

ԿՈՍԱԿ - (**Ցածրաձայն կարդալով բանաստեղծություններից մեկը**): Երկրի ընդերքում և հեռու կանաչ ծովերի խորքում, և ապառաժի քար կրծքին կառչած, ես քեզ եմ հիշում, լուսեղեն իմ սեր: Դու էլ ինձ հիշիր:

Աղջիկն սկսում է հեկեկալ, հայրը շրջվում է և մոտենում նրան:

Տան սենյակը: Որոշ ժամանակ անց: Անձրևը դեռ շարունակվում է: Ջոնիի հայրը, սեղանի առաջ նստած, աչքի է անցկացնում ձեռագրերի մի շեղջ: Նա հաճախակի վեր է կենում և մոտենում է պատուհանին:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - Ի՞նչ պատահեց նրան:

Ետ է գնում, աչքի է անցկացնում մի քանի թերթիկ, ջղայնանում է, նետում մի կողմ և նորից գնում դեպի լուսամուտը: Ապա սկսում է ետ ու առաջ քայլել, սպասելով:

Վերջապես Ջոնին հայտնվում է գավիթի աստիճաններից, ներս է ընկնում և, դուռը ետևից արագորեն փակելով, սողնակը գցում է: Նա շնչասպառ է և վախեցած: Այնպիսի տեսք ունի, ասես ետևից ընկել են: Ձեռքին կարմիր խաղողի չորս ողկույզ, միջին մեծության, վեց հատ սև թուզ և երկու նուռ:

ՋՈՆԻ - (**Հուզված և շնչակտուր**): Որտե՞ղ թաքցնեմ սրանք, պա՛:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - Ի՞նչ է պատահել, Ջոնի՛:

ՋՈՆԻ - Դու ասացիր, որ գողություն չէ:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - (**Կատաղի ջղայնությամբ**): Դիշտ է, գողություն չէ:

ՋՈՆԻ - Իսկ ի՞նչ կասես ազարակատիրոջ շան մասին:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - Ի՞նչ ես խոսում: Ի՞նչ ազարակատիրոջ շուն:

ՋՈՆԻ - Ազարակատիրոջ շունը, որ ինձ հալածեց մինչև էստեղ:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - (**Գոռալով**): Շո՞ւն: Ուզում ես ասել, որ քո ետևից շո՞ւն է ընկել: Ի՞նչ տեսակ շուն էր:

ՋՈՆԻ - Կարգին չկարողացա տեսնել, բայց կարծես մեծ շուն լիներ:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - (**Մաստիկ զայրացած այդ ահավոր նվաստացման համար**): Չլինի՞ եղ ստոր արարածը փորձել է քեզ կծել, Ջոնի՛... Հիմա ո՞ւր է:

ՋՈՆԻ - Դրսում կլինի, պա՛: Դու համոզվա՞ծ ես, որ սա գողություն չէ:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - (**Մաստիկ զայրացած, երեք-չորս հատ խաղող ուտելով**): Անշուշտ, գողություն չէ: Ես կզբաղվեմ այդ շնով: Ոչ մի մարդ կամ գազան չի կարող քո հորը ահաբեկել, Ջոնի՛: Միշտ հիշիր դա: (**Նա զգուշորեն գնում է դեպի լուսամուտը և գողունի նայում է դուրս**):

ՋՈՆԻ - Էնտե՞ղ է, պա՛:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - Դռանը մի փոքրիկ շուն կա, Ջոնի՛: Քնած է, կարծեմ:

ՋՈՆԻ - (Դառնացած վեր ցատկելով): Էդպես էլ գիտեի, ագարակատիրոջ շունն է, ինձ է սպասում:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - Մեծ շուն չի, Ջոնի՛:

ՋՈՆԻ - Հա՛, բայց եթե արածս գողություն է, եթե դա ագարակատիրոջ շունն է, ի՞նչ անենք:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - Անտեր փոքրիկ շուն է, Ջոնի՛: Իրեն ընկեր է փնտրում, գրագ են գալիս:

ՋՈՆԻ - Մինչև տուն վազեց ետևիցս: Համոզվա՞ծ ես, որ տեր չունի, պա՛:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - Հաստատ համոզված եմ, Ջոնի՛: Իզուր չէ, որ բանաստեղծ եմ: Ես կյանքը հասկանում եմ: (Շունը սկսում է գոմռալ և հաչել: Ջոնիի հայրը վախեցած ետ է ցատկում պատուհանից: Ջոնին լարված, պապանձված ականջ է դնում):

ՋՈՆԻ - (Շնչալով): Էդ ի՞նչ է, պա՛:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - Կարծեմ մարդ է գալիս:

ՋՈՆԻ - Տեսա՞ր, պա՛ գողություն է: Ագարակատերը կլինի:

Նա վազում է դեպի սեղանը և մրգերը շտապ հավաքում: Վազելով ներս է ընկնում տատը:

ՋՈՆԻԻ ՏԱՏԸ - (Հայերեն): Էդ ի՞նչ իրարանցում է էս անձրևին:

Ջոնին մրգերը սենյակից դուրս է տանում: Վերադառնում է սաստիկ տագնապահար: Շունը դեռ շարունակում է գոմռալ և հաչել: Ջոնիի հայրն ավելի տագնապահար է, քան թե Ջոնին:

ՋՈՆԻ - Գրողը տանի, պա՛: Ա՛յ թե պատմության մեջ ընկանք:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - Ինչպե՛ս կուզեի ծխել:

ՋՈՆԻ - (Հոր համար մտահոգված, հայերեն՝ տատին): Ներսը ջղարա կա՞:

Ջոնիի տատը գնում է մյուս սենյակ: Շան գոմռոցը դադարում է:

ՋՈՆԻ - Տեսա՞ր, պա՛: Ագարակատերն է: Որտե՞ղ թաքնվեմ: Դուռը բաց չանես:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - Դուռը բա՞ց անես: Օգնիր սեղանը քաշենք դռան առաջ:

Նրանք, սեղանը հրելով, դեմ են տալիս դռանը և կամացուկ վերադառնում սենյակի մեջտեղը: Ջոնիի տատը շտապով ետ է գալիս, բերելով մի ծխախոտ և լուցկի: Դրանք տալիս է Ջոնիի հորը, նա վառում է ծխախոտը, խոր շունչ է քաշում և շտկվում կանգնում է:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - (Դրամատիկ): Պտուղը ես եմ քաղել, հասկացա՞ր, Ջոնի՛:

ՋՈՆԻ - Դուռը բաց չանես, պա՛:

Ջոնիի հայրը վերցնում է մի աթոռակ և կամաց դնում է սեղանի վրա, դռան դեմ, որ ավելի ծանր լինի: Ջոնին մի աթոռ է դնում սեղանին: Պառավը դնում է մի աթոռ: Ջոնիի հայրը այդ պատճենի վրա ավելացնում է երեք գիրք: Քանի դեռ թակոցը շարունակվում է, նրանք հետզհետե տան ամբողջ կահ-կարասին բերում ու դեմ են տալիս դռանը:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - Մի՛ վախենա, Ջոնի՛:

ՋՈՆԻ - Նա չի կարող ներս մտնել չէ՞, պա՛:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - Չեմ կարծում: (Տատը, հայրը և որդին կանգնած են մեկտեղ դատարկ սենյակում՝ աշխարհին դիմադիր):

Երկարատև դադար, սուկայի վախով և կատաղի դիմադրությամբ լի: Ապա լռությունը խզվում է: Լսվում է շփոթով մենամկազ՝ «Իմ սիրտը լեռներում է» երգը: Արևը դուրս է գալիս:

ՋՈՆԻ - (Յնձազին աղաղակում է): Պարոն Մեք-Գրեգոր՝ ըն է:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - (Վազում է դեպի լուսամուտը, բացում է և բղավում): Բարի գալո՛ւստ, պարոն Մեք-Գրեգոր, Ջոնի՛, կահ-կարասին տեղը տար:

Շեփորելով ներս է մտնում Ջասայեր Մեք-Գրեգորը, շունը առջևից: Շունը մի շատ փոքրիկ փողոցային լակոտ է, աշխուժորեն վազվզում է, սաստիկ հուզված է: Մեք-գրեգորի աչքերը լի են տխրությամբ և ուրախությամբ: Ջոնին վազում է խոհանոց, բերում է խաղող՝ ափսեի մեջ և մի սափոր ջուր: Մեք-Գրեգորն ավարտում է մեմանվագը: Մի պահ բոլորը քար լռություն են պահպանում, մնանապես և շունը: Ջոնին Մեք-Գրեգորին առաջարկում է սափորով ջուր:

ՄԵՔ-ԳՐԵԳՈՐ - (Հոգնած): Հիմա ժամանակը չէ, Ջոնի՛:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - Բարի գալուստ, բարեկամս:

ՄԵՔ-ԳՐԵԳՈՐ - Փախստ աշխատեղից: Նրանք հիմա փնտրում են ինձ, բայց ես չեմ ուզում ետ գնալ: Նրանք գողացան իմ շեփորը: Նրանք ուզում էին ինձ գամել անկողնին: Ասացին, որ ես հիվանդ եմ: Ես հիվանդ չեմ: Ես ծեր եմ: Ես գիտեմ, որ երկրային օրերս հաշված են: Ես ուզում եմ այդ օրը ձեզ հետ անցկացնել: Թույլ մի տվեք, որ նրանք ինձ ետ տանեն:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - Թույլ չեմ տա: **(Աթոռ է մատուցում ծերուկին):** Նստեցեք, խնդրեմ: **(Ամենքը նստում են: Մեք-Գրեգորը մեկ առ մեկ նայում է բոլորին):**

ՄԵՔ-ԳՐԵԳՈՐ - Ինչքան լավ է, որ ձեզ տեսնում եմ նորից:

ՋՈՆԻ - Ձեր սիրտը դարձյա՞լ լեռներում է:

ՄԵՔ-ԳՐԵԳՈՐ - (Գլխով է անում): Լեռներում է, տղա՛ս... Մայրդ որտե՞ղ է, տղա՛ս:

ՋՈՆԻ - Մեռած է:

ՄԵՔ-ԳՐԵԳՈՐ - (Համարյա թե ինքն իրեն): Մեռած չէ, Ջոնի՛: **(Օրորում է գլուխը):**

Լեռներում է:

ՋՈՆԻԻ ՏԱՏԸ - (Ջոնիի հորը): Ի՞նչ կրես:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - (Օրորելով գլուխը): Ոչինչ: **(Մեք-Գրեգորին):** Ուտել չե՞ք ուզում:

ՄԵՔ-ԳՐԵԳՈՐ - (Նայելով ափսեին): Մի հատիկ խաղող: Ավելին պետք չէ: **(Նա խաղողի ողկույզից մի հատիկ պոկելով՝ օգուտ է բերանը: Հանկարծ շրջվում է, ցնցված):** Գալի՞ս են:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - Մի վախենաք, բարեկամս, պառկեք և հանգստացեք:

ՄԵՔ-ԳՐԵԳՈՐ - Դուք չեք թողնի, որ նրանք ինձ տանեն, չե՞:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - Ոչ մի դեպքում: **(Ճեղքում է մի նուռ և կեսը մեկնում Մեք-Գրեգորին):**

Գոնե մի բան կերեք:

ՄԵՔ-ԳՐԵԳՈՐ - Շնորհակալ եմ, բարեկամս: **(Մի քանի հատիկ նուռ է ուտում):**

Դուրը բախում են: Մեք-Գրեգորը կատաղած վեր է ցատկում:

ՄԵՔ-ԳՐԵԳՈՐ - (Գոռալով): Դուք ինձ ետ չե՞ք տանի: Ջգուշացնում եմ: Ես կրնկնեմ ու կմեռնեմ: Իմ տեղը այս մարդկանց մեջ է:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - (Ահաբեկված): Բանա՞նք դուրը:

ՋՈՆԻ - (Նույնպես ահաբեկված): Ի՞նչ անենք:

ՄԵՔ-ԳՐԵԳՈՐ - (Հուժկու): Իհարկե, բանանք: **(Մոտենում ու բաց է անում դուռը: Ատաղձագործ Ռուֆ Էպլին է: Նա փոքր-ինչ ցցնված է Մեք-Գրեգորի կատաղությունից):**

ՌՈՒՖ ԷՊԼԻ - Բարև ձեզ, պարոն Մեք-Գրեգոր:

ՋՈՆԻ - Ո՞վ է:

ՌՈՒՖ ԷՊԼԻ - Ռուֆ Էպլին է: Տանը նստած էի, երբ նորից լսեցի այդ երգը: Հաստատ համոզված էի, որ պարոն Մեք-Գրեգորն է:

ՄԵՔ-ԳՐԵԳՈՐ - Շատ ուրախ եմ, որ ինձ հիշել եք:

ՌՈՒՖ ԷՊԼԻ - Ոչ որ չի կարող մոռանալ այդ երգը, պարոն Մեք-Գրեգոր: Մի քանի բան եմ բերել:

Դուրը վերստին բախում են: Հեռագրալարերը նորոգող բանվոր Սեմ Ուոլեսն է:

ՌԻՈՒԼԵՍ - Ես գիտեի, որ պարոն Մեք-Գրեգորն է: Ինձ ու ինձ ասացի. մի քիչ ուտելիք տանեմ:

ՄԵՔ-ԳՐԵԳՈՐ - Սա իսկապես հաճելի անակնկալ է:

ՌՈՒՖ ԷՊԼԻ - (Երևում է, որ ինչ-որ բան է ուզում ասել, բայց դժվարանում է): Ա՛հ, պարոն

Մեք-Գրեգոր...

ՄԵՔ-ԳՐԵԳՈՐ - Ի՞նչ կա, բարեկամս, համարձակ խոսիր: Ես պարզ մարդ եմ և ոչնչով չեմ տարբերվում քեզնից:

ՌՈՒՖ ԷՊԼԻ - Քեզիս իր ընտանիքով կանգնած է դրոմ: Ուզում են ձեր նվազը նորից լսել: Մի քանի ուրիշ մարդիկ էլ կան:

ՄԵՔ-ԳՐԵԳՈՐ - (Շոյված): Իհարկե, կնվազեմ: Ութսունն անց եմ և շուտով չվելու եմ աշխարհից: Գնալուց առաջ ուզում եմ դառնալ ձեր մասը, որ ապրելու եք իմ մահից հետո: Երեխանե՞ր էլ կան դրոմ:

ՌՈՒՖ ԷՊԼԻ - Յոթը: Քենուս պատիկներն են:

Ներս են մտնում հարևաններից ևս մի քանի հոգի՝ ուտելիքով: Մեք-Գրեգորը վերցնում է շեփորը: Բոլորը, բացի Ջոնիի հորից, հետևում են նրան՝ սենյակից դեպի գավիթ ելնելով: Մեք-Գրեգորն սկսում է նվազել նույն երգը: Այս անգամ նա շատ է ծերացած ու թույլ՝ իր շեփորը առաջվա պես հնչեցնելու համար, բայց իր ուժից եկածն անում է ու ավարտում մենանվազը: Ջոնիի հայրը գնում-գալիս է սենյակում՝ մե՛կ ժպտալով, մե՛կ խոժոռվելով: Այս տեղը նրա սրտովն է: Կամաց բացվում է խոհանոցի դուռը և Եսթեր Կոսակը երևում է շեմքին: Ջոնիի հայրը շրջվում և տեսնում է նրան: Աղջիկն այլևս լաց չի լինում: Նա ինչ-որ բան է պահել ափի մեջ:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - (Հանդարտ): Բարև, Եսթեր:

ԵՍԹԵՐ - Ջոնին ո՞ւր է:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - Գնամ գտնեմ նրան: (Գնում է դեպի գավիթը: Աղջիկը սպասում է տխուր ու միայնակ: Մի րոպե հետո ներս է խուժում Ջոնին, սաստիկ հուզված, բայց իսկույն խաղաղվում է, երբ զգում է աղջկա տրամադրությունը):

ՋՈՆԻ - Բարև, Եսթեր:

ԵՍԹԵՐ - Բարև, Ջոնի՛:

ՋՈՆԻ - Ի՞նչ է պատահել:

ԵՍԹԵՐ - Հայրս ինձ համար կարդաց այդ բանաստեղծությունները:

ՋՈՆԻ - Ի՞նչ:

ԵՍԹԵՐ - (Բուռը բանալով): Վերցրու: Իմ ունեցածը սա է: (Ջոնին վերցնում է մի բուռ մանրադրամ): Ծննդյան տոների համար էի հավաքել: (Լացը գալիս է: Շրջվում և վազում է դուրս):

ՋՈՆԻ - (Մաստիկ ազդված և մոլեգին, զգալով մի ինչ-որ և՛ խոր, և՛ գեղեցիկ, և՛ ահավոր բան): Սո՛ւրբ Մովսես: (Նրա դեմքը ստանում է պատանեկան ցավի ողբերգական արտահայտություն, և նա սկսում է լաց լինել: Դրամները պատռվն է տալիս և վայր է փռվում հեկեկալով): Սա ո՞ւմ է պետք, գրողը տանի: (Ջոնիի հայրը վերադառնում է):

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - (Մոտենալով): Ջոնի՞:

ՋՈՆԻ - (Հեկեկալով և բարկացած): Եսթերն ինձ փող էր բերել:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - Լաց լինելը օգուտ չունի, Ջոնի՛:

ՋՈՆԻ - (Վեր ցատկելով): Ո՞վ է լաց լինում: (Հեկեկում է ավելի դառնագին):

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - Գնա երեսդ լվա: Իզուր բան է:

ՋՈՆԻ - (Գնալով): Ինչ-որ մի տեղ ինչ որ մի բան սխալ է, պա՛: (Մեք-Գրեգորը վերջացնում է մենանվազը, մարդիկ կանգնած են լուռ՝ ակնածանքով, այն գիտակցությամբ, որ մի բան սխալ է: Լսվում է Մեք-Գրեգորի ձայնը):

ՄԵՔ-ԳՐԵԳՈՐ - (Ուժասպառ): Տարիները, բարեկամներս... Ես հասել եմ նրանց վերջին սահմանին: Ցավում եմ, որ էլ չեմ կարող նվազել ձեզ համար: Շնորհակալություն: Շնորհակալություն: (Բարձրացնելով սափորը՝ խմում է մի քիչ): Նրանք չէին թողնում, որ նվազեմ: (Մի քիչ էլ է խմում): Նրանք գողացան իմ շեփորը: Ասացին, որ ես հիվանդ եմ: Ես ցուլի պես առաջ ու պինդ եմ: Եթե եկան ինձ տանելու, կձևացնեմ, որ մեռնում եմ: Ես կխաղամ Լիր արքայի մահվան տեսարանը: Ես կխաղամ բոլոր տեսարանները մահվան:

ՋՈՆԻԻ ՏՍՏԸ - Ի՞նչ եղավ: Հորի՞ հմալ տրտմեցիք: (Մեք-Գրեգորը ոտքի է կանգնում):

ՄԵՔ-ԳՐԵԳՈՐ - (Արտասանում է՝ վերհիշելով Շեքսպիրի տողերը և հնարելով մի քանիսը

Իրենցից):

Փչեք, խենթ հողմեր, փչեք, մինչև ձեր այտերը պայթեն:

Կատաղե՛ք, փչե՛ք:

Դուք հեղեղատներ և փոթորիներ ճայթեցեք թափով,
Ջրով ծածկեցեք աշտարակներն ու հողմացույցները.

Ծծմբաբոցեր, որ սլանում եք մտքերից արագ,

Կաղնահեղձ շանթի դուք սուրհանդակներ,

Եկե՛ք խանձեցեք սպիտակ գլուխս:

Թնդա՛ ողջ ձայնով. ժայթքի՛ր դու կրակ, տարափի՛ր անձրև,

Չեմ տվել ես ձեզ թագավորություն, չեմ կոչել զավակ,

Կանգնած եմ այստեղ, ձեր ստրուկն եմ ես,

Մի թշվառ, տկար, անարգված ծերուկ:

Լինե՞լ թե՞ չլինել...

(Ողբերգորեն):

Լինե՛լ, լինե՛լ:

Ինչպե՞ս, խեղկատա՞կ: Բախտից ծանակվա՞ծ,

Դուրս նետված տնից,

Հայրենի ծխից ու սիրուց մերժված:

Իմ դեմ առավել հանցանք է գործված,

Քան ես եմ գործել:

Ջե՛նք, զե՛նք: Սո՛ւր վերցրեք, կրա՛կ:

Ավերեք տեղը: Փոքրիկ շները հաչում են վրաս,

Տեսե՛ք, հաչում են:

Բայց սա շավիղն է խելագարության, դուրս գամ դրանից,

Բավ է: Թողնենք այդ: Խելքս մաղում է:

(Չոնիմ մոտենում է նրան, ծունկի է իջնում):

Մոտեցի՛ր, տղա՛ս: Ինչպե՞ս ես, տղա՛ս: Ինչպե՞ս, դու սա՞ռն ես:

Ինձ մենակ թողեք: Մի՛ պայթիր, սի՛րտ իմ,

Իմ խեղկատակը, ավա՛ղ, կախված է:

Ոչ, ոչ՝ չի շնչում:

Ինչո՞ւ ապրում եմ ձին, շունը, մուկը,

Իսկ դու չես ապրում:

Դու ել ետ չես գա:

Երբեք չես դառնա, օ, երբե՛ք, երբե՛ք:

Արձակիր խնդրեմ, ա՛յ, այս կոճակը: Շնորհակալ եմ:

Շեփորն առջևը պահած:

Տեսո՞ւմ եք, պարո՛ն: Դեմքին նայեցեք, տեսեք շուրթերը:

Այնտե՛ղ նայեցեք, այնտե՛ղ նայեցեք:

Մեք-Գրեգորի արտասանության միջոցին Չոնիմ վերադառնում է դեպի թափված դրամները և հատակից մեկ առ մեկ վերցնելով՝ նայում է դրանց:

Մենյակում քար լռություն է: Փողոցից լսվում է ձիակառքի մոտենալը, ապա ոտնաձայն նախազավիթում և դռան թակոց: Չոնիի հայրը գնում է դեպի դուռը: Եկողներն են Ֆիլիպ Կարմայքը և երկու պահակ՝ ծերանոցից: Պահակները մնում են շեմին:

ԿԱՐՄԱՅԶԸ - Նրա շեփորի ձայնն առանք: Նա շատ տկար է: Եկել ենք ետ տանելու:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - Ներս համեցեք, խնդրեմ: **(Կարմայքը մոտենում է Մեք-Գրեգորին):** Պարոն Մեք-Գրեգոր: **(Պատասխան չկա: Բարձրաձայն):** Պարոն Մեք-Գրեգոր: **(Ավելի մոտ գալով):** Պարոն Մեք-Գրեգոր: Պարոն Մեք...

Կարմայքը դիմում է դեպի Մեք-Գրեգորը և զննում է նրան:

ԿԱՐՄԱՅՔԸ - Մեռած է:

ՋՈՆԻ - Ո՛չ, ճի՛շտ չէ: Նա դեր էր խաղում...

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - Վկա է Աստված, նա մեր ժամանակի շեքսպիրյան ամենամեծ դերասանն էր:

ԿԱՐՄԱՅՔԸ - Ցավում եմ, որ այդ բանը այստեղ պատահեց:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - Իսկ ինչո՞ւ ոչ: Ինչո՞ւ չպետք է այստեղ պատահեր: Սա հենց այն տեղն է, ուր ինքը մեռնել էր ուզում:

ՋՈՆԻ - Նա խաղում էր, պա՛: Նա մեռած չէ: (**Մոտենալով Մեք-Գրեգորին**):

Դուք մեռա՞ծ եք, պարոն Մեք-Գրեգոր:

Պատասխան չկա:

ԿԱՐՄԱՅՔԸ - Մենք պետք է տանենք նրան:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - Ահա իր շեփորը: Հետը դրեք:

Ջոնիի հայրը բարձրացնում է Մեք-Գրեգորին և տանում է դուրս: Պահակները նրան հանում են փողոց: Իրիկնադեմի արևալույսը ծավալվելով ստանում է նույն ուժգնությունը, ինչպես թատերախաղի սկզբում էր: Չիակառքը հեռանում է: Մի պահ տիրում է արտասովոր լռություն, ապա հեռվից լսվում է մենավոր շեփորի թույլ ձայնը: Դուռը ծեծում են: Ջոնիի հայրը բաց է անում, երիտասարդ ամուսինն է կնոջ հետ՝ ձեռքին լացող երեխան: Նրանք մտնում են ներս:

ԿԻՆԸ - Երեխան հոգիս հանեց, քնել է ուզում:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - Տունը պատրաստ է: (**Ջոնիին**): Մանրուքներդ հավաքիր: (**Մորը՝ հայերեն**): Հայդե, կերթանք, մարե՛:

Նա անկողնու տակից դուրս է քաշում մի հարդե տոպրակ, որի մեջ գցում է իր բանաստեղծությունները, գրքերը, ծրարները, մի հաց և ուտելիքի մյուս մնացորդները: Ջոնիի տատը շալ է գցում գլխին և ուտերին: Ջոնին իր բոլոր մանրուքները թողնում է տանը: Վերցնում է միայն մի բուռ մանր դրամը: Երեխան ձայնը կտրում է: Շունը գնում է Ջոնիի ետևից: Նվագը հետզհետե ավելի ուժեղ է հնչում:

ԱՍՈՒՄԻՆԸ - Շատ շնորհակալ եմք ձեզանից:

ԿԻՆԸ - Տեղ ունե՞ք գնալու:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - Այո՛, ունենք: Մնաք բարով:

ԱՍՈՒՄԻՆԸ ԵՎ ԿԻՆԸ - Գնաք բարով: (**Նրանք տնից ելնելով իջնում են փողոց**):

ՋՈՆԻ - Մենք ո՞ր գրողի ծոցն ենք գնում, պա՛:

ՋՈՆԻԻ ՀԱՅՐԸ - Դու մի մտահոգվիր, Ջոնի՛: Դու միայն ինձ հետևիր:

ՋՈՆԻ - Ես ոչ մեկի անունը չեմ տալիս, պա՛, բայց ինչ-որ մի տեղ ինչ-որ մի բան սխալ է:

Նվագը գնալով ավելի ուժգին է հնչում: Նրանք լուռ հեռանում են փողոցով:

ԲԱՌԱՐԱՆ

քարվեժ (քարավեժ) - լեռնալանջերից թափվող քարեր

զավիթ - բակ, ցանկապատված տարածք տան առջև

ճիտ - վիզ

զեղգեղանք - թռչունի երգ

մթագին ձայն - մռայլ, դժգոհ ձայն

պատրանք - անիրական երազանք, տենչ

սափոր - ջրի աման

խոնչալ - խռպոտ ձայն արձակել, խոխոչալ

ումպ - կում, մեկ անգամից բերան լցնելու և խմելու չափ հեղուկ:

մտախոհ - մտքերով տարված, խոհերի մեջ ընկած

տրտմագին - շատ տրտում, թախծոտ
մղոն - տարածության չափ, որ զանազան երկրներում տարբեր է. ռուսականը՝ 7469 մ, անգլիականը 1609 մ, ծովայինը՝ 1652 մ, աշխարհագրականը՝ 7420 մ
նպարեղեն - պարենային ապրանքներ, պարենային մթերքներ
նպարավաճառ - նպարեղեն վաճառող
ֆունտ - ծանրության չափ. ռուսականը՝ 409, 5 գրամ, անգլիականը՝ 453,6 գրամ
սպառիկ - ոչ կանխիկ
կանխիկ - անմիջապես վճարվող, առձեռն
դուլար - դրամական միավոր, որ ընդունված է ԱՄՆ-ում և ուրիշ երկրներում
սենթ (ցենտ) - մեկ դուլարը հավասար է 100 սենթի
պենս - անգլիական մանրադրամ, հավասար է 1/12 շիլլինգի
դուքս - ազնվականական բարձրաստիճան տիտղոս
սլովակ - ծագումով Սլովենիայից
ջանալ - ջանիք թափել մի բանի հասնելու համար
արիական ցեղ - ժողովրդի առաջնակարգ տեսակ
կռապաշտ - հեթանոս, կուռքեր պաշտող
միսիոներ - քրիստոնյա քարոզիչ, միսիա՝ առաքելություն ունեցող
քոլեջ - ավագ դպրոց, վարժարան
չեկ - բանկային դրամական փաստաթուղթ
ագարակ - հողային կալվածք, ֆերմա, գյուղական տնտեսություն
ագարակատեր - ագարակ ունեցող, ֆերմեր
հողմացույց - քանու ուղղությունը ցույց տվող թիթեղյա լեզվակ, որ ամրացվում է ձողի ծայրին
ծծմբաբոցեր - ծծմբական բոցեր, **ծծումբ**՝ դեղին գույնի դյուրավառ քիմիական նյութ
կաղնահեղձ - կաղնի ծառը տապալող, կոտրող, դիմացկուն ուժը տապալող
տարափ - վարար անձրև, տեղատարափ

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Մուտքի տողերում ո՞ւմ է ուղղել Վ. Սարյանն իր այս թատերախաղը:
2. Շուտլանդացի ո՞ր գրողի ստեղծագործությունն է «Իմ սիրտը լեռներում է» բանաստեղծությունը և ինչի՞ մասին է այն:
3. Ովքե՞ր են Վ. Սարյանի թատերախաղի հերոսները:
4. Ինչի՞ մասին է թատերախաղը:
5. Ե՞րբ են կատարվում գործողությունները: Դա պատմական ի՞նչ ժամանակ է:
6. Առանձին-առանձին բնութագրեք՝
 - ա) Ջոնիին,
 - բ) Բեն Ալեքսանդրին,
 - գ) Ջասպեր Մեք-Գրեգորին,
 - դ) Մարեին,
 - ե) Նպարավաճառ Կոսակին և նրա դուստր Եսթերին
7. Ինչի՞ մասին է խոսում Ջոնին նպարավաճառ Կոսակի հետ հերթական անգամ ուտելիքն սպառիկ գնելիս: Ինչպե՞ս է համոզում նրան:
8. Բանաստեղծ Բեն Ալեքսանդրը և շեփորահար դերասան Ջասպեր Մեք-Գրեգորը իրենց արվեստով կարո՞ղ էին հակազդել Առաջին համաշխարհային պատերազմի ողբերգություններին: Այդ կապակցությամբ ի՞նչ է խոսում Բեն Ալեքսանդրը:
9. Ինչպես կմեկնաբանեք Ջոնիի խոսքը՝ «Աշխարհում ինչ-որ մի բան ինչ-որ մի տեղ սխալ է»:
10. Ինչպե՞ս ավարտվեց թատերախաղը՝ Մեք-Գրեգորի վերջին նվագը, մենախոսությունը և մահը, բնակարանից Ջոնիի, նրա հոր և տատի վտարումը արդյոք բողոքի ձայն՝ չե՞ն աշխարհի անարդարությունների դեմ:
11. Ի՞նչ բարոյական դասեր է տալիս այս թատերախաղը: Կարդալուց հետո ի՞նչ ապրումներ և խոհեր համակեցին ձեզ:

ՋԵԿ ԼՈՆԴՈՆ

(1876-1916)

Ջեկ Լոնդոնը ամերիկյան արձակագիր է: Նա գրել է վեպեր, վիպակներ և պատմվածքներ: Կերտել է ուժեղ, խիզախ, իրենց նպատակին հասնող մարդկային բնավորություններ և իր հաստատուն տեղն ապահովել համաշխարհային գրականության պատմության մեջ: Նա շատ սիրված է եղել նաև հայ ժողովրդի կողմից և պատահական չէ, որ նրա երկերի ժողովածուն 12 հատորով թարգմանվել է հայերեն:

Ջեկ Լոնդոնը ծնվել է 1876 թվականի հունվարի 12-ին Կալիֆորնիայի նահանգի Սան-Ֆրանցիսկո քաղաքում: Նրա հայրը աստղաբաշխ էր, ծագումով իռլանդացի: Նա ամուսնավուծվեց կնոջից և հրաժարվեց որդուց, որը հետագայում կրեց մոր հաջորդ ամուսնու ազգանունը:

Պատանի Ջեկը շատ վաղ հասակից է ճանաչել աշխատանքի դժվարությունները: Դպրոցում սովորելու տարիներին թերթ է վաճառել, աշխատել պահածոների գործարանում, օվկիանոսի ափերին ուտրեներ է հավաքել:

Նրա գրական ձևավորմանը մեծապես նպաստել է ինքնակրթությունը: Կարդում էր ինչ հնարավոր է և հատկապես արկածային, ճամփորդական վեպեր, որոնք բոցավառում էին նրա երևակայությունը: Նրա տարերքը ծովագնացությունն էր: 17 տարեկան հասակում արդեն ծովային էր և ծովաբաշխ մորթիներ էր հայթայթում Ճապոնիայի ափերին:

Նա մասնակցում է գրական մի մրցանակաբաշխության և պատմվածք ներկայացնում Ճապոնիայի ափերից մնացած տպավորություններով: 17-ամյա պատանին հաղթում է այդ մրցույթում, վաստակում իր առաջին հոնորարը, ինչը և ոգևորում է նրան: Ջեկ Լոնդոնը հասկանում է, որ կարելի է գումար վաստակել ոչ միայն ջուտի ֆաբրիկայում (ջուտը Ամերիկայում աճող լորենագգի բույս է, որից թել են ստանում) բանվորություն անելով կամ որպես հնոցապան աշխատելով, այլև գրելով, մանավանդ որ Ամերիկյան բռնկված էր տնտեսական ճգնաժամով և աշխատանք ճարելը դժվար էր:

Նրա հաջորդ պատմվածքները խմբագրությունները չեն տպագրում, ետ են ուղարկում հեղինակին: Նա հասկանում է, որ ինքը դեռևս անելիքներ ունի կրթություն ստանալու և գրական վարպետություն ձեռք բերելու հարցում:

Ջեկ Լոնդոնը չէր կարող մտածել համալսարանի մասին, որովհետև չէր ավարտել նույնիսկ միջնակարգ դպրոցը: Այդ հարցերը նա արագ լուծում է, հանձնում քննությունները և ընդունվում Կալիֆորնիայի համալսարան: Սակայն ընտանիքի ծանր կացությունը նրան ստիպում է վերստին աշխատանքի անցնել՝ այս անգամ լվացքատանը:

Այդ տարիներին ոսկու տենդը համակել էր Ամերիկան, և շատերի մահան Ջեկ Լոնդոնը ևս հայտնվում է ոսկի որոնողների խմբում, որոնք մեկնում էին Ամերիկայի հյուսիս՝ Քլոնդայկ: Նա արդյունքի չհասավ: Գրպանները դատարկ էին, իսկ տպավորությունները՝ անմոռանալի: Բնության հիասքանչ տեսարաններ և իրենց բախտը փոճրող հանդուգն, խիզախ ու համառ տղամարդիկ:

Այս հյուսիսային տպավորություններով էլ նա մուտք գործեց գրականություն: Նոր նյութ, նոր կերպարներ: Այս անգամ նրա առջև բացվում են խմբագրությունների դռները, իսկ 1900 թվականին լույս է տեսնում «Գայլի որդին» պատմվածքների ժողովածուն: Իրար հաջորդում են պատմվածքների նորանոր ժողովածուներ՝ «Նրա նախնիների աստվածը» (1901), «Սառնամանիքի զավակները» (1902), «Ձյունների դուստրը» (1902), «Նախնիների կանչը» (1903), «Ծովագայլը» (1904), «Սպիտակ ժանիքը» (1906) և այլ վեպեր ու վիպակներ: Ճանապարհորդեցի Պառնաս բացված էր, Ջեկ Լոնդոնի անունը որոնված էր հրատարակիչների կողմից և մեկը մյուսի ետևից շարունակվում էին լույս աշխարհ գալ նրա հյուսիսային պատմվածքների նոր ժողովածուները՝ «Տղամարդկային հավատարմություն» (1904), «Կյանքի սերն ու այլ պատմվածքներ» (1907): Այստեղ և՛ հաղթողներն են, և՛ պարտվողները, և՛ բարիները, և՛ չարերը, և՛ տեղաբնիկ հնդկացիները, և՛ բախտ որոնող արկածախնդիրները: Ջեկ Լոնդոնի ուժը իրականությունը ճիշտ պատկերելու մեջ է, ինչի հիմքը կյանքի պայքարն է:

Ջեկ Լոնդոնը այս տարիներին նաև ճամփորդում է, լինում է Անգլիայի մայրաքաղաք Լոնդոնում, Հեռավոր Արևելքում, Կորեայում, Մանջուրիայում:

Հաջորդում է՝ «Երկաթե կրունկը» (1908) վեպը, որը Ջեյ Լոնդոնի դեմ է տրամադրում ապահով դասակարգին: Ամերիկայից միառժամանակ բացակայելու նպատակով նա որոշում է կատարել շուրջերկրյա նավարկություն: Նավի վրա էլ նա ստեղծում է իր ինքնակենսագրական «Մարտին Իդեն» (1909) վեպը: Ավստրալիայից հիվանդության պատճառով նա ստիպված ետ է վերադառնում: «Մարտին Իդեն»-ի մեջ նա ստեղծեց կյանքի հատակից բարձրացնող արվեստագետի կերպարը: Մարտին Իդենը ցանկանում է գրող դառնալ և այդ ճանապարհին հաղթահարում է բազմաթիվ ու բազմապիսի դժվարություններ: Այստեղ ևս հաղթում է ուժեղ կամքը և նպատակի հստակ գիտակցումը:

Հաջորդում են նորանոր գրքեր՝ «Ճանապարհը» (1907), «Դեմքը կորցրած մարդը» (1910): Հյուսիսին հաջորդում է հարավը և Լոնդոնը լույս է ընծայում «Հարավային ծովերի պատմվածքներ» (1911), «Արևի որդին» (1912), «Հպարտության տաճարը» (1912) գրքերը: Ամերիկյան դրամական հարաբերությունների մերկացումն է «Բոցավառ արշալույս» (1910) վեպը, սոցիալական շերտերի հարաբերությունն է պատկերված «Լուսնի հովիտ» (1913) վեպում:

Հոգեբանական ծանր ապրումների և մարմնական ցավերի ներգործությամբ աշխարհի ամենաուժեղ հերոսներ ստեղծող այդ գրողը, և ինքն էլ՝ չափազանց կամային մի բնավորություն, 1916 թվականի նոյեմբերի 22-ին կյանքին վերջ է տալիս ինքնասպանությամբ՝ ընդունելով թմրադեղի չափազանց մեծ պարունակություն: Նա նվաճեց աշխարհը և հրաժեշտ տվեց նույն այդ աշխարհին:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ո՞վ է Ջեյ Լոնդոնը: Որտե՞ղ և ե՞րբ է նա ծնվել:
2. Աշխատանքային ի՞նչ մկրտություն է նա ստացել դպրոցական տարիներին:
3. Բնավորությամբ ինչպիսի՞ն էր նա:
4. Ինչպե՞ս սկսվեց Ջեյ Լոնդոնի գրական ուղին:
5. Ինչպե՞ս ձևավորվեց Ջեյ Լոնդոնը որպես իսկական գրող:
6. Ինչի՞ մասին էին նրա առաջին գրքերը: Ինչպիսի՞ մարդկանց կերպարներ էր նա կերտում:
7. Թվարկի՞ր նրա պատմվածքների ժողովածուների և վեպերի վերնագրերից մի քանիսը:
8. Ի՞նչ ես հասկանում, երբ կարդում ես, որ Ջեյ Լոնդոնը ճիշտ է պատկերել իրականությունը և դրա հիմքը կյանքի պայքարն է:
9. Ի՞նչ բնույթի վեպ է «Մարտին Իդեն»-ը: Ո՞վ է վեպի գլխավոր հերոսը:
10. Նշե՛ք Ջեյ Լոնդոնի հետագա գրական ստեղծագործություններ:
11. Ինչպե՞ս ավարտվեց մեծ գրողի կյանքը:
12. Ուսումնասիրե՛ք հոգեբանական այն վիճակները, որոնք Ջեյ Լոնդոնին, ավելի ուշ՝ ամերիկյան մեկ այլ գրողի՝ Էռնեստ Հեմինգուեյին մղեցին ինքնասպանությամբ վերջ տալու իրենց կյանքին:

ՈՍԿԵ ԿԻՐՃԸ

Դա Կիրճի կանաչ սիրտն էր: Լեռների անառիկ խմբի նոսրանալուց մեղմացել էր պատկերի խստությունը և կազմվել աչքից հեռու մի փոքրիկ անկյուն, որը ծայրից ծայր շնչում էր մեղմությամբ, քաղցրությամբ ու լռությամբ: Այստեղ ամեն ինչ խաղաղ էր: Նույնիսկ փոքրիկ ամպակը ուզում էր գսպել իր անխոնջ վագրը և ավելի մեղմիկ կարկաչել: Մինչև ծնկները ամպում թաղված կարմիր եղջերուն ճյուղավոր կոտոշները դեմ էր արել ջրին և աչքերը կիսախուփ ննջում էր:

Թարմ, սառը կանաչով ծածկված մարգագետինը առվակի ափից ձգվում էր մինչև գորշ ժայռերի տակ: Առվակի մյուս ափը թեքությամբ բարձրանում էր վեր ու դեմ առնում ժայռոտ պատին: Այդ թեքությունը նույնպես ծածկված էր փարթամ խոտով, որի վրա ամենուրեք խայտաբղետում էին նարնջագույն, մուգ կարմիր, ոսկեգույն ծաղկե գորգերը: Հոսանքով դեպի ներքև կիրճը խորանում էր ժայռերի մեջ, ու նրանից այն կողմ էլ ոչինչ չէր երևում: Ժայռերը թեքվել էին իրար վրա, և կիրճը վերջանում էր վայրի խաղողի, բաղեղների ու խիտ թփերի կա-

նաչ շերտով ծածկված մամռապատ քարաբեկորների քառսում: Կիրճից այն կողմ վեր էին ձգվում սարերը, բլրաշարքերը, տարածվում էին եղևնիներով ծածկված նրանց լայնարձակ ստորոտները: Իսկ հորիզոնում, որտեղ Սիերայի հավերժական ձյունը վեհորեն փայլում էր արևի տակ, երկնքում վազող ամպերի նման, վեր էին խոյացել ձյունաճերմակ գազաթները:

Փոշու հատիկ անգամ չկար այդ կիրճում: Ծաղիկներն ու թփերը կուսական էին, մաքուր: Մատղաշ խոտը փայլում էր ինչպես թավիչ: Առվակի ափին բուսած վիրջինյան երեք բարդիների ճյուղերից պոկվում էր ձյունաճերմակ, բամբակաման աղվամազը և, անշարժ օդում հանդարտ ճախրելով, իջնում ցած: Վայրի խաղողով ծածկված սարալանջի վրա, մանասնետի՝ փորձից իմաստնացած տերևները, գալիք ամռան երաշտը մախազգալով, արդեն ոլորվել էին գապանակաձև ու գարնան բույրը դեռ տարածում էին իրենց շուրջը: Բաց մարգագետիններում, որտեղ նույնիսկ մանասնետի երկար ստվերը չէր հասնում, ճոճվում էին շուշանները՝ մարջանաթև թիթեռնիկների նման, որ կարծես կանգ են առել հանկարծակի, բայց պատրաստ են ամեն բույս թափահարել դողահար թևերն ու նորից թռչել: Այս ու այնտեղ անտառի խեղկատակ գետնամորին, որ դեռևս չէր հասցրել բաց-կանաչ ցողունը տորոնի-կարմիր գույնի փոխել, շնչում էր ծանր ողկույզներում հավաքված իր բոլոր մոմե գանգիկների բույրը: Այդ գանգիկները դեղնասպիտակ էին, ինչպես հովտաշուշանը և քաղցրաբույր, ինչպես գարունն ինքը:

Նույնիսկ թեթև գեփյուռ չկար կիրճում: Շրջապատի բուրմունքը նիրհուն էր, թնդահամ: Եթե օդը ծանր ու խոնավ լիներ, այդ թնդահամությունը քաղցր-մեղր կթվար: Բայց այնքան թափանցիկ էր և այնքան չոր, որ կարծես արևի ճառագայթներով ջերմացած աստղերի սառը փայլն ու ծաղիկների անուշ բուրմունքը իրար էին խառնվել և հալվել օդի մեջ:

Միայնակ մի թիթեռնիկ երբեմն ճախրում էր, պտտվում, թռչկոտելով լույսից-ստվեր: Ամենուրեք լսվում էր լեռնային մեղունների թանձ, քնաբեր բզզոցը, և այդ բարեհոգի փափկամուկները նույնիսկ կերուխումի իրարանցման մեջ աշխատում էին կոպիտ չվարվել: Կիրճի խորքում հանդարտ խոխոջող առվակն էր միայն, որ երբեմն խանգարում էր անդորրը հազիվ լսելի իր ճողփյունով: Առվակի խոխոջը նման էր քնկոտ շշուկի. մեկ խլանում էր խորասուզվելով քնի մեջ, մեկ արթնանալով կրկին քչքչում:

Այստեղ ամեն ինչ եթերային էր թվում: Արևի ճառագայթներն ու թիթեռնիկները ճախրում էին ծառերի շուրջը. ճախրում էին և ձայները՝ մեղունների բզզոցն ու առվակի խոխոջը: Եվ այդ գույների ու ձայների ճախրումը միախառնվելով, դառնում էր ինչ-որ երեքում, անշուշափելի մի բան... Կիրճի ոգին էր դա: Անշարժության ոգին: Անշարժության, բայց ո՛չ մահի, այլ կյանքի համաչափ զարկերակի հարվածների ոգին: Լռության, բայց ո՛չ կատարյալ խաղաղության, շարժման, բայց ո՛չ գործողության. խաղաղ դադարի ոգին էր այդ՝ լցված կյանքի ուժով, բայց հեռու կատաղի պայքարից և դաժան աշխատանքից: Կիրճի ոգին՝ խաղաղության, լռության ոգին էր, որ քնկոտ հոսում էր ինքնագոհության և հանգստության մեջ, ու ոչ մի հեռավոր ռազմի կանչ չէր վրդովում նրա անդորրը:

Կարմիր ծանրակոտոշ եղջերուն, մինչև ծնկները սառնորակ, ստվերաշատ առվակի մեջ թաղված, ենթարկվելով կիրճի անհաղթահարելի ուժին, նիրհում էր: Նույնիսկ ճանճերը չէին խանգարում նրան, ու նա կանգնել էր երանությունից թմրած: Երբեմն-երբեմն նրա ականջները շարժվում էին՝ որսով կենդանացող առվակի շշուկը, բայց նրանք շարժվում էին ծուլորեն. եղջերուն գիտեր, որ այդ ընդամենն առվակն էր արթնանում և փնթփնթում ինքն իր վրա, թե ինչու է քնով ընկել:

Բայց ահա եղջերուի ականջները լարի պես ձգվեցին՝ ուշադիր ու ազահորեն որսալով ձայները: Նրա նուրբ ռունգերը դողացին. գլուխը թեքելով՝ եղջերուն նայեց կիրճի խորքը: Նա հայացքով չէր կարող թափանցել կանաչ պատի այն կողմը, բայց ականջին մարդու ձայն հասավ՝ հավասար, միապաղաղ: Հետո եղջերուն որսաց մի ուրիշ կտրուկ ձայն. կարծես մետաղով հարվածեցին քարին: Նա փնչացրեց ու նետվելով առաջ, մի ոստյունով ցատկեց մարգագետնի վրա, ուր նրա կնդակները անմիջապես խրվեցին մատղաշ կանաչի թավիչում: Նա ձգվեց, նորից հոտոտեց օդը: Հետո անլսելի առաջ գնաց, երբեմն-երբեմն կանգ առնելով և ականջ դնելով, մինչև որ անձայն տեսիլքի նման անհետացավ կիրճի խորքում:

Լավեց մեխած կոշիկների դոփյուն, և մարդու ձայնը հնչեց ավելի բարձր. մարդն ինչ-որ սաղմոսանման բան էր երգում: Չայնը մոտենում էր, երզը լսվում էր ավելի պարզ, և արդեն կարելի էր ջոկել բառերը:

Շուրջդ նայիր՝
Բարեբեր քանի լեռ է ձգվում վեր:
Չարից հեռու կլինես՝
Մեղքիդ բեռը թե գցես
Ճամփիդ կողքի փոսը խոր:
Միևնույն է՝
Աստծու հյո՛ւրն ես դու մի օր:

Երգին ձայնակցում էին ճոթճոթոցն ու խշխշոցը, և կիրճի ոգին ծանրակոտոշ եղջերուի հետքերով չքվեց հեռու: Մարդը մի կողմ տարավ կանաչ վարագույրը, նայեց առվակին, մարգագետնին, գառիթափ սարալանջին: Նա, ինչպես երևում է, շտապողներից չէր: Սկզբում գննեց իրեն երևացող ընդհանուր պատկերը, հետո ուշադրությունը կենտրոնացրեց մանրուքներին, կարծես առաջին տպավորությունն ստուգելու համար: Եվ դրանից հետո միայն՝ հանդիսավոր ու պերճախոս արտահայտեց իր հիացմունքը:

– Հրա՛շք դժոխսային: Այ քեզ դրա՛խտ: Նայիր ու հիացի՛ր: Եվ անտա՛ն, և ջո՛ւր, և խո՛ւտ: Իսկական դրա՛խտ: Ոսկի որոնողի տեղ է, որ կա: Թարմ խոտը դեղ է հոգնած աչքերին: Միայն թե անգործների հանգստյան տուն չէ: Այս խորհրդավոր մարգագետինը գործնական, աշխատասեր ավանակների համար է, սատանան տանի:

Նրա հողագույն դեմքն արտահայտում էր աշխուժություն և կենսուրախ չարաճճիություն: Յուրաքանչյուր միտք, յուրաքանչյուր թաքնված զգացմունք երևում էր այդ շարժուն դեմքի վրա: Մտքերը պարզ խաղում էին նրա դեմքին, ինչպես ծածանքը լճի հարթության վրա: Նոսր և չսանրված մազերը երեսի նման կեղտամոխրագույն էին: Նրան հասանելիք գույների բոլոր երանգները բնությունը կարծես տվել էր կապո՛ւյտ-կապո՛ւյտ աչքերին: Դրանք չտեսնված կապույտ էին, ուրախ, ծիծաղկոտ միամտություն և ինչ-որ մանկական զարմանք կար այդ աչքերում: Բայց այս բոլորի հետ մեկտեղ նրա աչքերն արտահայտում էին նաև ինքնավստահություն և ամուր կամք, որ առաջացրել էր ինքնուսուցման և կյանքի մեծ փորձում:

Մարդը, դուրս գալով վայրի խաղողի և բաղեղների թփերի միջից, իր քլունգը, բահը, ոսկի լվանալու թասը գցեց կանաչի վրա: Նա հագել էր լայն, արևից խունացած կապույտ անդրավարտիք ու սև սատիկնե բլուզ, ոտքերին՝ կոպիտ մեխերով երկարաճիտ կոշիկներ էին: Լայնեզր գլխարկի կեղտոտ ու անձև տեսքն արդեն ասում էր այն մասին, որ մարդը դաժան կռիվ է մղել անձրևի, քամու, արևի և խարույկների ծխի հետ: Մարդն աչքերը չորս արած գնայլվում էր իր առաջ բացվող խորհրդավոր, սքանչելի պատկերով և ազահորեն, ամբողջ կրծքով ներս էր քաշում կիրճ-պարտեզի քաղցր, տաք շունչը: Նրա ծիծաղկոտ աչքերը կկոցվեցին, վերածվելով երկու կապույտ ճեղքերի, դեմքի վրա ուրախ կնճիռներ խաղացին: Հետո նա լայն ժպտաց և ուժգին բացականչեց.

– Ոստոնտուն բոժոժիկնե՛ր, ուրախ խատուտիկնե՛ր: Այ քեզ բուրմո՛ւնք: Օձանելիքի գործարանը ի՞նչ է սրա դիմաց: Է՛, այնտեղ այսպիսի բուրմունքներ չկան:

Ըստ երևույթին նա հակում ուներ դեպի մենախոսությունները: Յուրաքանչյուր միտքն ու զգացմունքն արտահայտվում էր շարժուն, չարաճճի դեմքի վրա, իսկ լեզուն, աշխատելով ետ չմնալ, բարձրաձայն էր դուրս տալիս բոլոր մտքերը:

Մարդն առվակի ափին կռացավ և սկսեց ազահորեն ջուր խմել:

– Ինչ ջուր է՛, – բացականչեց նա: Հետո բարձրացրեց գլուխը ու, բերանը սրբելով, գննեց առվակի մյուս ափի բլուրը: Այդ բլուրը գրավեց նրա ուշադրությունը: Դեռ փորի վրա պառկած՝ նա երկար գննում էր բլրալանջը: Դա փորձված մարդու հայացք էր, որ լանջով վեր սահեց, դեմ առավ կիրճի ատամանավոր պատին և նորից ցած իջավ առվակի վրա: Հետո մարդը ոտքի ելավ, երկրորդ անգամ դիտեց բլուրը:

– Կարծես թե լավ է, – եզրակացրեց նա՝ գետնից հավաքելով քլունգը, բահն ու թասը:

Ոտքերը հեշտությամբ քարից քար փոխելով՝ նա վարար տեղից քիչ ցած, անցավ առվի մյուս ափը: Հենց ափի մոտ թեքությունից էլ մի լրիվ բահ հող վերցրեց ու լցրեց թասի մեջ: Հետո պազեց, ձեռքերում պահած թասը ընկղմեց առվի մեջ և ճարպիկ ոլորուն թափահարումներով սկսեց լվանալ թասի միջի հողը: Ավելի թեթև կտորները բարձրանում էին ջրի երեսը, և նա, թասը զգուշորեն թեքելով, դրանք թափում էր դուրս: Երբեմն, գործն արագացնելու համար, նա

թասը դնում էր գետնին, ձեռքերով ջոկում միջի խոշոր գետաքարն ու խիճը:

Թասն արագորեն դատարկվում էր: Վերջապես հատակին մնացին միայն մանրախիճի փոքրիկ հատիկներ և հողի բարակ շերտ: Հիմա մարդն ավելի դանդաղ և ուշադիր էր լվանում, որովհետև պահանջվում էր ավելի մանրագնին ու խնամքով աշխատանք: Մարդն ավելի զգուշորեն ու փորձառու հայացքով էր զննում թասի հատակի նստվածքը: Վերջապես, բացի ջրից, աչքի համար անտեսանելի ոչինչ չմնաց: Մարդն արագ, ոլորապտույտ շարժումով դուրս թափեց ջուրը, և հատակին երևաց ավազի մի սև շերտ, որը վրձնախազի պես բարակ էր: Մարդը երկար նայում էր: Վրձնախազի կենտրոնում կայծկլտաց ոսկու մի փոքրիկ հատիկ: Մարդը թասի մեջ մի քիչ ջուր լցրեց և, թափահարելով այն, նորից սկսեց լվանալ ավազը: Դարձյալ մի ոսկի հատիկ կայծկլտաց ի հատուցումն նրա չարչարանքի:

Դրանից հետո մարդը ոսկու ավազը լվանում էր սովորականից շատ ավելի մեծ ջանասիրությամբ: Նա սև ավազը փոքրիկ բաժիններով թասի ծոված մասից դուրս թափելիս ամեն անգամ ուշադիր հետևում էր, որ ոչ մի, թեկուզ ամենափոքրիկ ոսկեհատիկ աչքից չվրիպի: Կրքոտությամբ հետևելով յուրաքայչյուր ոսկե կայծին, աշխատում էր այնպես անել, որ ջրի հետ միայն ավազը թափվի առվի մեջ: Շուտով գնդասեղի ծայրից ոչ մեծ, մի նոր ոսկե փայլք երևաց թասի պռունկին, և նա անմիջապես հրեց այն դեպի կենտրոնը: Նորից մի փայլք հայտնաբերվեց այդ եղանակով. հետո երրորդը, չորրորդը: Ինչպե՞ս էին մտահոգում նրան այդ փայլքերը: Ինչպես հովիվը՝ գառներին, նա իրար վրա էր հավաքում իր ոսկե հատիկները, հետևելով, որ ոչ մեկը դուրս չմնա հոտից: Վերջապես թասի հատակին ոսկու հատիկներից բացի ոչինչ չմնաց: Մարդը հաշվեց դրանք և այդքան քրտնաջան աշխատանքից հետո վճռական շարժումով թափեց առվակի մեջ:

Մակայն, երբ նա ոտքի էր կնագնել, ազահության կրակն արդեն փայլում էր կապույտ աչքերում:

– Յոթ, – մրթմրթաց նա, հաշվելով հատիկները, որոնց պատճառով այնքան համառորեն աշխատել էր, կարծես միայն նրա համար, որ նույնախիսի անհոգությամբ բաժանվեր դրանցից:– Յոթ,– շեշտելով կրկնեց նա, կարծես ցանկանում էր թիվը տպավորել մտքի մեջ:

Մարդը երկար, անշարժ կանգնել, նայել էր բլրալանջին: Հիմա նրա աչքերում բոցկլտում էր ազահ, տազնապալից հետաքրքրությունը: Նա ամբողջովին դողում էր ուրախ հուզմունքից, նրա շարժումների մեջ ինչ-որ զգուշավորություն էր հայտնվել, այն գիշատիչ գազանի նման, որ ընկել է հետքի վրա:

Հետո նա առվակի ափով մի քանի քայլ ցած իջավ ու նորից թասի մեջ հող լցրեց:

Մարդը նորից սկսեց քրտնաջանորեն լվանալ թասի միջի հողն ու կրքոտ հետևել ոսկե հատիկներին, իսկ դրանք հաշվելուց հետո, առանց ափսոսանքի թափեց առվակը:

– Հի՛նգ,– մրթմրթաց նա: Եվ կրկնեց. – Հի՛նգ:

Չդիմանալով գայթակղությանը՝ նա մի անգամ էլ հայացք զցեց թեքության վրա, հուսանքով իջավ ցած ու լցրեց թասը: Ոսկե հատիկները գնալով պակասում էին: «Չորս, երեք, երկու, երկու, մեկ», – աշխատում էր տպավորել թվերը հիշողության մեջ, քանի դեռ առվակով ցած էր իջնում: Երբ իր չարչարանքից հետո լոկ մի ոսկե հատիկ մնաց, նա ընդհատեց լվացումը, խսրույկ վառեց, թասը պահեց բոցի վրա, մինչև որ այն կապտասև գույն ստացավ: Թասը քննադատորեն շուռումուռ տալուց հետո, մարդը գլխով հավանություն տվեց. այդ մուգ գույնի վրա ոչ մի, նույնիսկ ամենափոքրիկ ոսկե փայլքը նրա աչքից չէր վրիպի:

Ավելի ցած իջնելով, մարդը նորից թասի մեջ հող լցրեց: Միայն մեկ ոսկե փայլք մնաց հատակին: Երրորդ փորձարկմանը բոլորովին ոսկի չհայտնաբերվեց: Մարդը չհանգստացավ. իրարից մեկ ֆուտ հեռավորության վրա ևս երեք փորձարկում կատարեց: Այստեղ էլ ոսկի չկար, բայց մարդը չհուսալքվեց, ընդհակառակը, նա իր հայտնագործությունից ըստ երևույթին գոհ էր: Յուրաքանչյուր անարդյունք լվացումից հետո նրա հուզմունքը աճում էր: Վերջապես նա հասակով մեկ ձգվեց և ուրախությամբ բացականչեց.

– Եթե ես չեմ գտել իմ ուզածը, թող Աստված խակ խնձորներ թափի գլխիս:

Մարդը վերադարձավ իր առաջին փորձարկումների տեղը և հիմա, առվակով վեր բարձրանալով, վերսկսեց լվացումը: Սկզբում նրա ոսկե հատկանիշները շարունակ աճում էին զարմանալի արագ: «Տասնչորս, տասանութ, քսանմեկ, քսանվեց»– մտքում հաշվում էր նա:

Առվակի վարար մասում թասի մեջ մնաց ամենահարուստ ավարը. երեսունհինգ ոսկե

փայլք:

Արևն արդեն գեմիթում էր, իսկ մարդը դեռևս շարունակում էր աշխատել: Նա առվի ափով շարժվում էր դեպի վերև ու թաս թասի ետևից ավագ էր լվանում. բայց նրա չարչարանքների արդյունքն սկսեց նկատելի կերպով նվազել:

– Տես, ո՛րն է թաքնվում, – սաստիկ հուզված բացականչեց նա, երբ մի բահ հողի մեջ լոկ մեկ հատ ոսկե փայլք գտավ:

Երբ վերջին մի քանի թասերում ոսկու ոչ մի հատիկ չհայտնաբերվեց, մարդը ոտքի ելավ ու գոհ հայացքով զննեց բլուրը:

– Հը՛, տիկին Երակ, – ձայն տվեց նա այնպիսի տոնով, կարծես դիմում էր բլրի խորքերում թաքնված ինչ-որ անտեսանելի էակի: – Հը՛, տիկին Երակ: Ես գալիս եմ: Գալիս եմ ձեզ մոտ: Եվ հանգիստ եղեք, կհասնեմ ձեզ: Լսո՞ւմ եք ինձ, տիկին: Թող գետնի տակն անցնեմ, եթե չհասնեմ ձեզ:

Մարդը շրջվեց, նայեց վեր՝ անամպ երկնքի լազուրում փայլող արևին, որ ուղիղ նրա գլխավերևում էր: Հետո նա իր շարք-շարք փորած փոսերի կողքով սկսեց ցած իջնել կիրճով, առվակի վարար տեղից անցավ մյուս ափն ու անհետացավ կանաչ թփերի մեջ: Բայց նրա ուրախ երգի հեռացող ձայնը դեռ շարունակում էր իշխել շրջակայքում, թույլ չտալով, որ վերականգնվի կիրճի լռությունն ու հանգստի ոգին:

Շուտով նորից երևաց մարդը. նա իր ծանր կոշիկներով ուժեղ հարվածում էր քարերին: Կանաչ պատնեշը խտտորվեց. կարծես վերջին ուժերը լարած, ինչ-որ բանի դիմադրելով՝ նա տատանվում էր այս ու այն կողմ: Հնչեց մետաղի ու քարի հարվածների զրնգոցը, թփերը խշխշացին, մարդու ձայնը դարձավ ավելի կտրուկ, հրամայական: Ծանր շնչելով, ինչ-որ խոշորամարմին կենդանի էր քայլում: Հետո տերևների ամպեր քափվեցին, և քիչ անց թփերի միջից դուրս եկավ մի ձի: Նրա մեջքին բեռ կար, որից բաղեղների ու վայրի խաղողի ճյուղեր էին կախվել: Կենդանին զարմացած նայեց մարզագետնին, հետո գլուխն իջեցրեց, սկսեց ախորժակով կրծել խոտը: Առաջինի ետևից հայտնվեց երկրորդ ձին: Մամռակալած քարերի վրա նա մի անգամ սայթաքեց, բայց հենց որ սմբակները թաղվեցին մարզագետնի հյուրընկալ կանաչի մեջ, վերականգնեց հավասարակշռությունը: Չնայած այս ձին առանց ձիավորի էր, մեջքին կար երկարատև օգտագործելուց գունաթափված և մաշված մեքսիկական երկսապատ թամբ:

Ամենից վերջում մոտեցավ մարդը: Հանգիստ տեղ ընտրելուց հետո նա թամբն ու բեռը զցեց գետնին, ձիերին արձակեց ազատության մեջ արածելու: Հետո քանդեց բեռը, հանեց ուտելիքը, թավան, սրճամանը, տաշեղ ու չորացած խոտ հավաքեց և խարույկ վառեց:

– Օխա՛յ, բացականչեց նա: – Ինչ էլ տան կխժռեմ, թեկուզ երակթե խարտուկ ու ժանգոտ մեխեր էլ մատուցեն, դարձյալ շնորհակալություն կասեի տիրուհուն, դեռ երկրորդ բաժնից էլ չէի հրաժարվի:

Նա ուղղվեց. գրպաններում լուցկի էր փնտրում: Հայացքն ընկավ առվի մյուս ափին՝ բլրի թեքությանը: Մատներն արդեն բռնել էին լուցկու տուփը, բայց իսկույն թուլացան, և նա ձեռքը հանեց գրպանից: Մարդը որոշակի տատանվում էր. նայեց խարույկի մոտ թափած ամաններից, բայց նորից հայացքը սահեց թեքության վրա:

– Մի անգամ էլ փորեմ, – վերջապես վճռեց նա, ուղղվելով դեպի առվակը: Գրանից օգուտ չկա, գիտեմ, – արդարանում էր նա: – Ուտելը կարելի է հետաձգել, մեծ վնաս չենք կրի:

Մարդը առաջին փոսերի շարքից մի քանի ֆուտ հեռացավ, սկսեց երկրորդ շարքը փորել: Արևը թեքվում էր արևմուտք, սավերները երկարում էին, բայց նա շարունակում էր աշխատել: Նա սկսեց երրորդ շարքը փորել: Բարձրանալով բլուրն ի վեր՝ նա լանջի վրա փորեց հորիզոնական փոսերի շարքեր: Յուրաքանչյուր շարքի մեջտեղի մասը ոսկով հարուստ էր, մինչդեռ ծայրերի փոսերում ոսկի չկար: Եվ մարդը թեքությամբ որքան բարձրանում էր վեր, այնքան շարքերը համաչափ կերպով կարճում էին այնպես, որ թեքությունից էլ բարձր, ինչ-որ տեղ, վերջին շարքը պետք է վերածվեր կետի: Աստիճանաբար ստացվեց շուռ տված «V» տառը հիշեցնող մի պատկեր, զնալով իրար մոտեցող փորվածքների եզրերի գծերը ցույց էին տալիս ոսկեքեր ավազի սահմանը:

Մարդու նպատակակետն էլ հենց այդ «V»-ի գագաթն էր: Նրա հայացքը մի քանի անգամ սահեց թեքությամբ վեր. մարդը ձգտում էր որոշել այն կետը, ուր պետք է թաքնված լինեք ու-

կերեր ավագը; Իր գլխավերևում բլրալանջին ինչ-որ տեղ թաքնված հենց այդ կետին էլ նա հասցեագրում էր իր խոսքերը, անվանելով դրան «տիկին Երակ»:

– Ապա համեցեք ինձ մոտ, տիկին Երակ: Սիրալիք եղեք, քնքուշ, իջեք ինձ մոտ:

Լա՛վ, վճռական հայտարարեց նա քիչ հետո: - Լա՛վ, տիկին Երակ, երևում է, ես ինքս պիտի ձեզ մոտ բարձրանամ և տեղում ձեր ջարդը տամ: Ինչ արած, այդպես էլ կանեմ: Այդպես էլ կանեմ,- սպառնալից ավելացրեց վերջում:

Ամեն անգամ մարդը հողով լի թասը տանում լվանում էր առվում, ինչքան թեքության վերին մասերից էր նա հող վերցնում, այնքան հարստանում էր փորձարկումների արդյունքն այնպես, որ վերջում նա սկսեց ոսկին հավաքել թիթեղի կտորով, որն անփույթ խոթել էր անդրավարտիքի ետևի գրպանը: Մարդն այնպես էր կլանված իր աշխատանքով, որ չէր նկատել դանդաղ իջնող մթնշաղը և սթափվեց միայն այն ժամանակ, երբ ոչ մի ճիգով այլևս չէր կարողանում ոսկու փայլը նշմարել թասի հատակին:

Նա կտրուկ ոտքի ելավ: Շինծու սարսափ և զարմանք կար նրա դեմքին, և ատամների արանքից հատ-հատ արտասանեց.

– Մատանան այնպես է տարել խելքս, որ ուտելս էլ եմ մոռացել:

Խավարում սայթաքելով՝ նա թռավ առվակի մյուս ափը ու վառեց իր ուշացած խարույկը: Ընթրիքը կազմված էր ապխտած կրծքի մսից, բլիթներից և տաքացրած բակլայից: Նա տեղավորվեց մարմրող ածուխների կողքին և գիշերվա շուկներին ականջ դրած՝ ծխամորճ էր ծխում, իսկ թավուտի միջից ժպտում էր լուսնյակը: Հետո ոտքերից հանեց ծանր կոշիկներն ու վերմակը քաշեց մինչև ծնոտը: Լուսնի թափանցիկ շողերի տակ նրա դեմքը գունատ էր մահացածի դեմքի պես: Բայց այդ մահացածը հանկարծ կենդանացավ ու հենվելով արմունկներին, նայեց առվակի այն կողմը՝ բլրալանջին:

– Բարի գիշեր, տիկին Երակ, - քնկոտ բղավեց նա: - Բարի գիշեր:

Գորշ նախալուսաբացն էլ անցավ, իսկ մարդը դեռ քնած էր: Արևի առաջին թեք ճառագայթն ընկավ նրա կուպերին, մարդը վեր թռավ տեղից, բացեց աչքերն ու երկար նայեց շուրջը: Նա վերհիշեց երեկվա դեպքերը, ընկալեց ներկա պահն ու ոտքի կանգնեց: Հազմվելը հեշտ էր. կոշիկները քաշեց ոտքերին ու վերջ: Նայեց հանգած խարույկին, հետո բլուրին. տատանվում էր, բայց հաղթահարելով գայթակղությունը, խարույկը վառեց:

– Մի՛ շտապիր, Բիլլ, մի՛ շտապիր, - համոզում էր նա իրեն, - ինչո՞ւ առանց մտածելու գործ բռնել: Չուր քրտնելուց օգուտ չկա: Տիկին Երակը կապասի: Նա ոչ մի տեղ չի փախչի, մինչև դու կնախաճաշես: Իսկ հիմա չէր խանգարի մի փոքր թարմացնեինք մեր ճաշացանկը: Գործի՛ անցիր:

Առվակի ափին մարդը մի դալար շիվ կտրեց, գրպանից հանեց բարակ թուղի կտրոն ու բավականին ճմռթված արհեստական ճանճը:

– Վաղ առավոտ է, գուցե կոցի՞ մրթմրթաց նա՝ կարթը գցելով առվակի մեջ: Իսկ մեկ թուղե հետո ուրախ բացականչեց:

– Ի՞նչ էի ասում ձեզ, հր՞: Ի՞նչ էի ասում:

Նրա մոտ կոճ չկար, իսկ գուր ժամանակ կորցնել չարժեր, և նա արագ ու ճարակորեն, ձեռքից ձեռք անցկացնելով կարթաթելը, ջրից դուրս քաշեց արևի տակ փայլփող տասը դյույմանոց մի կարմրախայտ: Երեք կարմրախայտ, իրար հաջորդելով, ապահովեցին նրա նախաճաշը:

Երբ մարդը մոտեցավ առվակի անցման տեղին, որ գնար իր բլրալանջը, մի անսպասելի միտք ցնցեց նրան, ու նա կանգ առավ:

– Երևակայիր, չէր խանգարի առվակով մի քիչ ցած իջնել, նայել ինչ կա, ինչ չկա, - մրթմրթաց նա: - Ինչ գիտես, թե մի սրիկայի մեկը չի թափառում մոտերքում: - Եվ շարունակեց մրթմրթալ: - Չէ՛, չէ՛, իսկապես որ, պետք է գնալ նայել: - Մարդը քարերի վրայով անցավ առվի մյուս ափը ու երբ ոտք դրեց բլուրի վրա, նրա ամբողջ հեռատեսությունը ցնդեց գլխից, և նա կրկին գործի անցավ:

Նա մեջքն ուղղեց միայն այն ժամանակ, երբ արդեն մթնում էր: Չեռքով շփեց կոտրատվող գոտկատեղն ու փնչաց.

– Հիմա՞ ինչ կասես: Ինչ ուզում ես արա՛, բայց նորից ուտելը մոռացար: Չէ՛, խելքի արի, թե չէ կնմանվես այն հիմարին, որ լուսաբացից լուսաբաց ծոմ է պահում:

– Աշխարհում ամենից անհիծված բանը այդ երակներն են. ամեն բան կմոռանա,- եզրակացրեց մարդը գիշերը, երբ մտնում էր վերմակի տակ: Բայց, չնայած դրան, այս անգամ էլ չմոռացավ հարածեշտի ողջույնով դիմել բլրալանջին.

– Բարի՛ գիշեր, տիկին Երակ: Բարի՛ գիշեր:

Արևի դուրս գալու հետ միաժամանակ արթնանալով՝ մարդն արագ նախաճաշեց և անմիջապես գործի անցավ: Նա դողում էր ինչպես տենդահար, թասի մեջ ընկնող ավարն աստիճանաբար հարստանում էր, և մարդն ավելի էր հուզվում. այտերը վառվում էին, բայց ո՛չ արևից, ներսի տաքությունն էր բորբոքում նրան: Նա ո՛չ հոգնածություն էր զգում, ո՛չ էլ նկատում էր, թե ինչպես էր թռչում ժամանակը: Թասի մեջ հող լցնելով՝ նա վազում էր ցած, լվանում այն առվակի ջրով, հետո, դիվահարի պես ծանր շնչելով, սայթաքելով, հայիոյանքներ տեղալով, կրկին վազում էր վեր ու նորից լցնում թասը:

Նա հիմա փորում էր առվակից մոտ հարյուր յարդ վերև և շուռ տված «V»-ն սկսել էր բավականին ընդգծված ձև ընդունել: Ոսկեբեր սեպի կողերը որոշակի իրար էին մոտենում, և մարդը մտքով պատկերացնում էր, թե որ կետում դրանք կհատվեն: Այնտեղ էր նրա նպատակը՝ «V»-ի գագաթը, և նա լվանում էր թաս թասի ետևից, աշխատելով հասնել իր ուզած կետին:

– Մոտ երկու յարդ մանասանետի թփից վերև ու մեկ յարդ դեպի աջ, - վերջապես որոշեց նա: Հետո գայթակղվեց:

– Ավելի հեշտ է, քան սեփական քիթը գտնելը, - արտասանեց նա՝ թողնելով քրտնաջան լվացումը, թեքությամբ բարձրացավ դեպի նպատակակետը: Այնտեղ նա թասը հողով լցրեց և իջավ առվակի մոտ: Թասում ոչ մի հատիկ ոսկի չկար:

Մարդը փորում էր ու փորում՝ մեկ խոր, մեկ մակերևույթին մոտ, լվանում էր թաս թասի ետևից. բայց ամենաչնչին ոսկե փայլք անգամ չստացավ իր չարչարանքների դիմաց: Նա կատաղեց, գայթակղության համար անխնա հայիոյեց իրեն, հետո թեքությունով իջավ ցած և սկսեց փորձարկումները հերթական շարքից:

- Դանդաղ, բայց հաստատ գործ բռնիր, Բիլլ: Դանդաղ, բայց հաստատ,-երգում էր նա քթի տակ: - Երջանկությունը միանգամից վայելելը քո բանը չէ: Ժամանակն է, որ դա հասկանա: Խելքի արի, Բիլլ, խելքի արի: Դանդաղ, բայց հաստատ. ահա քո հաղթելու գրավականը ամեն տեսակ խաղի մեջ: Այդպես բռնիր գործդ ու մինչև վերջ պի՛նդ կաց:

Որքան բլուրը հատող փոսաշարքերը կարճանում էին, ցույց տալով, որ «V»-ի կողերը ձգտում են մի կետի, այնքան փոսերի խորությունն աճում էր: Ոսկու հետքը իջնում էր բլուրի խորքերը: Այժմ միայն երեսուն դյույմ խորության վրա էին ոսկե փայլքեր հանդիպում: Մակերեսից քսանհինգ դյույմ, ինչպես երեսունհինգ դյույմ խորությունից վերցրած հողը ոսկի չէր բերում: Իսկ «V»-ի հիմքում՝ առվի ափին, մարդը ոսկե փայլքեր գտավ ուղղակի խոտի արմատների մոտ: Բայց ինչքան թեքությամբ վեր էր բարձրանում, ոսկին այնքան խորանում էր հողի մեջ: Այնքան էլ հեշտ չէր երեք դյույմ խորությամբ փոս փորել մեկ թաս հող լվանալու համար. իսկ «V»-ի գագաթին հասնելու համար ջանացողն ստիպված էր դեռ շատ այդպիսի փոսեր փորել:

– Ով գիտի, ինչքան խոր է գնացել, թմրած գոտկատեղը շփելով, մի պահ դադար առավ մարդն ու հոգոց հանեց:

Նրա մեջքը կոտրատվում էր, մկանները թմրել էին, բայց, անհամբերությունից դողալով, նա քլունգն ու բահը ձեռքին բարձրանում էր վեր ու փշրում գորշ, փխրուն հողը: Նրա առջևում փռված էր հոտավետ ծաղիկներով պատված թավշե տարածությունը: Իսկ ետևում հողն ավերվել էր, ամայացել, կարծես հարթ բլրալանջի մակերևույթը տակնուվրա էին արել: Խխունջի պես դանդաղ առաջ շարժվելով, իր ետևից տգեղ հետքեր թողնելով՝ մարդը քանդում, փչացնում էր գեղեցիկ հարթությունը:

Ոսկին ավելի ու ավելի էր խորանում հողի մեջ, բայց մարդու չարչարանքներն ավելի մեծ արդյունքի էին հասնում: Քսան ցենտ, երեսուն ցենտ, հիսուն, վաթսուն ցենտ, այդքան արդյունք տվեցին ոսկի որոնողի վերջին լվացումները: Իսկ օրվա վերջում նա ռեկորդ սահմանեց. մի փորձարկումից ստացավ ամբողջ մեկ դոլարի ոսկու ավագ:

– Միրոս վկայում է, որ ինչ-որ թափառաշրջիկի մեկը թրև է գալիս այս կողմերում և ուզում է ինձ վնաս տալ,-քնկոտ մրթմրթաց նա գիշերը, վերմակը քաշելով մինչև ծնոտը: Եվ հանկարծ վեր թռավ ու նստեց: - Բիլլ,-ասաց նա կտրուկ: - Լսիր ինձ, Բիլլ: Լսո՞ւմ ես, թե՞ չէ: Չէր խանգարի, եթե վաղն առավոտյան աչք ածեիր շրջակայքդ, տեսնեիր ինչ կա, ինչ չկա: Հասկա-

ցա՞ր: Վաղն առավոտյան, տե՛ս, չմոռանաս: - Հետո հորանջեց, նայեց բլրի կողմն ու ձայն տվեց: - Բարի՛ գիշեր, տիկին Երակ:

Առավոտյան մարդը արևածագից էլ վաղ արթնացավ: Երբ առաջին շողը սահեց նրա վրայով, նա արդեն նախաճաշել, վերջացրել էր և բարձրանում էր ժայռն ի վեր: Փլված ժայռակտորները ոտքերի համար հենարան դարձնելով, նա բարձրացավ սարի գագաթը ու նայեց չորս կողմը: Նրա շուրջը շունչ կենդանի չկար: Չորս կողմ ինչքան կտրում էր աչքը՝ խումբ-խումբ ձգվում էր լեռները: Մարդու հայացքը թռչում էր սարից սար, չափում նրանց միջև ընկած տարածությունները, արևելյան կողմում գլխավոր լեռնաշղթան էր՝ Սիերայի ձյունաճերմակ գագաթները, որ կարծես խրվել էին երկնքի լազուրի մեջ: Եվ այդ լեռների օվկիանոսի հիմնական հունին միախառնվում էին հարավի և հյուսիսի իրար հյուսված լեռնաշարքերը: Դեպի արևմուտք լեռների ալիքները խումբ խմբի ետև ցածրանալով, մեղմանում էին ու միաձուլվում նախալեռների կլորահարթ բլուրներին. իսկ սրանք էլ իրենց հերթին կարծես հալչում էին՝ հոսելով դեպի անտեսանելի, անծայրածիր հարթությունը:

Այդ վեհասքանչ տարածություններում պատահողոված բլրալանջից բացի ոչինչ չէր հիշեցնում մարդու կամ նրա ձեռքի գործերի մասին: Մարդը նայում էր երկար և ուշադիր: Նրան թվաց, որ հագիվ նկատելի ծխի քուլա էր տեսնում ինչ-որ մի տեղ, կիրճի խորքում: Նա նորից նայեց այդ կողմը, և նորից որոշեց, որ դա ժայռոտ ծերպերում կապույտին տվող մառախուղի կտոր է:

- Հե՛յ դուք, տիկին Երակ, - դեպի անդունդը թեքվելով բղավեց նա: - Մի դուրս եկեք տեսնենք, այդտեղից: Ես ձեզ մոտ եմ գալիս, տիկին Երակ: Գալիս եմ:

Ծանր կոշիկները նրան դանդաղաշարժ, բռի տեսք էին տալիս, բայց նա, վայրի այծյամի պես ճարակորեն թռչկոտելով, գլխապտույտ բարձրությունից իջնում էր ցած: Անդունդի ամենաճայրին քարը սլաց ոտքի տակից, բայց դա նրան չվախեցրեց: Մարդը կարծես գիտեր աղետի պահն ու հասցրեց ամենաանհույս հենարանն օգտագործել, որպեսզի, մի ակնթարթ միայ հենվելով նրա վրա, ոտքն ավելի ամուր տեղ դնի: Այնտեղ, ուր թեքությունը համարյա ուղղահայաց էր և մի ակնթարթ էլ հնարավոր չէր հենվել, նա այդտեղ էլ իրեն չկորցրեց, ոտքը ճակատագրական վայրկյանի մի չնչին պահ միայն հենելով դավաճան ցցվածքին, ցատկեց հեռու: Իսկ այնտեղ, ուր նույնիսկ վայրկյանի այդ չնչին պահն էլ չէր օգնի, մարդը, մարմինն առաջ նետելով, կառչում էր ժայռի ցցվածքներից, քարերի ճեղքվածքներից կամ մերկացած արմատներով կասկածելի թփերից: Եվ ահա, մոլեգին ճիչով, ուղղահայաց ժայռից նա թռավ փափուկ փլվածքի վրա, իր հետ տանելով հողի ու խճաքարի թափվող տարափը:

Այդ առավոտ առաջին թասը երկու դուլարից ավելի ոսկու ավագ բերեց: Մարդն այդ փորձարկումը կատարել էր «Վ»-ի հենց կենտրոնից, իսկ դեպի աջ և ձախ ոսկու քանակն արագ նվազում էր: Փոսերի շարքերը գնալով կարճանում էին. սեպի իրար մոտեցող մասերի միջև մնում էր ընդամենը մի քանի յարդ: Մի քանի յարդ վերև էլ ընկած էր երկու կողերի հատման տեղը: Բայց ոսկու հետքը ավելի ու ավելի էր խորանում գետնի մեջ: Կեսօրից հետո մարդը միայն հինգ ֆուտ խորությունից վերցրած հողից էր ոսկի հանում:

Այսինքն, հիմա ոսկու հետքը ոչ թե հետք էր, այլ պարզապես իսկական ոսկեբեր հողաշերտ, և մարդը որոշեց, երբ հասնի երակին, կվերադառնա նախկին տեղն ու կաշխատի մակերևույթի վրա: Մակայն փորձարկումների շարունակ աճող հարստությունը նրան տագնապի մեջ էր զգում: Երեկոյան կողմ յուրաքանչյուր լվացումը տալիս էր արդեն երեք-չորս դուլարի ոսկու ավագ: Մարդն, իրեն կորցրած, ծոծրակը քորելով, նայեց մանասանետի թփին, որ աճել էր թեքությունից քիչ վերև, մոտավորապես այնտեղ, ուր պետք է գտնվեր շուռ տված «Վ»-ի գագաթը: Նա, իմաստունի պես գլուխը թափահարելով, արտասանեց.

- Երկուսից մեկը, Բիլլ, երկուսից մեկը: Կամ տիկին Երակը կորցրել է իր ամբողջ ոսկին, կամ նա այնքան հարուստ է, սատան տանի, որ դու, երևակայիր, ուժ չես ունենա այդ ամբողջը քեզ տանելու: Այ, դա արդեն իսկական դժբախտություն կլինի... Հը՛: Ի՞նչ կասես, - նման հաճելի երկընտրանքի մասին մտածելուց փնջացրեց նա:

Մարդը դեռ ամփի ափին էր, երբ մութը վրա տվեց, կապույտ աչքերը լարված պայքարում էին իջնող խավարի դեմ. նա լվանում էր վերջին թասը, որի մեջ ամենաքիչը հինգ դուլարի ոսկու ավագ կլիներ:

- Ափսոս լապտեր չունենմ , մի քիչ էլ կաշխատեի, - մենախոսեց նա:

Այդ գիշեր մարդու քունը չէր տանում: Նա շուռուճուճ էր գալիս, փակում աչքերը, հույով, որ քունը կհաղթի, բայց ազահ անհամբերությունից բորբոքվել էր արյունը, և, նայելով մթության մեջ, նա հոգնած մրթմրթաց քթի տակ.

– Շո՛ւտ բացվե՛ր լույսը:

Հագիվ էին գունաթափվել աստղերը, մարդն արդեն ոտքի վրա էր: Լուսաբացի մթնշաղում արագ նախաճաշելուց հետո թեքությամբ բարձրացավ վերև, դեպի «տիկին Երակի» խորհրդավոր ապաստանը:

Այս առավոտ ոսկու շիթն այնքան էր նեղացել, որ փորած փոսերի առաջին շարքում, միայն երեք փոսի տեղ կար. մարդն արդեն չորրորդ օրն էր քայլ առ քայլ հետապնդում ոսկուն և լրիվ մոտեցել էր նրա ակունքին:

– Հանգի՛ստ, Բիլլ, հանգի՛ստ, - խրատում էր նա իրեն, բահը խրելով այն տեղը, ուր շուռ տված «V»-ի կողերը վերջապես միացան իրար:

- Համենայնդեպս, ձեռքս ընկաք, տիկին Երակ: Հաստատ, ձեռքս ընկաք: Հիմա էլ ձեռքիցս չեք պրծնի, - ավելի ու ավելի խոր փորելով՝ կրկնեց նա մի քանի անգամ:

Չորս ֆուտ, հինգ ֆուտ, վեց ֆուտ. փորելը գնալով դժվարանում էր: Բահն ինչ-որ կարծր հանքաշերտի կաշեկով, զնգաց: Մարդը զննեց փոսի հատակը:

– Կվարց է, - փոսի միջի հողը դուրս բափելուց հետո եզրակացրեց նա: Անմիջապես հարձակվեց փխրուն կվարցի վրա, սկսեց քլունգով կոտրատել հանքաքարի կտորները:

Նա բահը խրեց քայքայված զանգվածի մեջ: Ինչ-որ դեղինին տվող բան շողշողաց: Մարդը պազեց, և ինչպես ֆերմերը կմաքրեր նոր հանած կարտոֆիլը հողակոշտերից, սկսեց մաքրել կվարցի կտորը:

– Խայտառակ եղար, Մարդանապա՛լ, - գոչեց նա: - Այստեղ ամբողջ կտոր-կտոր ոսկի է: Կտո՛ր-կտոր:

Նրա ձեռքում բռնած կվարցի հետ կտոր-կտոր մաքուր ոսկի կար: Նա զցեց այն թասի մեջ, սկսեց զննել մյուս կտորը: Այստեղ միայն մի քանի կետերում էրն դեղին փայլքերը, բայց նա մատնելով փշրեց փխրուն կվարցը, մինչև որ ավերի վրա շողշողաց ոսկին: Մարդը կտոր կտորի ետևից մաքրում էր և զցում դրանք թասի մեջ: Փոսի խորքում ասիակն հարստություն կար թաքնված: Կվարցն արդեն այնքան էր քայքայվել, որ ոսկին ավելի շատ էր: Հանդիպում էին կտորները, որոնց մեջ բոլորովին այլ հանքատեսակ չէր լինում, միայն մաքուր, բնական ոսկի:

Երբ քլունգը խրվեց երակի ուղիղ կենտրոնում, շուռ եկած հողը թանկարժեք քարերի կույտի պես շողշողաց դեղնագույն կայծերով: Այդ կայծերի խաղից շլացել էր մարդը. նա գլուխը դանդաղ թեքում էր այս ու այն կողմ:

– Դե, հիմա խոսեք ձեր Ոսկեքեր հողաշերտերի մասին, - արհամարհանքով փնջացրեց նա: - Հը՛մ, այս երակի առաջ դրանք իսկի երեսուն ցենտ էլ չարժեն: Այ թե որտեղ է մաքուր ոսկին: Սատանան տանի, այսօրվանից ես այս կիրճը կանվանեմ «Ոսկե կիրճ»:

Մարդը պազած, շարունակում էր ջոկել բնածին ոսկու կտորներն ու զցել դրանք թասը: Եվ հանկարծ նա աղետ նախազգաց: Նրան թվաց, որ ինչ-որ ստվեր ընկավ իր վրա: Բայց ստվեր չկար: Սիրտը կանգ առավ կրծքի տակ, կոկորդը սեղմվեց: Սիրտն իր միջից դուրս մղեց դանդաղ սառչող արյունը. նա զգաց, թե ինչպես է քրտնակալած բլուզը սառը ծեփի պես կպել մարմնին:

Մարդը ետ չնայեց, տեղից վեր չթռավ: Նա չէր շարժվում բոլորովին: Նա ջանում էր ըմբռնել իր զգացած նախազգուշացման պատճառը, պարզել խորհրդավոր ուժի աղբյուրը, որ նրան վտանգ էր ազդարարում: Բայց որտեղի՞ց էր այդ վտանգը. նա տենչում էր բռնել այդ անտեսանելի էակին, որ դժբախտություն էր սպառնում: Թշնամական ուժի հոսանքը երբեմն այնպիսի անշոշափելի ճանապարհներով է ազդում մեզ վրա, որ մեր զգացումներն ի վիճակի չեն լինում ըմբռնել դրանք, բայց կանխազգում են: Մարդը աղոտ զգում էր այդ հոսանքը, բայց չգիտեր, թե որտեղից է մոտենում: Տազնապալից ճնշող զգացում էր պատել մարդուն: Կարծես հանկարծակի ծածկեցին արևը: Խավար իջավ նրա հոգուն, կարծես մահվան շունչը ճախրում էր գլխավերևում:

Մարմնի յուրաքանչյուր նյարդը, յուրաքանչյուր մկանը նրան հրամայում էր վեր թռչել, երես առ երես դիմավորել անտեսանելի վտանգը, բայց կամքը խեղդում էր բնազդական վախը, ու մարդը մնում էր պազած, ոսկու բնածին կտորը ձեռքին: Նա չէր համարձակվում շուռ գալ,

բայց հիմա արդեն հաստատ գիտեր, որ ինչ-որ մեկը կանգնած է իր թիկունքում, փոսի եզրին: Մարդն այնպիսի տեսք ընդունեց, իբրև կլանված է ոսկու կտորով: Նա այդ կտորն ամեն կողմից զննում էր, շուռուճուռ տալիս, մաքրում նրա վրայի հողը... Եվ այդ ամբողջ ժամանակամիջոցում նա գիտեր, որ ինչ-որ մեկը, թիկունքում կանգնած, իր ուսի վրայից ոսկուն է նայում:

Շարունակելով ձևացնել, թե իբր իրեն շատ է հետաքրքրում ոսկու կտորը, մարդը լարված սկանջ էր դնում, մինչև որ մեջքին զգաց ինչ-որ մեկի որոշակի շնչառությունը: Նրա հայացքն սկսեց գետնի վրա զենք որոնել ու դեմ առավ միայն հողից դուրս ցցված ոսկու կտորներին, որոնք հիմա, աղետի պահին, այնքա՛ն անօգուտ էին: Գուցե քլունգը օգտագործեր, բայց ո՛չ, ո՛չ հիմա: Մարդը գիտակցեց, որ լրիվ դատապարտված է: Նա յոթ ֆուտ խորությամբ փոսի հատակում էր, գլուխը հագիվ հասներ փոսի եզրին: Նա թակարդի մեջ էր:

Մարդը շարունակում էր պպզած մնալ: Նա դեռևս կարողանում էր տիրապետել իրեն, մտքում պրպտում էր փրկության բոլոր միջոցներն ու ավելի պազ ըմբռնում, որ ինքն անգոր է: Նա շարունակեց ոսկու կտորների վրայից մաքրել հողը և զցել դրանք թասի մեջ: Նրան այլ բան չէր մնում անելու: Եվ այնուամենայնիվ գիտակցում էր, որ վաղ թե ուշ պետք է վեր կենա ու երես առ երես նայի նրան, ով շնչում էր իր ետևում կանգնած: Վայրկյաններն անցնում էին, և նա հասկանում էր, որ մոտենում է այն պահը, երբ ստիպված պետք է լինի կանգնել, կամ... Եվ հենց միայն այդ մտքից քրտնակալած, իր գանձի վրա կծկված՝ ընդունի մահը:

Եվ այնուամենայնիվ, շարունակում էր պպզած մնալ ու, ոսկու կտորների վրայի հողը մաքրելով, մտածում էր, թե ինչ անի: Կարելի էր հանկարծակի վեր կենալ, մի կերպ պրծնել փոսի միջից ու երես առ երես, հարթության վրա հանդիպել նրան, ով իրեն սպառնում էր: Կամ, գուցե, բարձրանար՝ դանդաղ, անբռնազբոսիկ ու իբրև թե անակնկալ կերպով հայտնաբերեր թշնամուն, որն այնտեղ էր՝ իր թիկունքում: Մարմնի յուրաքանչյուր մկանը բաց կռիվ էր տեսչում. բնագործ էլ նրան այդ էր թելադրում՝ վեր կենալ, մի թռիչքով դուրս նետվել փոսից: Բայց գիտակցությունը, իրեն հատուկ խորամանկությամբ, թույլ չէր տալիս շտապել, անզգույշ հանդիպում ունենալ այն էակի հետ, որին նա չէր տեսնում:

Եվ մինչ մարդը որոնումների մեջ էր, նրա ականջի տակ հնչեց խլացնող մի թնդյուն: Նույն պահին նա ստակալի հարված զգաց մեջքի ձախ կողմում, որտեղից կրակն ալիքներով տարածվեց ամբողջ մարմնով մեկ: Նա ուզեց վեր թռչել, բայց չհասցրեց նույնիսկ ուղղվել, փլվեց գետնին: Հետո մարմինը կրակից բռնկված տերևի նման կծկվեց, ծնկները դեմ առան նեղ փոսի պատին, և նա կրծքով խոնարհվեց ոսկով լի թասի վրա, երեսը թաղելով հողի, հանքաքարի կտորների մեջ: Ոտքերը մի քանի անգամ ջղաձգվեցին, մարմնով մեկ սարսուռ ագավ: Հետո թոքերը լայնացան և խոր հոգոց արձակելով՝ դանդաղ, շատ դանդաղ բաց թողեցին օդը: Մարմինը նույնպես աստիճանաբար տափակեց գետնին:

Փոսի վերևում ատրճանակը ձեռքին կանգնել էր անձանոթը: Նա երկար, ուշադիր զննում էր անկենդան մարմինը. հետո պպզեց, նայեց ցած, ատրճանակը դրեց ծնկան վրա: Ձեռքը տանելով գրպանը՝ նա մուգ թղթի մի կտոր հանեց, մի պտղունց ծխախոտ ու գլանակ փաթաթեց. կարճ, հաստ, շագանակագույն գլանակ՝ երկու ծայրերը ոլորած: Ոչ մի վայրկյան աչք չհեռացնելով փոսի հատակին պառկած մարմնից՝ նա հաճույքով ծխեց: Նա ծխում էր առանց շտապելու, ու երբ գլանակը հանգավ, նորից վառեց այն: Եվ այդ ամբողջ ընթացքում նա աչքը չէր կտրում դիակից:

Վերջապես զցեց ծխախոտի մնացորդը, կանգնեց ու մոտեցավ փոսի եզրին: Ատրճանակն աջ ձեռքում բռնած, նա երկու ձեռքերով հենվեց հողին, ոտքերն իջեցրեց փոսի մեջ ու ձեռքերին հենված կախվեց: Հետո բաց թողեց ձեռքերն ու ցած թռավ:

Հենց նույն վայրկյանին ոսկի որոնողի թևն ամուր գրկեց նրա կոճերից և թափով ցած քաշեց: Թռչելու պահին անձանոթն ատրճանակը պահել էր գլխավերևում, և հենց որ որոնողի մատները բռնեցին նրա ոտքերից, նա վայրկենապես ատրճանակի փողն ուղղեց ներքև. նա դեռ հողին չէր հասել, որ քաշեց ձգանը: Նեղ տարածության մեջ կրակոցը խլացուցիչ հնչեց: Թանձր ծխի մեջ ոչինչ հնարավոր չէր տարբերել: Երբ անձանոթը մեջքով զարկվեց փոսի հատակին, ոսկի որոնողը կատվի պես ցատկեց նրա վրա ու ճնշեց նրան իր ծանրությամբ: Նույն ակնթարթին հակառակորդը թևն իջեցնելով, նորից կրակեց, բայց ոսկի որոնողն արմունկով խփեց նրա ձեռքին: Ատրճանակի փողը շեղվեց վերև, ու գնդակը խրվեց հողի մեջ:

Հաջորդ պահին անձանոթն զգաց, որ ոսկի որոնողի մատները սեղմվեցին իր դաստակին:

Հիմա կռվում էին ատրճանակի համար. յուրաքանչյուրն աշխատում էր փողն ուղղել հակառակորդի վրա: Երբ ծուխը մի փոքր ցրվեց, մեջքի վրա պառկած անծանոթն սկսեց որոշ բան տարբերել: Բայց այդ պահին ոսկի որոնողը կուրացրեց նրան՝ մի բուռ հող շփելով նրա աչքերին: Անծանոթն անսպասելիորեն վայր գցեց ատրճանակը: Մի պահ անց անտանելի դղրդյունով խավարն իջավ նրա գլխին ու ամեն բան կլանեց:

Իսկ ոսկի որոնողը կրակում էր նորից ու նորից, միչև որ ատրճանակում ոչ մի գնդակ չմնաց: Հետո դիակը մի կողմ հրեց և, ծանր շնչելով, ընկավ նրա ոտքերին:

Նա շնչում էր դժվարությամբ, ծանր հևում ու հեծկլտում:

– Քոստ՝ շուն, - հագիվ արտասանեց նա: - Թաքուն եկավ իմ հետքերով, սպասեց, մինչև ամբողջ սև գործը վերջացնեմ, իսկ հետո, տե՛ս, մեջքիս վրա ծակ բացեց:

Ուժասպառությունից և կատաղությունից նա քիչ էր մնում լաց լինելու: Հետո նայեց մահացածի դեմքին, որն այնպես էր շաղախված մանրախիճով ու հողով, որ հնարավոր չէր տարբերել դիմագծերը:

– Չէ՛, ծնված օրիցս չեմ տեսել այս ռեխը, - լավ զննելուց հետո եզրակացրեց ոսկի որոնողը: - Սովորական սրիկայի մեկն է, որոնցից շատ կան այս կողմերում, անիծված լինի սա: Եվ, ի վերջո, մեջքի՛ս է կրակում, մեջքի՛ս:

Նա քանդեց բլուզի կոճակները և շոշափեց կուրծքն ու ձախ կողը:

– Ծակել անցել է, առանձին բան չկա, - հանդիսավորությամբ բացականչեց նա: - Երևի նշան է բռնել ուր որ պետք է, բայց ձգանք քաշելիս ձեռքը շարժել է ապուշը: Դե՛ նրան ցույց տվի:

– Դեռ կցավի, - մրթմրթաց նա: - Կարկատան դնեմ այս ծակին ու փասափուսաս քաշեմ այստեղից:

Նա դժվարությամբ դուրս եկավ փոսից, բլրից իջավ դեպի իր հանգրվանը: Քիչ անց վերադարձավ՝ բեռնավորված ձիու սանձը ձեռքին: Վերքի վրայի արյունոտ լաթը դուրս էր ցցվել բլուզի բացված մասից: Չախ ձեռքը դժվարությամբ էր շարժում, բայց շարունակում էր նրանով աշխատել:

Նա դիակը կոնատակերից թոկով կապոտեց, դուրս քաշեց փոսից, հետո սկսեց հավաքել ոսկին: Նա աշխատում էր համառորեն, ժամ առ ժամ, երբեմն-երբեմն դադար առնելով, որպեսզի շփեր թմրած ուսն ու բացականչեր.

– Մեջքի՛ս է կրակում: Քոստ՝ շուն: Մեջքի՛ս է կրակում:

Երբ բնածին ոսկու կտորները բոլորը ջոկեց, մաքրեց և փաթաթեց ծածկոցի մեջ, նա մտքում հաշվեց իր հարստության քանակը:

– Չորս հարյուր ֆունտ, սատանան տանի ինձ: Դե, ասենք, մի երկու հարյուրը թող լինի կվարց ու հող. երկու հարյուր ֆունտ էլ մաքուր ոսկի է մնում: Բի՛լլ, սթափվիր: Երկու հարյուր ֆունտ ոսկի: Քառասուն հազար դոլար: Եվ այդ բոլորը բռնեմ է... Բոլորը բռնեմ է:

Նա հիացած քորեց ծոծրակը. հանկարծ մատները քսվեցին ինչ-որ անսովոր կոշտ բանի: Նա զգուշորեն շոշափեց ծոծրակի վերևի մասը. դա քերծվածքն էր, որ առաջացել էր երկրորդ անգամ կրակելուց:

Նա բարկացած մոտեցավ մահացածին:

– Հը՞: Էլի կանե՞ս, - կռվարար տոնով ասաց նա: - Էլի կանե՞ս, հը՞: Լա՛վ: Ես քեզ ոնց որ պետքն էր ցույց տվի, հիմա միայն մնում է քեզ կարգին թաղել: Կարծեմ դու ինձ համար այդքանը չէիր անի:

Նա մահացածին քարշ տվեց փոսի մոտ և հրեց ներքև: Դիակը խուլ փվվեց փոսի հատակին՝ երեսով դեպի վեր: Մարդը կռացավ ու նայեց մահացածին:

– Իսկ դու դեռ մեջքիս կրակեցիր, - ասաց նա հանդիմանանքով:

Բահն ու քլունգը գործի դնելով նա հող լցրեց փոսի մեջ: Հետո ոսկին բարձեց ձիուն: Բեռը շատ ծանր էր. իջնելով դեպի հանգրվանը՝ նա բեռի մի մասը տեղափոխեց մյուս ձիու վրա: Բայց դարձյալ ստիպված էր իր ճամփորդական սարքուկարգի մի մասը դնել գցել. բահը, քլունգը, թասը, ուտելիքի մի մասը և այլ մանր-մունր բաներ:

Արևը գեմիթում էր, երբ բաղեղների ու վայրի խաղողի կենդանի պատնեշի միջով քշեց ձիերին: Դժվարությամբ մագլցելով հսկայական քարաբերկորների վրայով՝ ձիերը մի քանի անգամ ծառս եղան և կույր-կույր անցան թփերի խիտ հյուսվածքի միջով: Հեծկան ձին մի անգամ

ծանրությամբ փլվեց գետնին. մարդը նրա վրայից բեռն իջեցնելով՝ օգնեց, որ ոտքի կանգնի: Երբ կենդանին նորից շարունակեց ճամփան, մարդը շուռ եկավ, կանաչ ճյուղերի ցանցի միջից մի վերջին հայացք գցեց բլրի թեքության վրա:

– Քոստ՛ո շուն, - ասաց նա ու հեռացավ:

Մացառուտը խշխշում էր, ճրթճրթում: Թփերի ծայրերը թեթևակի տարուբերվում էին՝ նշե-
լով թավուտի միջով անցնող ձիերի ճանապարհը: Երբեմն լսվում էին սմբակների ու քարերի
հարվածի ձայներ, երբեմն կոպիտ գոռոց կամ հայիոյանք: Հետո հնչեց մարդու երգի ձայնը.

Շուրջդ նայրի՛

Բարեբեր քանի լեռ է ձգվում վեր:

Չարից հեռու կլինես՝

Մեղքիդ բեռը թե գցես

Ճամփիդ կողքի փոսը խոր:

Միևնույն է՝

Աստծու հյո՛ւրն ես դու մի օր:

Երգը գնալով ավելի մեղմ էր հնչում, և լռության հետ մեկտեղ կիրճի ոգին նորից իշխեց շր-
ջապատի վրա: Կրկին ալարկոտ քչքչաց առվակը: Լավեց լեռնային մեղունների քնաբեր բզզո-
ցը: Բարդու ձյունաճերմակ աղվամազը հանդարտ սավառնեց անուշաբույր օդում: Թիթեռնիկ-
ները, թռչկոտելով, պտտվեցին ծառերի շուրջը, արևի խաղաղ փայլքը տարածվեց կիրճում:
Միայն մարգագետնի սմբակների հետքերն ու բլրալանջի վրայի խոր փորվածքները մնացին
որպես հիշատակ՝ անհանգիստ կյանքի մասին, որ խանգարել էր կիրճի խաղաղ քունը և հե-
ռացել:

ԲԱՌԱՐԱՆ

Բաղեղ - փաթաթվող, մագլցող բույսերի տեսակ

խայտաբղետել - վառ գույներով առանձնանալ, **խայտաբղետ**՝ գույնզգույն

մանասնետ - ծառի տեսակ

մարջանաթև - մարջան՝ բուստ, ծովային կենդանիների կրացած մարմիններից
առաջացած քար՝ սպիտակ, կարմիր կամ սև գույնի, որից զարդ են պատրաստում:
Մարջանաթև՝ մարջանի նման, մարջանի գույնի թև ունեցող

տորոն - բույս, որի արմատից ստանում են կարմիր ներկ

թնդահամ - թունդ համ ունեցող, թունդ, սուր բուրմունք ունեցող

փափկամոլիկ - փափկասեր, փափուկ կյանքի սիրահար

խիխոջ - հոսող բարակ առվի ձայնը, կարկաչ

ռունգ - քթանցք, կենդանու քիթը, դունչը

ծածանք - ջրի ծածանվելը, մեղմ տատանումը

բոժոժիկ - փոքրիկ զանգուլակ

խատուտիկ - փետրավոր խոտաբույսի տեսակ

մենախոսություն - ինքն իրեն խոսել, թատերգությունների մեջ հերոսի խոսքի դրսևերման
ձև, խոսքի այլ ձև է **երկխոսությունը**, երբ զրուցում են երկու հոգի

վրձնախազ - վրձնի թողած խազ, ներկի հետք

զենիթ - երկնքի ամենաբարձր կետը

երկսապատ - երկու սապատ ունեցող:

սապատ - կուզ, որոշ կենդանիների մեջքին, օրինակ՝ ուղտի, ուռուցիկ ճարպագունդ

խարտուք - խարտելուց առաջացած մետաղի փոշի

ֆուտ - ոտնաչափ, որը հավասար է 30 սմ

ֆունտ - ծանոթության չափ, հավասար է 409,5 գրամի (Ռուսաստանում), 453,6 գրամի
(Անգլիայում)

դյույմ - երկարության չափ, հավասար է 2,54 սմ

յարդ - երկարության չափ, հավասար է 0,9143992 մ (Անգլիայում), 0,9144018 մ (ԱՄՆ-ում)

ապուխտ - ծխահարելու, տապակելու կամ չորացնելու հատուկ եղանակով ուտելու համար մշակված չոր միս

բակլա - լոբազգիներին պատկանող բույս, այդ բույսի հատիկը

ծխամորճ - ծխելու հարմարանք, չիբուխ

թոկ - պարան

թավիշ - նուրբ, խավոտ, փափուկ կտոր, ինչը համեմատության հիմք է՝ թավշե

լազուր - երկնագույն, բաց կապույտ գույն, մաս ջինջ, հստակ, մաքուր

կլորահարթ - կլոր և հարթ դիրք, տեսք

բռի - կոպիտ, կոշտ, անտաշ, անկիրթ

դոլար - դրամական միավոր, որ ընդունված է ԱՄՆ-ում և ուրիշ երկրներում

ցեմտ - դոլարի մանրը, մեկ դոլարը հավասար է 100 ցեմտի

ֆերմեր - գյուղական տնտեսության տեր, ագարակատեր

քրտնակալած - մարմինը քրտինքով պատած

հանգրվան - հանգստանալու տեղ, կայան, իջևանատեղ, ճանապարհի հերթական կայանատեղ

Միերա - ԱՄՆ-ի հյուսիսում ձգվող լեռնաշղթա

կռնատակ - թևատակ, **կոտ** - թև

կվարց - հանքաքարի տեսակ, որձաքար

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչո՞ւ է պատմվածքը վերնագրված «Ոսկե կիրճը»: Ո՞ր պահին պատմվածքի հերոսը որոշեց կիրճն անվանել «Ոսկե կիրճ» և ինչո՞ւ:

2. Ինչպիսի՞ քննապատկերով է սկսվում պատմվածքը:

3. Տարվա ո՞ր եղանակն է և ինչի՞ց կարող ես դա կռահել:

4. Ի՞նչ բույսերի, հատապտուղների ու կենդանիների տեսակների անուններ է տալիս հեղինակը:

5. Ի՞նչ երգ էր երգում մարդը կիրճ մտնելիս: Ո՞րն է այդ երգի իմաստը:

6. Ինչպե՞ս է նա բնորոշում կիրճը: Ինչպե՞ս կբացատրես այս արտահայտությունները. «Հրա՛շք դժոխսային: Այ քեզ դրա՛խտ»:

7. Ինչպիսի՞ն էր մարդու արտաքինը:

8. Ի՞նչ գործիքներով էր նա զինված:

9. Ինչպե՞ս էր հողն ու ավազը լվանալով՝ գտնում ոսկու հատիկները:

10. Սկզբում քանի՞ ոսկու հատիկ մնաց թասի տակ: Իսկ հետո, որոնումների արդյունքում, քանի՞ հատի հասավ դրանց թիվը:

11. Ի՞նչ արտահայտությամբ էր նա դիմում ոսկեքեր լեռնաշերտին:

12. Շրջված V տառը հիշեցնող պատկերը ի՞նչ գործողությունների է մղում նրան: Շրջված V տառի պատկերի փոխարեն կարո՞ղ եք օգտագործել շրջված երամածն (թռչունների երամի ձև ունեցող), բուրգածն (բուրգի ձև ունեցող) բառերը: Իսկ սեպածն բառը ուղղակիորեն կհամապատասխանի V-ին:

13. Ի՞նչ էր մարդու անունը, ե՞րբ ենք իմանում և ինչպե՞ս:

14. Քանի՞ օր մարդը մնաց կիրճում, ի՞նչ էր ուտում, որտե՞ղ էր քնում:

15. Ինչպե՞ս նա հասավ ոսկու բնածին կտորներին:

16. Վտանգի ի՞նչ կանխագագացում ուներ Բիլլը և ի՞նչ պատահեց նրա հետ:

17. Ոսկու տեղումը համակված Բիլլը ակամա դարձավ մարդասպան: Ինչպե՞ս ես բացատրում նրա այդ արարքը:

18. Սպանվածի հետ ինչպե՞ս է վարվում Բիլլը:

19. Ինչքա՞ն ոսկի էր նա հավաքել և իր հաշվումներով դա որքա՞ն գումար պետք է կազմեր:

20. Քանի՞ ձի ուներ մարդը և ոսկին ինչպե՞ս է տեղափոխում:

21. Ինչպե՞ս է ավարտվում պատմվածքը:

22. Գասարանում խմբավորվեք, պատմվածքը բաժանեք մասերի, ամեն մի խումբը թող կարդա իր մասը, այդ մասը պատմեք խմբում, վերջում յուրաքանչյուր խմբից մեկը

բովանդակային հաջորդականությամբ թող պատմի իր մասը մինչև պատմվածքն ավարտվի և ամփոփվի: Հարցեր տվե՛ք պատմողներին և ամփոփե՛ք Ջեկ Լոնդոնի կենսագրությունն ու այս պատմվածքի բովանդակությունը: Նշե՛ք կերպարի և բնապատկերի ամենաբնութագրական և ցայտուն արտահայտված հատկանիշները:

